

ԷԶՄԻԱԾԻՆ



Ա
2020



ՀԷ. ՏՆԻԻ

ՀԱՅԿԱԿԱՆ


ՊԼՇՏՕՆԵԱՆ ԱՐԱՆԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԼԹՈՒԿՈՍԻԹԵԱՆ
ԱՅՐ ԼԹՈՒՄՅՈՒՆ ԲԵՐԻՍ ԷԶՄԻԼԾՆԻ

ՅԻՆԱԿ

2020

Լ. ԷԶՄԻԼԾՆԻ






ՀՐԱՄԱՆԱԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



«ԷԶՄԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրական

Գլխավոր խմբագիր՝ **Գեորգ Մադոյեան**

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ **Տ. Անդրեաս վրդ. Եզեկեան**


Խմբագիրներ՝ **Արփինէ Զանթիկեան,
Լուսինէ Վարդանեան**

Տեխնիկական խմբագիր՝ **Գոռ Գրիգորեան**

Լեզուաոճական խմբագիր՝ **Նարէ Սարգսեան**

Խմբագրական խորհուրդ **Տ. Եզնիկ արք. Պետրոսեան,
Տ. Զաքարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Անդրեաս վրդ. Եզեկեան,
Ազատ Բօգոյեան,
Գեորգ Տէր-Վարդանեան,
Վարդան Դերիկեան,
Գոհար Աւագեան**





“Etchmiadzin”

Theological and Armenological Journal

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**

Deputy Editor-in-Chief **Archimandrite Andreas Yezekyan**

Editors **Arpine Chantikyan,**
Lusine Vardanyan

Technical editor **Gor Grigoryan**

Stylistic editor **Nare Sargsyan**

Editorial Board **Archbishop Yeznik Petrosyan,**
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Andreas Yezekyan,
Azat Bozoyan,
Gevorg Ter-Vardanyan,
Vardan Devrikyan,
Gohar Avagyan



«Эчмиадзин»

Религиоведческий и арменоведческий журнал

Редакционный состав

Главный редактор **Геворг Мадоян**

Заместитель главного редактора **Архимандрит Андреас Езекиан**

Редакторы **Арпине Чантикян,**
Лусине Варданиян


Технический редактор **Гор Григорян**

Стилистический редактор **Нарэ Саргсян**

Редакционный совет **Архиепископ Езник Петросян,**
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Андреас Езекиан,
Азат Бозоян,
Геворг Тер-Варданиян,
Вардан Деврикян,
Гоар Авакян



ԲՐԻՍՈՍ ԾՆԸԻ ԵՒ ՅԸՅՏՆԵՅԸԻ ՉԵՂ ԵՒ ՄԵՂ ՄԵԾ ԼԻՅՏԻՍ:



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՎԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՊԱՏՏԱՄԸ ՍԵՐ ՏԵՐ ԻԽՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ՇՆԵՂՅԱՆ
ԵՒ ԱՍՏՎԱԾՎԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ**

(6 հունվարի, 2020 թ.)

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Երբ ժամանակը լրումին հասավ,
Աստված ուղարկեց իր Որդուն...
որպեսզի մենք որդեգրւոյն ընդունենք»
(Գաղ. Դ. 4–5):

*Սիրելի՛ հավատաւոր, բարեպաշտ ժողովուրդ,
Առ Աստված փառաբանությունը Մեր սրտում՝ ողջունում ենք ձեզ
Քրիստոսի սուրբծննդյան կենսաբեր ավետիսով. «Քրիստոս ծնաւ եւ
յայտնեցաւ»: Փրկչի Սուրբ Ծննդյան տոնը քրիստոնյա ողջ աշխարհին
խնդություն ու բերկրանք է բերում: Այսօր մեր սրտերում ու հոգիներում
այդ ուրախությունն է թեւածում, որով համախմբվել ենք օրհնաբանե-
լու Մանուկ Հիսուսի Սուրբ Ծնունդը, նորոգվելու Քրիստոսի պարգեւած
կենարար շնորհներով:*

*«Երբ ժամանակը լրումին հասավ, Աստված ուղարկեց իր Որդուն,
...որպեսզի մենք որդեգրություն ընդունենք»,— ասում է առաքյալը:
Մարդկային մտքի համար դժվար ընկալելի է, թե ինչպես կարող է ան-
սահման Աստված սահմանավորվել, Արարիչն Աստված արարված մար-
դու կերպարանք առնել: Մեր պատմահայր ս. Մովսէս Խորենացին Քրիս-
տոսի սուրբծննդյան այս հրաշազարդ իրողությունը իր գեղեցկահյուս
շարականում կոչում է «Խորհուրդ մեծ եւ սքանչելի»: «Երկնքի ու երկրի
համար անպարփակելին,— ասում է նա,— խանձարուրով պատվեց...
եւ սուրբ այրի մեջ բազմեց»: Սուրբծննդյան սքանչելախորհուրդ այս*

իրողությունը, արդարեւ, հավատքով է ըմբռնելի, ինչպես հավատքով են տեսանելի Աստծու բարերար խնամքն ու գործերը, եւ զգալի՝ Տիրոջ կենարար ներկայությունն ու ներգործությունը: Այսօր մենք հավատքով հովիվների հետ ականջալուր ենք հրեշտակների ավետաբեր օրհներգությանը: Արեւելքից ժամանած մոգերի հետ հավատքով տեսնում ենք քարայրում ապաստան գտած Սուրբ Ընտանիքը եւ խոնարհվում նորածին Հիսուսի առջեւ: Նա եկավ, ինչպես եւ առաքյալն է վկայում, որպեսզի մենք որդեգրություն ընդունենք:

Քրիստոսի Ծնունդը շնորհ է՝ արժեւորելու մարդկային կյանքը, դարձնելու նոր սկիզբ, նոր ճանապարհ դեպի աստվածճանաչողություն, դեպի Աստծուն որդեգրություն: Քրիստոսի Ծնունդը անզուգական սիրո, անսահման մարդասիրության վկայություն է: Սեր, որը զոհաբերվող է, ամբողջանվեր, որով մեծագոր Աստված Իր բարձրությունից խոնարհվեց, Տեր լինելով՝ ծառայի կերպարանք առավ, որպեսզի մարդկային կյանքն առաջնորդի փրկության, երկնքի արքայության, որպեսզի մաքրագործվեն ու վեհանան մարդկանց զգացումներն ու մտածումները, արդար ու բարի լինեն գործերը: Եկեղեցու սուրբ հայրերից Հովհան Ոսկեբերանն ուսուցանում է, որ Աստծուն որդեգրությունը մարդու նորոգությունն է: Ներքին վերափոխման, հոգեւոր վերածննդի այդ շնորհն ու զորությունն է բերում Փրկիչ մեր Տերը: Քրիստոսով հալչում են մեղքերը, փարատվում են հուսահատությունները, վախը դառնում է քաջալերություն, թշնամանքը՝ եղբայրսիրություն, բանսարկությունն ու զրպարտությունը՝ ուղղամտություն ու ճշմարտախոսություն, եւ դժվարությունների ու վշտերի մեջ ծագում է սուրբծննդյան լույսը՝ բերելով նոր աշխարհի, նոր կյանքի հույսն ու տեսլականը:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, Սուրբ Ծննդյան այս հոգեհորոգ օրը Մենք ցավ ի սիրտ պիտի անդրադառնանք նաեւ, որ ժամանակակից կյանքի բազմահոս, հակասական զարգացումներում, աշխարհիկացման, համահարթեցման հոսանքներում, մրցակցության անհոգի վազքերում, հաղորդակցության նոր հնարավորությունների ահռելի տարածքներում հաճախ կորսվում է Քրիստոսի Ծննդյան պատգամը: Քարոզվում են իրական արժեքների վտանգավոր նմանակումներ՝ պարպված աստվածասիրության ու մարդասիրության ճշմարիտ գաղափարներից եւ կառուցված ազատության ու իրավունքների սխալ ընկալումների ու մեկնաբանությունների վրա: Կանգնած ժամանակների այս նոր իրողությունների ու


փոփոխությունների հանդիման՝ մենք ամուր պիտի մնանք ի Քրիստոս մեր հավատքի մեջ՝ վերարժեւորելով մեր անցյալը, ընտրելով նորոգությունն ու որդեգրությունը: Հավատավոր մեր ժողովրդի ներկայությունը եկեղեցիներում՝ աղոթական ու նվիրական զգացումներով, հոգեւոր խոնարհումը մանուկ Հիսուսի սնարի առջեւ մեր համընդհանուր պատասխանն են Քրիստոսով ապրելու, Քրիստոսով նորոգվելու, Քրիստոսով հարատեւելու աստվածային կանչին: Մենք՝ իբրեւ քրիստոնյա ժողովուրդ, Քրիստոսի Ծննդյան շնորհառատ այս օրը վերստին ամրապնդվում ենք հաստատակամությամբ, որ առավել վճռական պիտի լինենք քրիստոնեական մեր ինքնության վկայության մեջ, ազգային մեր կյանքը կառուցենք սիրո, համերաշխության հիմերի վրա, միաբանված լինենք մեր հոգեւոր արժեքներով, մեր հավատքով, մեր սրբազան հայրենիքի, մեր Սուրբ Եկեղեցու շուրջ: Քրիստոս Իր Սուրբ Ծնունդով ուղենշեց միմյանց ու Աստծու հետ միավորված մնալու մեր ճանապարհը: Ընթանանք այդ ճանապարհով՝ նորոգ բարեգործելով մեր կյանքը, կյանքը մեր հայրենիքի եւ մեր ժողովրդի:

Այս մաղթանքով եւ Քրիստոսի սուրբ ծննդյան ավետիսով ողջունում ենք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց նորընտիր Պատրիարք Ամենապատիվ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանին, մեր Սուրբ Եկեղեցու ուխտապահ ողջ հոգեւոր դասին: Ի Քրիստոս եղբայրական սիրով Մեր ողջույնն ենք հղում քույր եկեղեցիների հոգեւոր Պետերին եւ հավատավոր իրենց հոտին: Հայրապետական օրհնությամբ ողջունում եւ Մեր բարեմաղթանքներն ենք բերում Հայաստանի Հանրապետության Նախագահ տիար Արմեն Սարգսյանին եւ Սրբազան Պատարագի արարողությանը ներկա Հայաստանի Հանրապետության Վարչապետ տիար Նիկոլ Փաշինյանին՝ իր մեծագնիվ տիկնոջ հետ: Ողջույն ենք հղում Արցախի Հանրապետության Նախագահ տիար Բակո Սահակյանին եւ հայոց պետական ավագանուն, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներին: Հայրապետական Մեր օրհնությունն ու սերն ենք բերում ի սփյուռս աշխարհի համայն մեր ժողովրդին:

Սուրբ Ծննդյան շնորհառատ այս օրը, սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր, միասնաբար աղոթենք մեր Փրկչին սուրբ Ներսես Շնորհալի

Հայրապետի խոսքերով. «Նորոգող հնութեանց, նորոգեա՛ եւ զիս, նորո՛գ զարդարեա»։ Հայցենք միասնաբար, որ նորոգության երկնային պարգեւները բարեփոխեն աշխարհը համայն, բարօրությամբ շենանա ժողովուրդների ու պետությունների կյանքը, եւ Աստծու Սուրբ Աջի պահպանությունը միշտ հովանի լինի մեր հայրենիքին, հայրենյաց մեր հերոս պաշտպաններին, Մերձավոր Արեւելքում եւ այլուր դժվարությունների դիմագրավող մեր քույրերին ու եղբայրներին, աշխարհասփյուռ մեր ողջ ժողովրդին։ Թող Փրկչի կենսանորոգ շնորհներով ու երկնառաք բարիքներով զարդարված լինեն ամենքիդ կյանքն ու ընտանեկան հարկերը, եւ հանապազ ձեզ հետ՝ Աստծու պահպանությունն ու օրհնությունները։

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
Զեզ եւ մեզ մեծ աւետիս»։











**Ն.Ս.Օ.Տ.Տ. ՊԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ՝
ԲԱԼԹԵԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՌԻԹՈՎ**

ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴԻ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆՅ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱԽԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Քոհույթիւն ենք յայտնում Ամենակալն Աստծուն, որ մեր Սուրբ Եկեղեցին իր դարաւոր առաքելութեան արդիւնաւորմամբ այսօր նոր ձեռքբերումներով է զարդարում իր սպասաւորութիւնը հաւատաւոր մեր ժողովրդին ի հայրենիս եւ ի սփիւռս՝ առաջնորդելով իր զաւակներին փրկութեան Տէրունաշնորհ ճանապարհով:

Ուրախութիւն է Հայրապետիս համար, որ աշխարհի տարբեր երկրներում հաստատուած մեր համայնքներում հիմնադրուում են նաեւ նոր ծուխեր, որոնք նպաստում են հոգեւոր-եկեղեցական կեանքի զօրացմանն ու առաջընթացին: Գոհունակութեամբ ենք անդրադառնում, որ Բալթեան երկրների հայկական ծուխերն ու համայնքները տարիներ շարունակ եղել են Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի հոգեւոր խնամքի ու հոգածութեան ներքոյ, եւ շնորհիւ թեմակալ առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսեանի ներդրած գովելի ջանքերի՝ բարեզարդուել է տեղի հայութեան հոգեւոր-եկեղեցական կեանքը: Հայրապետական այսու Կոնդակով գոհունակ սրտով Լատուիայի, Լիտուայի եւ էստոնիայի Հանրապետութեանց հայկական եկեղեցական համայնքների միաւորումով հաստատում ենք Բալթեան երկրների հայոց թեմը՝ առաջնորդանիստ կենտրոն ունենալով Ռիգա քաղաքը: Բալթեան երկրների հայոց թեմի առաջնորդի պաշտօնում ծառայութեան ենք կոչում Գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Նաւասարդեանին: Հայրաբար յորդորում ենք Տիրախնամ թեմի հաւատաւոր Մեր զաւակներին, որ ըստ ամենայնի

սիրով աջակից լինեն Թեմակալ Առաջնորդին՝ ի շինութիւն եւ ի պայծառութիւն նորաստեղծ Թեմի: Վստահ ենք, որ միասնական իրազործումներով, նոր յաջողութիւններով, եկեղեցականաց եւ նրանց լծակից Մեր եկեղեցանուէր հայորդեաց եռանդուն գործունէութեամբ պիտի բարգաւաճի նորահաստատ Թեմը, զօրանայ հոգեւոր խնամքը Մեր սիրելի զաւակների եւ պայծառանայ նրանց ազգային ու եկեղեցական կեանքը:

Թեմի հաստատման այս ուրախ առիթով շնորհաւորում եւ Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Թեմի հոգեւոր դասին, եկեղեցական վարչութեանց բարեջան անդամներին եւ բարեպաշտ հաւատացեալներին:

Աղօթում ենք առ Ամենակալն Աստուած, որ միշտ շէն ու բարօր պահի Բալթեան երկրների հայոց Թեմը եւ յաւէտ պայծառ ու անսասան՝ Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին:


«Շնորհիք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ սէրն Աստուծոյ ընդ ձեզ ամենեւին»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 24-ն Յունուարի
յամի Տեառն 2020 եւ ի թուին հայոց ՌՆԿԹ.
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1101



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ՍԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՌԻՂԵՐՁԸ ՀՀ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում մեր հաղթական բանակի սպաներին ու զինվորներին եւ համայն մեր ժողովրդին՝ Բանակի օրվա առիթով:

Շուրջ երեք տասնամյակ առաջ ծանր պայմաններում կազմավորվեց Հայոց նվիրական բանակը. ծնվեց ազատամարտի բովից, հասունացավ ու կերտվեց մեր քաջարի հայորդիների աննկուն պայքարով ու անսպառ ջանքերով: Հայոց բանակի տոնը մեր ողջ ժողովրդի տոնն է՝ յուրաքանչյուր ընտանիքի եւ յուրաքանչյուր անձի: Բանակի տոնը նշելով՝ մեր երախտիքն ենք բերում այն նվիրյալ անձանց, որոնք բացառիկ ավանդ են ներդրել Արցախյան հերոսամարտի հաղթանակի, հայրենիքի պաշտպանության եւ հայոց բանակի կայացման ու զորացման գործում:

Փառք ենք մատուցում Երկնավորին, որ այսօր մեր բանակը շարունակում է մշտաբեր իր առաքելությունը՝ ի խնդիր հայրենի մեր պետության սահմանների անսասանության եւ հայրենաբնակ մեր ժողովրդի խաղաղ ու ստեղծագործ կյանքի ապահովության:

Ի խորոց սրտի Մեր աղոթքն ենք վերառաքում առ բարձրյալն Աստված, որ ամենակալ Տերը մշտամնա խաղաղություն շնորհի Հայաստան, Արցախ մեր հայրենիքին եւ համայն աշխարհին, օրհնի ու զորացնի Հայոց մեր բանակի քաջարի սպաներին ու զինվորներին՝ պարգեւելով ամրակորով ու անվտանգ ծառայություն՝ հանուն մեր երկրի եւ մեր ժողովրդի բարօր կյանքի:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





**Ն.Ա.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ
ԵՒ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՎԱՐԴԵՆԻՍՈՒՄ
ՀՂ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ**

(28 հունվարի, 2020 թ.)

Տիրոջ կամքով եւ հոգու բերկրանքով ժամանել ենք Վարդենիս՝ հայրապետական մեր սերն ու օրհնությունը փոխանցելու Հայոց բանակի քաջարի զինվորականների՝ ջերմորեն շնորհավորելով ձեզ եւ մեր ողջ ժողովրդին՝ Հայոց բանակի օրվա կապակցությամբ: Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի օրվա հաստատումը անկախ հայրենիքի տոնացույցում եւ Հայոց բանակի պանծացումը աներկբա վկայությունն ու գնահատականն են Հայոց բանակի կարեւոր դերակատարության հայրենի երկրի եւ մեր ժողովրդի խաղաղ ու ապահով կյանքի հարատեւության ապահովման գործում:

Մեծ խնդություն ենք ապրում ամեն անգամ, երբ տեսնում ենք հայրենյաց խիզախ պաշտպանների: Եւ իբրեւ Հայոց Հայրապետ՝ հպարտ ենք յուրաքանչյուրիդ ծառայությամբ, ձեր ու ձեր ծառայակից եղբայրների ու քույրերի դրսեւորած անպարտելի ոգով եւ անձնազոհ կեցվածքով: «Հոգին է կենդանարար» (Հովհ. Զ. 64),— ասվում է Ավետարանում: Հոգին է կենդանարար, որովհետեւ այդ հոգին ու ոգին են հաճախ ամենատարբեր պատմական իրավիճակներում գորացրել մեր բազուկը, ներշնչել սխրագործությունների եւ հաղթության առաջնորդել մեր ազգին:

Խաղաղությունը՝ անկախ կյանքը եւ պետական անկախությունը, մեր ժողովրդին տրվել է միշտ մեծ զոհողությունների գնով: Մշտապես հարկադրված ենք եղել մարտնչել ոչ միայն հայրենիքի սահմանների, ընտանեկան հարկերի ու սրբությունների, այլեւ հաճախ եւ առավելաբար՝ մեր ինքնության եւ գոյության իրավունքի պաշտպանության համար: Մարտի դաշտ ելնելով՝ հայորդին կենաց-մահու կռիվ է մղել՝ քաջ գիտակցելով, որ ինքն իր անձով սեփական ժողովրդի գոյության երաշխավորն է, իսկ հաղթությամբ պսակված ամեն մի մարտ՝ հայոց երկրի վաղվա լուսավոր օրվա գրավականը:

Մեր ժողովրդի զավակների համար բոլոր ժամանակներում հայրենասիրությունը, անվեհեր քաջությունն ու նվիրումը վերացական

գաղափարներ չեն եղել, այլ եղել են իրական պատասխանատվության զգացում առ հայրենի սրբազան հողը, ճշմարիտ սեր՝ առ ընտանիքը, ազգը եւ ազգային արժեքները: Սիրելիներ, սիրելի՛ զորականներ, դուք, կանգնած մեր երկրի սահմանների առաջնագծում, սեփական կյանքով ու արյամբ պաշտպանում եք թրկունքում գտնվող հայրենին ու հայրենականը: Մերօրյա հերոսներն եք դուք, մերօրյա վարդանները, անդրանիկներն ու մոնթեներն եք դուք: Տեսնում ենք ձեր աչքերի մեջ ոգին Ավարայրի, Սարգարապատի, Բաշ-Ապարանի ու արցախյան շարունակվող գոյամարտի: Ձեր անձնվեր ամենօրյա ծառայությունը եւ Հայոց բանակի ոչ հեռավոր անցյալում՝ ապրիլյան պատերազմի օրերին, գործած սխրանքները խոսուն վկայությունն են ձեր հայրենասիրության եւ ազգի հանդեպ անսակարկ սիրո:

Գոհունակություն է Հովվապետիս համար, որ Հայոց բանակը հայրենի իշխանությունների եւ Պաշտպանության նախարարության ղեկավարության հոգածությամբ օրավուր զորանում է նոր սպառազինությամբ եւ զինվորական կյանքի պատշաճ կազմակերպմամբ: Ուրախալի է նաեւ, որ մեր զինվորների եւ սպաների ոգու զորացման եւ հոգեւոր ամրության համար այսօր զինվորականի կողքին Հայոց բանակում իրենց ծառայությունն են բերում մի քանի տասնյակ գնդերեցներ, իսկ Աշոտ Երկաթ թագավորի պատմական խաչի կրկնօրինակով պատրաստված խաչափայտի մասունքակիր սուրբ նշանը Տիրոջ հովանին է տարածում ամբողջ մեր զինվորության վրա:


Սիրելիներ, Հայոց Եկեղեցին միշտ եղել եւ մնալու է հայ զինվորի կողքին, միշտ օրհնելու է նրա հանձնառությունը, կամքն ու ոգին, հայրենի սահմաններն անառիկ պահելու, ազգի խաղաղ կյանքը երաշխավորելու առաքելությունը: Հայրենիքի ազատ ու անվտանգ կյանքը եւ հանուն այդ անվտանգության՝ մեր միասնականությունը ամեն ինչից վեր են: Սա պետք է լինի բոլորիս գիտակցությունը, սա պետք է լինի մեր օրերում ամենքիս հանձնառությունը:

Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված՝ այս գիտակցությամբ հայրենիքին եւ մեզ ամենքիս իրենց կյանքն ընծայաբերած յուրաքանչյուր զինվորի համար: Նրանց խնկելի հիշատակը անմոռանալի եւ անջնջելի է մեր ժողովրդի զավակաց սրտերում:

Այս տոնն առիթ է, սիրելիներ, մեր գնահատանքը հայտնելու Հայոց բանակի յուրաքանչյուր զինվորին, Զինված ուժերի զորացմանն իրենց

նպաստը բերող կառույցներին եւ անհատներին: Այս տոնն առիթ է նաեւ մեր աշխարհասփյուռ ողջ ժողովրդի համար՝ ոգեշնչվելու եւ քաջալերվելու հայ զինվորի անխորտակելի, հաղթական ոգով: Աղոթենք, աղոթենք միասնաբար, որ ամենազոր Աստծու Աջն այսօր եւ միշտ հովանի ու պահպան լինի հայրենիքի պաշտպան Մեր սիրեցյալ զավակներին: Թող Տերը խաղաղ ու անվտանգ ծառայություն շնորհի ձեզ եւ Իր խնամքի ու օրհնության մեջ պահպանի Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկիրը եւ հավատավոր մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի:

Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, սերը եւ խաղաղությունը ձեր եւ ամենքի հետ լինեն: Ամեն:





Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ՝
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՇԱԼԵԱՆԻՆ
ԱՐՔԻԹԵԱՆ ՊԱՏԻ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱԴՈՐՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՇԱԼԵԱՆ
ՈՐ Ի ՍՏԱՄԲՈՒԼ, ԹՈՒՐԳԻԱ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու վաստակեալ սպասաւորիդ:

Սիրելի՛ Սրբազան պատրիարք,

Շուրջ երեք տասնամեակ, իբրեւ կուսակրօն հոգեւորական, Քրիստոսին էք վկայում աշխարհում՝ հոգեւոր սնունդ մատուցելով հաւատաւոր մեր ժողովրդին եւ բարի սպասաւորութեամբ առաւել լուսաւոր դարձնելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդամատանը:

Ձեր ծառայագործութեան ընթացքին բազմաթիւ յանձնառութիւններ էք ստանձնել Կոստանդնուպոլսի եւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւններում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ իրականացնելով վարչական, հովուական եւ կրթական գործունէութիւն: Մայր Աթոռի Գէորգեան Հոգեւոր ճեմարանում Ձեր պաշտօնավարութեան տարիներին Մենք ականատես ենք եղել Ձեր նուիրեալ ծառայութեան բարի արդիւնքներին, Ձեր հանդէպ մեր ուսանողների բացառիկ սիրուն ու յարգանքին, որոնց համար օրինակ դարձաք Ձեր հոգեւոր նկարագրով, աշխատասիրութեամբ, եկեղեցասիրութեամբ ու ազգասիրութեամբ:

Մեզ համար գոհունակութիւն է, որ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքութեան Մեր զաւակները իրենց ընտրութեամբ Ձեզ վստահեցին Պատրիարքի պատասխանատու պաշտօնը՝ հաւատալով Ձեր կարողութիւններին, Ձեր նուիրումին ու նախանձախնդրութեանը: Մենք վստահ ենք, որ պիտի ջանաք առաւելագոյնն ի գործ դնել՝ դժուարին այս

Ժամանակաշրջանում վերականգնելու Պատրիարքութեան խաթարուած գործունէութիւնը եւ նորոգութեան ու զարթօնքի նոր շունչ ու ոգի բերելու պոլսահայ կեանքին:

Սիրելի Սրբազան, բարձր գնահատելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդամատանում տարիների Ձեր վաստակը եւ նուիրեալ ծառայութիւնը, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ

ԱՐՔՈՒԹԵԱՆ ՊԱՏԻԻ:

Ի խորոց սրտի հայցում ենք, որ Բարձրեալն Աստուած Իր Սուրբ Աջով պահի ու պահպանի Ձեզ, զօրակից լինի բարձր ու պատասխանատու Ձեր կոչման մէջ՝ շնորհելով քաջառողջութիւն, արեւշատութիւն եւ նորանոր յաջողութիւններ:

Թող Տէրն Ամենակալ միշտ պայծառ պահի Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքութիւն եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին:


Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 26-ն Փետրուարի
յամի Տեառն 2019 եւ ի թուին հայոց ՌՆԿԸ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1070



Ն.Ա.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ՝
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԴԱՄԵԱՆԻՆ
ԱՐՔՈՒԹԵԱՆ ՊԱՏԻ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՍԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱԽՈՐՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԴԱՄԵԱՆ
ՈՐ ՅԱՐՄԱԽԻՐ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն
ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու վաստա-
կեալ սպասաւորիդ:

Սիրելի՛ Սրբազան,

Աւելի քան երեք տասնամեակ Դուք, որպէս ուխտեալ զինաւորն
Քրիստոսի, ամենայն պատրաստակամութեամբ Ձեր կարողութիւնները
ծառայեցնում էք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու տիրաւանդ առաքե-
լութեան արդիւնաւորմանը: Ձեր քահանայագործութեան առաջին քայ-
լերը Դուք կատարել էք Արարատեան Հայրապետական Թեմում, ապա
երկար տարիներ արդիւնաւորութեամբ հովուել Վառնայի հաւատաւոր
հայ համայնքը՝ արթուն սպասաւորութեամբ ջանքեր ներդնելով, որպէս-
զի ամրանայ հայորդեաց համայնքային կեանքը, զօրանայ մեր ժողովրդի
զաւակների կապը մեր Եկեղեցու հետ եւ նոր սերունդի հոգիներում ար-
մատաւորուի հոգեւոր ու ազգային ինքնագիտակցութիւնը:

Մենք Ձեզ ծառայութեան կոչեցինք Գեղարքունեաց Թեմում, ապա
Ձեզ վստահեցինք Արմաւիրի Թեմի Առաջնորդի պատասխանատու
պաշտօնը՝ բարի սպասումով, որ հայրենական ու սփիւռքեան ծառա-
յութեան փորձառութեամբ պիտի շարունակէք նոր յաջողութիւններով
արդիւնաւորել Ձեր գործունէութիւնը եւ աւանդ բերել մեր Եկեղեցու
պայծառութեանը: Այսօր ուրախ ենք հաստատելու, որ այս տարիներ
ի ընթացքին կարելին ի սպաս էք բերել՝ շէնացնելու Արմաւիրի Թե-
մը, առաւել արդիւնաւոր դարձնելու հոգեւորականց գործունէութիւնը

քաղաքներում ու գիւղերում՝ ի նպաստ մեր ժողովրդի զաւակների հոգեւոր կեանքի վերազարթօնքի:

Սիրելի՛ Սրբազան, Հայրապետական այսու Կոնդակով բարձր գնահատանքի ենք արժանացնում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու լուսաւոր անդամատանում Ձեր բազմամեայ ծառայութիւնը եւ շնորհում Ձեզ

ԱՐՔՈՒԹԵԱՆ ՊԱՏԻԻ:

Մեր մաղթանքն է, որ Տէրը օգնական լինի եւ զօրացնի նուիրեալ եկեղեցականիդ՝ Ձեր բարձր կոչման մէջ եւ պարգեւի մնայուն ձեռքբերումներով լեցուն քաջառողջ կեանքի երկար տարիներ:

Թող Բարին Աստուած Իր օրհնութեան ներքոյ անսասան պահպանի Արմաւիրի Թեմը եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին:


Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 26-ն Փետրուարի
յամի Տեառն 2019 եւ ի թուին հայոց ՌՆԿԸ.
ի մայրավանս Արբոյ էջմիածնի
ընդ համարաւ 1067





Ն.Ա.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ՝
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՄԻՔԱՅԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՅԵԱՆԻՆ
ԱՐՔՈՒԹԵԱՆ ՊԱՏԻ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՄԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱԻՈՐՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՄԻՔԱՅԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՅԵԱՆ
ՈՐ Ի ԳԻՒՄՐԻ

Նամայն հայութեան հոգեւոր կենտրոն լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերկրանօք սրտի յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Սիրելի՛ Սրբազան, Մայր Աթոռիս Հոգեւոր ճեմարանում ամբողջացնելով հոգեւոր Ձեր ուսումնառութիւնը, շուրջ երեք տասնամեակ առաջ Միածնի Իշման Սուրբ Սեղանի առջեւ մարմնի ու հոգու ծնրադրութեամբ ուխտ կնքեցիք Բարձրեալ Տիրոջ հետ՝ որպէս կուսակրօն եկեղեցական Ձեր կարողութիւններն անձնուիրաբար ի սպաս բերելու Կենաց Խօսքի քարոզչութեանը:

Երջանկայիշատակ Վազգէն Ա. Հայրապետի տնօրինութեամբ ծառայութեան կոչուեցիք Եղեգնաձորի Սբ. Խաչ եւ Գանձասարի Սբ. Յովհաննէս Մկրտիչ պատմական վանքերում, ապա տարբեր յանձնառութիւններ ստանձնեցիք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ ամենայն նախանձախնդրութեամբ իրականացնելով Ձեր առաքելութիւնը եւ հոգեւոր սնունդ ջամբելով մեր ժողովրդի հաւատաւոր զաւակներին:

Ձեր եկեղեցանուէր վաստակի բարձր գնահատանքով Մենք Ձեզ կոչեցինք Շիրակի Թեմի Առաջնորդի պաշտօնին եւ արժանացրեցինք եպիսկոպոսութեան բարձր կոչման, վատահոլութեամբ, որ նոր ու առաւել պատասխանատու հանգամանքի մէջ պիտի յաջողէք մշտարթուն ծառայութեամբ յաւելել պայծառութիւնը մեր Սուրբ Եկեղեցու: Մենք ուրախ ենք մեծապէս, որ Ձեր առաջնորդութեան տարիներին Թեմում համալրուել է հոգեւոր դասը, կառուցուել ու նորոգուել են բազում եկեղեցիներ,

ընդլայնուել է քարոզչական գործունեությունը՝ ի նպաստ Շիրակ աշխարհի Մեր սիրեցեալ զաւակների հոգեւոր կեանքի նորոգութեան:

Բարձր գնահատելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում Ձեր անմնացորդ ծառայությունը եւ տարիների վաստակը, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ

ԱՐՔՈՒԹԵԱՆ ՊԱՏԻԻ:

Ի խորոց սրտի մաղթում ենք, որ Աստծոյ օրհնութեան ներքոյ շարունակէք անյոգնաբեկ ծառայութեամբ նոր յաջողություններով բարեգարգել Ձեր արդիւնալի գործունեությունը՝ ի շինություն Շիրակի թեմի եւ ի պայծառութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Թող Տէրը շնորհի Ձեզ արեւշատ ու քաջառողջ կեանքի երկար տարիներ եւ ամենայն բարիք:


Ողջ լերութք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 26-ն Փետրուարի
յամի Տեառն 2019 եւ ի թուին հայոց ՌՆԿԸ.
ի մայրավանս Սրբոյ էջմիածնի
ընդ համարաւ 1068





Ն.Ա.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԱԸ՝
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՄՈՎՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՎՍԻՍԵԱՆԻՆ
ԱՐՔԻԹԵԱՆ ՊԱՏԻ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱԽՈՐՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՄՈՎՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՎՍԻՍԵԱՆ
ՈՐ Ի ԿՐԱՍՆՈՂԱՐ, ՌԴ

Սիրելի՛ Սրբազան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նուիրեալ սպասաւորիդ:

Սուրբ Էջմիածնի Հոգեւոր ճեմարանում եւ Զագորսկի Հոգեւոր Ակադեմիայում աւարտելով Ձեր հոգեւոր ուսումնառութեան ու պատրաստութեան շրջանը՝ Դուք Տիրոջ կանչով նուիրուեցիք աւետարանի լոյսը մեր ժողովրդի կեանքում տարածելու սրբազան գործին՝ որպէս կուսակրօն հոգեւորական Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Երջանկալիշատակ Վազգէն Ա Հայրապետի օրհնութեամբ Դուք հովուական ծառայութեան կոչուեցիք Մոսկուայի Սբ. Յարութիւն Եկեղեցում, ապա օրինակելի նուիրումով վարեցիք Սուրբ Հռիփսիմէ վանքի վանահօր պաշտօնը՝ Ձեր պարտականութեանց մէջ միշտ դրսեւորելով ծառայական մշտարթուն ոգի եւ աննուազ նախանձախնդրութիւն՝ հանդէպ մեր Եկեղեցին եւ քրիստոսասէր մեր ժողովուրդը:

Ձեր ծառայագործութիւնը առաւելաբար արդիւնաւոր եղաւ Հարաւային Ռուսաստանի Հայոց Թեմում, ուր, որպէս Առաջնորդ, պաշտօնավարում էք շուրջ քսան տարիներ: Մենք ուրախ ենք մեծապէս, որ Դուք կարողացել էք շահել հաւատաւոր հայորդիների սէրն ու զնահատանքը եւ միաւորել նրանց ջանքերը՝ յանուն Տիրախնամ Թեմում հոգեւոր վերազարթօնքի: Այս տարիների ընթացքին Ձեր քաջալերանքով եւ նախաձեռնութեամբ թեմում կառուցուել են նոր Եկեղեցիներ, իրագործուել բազում

եկեղեցաշէն ու ազգանուէր ծրագրեր՝ շինութիւն եւ պայծառութիւն յաւելելով քրիստոսահիմն մեր Սուրբ Եկեղեցուն:

Սիրելի՛ Սրբազան, բարձր գնահատելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում տարիների Ձեր վաստակը եւ նուիրեալ ծառայութիւնը, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ

ԱՐՔՈՒԹԵԱՆ ՊԱՏԻԻ:

Ի խորոց սրտի հայցում ենք, որ Բարձրեալն Աստուած Իր Սուրբ Աջով պահի ու պահպանի Ձեզ, զօրակից լինի բարձր ու պատասխանատու Ձեր կոչման մէջ՝ շնորհելով քաջառողջութիւն, արեւշատութիւն եւ նորանոր յաջողութիւններ՝ ի պայծառութիւն Հարաւային Ռուսաստանի Հայոց Թեմի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:


Ո՛ղջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝


ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա Կոնդակս ի 26-ն Փետրուարի
յամի Տեառն 2019 եւ ի թուին հայոց ՌՆԿԸ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1070







Տ. ՍՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԲԱՐՈՉԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ
ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(5 հունվարի 2020 թ.)

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եւ խաղաղություն կլինի Նրանով»
(Միքիա 5.5):

Սիրելի՛ հավատացյալներ,

Խաղաղության տենչանքը մարդկության մեծագույն փափագն է եղել, եւ այս երեկոն շատերին կանչել է եկեղեցիներ՝ խաղաղության փնտրտութիւն: Ամբողջ աշխարհում հազարավորներ այս պահին Բեթղեհեմի աստղի ուղեկցութեամբ իրենց քայլերն ուղղում են դեպի սուրբ մատուր եւ այնտեղ ծնված Մանուկը՝ հոգով եւ մտքով երկրպագելու խաղաղություն բերող Թագավորին, որ այսօր լույս աշխարհ եկավ համեստ մի մատուրում:

Խորհրդավոր այս երեկոն ամենքիս կրկին վերապրել է տալիս ժամանակով մեզնից շատ առաջ տեղի ունեցած պատմական իրողությունը՝ անհաս ու անըմբռնելի, մեծ եւ սքանչելի խորհուրդը Սուրբ Ծննդյան:

Ահա երկու հոգնած ճամփորդ, որ կտրել էին Հրեաստանը հյուսիսից հարավ, անցել էին դժվար եւ վտանգավոր ճանապարհներով, որպեսզի, իբրեւ պարտաճանաչ հրեաներ, մասնակցեն մարդահամարին: Բեթղեհեմում գիշերելու տեղ չգտնելով՝ իջեւանել էին մի քարայրում: Հովիւներն էին միայն մոտակայքում, որոնք, սարսափած Տիրոջ փառքի հայտնությունից, կարկամել էին, մինչ Տիրոջ հրեշտակը երեւաց, փարատեց նրանց վախը եւ ավետեց. «Քրիստոս ծնաւ եւ հայտնեցաւ, Ձեզ եւ մեզ մեծ աւետիս»:

Եւ ապա լուրջութեամբ ճեղքվեց, ու ինչպես հիմա բարձրաձայն ավետեցինք Աստվածորդու ծնունդը, երկնային զորքերի բազմությունն էլ սկսեց օրհնաբանել. «Փառք Աստծուն բարձունքներում եւ երկրի վրա խաղաղություն եւ հաճություն մարդկանց մեջ» (Ղուկաս Բ. 11–14): Ահա՛ երկրի

ու մարդկության կյանքում սկսվելիք նոր իրողությունը. խաղաղություն եւ մարդկանց մեջ սեր:

Բեթղեհեմից շատ հեռու չէր Հերովդես արքայի պալատը, որտեղից մշտապես ուրախության ձայներ էին լսվում: Մինչ Աստծու Որդին ծնվեց գոմում եւ լուսնյամբ դրվեց մսուրի մեջ: Ամեն անգամ, այս անմեկնելի խորհրդի առջեւ ծնկի եկած, երբ փորձում ենք հասկանալ, այդ հրաշք եղելությունը բացատրում ենք միայն եւ միայն Աստծու խոնարհումով ու Աստծու խոնարհության սքանչելի դրսեւորմամբ: Քանզի Աստված չի գործում այնպես, ինչպես մարդիկ կկամենային կամ կվարվեն, եթե ունենային հարստություն, ուժ եւ իշխանություն: Գիտենք, թե ինչպիսի տոնակատարություններ էին լինում, երբ ծնվում էին արքաների որդիները, սակայն երբ Աստծու Որդին էր ծնվում, այդ մասին ոչ ոք չգիտեր: Դեպի մսուր էին շտապում միայն մոզերը: Գալիս էին երկրպագության, քանի որ նրանց ուղեկցող աստղը կախվեց այդ ախոռի վրա՝ զարմացնելով մոզերին: Միթե այսպես տեղի պիտի ունենար աշխարհացունց իրադարձությունը՝ ծնունդը հրեաների թագավորի, որի միջոցով խոստացված խաղաղությունը պիտի հաստատվեր:

Իրապես, Հիսուսի ծնունդը, ինչպես որ Ավետարաններն են պատմում, մարդկային չափանիշներով շատ գեղեցիկ մի ծնունդ չէ. ոչ մի մարդ այդպես ծնվել չէր ուզենա, ոչ մի ծնող իր զավակի ծնունդն այդպիսին տեսնել չէր երազի: Աստված, սակայն, տնօրինեց, որ Հիսուս այդ խղճուկ պայմանների մեջ ծնվի, պանդխտության մեջ ծնվի, ախոռի՝ մեջ ծնվի, մսուրի մեջ դրվի: Աստված տնօրինեց, որ հրեշտակները երգեն եւ ավետեն այդ ծննդյան մասին, որպեսզի հետո տիեզերական երեւույթի վերածվի Օծյալ Փրկչի՝ Հիսուսի ծնունդը:

Աստծու խոնարհումով տրված նորահրաշ այս Մանուկը իրապես պետք է թագավորեր աշխարհի վրա ոչ թե ժամանակի ընթացքում, այլ ժամանակից դուրս, ոչ թե տարածության մեջ, այլ տարածությունից վեր, մարդկանց մեջ, նրանց հոգիներում պիտի հաստատեր Իր արքայությունը եւ բնակվեր այնտեղ: Երկրային Իր գահը, որ պարզ մսուրն էր, Գողգոթայի բարձունքին փոխվեց խաչով, եւ հարության վերստին ծնվելով՝ որպես նոր կյանքի սկիզբ, հարության խաղաղությունը թողեց մեզ. խաղաղություն, ուր չկան ցավ եւ հեծություն:

Աշխարհում խաղաղություն չտիրեց սակայն: Պատերազմները չդադարեցին...

Այսօր էլ սպանում են, եւ սպանվում՝ վասն Քրիստոսի: Աստվածաստեղծ աշխարհը շարունակում է փոթորկվել, դեռ ընդդիմանում է Սուրբ Ծննդյան ավետիսով քարոզվող խաղաղությանը: Նվազում է փառաբանությունը Տիրոջ, պակասում են այն ընկալելու պատրաստակամությունն ու ցանկությունը:

Հապա մարգարեն եւ իր խոսքը: Ո՞ր է խաղաղությունը: Եղավ Ծնունդ, որ կյանք տվեց՝ կյանքեր խլելով, բայց եւ կյանքեր խլելով՝ կյանք պարգեւեց՝ հավիտենականության մեջ:

Այդ հավիտենականության մեջ Աստծու ներկայությունը վայելելու պարգեւն է այդքան բաղձալի խաղաղությունը: Այդժամ կդադարեն պատերազմները, եւ կհանդարտվեն դրանք հրահրողներն ու սերմանողները, քանի որ հոգու խաղաղությամբ է վաստակվում միայն տեսանելի, նյութական, շոշափելի խաղաղությունը:

Հիսուս աշխարհ եկավ, որպեսզի լրացնի մարգարեությունները: «Իմ խաղաղությունն եմ թողնում ձեզ»,— ասաց Նա, երբ այլեւս իր աշակերտները չպիտի վայելեին Նրա երկրային ներկայությունը: Հիսուս մեզ է թողնում իր խաղաղությունը եւ այն պահելու ընտրությունը: Չի միջամտում մեր կյանքին, այլ թողնում է ազատ՝ իրազործելու աստվածային խաղաղության մեր ընկալումը: Կարող ենք մոգերի պես երկրպագել եւ մեր ընծաները տալ, կարող ենք Հերովդեսի պես մահ սփռել՝ անձնական «ես»-ը եւ փառքը փրկելու ահից: Կարող ենք սուր վերցնել եւ վնասել կամ ընտրել ունկն բուժել Հիսուսի անունով:

Անտարակույս, բոլորս էլ հավատում ենք, որ Նա է մեր Տերն ու Դատավորը, եւ մեր հավատքով վստահանում ենք, որ Նա է մեր Փրկիչը, սակայն ե՞րբ ենք լիովին կատարել Նրա կամքը, ե՞րբ ենք պահել Նրա պատվիրանները: «Մի՛ սպանիր»-ը... Սուր վերցնողը սրով կընկնի. զգուշացնում էր Հիսուս եւ նոր պատվիրան տալիս. սիրեցեք միմյանց: Սիրելը խաղաղություն է: Սերն է ծնում խաղաղությունը, եւ այդ սիրով է հաստատվում խաղաղությունը: Սիրելով չենք կարող ձեռք բարձրացնել եւ կտրել մեր նմանի կյանքի թելը: Սիրելով կհաստատվի խաղաղությունը երկրի վրա, կկորչի շարությունը, եւ կշատանա հաճությունը մարդկանց մեջ: Դյուրին չէ սիրել, դյուրին չէ մոռանալ անձնական «ես»-ը եւ նախեւառաջ մտածել մեր մերձավորի մասին, առավել եւս՝ սիրել թշնամուն: Բայց ունենք մեզ օրինակ՝ Քրիստոսին. Նա աշխարհ եկավ, դարձավ մեզնից մեկը եւ ապացուցեց, որ սիրո առաջ անհնարին բան չկա:

Ո՛վ հավատացյալներ, սիրով եւ հավատքով ենք եկել Նրա առջեւ երկրպագության, թե՛ Հերովդեսի պես ենք ներկայացել: Հոգով եւ ճշմարտությանմբ ենք գալիս երկրպագելու Նրան, Ով մեր կյանքի Փրկիչը եղավ, Ով ազատեց մեզ մահվան ճիրաններից: Փափագում ենք հովիվների եւ մոզերի պես գնալ, Նրան գտնել եւ Նրա կամքը կատարել:

Երանի թե մեզնից յուրաքանչյուրը հովիվների հավատքը եւ մոզերի գիտությունն ունենար. այն ժամանակ կնդրուկի եւ զմուռսի փոխարեն մեր սրտից պիտի ճշմարիտ աղոթք բարձրացնեինք առ Աստված, մեր երջանկությունը միայն մեզ չվերապահելով՝ նրանից պիտի բաժին հանեինք որբերի եւ սգավորների համար՝ արցունքը սրբելու եւ անոթիներին կերակրելու համար՝ որպես ճշմարիտ սիրո դրսեւորում: Նվիրվել, ընծայվել, պատարագվել, ահա՛ անկեղծ երկրպագությունը: Ահա խաղաղություն ծնեցնող զոհողությունները, որոնցով մեր հոգիներում ու մտքերում խաղաղությունը պիտի հաստատվի: Խաղաղություն ունենալու հնարավորությունը տրված է, եւ մենք ինքներս ենք ընտրում. ապրել սիրելով, թե՛ ապրել ապրելու համար:

Պարզամիտ հովիվների եւ իմաստուն մոզերի նման բացենք մեր սրտերը, ընծայենք մեր ամենաթանկագին ընծաները, զոհենք մեր եսասիրությունը: Երբեք հերովդեսներ, սուտ երկրպագողներ չլինենք, որ իրենց մարմինները խոնարհում են Նրա առջեւ, բայց սրտերը՝ ոչ, չլինի թե միայն շրթունքներով օրհնենք Փրկիչ Մանկանը եւ Փրկչի ծննդյան փոխարեն՝ մեր «ես»-ը փառաբանենք:

Արդ, ծնկելով Մանուկ Հիսուսի առջեւ, մեկ անգամ եւս երկրպագենք Ամենասուրբ Երրորդությանը՝ մեզ կրկին պարգեւված առիթի համար, որպեսզի մեր կյանքով վկայենք, որ խաղաղության կարելի է հասնել սիրո միջոցով, սիրո քարոզչությամբ եւ ձայնակցենք հրեշտակներին՝ ասելով. «Քրիստոս ծնաւ եւ հայտնեցաւ, Ձեզ եւ մեզ մեծ աւետիս»:

Սիրելիներ, ամենքս, Բեթղեհեմի աստղի լուսագծին հետեւելով, խաղաղության փնտրտուքով եկանք եկեղեցի, հաղորդվեցինք Քրիստոսին եւ Նրա Ծննդյան սուրբ խորհրդին, լուսավորվեցինք Սուրբ մատուցի բխող լույսով, եւ հիմա գնացեք, խնդրում եմ, տարածեք այդ լույսը եւ Ծննդյան ուրախ լուրը ձեր բարեկամներին, ազգականներին եւ յուրաքանչյուր մարդու, որին կհանդիպեք, եւ սիրո ու խաղաղության ավետիսը թող թեւածի հայոց եւ համայն աշխարհի վրա, այժմ եւ հավետ, ամեն:





**Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ ԷԶՄԻԱԾՆԻ Ս. ՍԱՐԻԱՍ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ՝
ՍՈՒՐԲ ԾՆՆՂՅԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻ ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(5 հունվարի 2020 թ.)

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
Օրհնեալ է յայտնութիւնը Քրիստոսի:

Յաճումն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, այսօր մեր եկեղեցիների սրբազան կամարների ներքո խնդուկթյուն է եւ բերկրանք. տոնն է Ծննդյան մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի: Քրիստոսի Սուրբ Ծննդյան տոնը տոնն է արդարութեան, տոնը՝ սիրո, եւ տոնը՝ հավատքի:

Քրիստոսի ծննդյան ժամանակաշրջանին ակնարկելով՝ ծնունդից շուրջ ութ հարյուր տարիներ առաջ, Եսայի մարգարեն այսպէս է բնութագրում այն՝ հայտարարելով. «Շատ ժամանակ չի անցնի, երբ կանաչապատ բնակավայրերը լեռների կնմանվեն, իսկ լեռները անտառների կվերածվեն: Ահա այս ժամանակ,— շարունակում է մարգարեն,— խուլերը կսկսեն լսել, կույրերը՝ տեսնել, եւ նրանք, ովքեր կորցրել են կյանքի ամեն հույս, ուրախություն եւ բերկրանք կապրեն» (հմմտ. Ես. ԻԹ. 17—19): Կարճ ասած՝ Եսայի մարգարեն հաստատում է, որ Քրիստոսի աշխարհգալուստով՝ իրերը կփոխեն իրենց դրութիւնը, տեղի կունենան հրաշալի ու աննախընթաց իրադարձութիւններ:

Քրիստոսի ծնունդը, սակայն, չուղեկցվեց հրավառութիւններով, չհնչեցին շեփորներ, չհրավիրվեցին կոշուքներ ու խրախճանքներ: Աշխարհալուստի համար Քրիստոս անթիվ, անհամար տարբերակներից ընտրում է ամենից անսպասելին ու ամենից անշուքը: Որպէս ծնողներ՝ ընտրում է համեստագույն երկու անձանց՝ Մարիամին եւ Հովսեփին: Հովսեփը՝ մի պարզ ու համեստ ատաղձագործ, իսկ Մարիամը՝ դեռատի մի աղջնակ: Նրանք ոչնչով աչքի չէին ընկնում իրենց ժամանակի մարդկանց շարքերում՝ ո՛չ հանրաճանաչութեամբ, ո՛չ կրթութեամբ եւ ո՛չ հասարակական դիրքով, որոնցով տպավորվում են սնափառութեան սովոր մարդիկ: Անշուք այս ծնունդը, սակայն, ընդգրկում էր ողջ Տիեզերքը:

«Երկիրները ցնծում էր» (Օրհնություն՝ Սուրբ Ծննդյան Ա. առուր, դկ. Բ.),— ասում է շարականագիրը: Ցնծացող երկնքի պատկերի հանդեպ բացարձակ անաղմուկ ու անարձագանք է, սակայն, երկիրը՝ սքանչելի այս իրադարձության առջեւ: Քրիստոսի ծննդյանը ներկա են միայն կենդանիներ եւ որոշ ընտրյալներ՝ հովիվներ, որոնք պատահականորեն գտնվում էին այդ վայրում, եւ հազվագյուտ պայծառատեսներ՝ մոգեր, որոնք հետեւելով աստղերին՝ կարողացան բացահայտել Քրիստոսի ծննդյան վայրը եւ մասնակից լինել երկնքի այդ ուրախությանը: Մարդկանցից այլեւս ոչ ոք հաղորդակից չդարձավ աշխարհը փոխող այս իրադարձությանը: Եւ ինչպիսի՜ հակադրություն. մի կողմից՝ մարդիկ սպասում են, որ պիտի գա Փրկիչ, որ իրենց պիտի փրկի՝ կույրերին տեսողություն, խուլներին լսողություն, կաղերին քայլելու կարողություն շնորհի, եւ մյուս կողմից՝ հայտնվում է մի մանուկ, որը, թվում է, թե ինքը իրեն չի կարող փրկել, ինքը պետք ունի խնամքի եւ ուշադրության: Մարդիկ մոնչացող առյուծ են սպասում, մինչդեռ աշխարհ եկողը մի խոնարհ գառնուկ է: Եւ, իհարկե, հուսախաբ պիտի մնան բոլոր նրանք, ովքեր Փրկչի հետ կապում են միայն այս կյանքի հույսեր: Պողոս առաքյալն ասում է. «Եթե միայն այս կյանքի համար ենք հույս դրել ի Քրիստոս, ավելի ողորմելի ենք, քան բոլոր մարդիկ» (Ա. Կորնթ. ԺԵ. 19): Քրիստոսի հետ կապված մեր հույսերը չեն առնչվում միայն այս աշխարհին: Քրիստոսից մենք միայն առողջություն, հաջողություն, բարեկեցություն, բարօրություն, բարգավաճում չէ, որ փնտրում ենք: Մեր հույսը հաղթահարում է այս աշխարհի սահմանները, մենք էական ենք, որոնց կյանքը ձգվում է մահվանից անդին: Քրիստոս բարի լուրը բերեց մեզ՝ ասելով, թե ո՛վ մարդիկ, հույսներդ կարող եք դնել Ինձ վրա, եթե դուք ունեք սպասում, այս կյանքից հետո առավել նոր ու պայծառ մի կյանք եք ունենալու:


Ուրիշ մի տեղ Պողոս առաքյալը՝ նույն ինքը՝ հեթանոսների քարոզիչը, ասում է. «Հույսը երբեք չի ամաչեցնում» (Հռոմ. Ե. 5): Իհարկե, մենք բազմաթիվ անգամներ հուսախաբություններ ապրել ենք, բազմաթիվ անգամներ իրերի դրությունը, դասավորվածությունը այնպիսին են եղել, որ մեր սպասելիքները, մեր ակնկալությունները չեն բավարարվել: Բայց քանի անգամ ենք մտածել՝ այդ ակնկալությունները եւ այդ սպասելիքները համապատասխանո՞ւմ են արդյոք Աստծո՞ւ՝ մեզնից ունեցած սպասումներին: Որքանո՞վ ենք մենք հաշվի առել, թե մեր

սպասումներն ու ակնկալությունները տեղավորվում են արդյոք Սուրբ Գրքի պատգամների ու պատվիրանների մեջ:


Մենք հուսալիս ենք չենք լինի, եթե մեր հույսերն ուղղված են մեր հոգեւոր կատարելագործմանը, հոգեւոր մեր փրկությանը: Ահա այստեղ Աստված երբեք ու երբեք չի ամաչեցնում մեզ: Երջանկությունը ոչ թե արտաքին պայմանականությունների մեջ է, այլ Աստծու կամքի հետ մարդու կամքի ձուլման մեջ: Հետեւությունը մեկն է. «Դու երջանիկ ես այն չափով, որ չափով քո կյանքի մեջ զգում ես Աստծու կենդանի եւ վավերական ներկայությունը»: Քրիստոսի ծնունդը եկավ այս գաղափարը ներշնչելու մեզ: Չէ՞ որ Քրիստոսի անունը էմմանուել է, էմմանուել, որ թարգմանվում է «Աստված մեզ հետ է» (հմմտ. Ես. է. 14): Չկա ավելի մեծ երջանկություն, չկա ավելի մեծ բարիք, չկա ավելի մեծ գոհունակության ու բերկրանքի զգացում, քան այն գիտակցումը, որ Աստված մշտապես մեզ հետ է: Երկրի բոլոր փառքերը, բոլոր հնարավորությունները ոչինչ կարող են լինել, եթե մեր կյանքից պակասում է Աստված, իսկ Աստծու հետ մենք ոչնչի պակասություն չենք կարող ունենալ:

«Նախ խնդրեցէք Աստծու արքայութիւնը եւ նրա արդարութիւնը, եւ այդ բոլորը Աստուած ձեզ աւելիով կտայ» (Մատթ. 23. 34), այսպես է հայտարարում Սուրբ Գիրքը, եւ Քրիստոս ինքն այս հաստատումն է կատարում Իր ծնունդով, Իր անվան ընտրությամբ, որ կամավոր Իր ընծայաբերությամբ՝ Աստված մեզ հետ է: Ուրեմն, սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, այսօրվա Սուրբ Ծննդյան ուրախությունն այն է, որ մենք եւս մեկ անգամ ամրապնդվենք մեր համոզման մեջ, որ Աստված ծնունդ առավ՝ մեզ հետ լինելու համար: Աստված եկավ աշխարհ՝ մեզ զորացնելու համար: Սա է Սուրբ Ծննդյան ուրախությունը, որ վերստին ու վերստին արձագանքում է մեր հոգիներում՝ «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ» տիեզերական ավետիսով:

Շնորհ, սէր եւ աստուածային սրբարար զօրութիւն ձեզ եւ մեզ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:







ԻՈՂԱՆ ԱՎԱԳԵՐԵՑ ՄԵՅՆԵՆԴՈՐՖ

ԱՍՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՂԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Տե՛ս նաեւ թիվ է., Ը., 2019 թ..

Խառնամուսնություններ

Եկեղեցական ամուսնության պաշտոնական նախապայմանը հավատքի միությունն է, այսինքն՝ ամուսինների՝ Ուղղափառ Եկեղեցուն պատկանելը: Լավոդիկեի (կանոն Ժ. եւ ԼԱ.)¹, Կարթագենի (կանոն ԻԱ.)² Ժողովների, Քաղկեդոնի (կանոն ԺԴ.)³ եւ Հինգ-վեցերորդ (կանոն ՀԲ.)⁴ տիեզերական ժողովների որոշումներն արգելում են ուղղափառի եւ ոչ ուղղափառի ամուսնությունն ու կարգադրում այդպիսի ամուսնությունները լուծել, եթե քաղաքացիական իշխանությունները դրանք գրանցել են:

Սակայն, իհարկե, դա ձեւական հարց չէ: Հավատքի ընդհանրությունն ամուսնությունը դարձնում է ճշմարիտ քրիստոնեական: Հարկավ, չպատկանելով իսկ նույն Եկեղեցուն՝ կարելի է վայելել ընկերության հաճույքը, կիսել միմյանց հետաքրքրությունները, զգալ իրական միությունը եւ «լինել սիրո մեջ»: Սակայն հիմնական հարցն այն է, թե արդյոք կարելի է մարդկային այդ բոլոր հարաբերությունները վերափոխել Աստծու Արքայության իրականության, եթե այդ հարաբերությունները հարստացված չեն Արքայությանը պատկանելու փորձառությամբ, եթե դրանք ամրացված չեն նույն հավատքով: Արդյոք կարելի է դառնալ «մեկ մարմին» ի Քրիստոս՝ առանց համատեղ հաղորդվելու Նրա Մարմնին եւ Արյանը: Արդյոք կարող է ամուսնական զույգը, միասնաբար չմասնակցելով Աստվածային Պատարագի Խորհրդին, մուտք գործել ամուսնության Խորհուրդ, Խորհուրդ, որը վերաբերում է «Քրիստոսին եւ Եկեղեցուն»:

¹* Տե՛ս «Правила Православной Церкви», т. II, էջ 86, 103, հմմտ. «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., էջ 231, 236:

²* Տե՛ս «Правила Православной Церкви», т. II, էջ 168:

³* Տե՛ս «Правила Православной Церкви», т. I, էջ 365:

⁴* Տե՛ս անդ, էջ 560–561:

Սրանք արդեն ձեւական հարցեր չեն, սրանք արմատական խնդիրներ են, որոնց պետք է պատասխանեն բոլորը, ովքեր այսպես թե այնպես բախվում են խառնամուսնությունների խնդրին:

Անկասկած, ամենադյուրին լուծումները տալիս են հարանվանական հարաբերապաշտությունը («մեր եկեղեցիների միջեւ շատ քիչ տարբերություններ կան») կամ պարզապես Հաղորդության վերացումը քրիստոնեական կյանքի կիզակետից: Ցավոք սրտի, նույնադավան եւ խառն ամուսնությունների միջեւ տարբերություն չդնող պսակադրության ժամանակակից փորձառությունը մարդկանց մղում է դեպի այս վերջին ճանապարհը: Արդեն խոսել ենք, որ այդպիսի փորձառությունը ամուսնության սրբանության ընկալման աստիճանաբար վերացումից է բխում, իսկ պսակադրության առանձնացումը Հաղորդությունից այդ գործընթացի ծայրահեղ դրսևորումն է: Վաղ Եկեղեցում բոլորն ընկալում էին խառնամուսնություններն արգելող կանոնները. ամեն ոք գիտեր, որ ուղղափառը եւ այլափառը չեն կարող միասնաբար մասնակցել Հաղորդության խորհրդին, որի միջոցով օրհնվում է ամուսնությունը: Սույն՝ առանց այդ էլ վիճելի հարցը, ոչ վաղ ժամանակներից սկսած, ավելի է բարդացել՝ տարբեր դավանանքի պատկանող քրիստոնյաների՝ միմյանց հետ Հաղորդության խորհրդին մասնակցելու բողոքական փորձառության պատճառով, փորձառություն, որը մասնակիորեն ընդունում են նաեւ ժամանակակից կաթոլիկները: Քրիստոսի տեսանելի Եկեղեցու եւ Հաղորդության նկատմամբ անձնական ու հասարակական պարտականություններն այստեղ հետագայում կարող են փոխարինվել անորոշ եւ կրավորական կրոնականությամբ, որի համար խորհուրդներն ունեն հույժ երկրորդական նշանակություն:

Հրաժարվելով տարբեր հարանվանությունների պատկանող եկեղեցիների միջեւ Հաղորդությունից՝ Ուղղափառ Եկեղեցին չի մերժում քրիստոնեական միությունը: Ընդհակառակը՝ նա պաշտպանում է ճշմարիտ եւ ամբողջական միությունը եւ մերժում է դրա բոլոր փոխարինիչները: Ուստի Եկեղեցին ամուսնության վերաբերյալ ցանկանում է, որ ամուսինները վայելեն ամբողջական միասնությունն ի Քրիստոս, հետեւաբար իրապես սուրբ են համարվում միայն այն ամուսնությունները, որոնցում երկու անձերը միավորվում են հավատի կատարյալ միությամբ՝ ամրացված Հաղորդության կնիքով:

Անցյալում «խառնամուսնություններ» հաճախ էին տեղի ունենում: Մեր բազմակարծ հասարակության մեջ, որտեղ ուղղափառության

ներկայացուցիչներն աննշան փոքրամասնություն են կազմում, մեր եկեղեցիներում ուղղափառությունից դուրս օրհնվող խառնամուսնությունները, ցավոք սրտի, կազմում են ամուսնությունների գերակշիռ տոկոսը (անընդհատ աճող): Բոլորս գիտենք, որ որոշ նմանատիպ ամուսնություններ բերում են երջանիկ ընտանիքների ստեղծման, եւ անխոհեմ ու անիրական կլիներ դրանք անխտիր արգելելը: Գործնականում որոշ խառնամուսնություններ ավելի ամուր եւ երջանիկ են լինում, քան ուղղափառների ամուսնությունները, որոնք երբեք չեն լսել քրիստոնեական ամուսնության իրական նշանակության մասին եւ չեն ստանձնել որեւէ քրիստոնեական պատասխանատվություն Աստծու առաջ: Այդ անվիճելի ճշմարտությունը չի նվազեցնում այն, որ Ավետարանը մեզ կոչում է ոչ թե ճշմարտության մասնակի բացահայտման եւ նույնիսկ ոչ բոլորի կողմից ընդունված մարդկային իմաստով «երջանկության»: Տերն ասում է. «Արդ, կատարյալ եղեք դուք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. Ե. 48): Քրիստոնեությունն անպատկերացելի է առանց կատարելության համար պայքարի: Կրոնական անտարբերությունը կամ քրիստոնեական հավատքի՝ որպես կյանքի երկրորդական տեսանկյան ընկալումն ինքնին բացառում է կատարելության ձգտումը, որի մասին խոսում է Քրիստոս: Եկեղեցին երբեք չի կարող հաշտվել անտարբերության եւ հարաբերապաշտության հետ:

Հետեւաբար ուղղափառ քահանան չի կարող օրհնել ուղղափառի եւ ալլափառի ամուսնությունը: Ակնհայտ է նաեւ, որ Հիսուս Քրիստոսի անվան հիշատակումը Նրան որպես իր Տեր չընդունող մարդու առջեւ զուրկ է ամեն իմաստից: Այդպիսի աղոթքն անհարգալից կլիներ ոչ միայն Աստծու, այլեւ մարդու եւ նրա համոզմունքների (կամ համոզմունքների բացակայության) նկատմամբ: Երբ ամուսնացող զույգերից մեկը մկրտված քրիստոնյա է, ապա Ուղղափառ Եկեղեցու օրհնությունն արդարացվում է Պողոս առաքյալի այն համոզմամբ, որ «անհավատ ամուսինը սրբագործվում է իր կնոջ միջոցով, եւ անհավատ կինը սրբագործվում է իր ամուսնու միջոցով» (Ա. Կորնթ. Է. 14): Բայց ավելի հավանական է, որ այս խոսքերը վերաբերում են այն ամուսնությանը, որի արդյունքում ամուսնացող զույգերից մեկը դառնում է ճշմարիտ հավատքի, այլ ոչ թե նրան, որ Եկեղեցու անդամն ամուսնանում է Եկեղեցին չճանաչող մարդու հետ: Ամեն դեպքում Եկեղեցին հույս ունի, որ ընտանիքի կրոնական միասնությունը կվերականգնվի, եւ կգա օրը, երբ երկու ամուսինները կմիավորվեն ուղղափառության մեջ:

Որոշ ուղղափառ թեմերի ընդունած այն կանոնը, որով խառնամուսնություն կնքող զույգից պահանջվում է ուղղափառության մեջ երեխաներին մկրտելու եւ դաստիարակելու գրավոր հավաստագիր, խիստ տարակուսելի է ինչպես սկզբունքային դիրքերից, այնպես էլ իրականության տեսանկյունից: Այստեղ փոխզիջումներ չեն կարող լինել. կամ ուղղափառ ամուսինն իր համոզումներում պետք է այնքան ուժեղ լինի, որ իր կրոնական ընկալումները փոխանցի երեխաներին եւ ողջ ընտանիքը վստահորեն առաջնորդի դեպի Եկեղեցի, կամ նա ընդհանրապես հրաժարվում է որեւէ գործողությունից: Իսկ նրանց նկատմամբ, ովքեր ամուսնանում են Ուղղափառ Եկեղեցուց դուրս, հովվական վերաբերմունքը պետք է միանգամայն որոշակի լինի: Այդպիսի ամուսնությունը դիտվում է որպես Խորհրդական շնորհի նկատմամբ դավաճանություն, որը մկրտության միջոցով տվել է Եկեղեցին, իսկ դա փաստացի անհամատեղելի է Եկեղեցուն պատկանելուն:

Կփարատվելին՝ ուղղափառների, եւ այլափառների խառնամուսնությունների հետ կապված բազմաթիվ տարակուսանքներ, եթե վերածնվելին ամուսնական ծեսը եւ Հաղորդությունը մեկ ամբողջության մեջ միավորող հին փորձառությունը: Այդ դեպքում խառնամուսնությունների ժամանակ պետք է օգտագործվեր Հաղորդությունից անկախ՝ միանգամայն այլ արարողություն (ինչպես եւ ուղղափառների երկրորդ եւ երրորդ ամուսնության պարագայում): Պատարագի ժամանակ խառնամուսնությունների օրհնության անհնարինությունն ինքնին բավականին խոսուն կլիներ եւ ցույց կտար՝ առաջին՝ Եկեղեցու կողմից սրբագործվող ամուսնության ճշմարիտ էությունը, երկրորդ՝ Եկեղեցու ցուցաբերած հովվական հանդուրժողականությունը խառնամուսնություն օրհնելիս, եւ վերջապես երրորդ՝ Եկեղեցու ցանկությունը, որ խառնամուսնությունը կատարելության հասնի հավատքի միության եւ Հաղորդության միասնական մասնակցության մեջ:

Ամուսնալուծություն

Ամուսնության իրավաբանական անքակտելիության, ամուսնալուծության ամբողջական եւ ամուսնու կենդանի լինելու դեպքում երկրորդ ամուսնության արգելքի վերաբերյալ կաթոլիկության ցուցաբերած համառությունը մինչեւ այժմ մնում է վիճաբանության առարկա: Այդ հարցի վերաբերյալ ուղղափառ տեսակետը շատ հաճախ որոշվում է սովորական

հակադրմամբ կաթոլիկությանը: Սակայն արդյոք ճիշտ է հայտարարելը, որ «Ուղղափառ Եկեղեցին թույլատրում է ամուսնալուծությունը»:

Ամուսնալուծության եւ երկրորդ ամուսնության վերաբերյալ կաթոլիկության ավանդական դիրքորոշումը եւ կանոնական իրավունքը հիմնվում են երկու նախադրույթների վրա. 1) ամուսնությունը քրիստոնյաների համար իրավաբանորեն անբեկանելի պայմանագիր է, 2) ամուսնական պայմանագիրը վերաբերում է միայն երկրային կյանքին, եւ հետեւաբար այն լուծվում է կողմերից մեկի մահվամբ:

Իսկ այդ հարցի ուղղափառ մոտեցումը ձեւավորվում է այլ՝ միանգամայն տարբեր նախադրույթներով.

1) Ամուսնությունը խորհուրդ է, որը քահանայական օրհնությամբ կնքվում է Եկեղեցու մարմնի անդամների միջեւ. ինչպես յուրաքանչյուր խորհուրդ, նույնպես եւ ամուսնությունն առնչվում է Աստծու Արքայության մեջ հավիտենական կյանքին եւ հետեւապես չի ընդհատվում ամուսիններից մեկի մահով, այլ նրանց միջեւ ստեղծում է հավերժական կապ, եթե նրանք այդ ցանկանում են, եւ եթե այդ տրված է նրանց (Մատթ. ԺԹ. 11):

2) Ամուսնությունը՝ որպես խորհուրդ, մոգական գործողություն չէ, այլ շնորհի պարգեւ: Լինելով մարդ՝ դրա մասնակիցները կարող են սխալվել եւ ամուսնության շնորհ խնդրել, երբ նրանք դեռ պատրաստ չեն ընդունելու կամ պողառատ դարձնելու այն:

Այդպիսի պատճառներից ելնելով՝ Եկեղեցին հնարավոր է համարում, որ շնորհը կարող է «ընկալված չլինել» եւ թույլատրում է ամուսնալուծությունն ու երկրորդ ամուսնությունը: Իհարկե Եկեղեցին չի խրախուսում կրկնամուսնությունը, ինչպես կտեսնենք անգամ այրիության պատճառով երկրորդ ամուսնությունը, որի պատճառն ամուսնական կապի հավերժ եւ անբեկանելի բնույթն է. Եկեղեցին միայն թույլատրում է երկրորդ ամուսնությունը, երբ որոշակի դեպքերում գտնում է, որ այն մարդու համար լավագույն որոշումն է:

Քաջ հայտնի են Քրիստոսի խոսքերն ամուսնալուծության դատապարտման վերաբերյալ. «Մովսեսը ձեր խստասրտության պատճառով ձեզ թույլատրեց արձակել ձեր կանանց, սակայն սկզբում այդպես չի եղել: Բայց ասում եմ ձեզ. «Ով իր կնոջն արձակի ոչ պոռնկության պատճառով եւ մեկ ուրիշի հետ ամուսնանա, շնություն արած կլինի. շնություն արած կլինի նաեւ նա, ով արձակվածի հետ ամուսնանա» (Մատթ.

ԺԹ. 8—9, հմմտ. Մատթ. Ե. 31—32, Մարկ. Ժ. 2—9, Դուկ. ԺԶ. 18)⁵: Սակայն պոռնկության պատճառով ամուսնալուծվելու հնարավորությունը եւ Պողոս առաքյալի խոսքերն այն մասին, որ կինը կարող է ամուսնուց բաժանվել (Ա. Կորնթ. Է. 11), հստակ ցույց են տալիս, որ Նոր Կտակարանն ամուսնական կապի անքակտելիության տակ չի հասկանում մարդկային ազատության լիակատար սահմանափակում: Այդ ազատությունը մեղքի եւ դրա հետեւանքների հնարավորությունն է ենթադրում. վերջին հաշվով մեղքը կարող է եւ խաթարել ամուսնությունը:

Բայց եւ այնպես որեւէ տեղ Նոր Կտակարանում որոշակիորեն չի թուլաւորվում ամուսնալուծությունից հետո երկրորդ ամուսնությունը: Պողոս առաքյալը, այրիների համար հնարավոր համարելով երկրորդ ամուսնությունը, միեւնույն ժամանակ խիստ բացասական է վերաբերվում ամուսնալուծվածների միջեւ երկրորդ ամուսնությանը. «Իսկ ամուսնացած զույգերին ոչ թե ես, այլ Տերն է պատվիրում. ոչ մի կին ամուսնուց թող չբաժանվի: Իսկ եթե բաժանվի, թող առանց ամուսնու մնա կամ դարձյալ իր ամուսնու հետ հաշտվի: Եւ ամուսինն իր կնոջը չթողնի» (Ա. Կորնթ. Է. 10—11):

Ինչպէս է Եկեղեցին հասկանում այս պնդումը: Եկեղեցու հայրերի գերակշիռ մեծամասնությունը, հետեւելով Պողոս առաքյալին, դատապարտում է երկրորդ ամուսնության բոլոր ձեւերը՝ լինի դա ամուսնություն այրիությունից թե ամուսնալուծությունից հետո: «Միջնորդություն քրիստոնյաների համար» երկի հեղինակ աթենացի նորադարձ փիլիսոփա Աթանազորասը († մոտ 177 թ.), կարելի է ասել, արտահայտում է Հին Եկեղեցու բոլոր հայրերի տեսակետը, երբ հատուկ խոսում է «շնության» պատճառով ամուսնալուծվածների երկրորդ ամուսնության մասին եւ ընդգծում, որ «նա, ով ազատվում է իր առաջին կնոջից, եթե անգամ նա վախճանվել է, որոշակի ծածուկ ձեւով խախտում է ամուսնական հավատարմությունը»⁶: Սակայն Եկեղեցին երբեք չի վերաբերվել Ավետարանին որպես մարդկային հասարակությանն ուղղված հարկադիր իրավաբանական կարգադրությունների համակարգի: Հասարակությունը պետք է Ավետարանն ընդունի որպես բացարձակ անհրաժեշտություն, որպես Արքայության գալստյան գրավական. այն ենթադրում է անձի հարատեւ պայքարը մեղքի եւ չարի

⁵ Ուշադրություն դարձրեք, որ «պոռնկության» պատճառով ամուսնալուծության մասին ավետարանական հատվածն առկա է միայն Մատթեոսի Ավետարանում: Քրիստոսի խոսքերում ամուսնալուծության արգելք չկա, ինչպես այդ Մարկոսի եւ Դուկասի Ավետարաններում է բերված:

⁶ Տե՛ս ATHENAGORAS ATHENIENSIS, Legatio pro Christianis, PG. 6, էջ 668:

դեմ, սակայն երբեք չի իջեցվում իրավաբանական պարտավորությունների կամ պարտականությունների օրենսգրքի հասկացության աստիճանի:

Այսպիսով՝ քրիստոնեական կայսրությունում թույլատրվում էին ամուսնալուծություններ ու կրկնամուսնություններ: Քրիստոնյա կայսրերի՝ հատկապես Կոստանդիանոսի, Թեոդոսիոսի եւ Հուստինիանոսի օրենքները սահմանում էին տարբեր իրավաբանական հիմքեր, որոնցով թույլատրվում էին ամուսնալուծությունը եւ երկրորդ ամուսնությունը: Այս գրքում դրանք բոլորը չենք կարող թվարկել: Ընդհանուր առմամբ դրանք բավականին հանդուրժողական բնույթ ունեին: Մինչ Թեոդոսիոս Բ. կայսեր՝ ամուսնալուծությունն արգելող օրենքը (վերջինս կողմերի փոխադարձ համաձայնության արդյունքն էր), 556 թ. Հուստինիանոս Բ. կայսրը կրկին թույլատրեց ամուսնալուծությունը, որը չեղյալ հայտարարվեց միայն Ը. դարում: Երկրորդ անգամ ամուսնանալու իրավունքով ամուսնալուծությունը թույլատրվում էր ոչ միայն ամուսնական անհավատարմության, այլեւ քաղաքական դավաճանության, կանխամտածված սպանության, ընտանիքից հինգ եւ ավելի տարի անհայտացման, շնության ապացուցված մեղադրանքի եւ վերջապես՝ ամուսիններից մեկի վանական դառնալու պարագաներում⁷:

Քրիստոնեական սկզբունքների խախտման համար եկեղեցական հայրերից որեւէ մեկը չէր քննադատում կայսերական այս օրենքները: Նրանք հասկանում էին դրանց անխուսափելիությունը: Հուստինիանոս Ա.-ի նման՝ կայսրերն անկեղծորեն ձգտել են այնպիսի օրենսդրության ստեղծման, որը կհամապատասխաներ քրիստոնեական կատարելատիպերին: Այս կամ այն օրենքը ձեւակերպելիս կայսրերը չէին խուսափում եպիսկոպոսների եւ աստվածաբանների հեղինակավոր խորհուրդներից: Հաճախ այդ խորհրդատուներն ընդգրկմանում էին կայսեր կամքին, եթե այն վնասում էր ուղղափառությանը. սակայն ամուսնալուծությանը վերաբերող օրինադրության հետ համաձայնում էին: Այդ օրինադրումն իր արտացոլումն է գտել բազմաթիվ հայրերի գրվածքներում. «Նա, ով իր առաջին կնոջ մահից հետո չի կարող պահպանել առաքինությունը,— գրում է Ս. Եպիփան Կիպրացին,— կամ ով բաժանվել է իր կնոջից այնպիսի բավարար հիմքերով, ինչպիսիք են անառակությունը, շնությունը կամ այլ շարագործություններ, եւ եթե նա ամուսնանում է այլ կնոջ, կամ եթե կինն ամուսնանում է ուրիշ տղամարդու հետ, ապա աստվածային

⁷ Տե՛ս Հուստինիանոսի ԻԲ. նովելը:

Բանը չի դատապարտում նրան, չի հեռացնում Եկեղեցուց կամ կյանքից. Եկեղեցին հանդուրժողաբար է վերաբերվում դրան՝ նրա թուլության պատճառով»⁸:

Թուլատրելով ամուսնալուծությունը՝ Եկեղեցին, սակայն, բազմիցս բացատրում էր մարդկանց ամուսնալուծության չարիք լինելը: Եւ Արեւելքում, եւ Արեւմուտքում հանդուրժողականությունն ամուսնալուծությանը վերաբերող պետական օրենքների նկատմամբ հանդուրժողականություն էր «անխուսափելի չարիքի» նկատմամբ:

Դա ներողամտություն էր, թե՛ անձնատրություն: Իհարկե առաջինը: Եկեղեցին միշտ հավատարիմ էր մնում նորկտականային հայտնություն չափանիշներին. միայն առաջին եւ միակ ամուսնությունն էր օրհնվում Հաղորդության ժամանակ:

Արդեն տեսել ենք, որ այրիացածների երկրորդ եւ երրորդ ամուսնությունները կնքվում էին միայն քաղաքացիական արարողության ճանապարհով եւ նախատեսում էին մեկից մինչեւ հինգ տարի ժամանակահատվածով եկեղեցական ապաշխարանք՝ Հաղորդությունից զրկումով: Նշյալ ժամանակաշրջանից հետո ամուսնական զույգը կրկին դիտարկվում էր որպես Եկեղեցու լիիրավ անդամ: Ամուսնալուծությունից հետո վերստին ամուսնանալը պահանջում էր ապաշխարանքի ավելի երկարատեւ ժամանակաշրջան՝ յոթ տարի: «Ով թողնում է իր օրինական կնոջը եւ ամուսնանում ուրիշի հետ, համաձայն Տիրոջ խոսքի՝ մեղավոր է շնության մեջ»: Մեր հայրերի կանոններով սահմանված է, որ այդպիսիները մեկ տարվա ընթացքում պետք է լինեն «ողբացողների» կարգում, երկու տարի՝ «Ս. Գրվածքներն ունկնդրողների», երեք տարի՝ «խոնարհվողների» թվում, եւ յոթներորդ տարում կանգնեն հավատավորների հետ, եւ այդպիսով հետապնդեն թուլություն ստանան մասնակցելու Հաղորդությանը» (Զ. տիեզերական ժողով, կանոն ԶԷ.)⁹:

Անշուշտ գոյություն ունեին մեծաթիվ լրացուցիչ հանգամանքներ, որոնք կապված էին ամուսնալուծության մեջ մեղավոր եւ անմեղ կողմերի տարբերակման հետ. գործնականում Եկեղեցու հովվական «տնօրինությունն» ավելի ներողամիտ էր, քան վերոնշյալ կանոնը: Սակայն շնության պատճառով ամուսնալուծվածներն ստիպված էին երկար ժամանակ (համաձայն ավետարանական խոսքի) զատված մնալ Եկեղեցու

⁸ EPIPHANIUS, Panarion sive Contra Haereses, Haeres. LIX, PG. 41, էջ 1024 C-1025 A:

⁹ «Правила Православной Церкви», т. I, էջ 577:

հավատավորներից եւ տաճարում լինել «ողբացողների», «ունկնդիրների» (այսինքն՝ նրանց շարքում, ովքեր ունկնդրում էին Ս. Գիրքը, սակայն Խորհուրդներին մասնակցելու թույլտվություն չունեին) եւ «խոնարհվողների» (այսինքն՝ նրանց թվում, ովքեր պարտավոր էին աստվածապաշտության որոշակի պահերի ծնկել՝ ի տարբերություն հավատավորների, որոնք այդ ժամանակ հնարավորություն ունեին նստելու կամ կանգնելու):

Հետեւաբար Եկեղեցին երբեք «չի ճանաչել» ամուսնալուծությունը եւ այն չի «կատարել». ամուսնալուծությունը միշտ դիտարկվել է որպես ծանր մեղք: Սակայն Եկեղեցին միշտ իր խնդիրն է համարել մեղավորների փրկությունը, նրանց հնարավորություն է տվել ուղղվելու, միշտ պատրաստ եղել ապաշխարանքից հետո ընդունելու հավատավորների շարքերում:

Եւ միայն Ժ. դարից հետո, կայսրերից ստանալով ամուսնությունների իրավաբանական գրանցման եւ դրանց օրինականության որոշման մենաշնորհը, Հռոմեական կայսրության քաղաքացիական, իսկ հետագայում նաեւ այլ երկրների օրենքների համաձայն՝ Եկեղեցին ստիպված եղավ ամուսնալուծություններ կատարել: Նոր իրադրությունը հանգեցրեց հավատացյալների՝ ամուսնության բացառիկության մասին քրիստոնեական ուսուցման ընկալման կորստին: Եկեղեցական ամուսնությունը եւ եկեղեցական ամուսնալուծությունը դարձան դատարկ ձեւականություն, արտաքին իրավաբանական իրողություն, անօրինական՝ քրիստոնեական խիստ բարոյագիտության տեսանկյունից:

Ես կառաջարկեի մեր եկեղեցական իշխանություններին՝ հիմնվելով Ս. Գրքի եւ եկեղեցական ավանդության վրա՝ դադարեցնել «ամուսնալուծություններ» կատարելը (որոնք ոչ վաղ անցյալից սկսած կատարվում են քաղաքացիական դատարաններում) եւ քննել երկրորդ ամուսնության թույլտվության հետ կապված գործերը: Այդպիսի թույլտվությունները պետք է ուղեկցվեն ապաշխարության որոշակի ձեւերով (համապատասխան յուրաքանչյուր անհատական դեպքի), եւ պսակի եկեղեցական օրհնությունը պետք է կատարվի «երկրորդ պսակի» կանոնի համաձայն: Նման փոփոխությունը մեր Եկեղեցու դիրքն ավելի որոշակի կդարձնե եւ հնարավորություն կընձեռեք առավել արգասավոր գործունեություն ծավալելու քարոզչության, առաջնորդության եւ հոգեւոր բժշկության ասպարեզներում:

Ընտանիք եւ ծնելիության կարգավորում

Հիսուս Ինքը խաչի վրա իր մահվան նախօրյակին՝ Խորհրդավոր ընթերիքի անմոռանալի պահին, հիշեցրեց որդեծնության բերկրանքի մասին. «Երբ կինը երկունքի ցավերի մեջ է, նրա համար տրտմություն է, որովհետեւ նրա ժամն արդեն հասել է. բայց երբ մանկանը ծնի, ուրախության շնորհիվ նեղության մասին այլեւս չի հիշի, քանզի աշխարհում մի մարդ էլ ծնվեց» (Հովհ. ԺԶ. 21): Բոլոր ծնողները գիտեն, որ «տրտմությունը», որն այդպես հաճախ մոռացվում է երեխայի ծնվելուց հետո, ոչ միայն մոր մարմնական տառապանքի, այլեւ այնպիսի անհանգստությունների պատճառն է, ինչպիսին, օրինակ, ընտանիքի դրամական դրությունն է, որի մասին սովորաբար ծնողները մտածում են դեռեւս մինչեւ երեխաների աշխարհ գալը: Այդ ամենի միջով սովորաբար անցնում է յուրաքանչյուր ընտանիք, երբ լույս աշխարհ է գալիս անօգնական եւ ձեզ վստահող նոր կենդանի էակ, որը ձեր սիրո եւ խնամքի կարիքն ունի:

Այստեղ ցանկալի է ցույց տալ Հիսուսի վերաբերմունքը երեխաների նկատմամբ. «Հիսուսն Իր մոտ կանչեց մի մանկան, նրան կանգնեցրեց նրանց մեջտեղում եւ ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չփոխվեք եւ մանուկների նման չլինեք, երկնքի արքայություն չեք մտնի» (Մատթ. ԺԸ. 2—3): Կարելի է արդյոք հասկանալ Տիրոջ այս նախազգուշացման խորքային իմաստը, որն ամենայն հավանականությամբ առավել ծածուկ է ողջ Ավետարանում, եթե ծնողները մտածված իրենց զրկում են երեխաներ ունենալու երջանկությունից:

Որդեծնությունն ու երեխաների դաստիարակությունը մեծագույն ուրախություն են եւ, արդարեւ, Աստծու օրհնություն: Գոյություն չունի քրիստոնեական ամուսնություն՝ առանց երկու ծնողների մաքուր եւ ջերմ ցանկության՝ ունենալու այդ ուրախությունը, կիսելու այն միմյանց հետ: Ամուսնությունը, որի մեջ երեխաներն անցանկալի են, հիմնված է վնասված եսակենտրոն եւ վավաշոտ սիրո վրա: Կյանք տալով ուրիշներին՝ մարդն ընդօրինակում է Աստծու ստեղծարար գործունեությանը, իսկ հրաժարվելով դրանից՝ նա ոչ միայն մերժում է իր Արարչին, այլեւ աղճատում է իր իսկ սեփական էությունը, որովհետեւ առանց կյանքի Արարչին եւ Հորն ամեն ինչում ընդօրինակելու ցանկության՝ մարդը դադարում է «Աստծու պատկեր եւ նմանություն» լինելուց:

Սակայն վերն արդեն տեսանք, որ ամուսնության վերաբերյալ քրիստոնեական տեսակետն էականորեն տարբերվում է հինկտակարանային-

հուղայականից հենց նրանով, որ հին հրեաների համար ամուսնությունը միայն որպես սերնդի շարունակության միջոցի նշանակություն ուներ, այն դեպքում երբ քրիստոնյաների համար ամուսնությունն ինքնանպատակ է, երկու էակների միություն սիրո մեջ, որն արտացոլում է Քրիստոսի եւ Եկեղեցու միությունը: Եւ իսկապես, ո՛չ Ավետարանում, ո՛չ Պողոս առաքյալի թղթերում եւ ո՛չ էլ հայրախոսական գրականության մեջ չենք գտնի տվյալներ, որոնցով ամուսնությունը որդեծնությանմբ է արգարացվում: Ս. Հովհան Ոսկեբերանն «Առ Եփեսացիս» թղթի իր մեկնության հրաշալի Ի. ճառում ամուսնությունը բնորոշում է որպես «միություն» եւ «խորհուրդ» եւ միայն երբեմն է հիշատակում որդեծնության մասին¹⁰:

Ժամանակակից քրիստոնեական մտածողությունը, հարցի վերաբերյալ կաթոլիկ հայեցակետը ծայր աստիճան խճճված են: Ծնելիության արհեստական կարգավորումն արգելող պապական էնցիկլիկան, ինչպես նաեւ դրա հաճախ աղճատող, իսկ երբեմն պարզապես խեղաթյուրող առատ մեկնաբանությունները քիչ են օգնում պարզաբանելու հարցը:

Մինչեւ վերջին ժամանակներս արեւմտյան մտածողության մեջ սեռական կյանքին եւ ամուսնությանը վերաբերող հարցերում գրեթե ամբողջությամբ տիրապետող էր Օգոստինոս Երանելու (354—430 թթ.) վարդապետությունը: Օգոստինոսը մարդու սեռական կյանքը եւ բնական սեռական բնազդը դիտարկում էր որպես աղբյուր, որի միջոցով Ադամի առաջին մեղքը փոխանցվում էր նրա սերունդներին: Այդ պատճառով ամուսնությունը մեղսական էր համարվում, իսկ սեռական կյանքը կարող էր միայն որդեծնության միջոցով արգարացվել: Հետեւաբար եթե որդեծնությունն արհեստականորեն կանխվում է, ապա սեռական հարաբերությունն ըստ իր էության դառնում է մեղսական՝ նույնիսկ օրինական ամուսնության պարագայում:

Ուղղափառ Եկեղեցին, ինչպես եւ Կաթոլիկը, ճանաչում է Օգոստինոսի սուրբ լինելը, սակայն նրա դոգմատիկ հեղինակությունը չունի անսխալականության նրբերանգը, ինչպես Արեւմուտքում: Եթե արեւելյան վանական գրականության մեջ սեռական կյանքը երբեմն նույնականացվում է մեղքի հետ, ապա ընդհանուր առմամբ Եկեղեցու ավանդությունը հաստատուն կերպով հավատարիմ է մնում Գանգրայի ժողովի որոշմանը, որը կտրուկ մերժեց ամուսնությունը դատապարտող ուսմունքը¹¹: Սեռական բնազդը՝ իր այլասերված եւ անբարո ձեւերով, հաճախ է միաձուլվում մեղքի հետ,

¹⁰ * *Св. Иоанн Златоуст, Творения, т. XI, С.-Петербург, 1905, էջ 165—183:*

¹¹ * *Св. «Правила Православной Церкви», т. II, էջ 39—49, հմմտ. «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., էջ 188—201:*

սակայն դա համենայն դեպս այն աղբյուրը չէ, որի միջոցով մեղքը տարածվում է մարդկային բոլոր սերունդների վրա: Ամուսնությունը՝ որպես այդպիսին, սրբազան է, այսինքն՝ կնոջ եւ տղամարդու հարաբերությունները մաքրագործված են Քրիստոսի Խաչով, վերափոխված են Ս. Հոգու շնորհներով եւ սիրո միջոցով փոխակերպված են հավիտենական կապի:

Եթե սեռական կյանքը համարժեք է մեղքին, եթե միայն որդեծնությունը կարող է քավել այդ մեղքը, ապա ամուսնությունը եւ սերնդի շարունակությունը, համեմատած կուսակրոնության հետ, նույնն են, ինչ ողորմելի փոխտարբերակը՝ իսկական քրիստոնեական կատարելատիպի հետ համեմատած: Այդ իմաստով ամուսնական հարաբերությունները գործնականում քրիստոնեական դրական նշանակություն չունեն. այն ամուսնական զուգը, որը խուսափում է որդեծնությունից, որոշակիորեն մեղսական է, եթե ընդունենք սեռական կյանքի եւ ամուսնության վերաբերյալ Օգոստինոսի տեսակետը: Նույնիսկ եթե ոչ վաղ անցյալում հրապարակված ծնելիության արհեստական կարգավորումն արգելող պապական «Humanae vitae» էնցիկլիկան չհիմնվեր Օգոստինոսի վարդապետության վրա, այլ արտացոլեր մարդկային կյանքի արժեքի նկատմամբ դրական տեսակետը, միեւնույն է, գործնականում անցյալի կաթոլիկ մտածողության մեջ տիրապետող սեռական կյանքի դիտարկումը որպես մեղսական, թեեւ անուղղակիորեն, սակայն խանգարում է Եկեղեցու ժամանակակից ղեկավարությանը փոխելու ծնելիության կարգավորման հարցում իր դիրքորոշումը:

Իր ողջ պատմության ընթացքում Ուղղափառ Եկեղեցին երբեք իրեն չի սահմանափակել տվյալ հարցի վերաբերյալ որոշակի կարծիքով: Սակայն դա ամենեւին չի նշանակում, որ բեղմնավորման եւ որդեծնության կարգավորմանը վերաբերող խնդիրը բացարձակապես հետաքրքրություն չի ներկայացնում ուղղափառների համար եւ առնչություն չունի նրանց կյանքին: Արդեն տեսանք, որ քրիստոնեության վերաբերմունքն ամուսնությանը ենթադրում է.

— որդեծնություն, որը սուրբ եւ բնական լինելով՝ քրիստոնեական ամուսնության անխուսափելի մասն է,

— նոր կյանքի ստեղծումը մարդու առանձնաշնորհն է՝ տրված նրան Աստծուց, առանձնաշնորհ, որից նա հրաժարվելու իրավունք չունի, եթե ցանկանում է պահպանել «Աստծու պատկերը եւ նմանությունը»՝ շնորհված նրան արարման ժամանակ:

Պապական էնցիկլիկան հիանալի է այդ երկու դրույթների հաստատմամբ, եւ այդ իսկ պատճառով պետք չէ այն արհամարհել լուրջ, որ այն պապական է:

Սակայն ընտանիքի ծրագրման վերաբերյալ վեճն ունի նաեւ այլ տեսանկյուններ, որոնք լայնորեն քննարկվում են ժամանակակից աշխարհում: Օրինակ՝ որպեսզի ծնողների կողմից իրենց երեխաներին պարզեւվող «կյանքն» ունենա միանգամայն մարդկային բնույթ, այն չպետք է սահմանափակվի մարմնական գոյությունը. դրա մեջ պետք է ներառվեն եւ ծնողական հոգատարությունը, եւ կրթությունը, եւ նյութական բավարար ապահովվածությունը: Նախապատրաստվելով երեխաների ծննդին՝ ծնողները պետք է պատրաստ լինեն նաեւ այդ պարտավորությունների կատարմանը: Սակայն լինում են տնտեսական, հասարակական եւ հոգեբանական իրադրություններ, որոնց դեպքում հստակ է, որ որեւէ երաշխիք չի կարելի տալ: Երբեմն գրեթե լիակատար վստահությամբ կարող ենք ասել, որ հաջորդ սերունդն ստիպված կլինի կրել եւ քաղց, եւ հոգեւոր աղքատություն:

Այդպիսի իրավիճակներում հատկապես կարեւոր նշանակություն ունի ընտանիքի ծրագրավորման հարցը, հարց, որը այնքան հին է, որքան աշխարհը: Անկասկած, քրիստոնյաներն արհեստական վիժման բուլոր ձեւերը, այսինքն՝ արգանդային պտղի կանխամտածված ոչնչացումը, ճանաչում են որպես սպանություն, եւ Եկեղեցին միշտ դատապարտում է այն: Սակայն ինքնազսպումն արդյոք միակ ընդունելի ելքն է: Արդյոք ինքնազսպումն ինքնին արարման աստվածատուր ուժի եւ կյանքի երկարաձգման սահմանափակման ձեւ չէ: Ինչպես Նոր Կտակարանը, այնպես էլ Եկեղեցական Ավանդությունն ինքնազսպումը համարում են ընտանիքի ծրագրման ընդունելի ձեւ: Ժամանակակից կաթոլիկ վարդապետությունը նույնպես խորհուրդ է տալիս դիմել պարբերական ինքնազսպման՝ արգելելով «արհեստական» միջոցները, օրինակ՝ հաբերը: Սակայն արդյոք իրականում տարբերություն կա՞ միջոցների միջեւ, որոնք սովորաբար ստորաբաժանում են «արհեստականի» եւ «բնականի»: Կա՞ արդյոք որեւէ բժշկական վերահսկում մարդկային կենսագործունեության «արհեստական» հսկողության նկատմամբ: Արդյոք չի՞ կարող այդ պատճառով այն ճանաչվել մեղսական: Եւ վերջապես, լուրջ աստվածաբանական հիմք ունեցող հարցը. արդյոք կարելի է՞ բոլոր «բնական» միջոցները համարել «լավ»: Չէ՞ որ դեռեւս Պողոս առաքյալն է ասել, որ


ինքնագսպումը կարող է հանգեցնել «կրքից այրվելուն»: Կարող է արդյոք գիտությունը ծնելիության վերահսկումը դարձնել այնպես բնական, ինչպես սննդի, բնակարանի, առողջության վերահսկողությունն է:

Որպեսզի ծնելիության կարգավորման հարցը ճիշտ լուծում ստանա, հերիք չէ բավարար կերպով պատասխանել այդ բոլոր հարցերին: Եթե նույնիսկ առանձին եկեղեցական իշխանությունները փորձեին հավանության արժանացնել այդպիսի վերահսկումը, ընդհանուր առմամբ այն երբեք ճանաչում չէր գտնի: Ամեն դեպքում ուղղափառ եկեղեցական Ավանդությունը երբեք չի առաջնորդվել բարոյականության վերաբերյալ վիճելի հարցերի միակազմապար բանաձևերի մշակման սկզբունքով: Ինքնագսպման անհրաժեշտության վերաբերյալ համապարփակ կարգադրություն չի կարող լինել. որոշիչ է մնում անձնական վճռականությունը, որն անխուսափելի է որոշ ամուսնական զույգերի համար, սակայն ամենեւին անհրաժեշտություն չէ մյուսների համար: Դա հատկապես ճիշտ է հակաբեղմնավորիչների վերաբերյալ:

Բեղմնավորման վերահսկման եւ դրա ընդունելի ձևերի հարցը յուրաքանչյուր քրիստոնյա ընտանիք կարող է լուծել խիստ անհատական կարգով: Լոկ իրենք՝ ամուսինները, կարող են ընդունել միակ ճիշտ որոշումը, եթե լուրջ են վերաբերվում քրիստոնեական պարտավորություններին եւ խորապես հավատում են Աստծու նախախնամությանը՝ խուսափելով նյութական ապահովության վերաբերյալ չափից դուրս մտահոգությունից («Ձեզ համար գանձեր մի՛ դիզեք երկրի վրա»: Մատթ. Զ. 19), երեսաների մեջ տեսնելով մեծ ուրախություն եւ Աստծու պարգև. պայմանով, եթե նրանց ամուսնական սերը չի կրում զուտ մարմնական եւ եսասիրական բնույթ, եթե նրանք միշտ հիշում են, որ սեռական հարաբերության աստիճանի իջեցված սերը դադարում է սեր լինելուց: Օրինակ՝ ապահովված ամերիկյան հասարակության մեջ գործնականում անիմաստ է ամուսնության առաջին երկու տարին խուսափել երեսաներ ունենալուց: Ամեն դեպքում խելացի հոգեւորականի խորհուրդը կարող է կարեւոր դեր խաղալ ամուսնական կյանքում «առաջին քայլը» ճիշտ կատարելու գործում:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանությունը եւ ծանոթագրությունները՝
Տ. ԱՆԴՐԵԱՍ ՎՐԴ. ԵԶԵԿՅԱՆԻ



ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, ՄՄ

ԱՄԻՐԱՆ ԲԱԴԻՇՅԱՆ
Վերականգնող ճարտարապետ

ԶԱՔԱՐԻԱ ՎԱՐՂԱՊԵՏ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՅԻՆ ԵՒ ՆՐԱ ՆՈՐԱՅԱՅՏ ԴԱՄԲԱՐԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՍՏՈՒՄ

Վերջին տարիներին Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Ս. Էջմիածին Մայր տաճարում առաջին անգամ իրականացվում են լայնածավալ նորոգչական-վերականգնողական աշխատանքներ, որոնց ընթացքում ի հայտ է եկել ինչպես հնագիտական ու վիմագրական, այնպես եւ արվեստաբանական հարուստ նյութ՝ բազմաշերտ որմնանկարներ¹:

2019 թ. դեկտեմբերի 23-ին՝ Մայր տաճարի զանգակատան շրջակա սալահատակի բարեկարգման աշխատանքների ժամանակ, անմիջապես զանգակատան առանցքով՝ մուտքից 8,85 մ արեւմուտք, սալահատակի մակերեւույթից մոտ 0,60 մ խորությամբ հայտնաբերվել է քարատապան (սարկոֆագ)՝ արձանագիր հարթ ծածկասալ-տապանաքարով² (նկ. 2): Նորաբաց հուշարձանի ստորին հատվածն ուղղանկյունաձեւ, միակտուր բաց դեղնադարչնագույն տուֆի մեջ 0,45 մ խորությամբ փորված

¹ Վեհափառ հայրապետի հանձնարարությամբ որմնանկարների վերականգնումն իրականացվում է «Որմնանկարների վերականգնման գիտահետազոտական կենտրոն» կազմակերպության նկարիչ-վերականգնողների խմբի կողմից՝ Արժանիկ Հովհաննիսյանի ղեկավարությամբ (Ա. ՊԱՊՈՅԱՆ, Էջմիածնի Մայր տաճարի որմնանկարների վերականգնման ընթացքը, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների եւ նյութերի ժողովածու, կազմող եւ խմբագիր՝ Կ. Մաթեոսյան, Երեւան, 2019, էջ 279): Ինչ վերաբերում է 2018–2019 թթ. տաճարի ներսում եւ արտաքին որմերի դժվարամատչելի տեղերում գտնվող վիմագիր վեց հիշատակագրությանը եւ գմբեթի խաչաթռռի (խնձորակի) արձանագրությանը, ապա դրանցով զբաղվել է վերհիշյալ խմբում ընդգրկված արվեստաբան Ավետիս Ավետիսյանը (Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Նորահայտ վիմական արձանագրություններ եւ վիմագրական ճշգրտումներ Էջմիածնի Մայր տաճարում, հանձնված է տպագրության «Հայագիտության հարցեր» պարբերականի 2020 թ. առաջին համարին):

² Նորաբաց հուշարձանը փաստագրել ու չափագրել է Մայր տաճարի վերականգնման նախագծի գլխավոր ճարտարապետ Ամիրան Բադիշյանը:

քարարկղն է ($1,91 \times 0,84$ մ), որը լցված էր հողով, ուր ամփոփված էր աճյունը: Ինչ վերաբերում է վերին հատվածին, ապա քարարկղի վրա երեսնիվայր տեղադրված էր դարձյալ ուղղանկյունաձեւ սալատապան ($1,85 \times 0,75$ մ), որը շրջելուց հետո պարզվել է, որ այն միեւնույն դամբարանի վերադիր ծածկասալն է, այն էլ՝ արձանագիր (նկ. Յա—ե):



Քանի որ Մայր տաճարի արտաքին սալահատակի նիշը նշանակալի փոփոխություն չի կրել (հաստատվում է գետնախարիսխների տակ բացված հիմնապատերի նիշերով), իսկ դամբարանը $0,60$ մ խորությամբ է եւ ունի վերին շուրթերի հորիզոնական հարթ մշակում, որի վրա տապա-

նաքարը կարող էր տեղադրվել միայն հարթ՝ արձանագիր մակերեսով (տապանաքարի հակառակ երեսն ունի անհարթ մակերեսով), ուստի կարելի է ենթադրել, որ բացառված չէ տապանաքարի՝ ի սկզբանե արձանագրությամբ զարմանալիորեն դեպի ներքե՝ երեսնիվայր տեղադրված լինելու հանգամանքը, որը հաստատվում է ոչ միայն տապանաքարի երեսնիվայր դիրքի փաստագրմամբ, այլեւ արձանագիր երեսի բացարձակ անաղարտ պահպանվածությամբ, որեւէ ազդեցությունների բացակայությամբ (տաշվածքի քայքայումներ ու մաշվածություններ, ժամանակագրական բնական այլ հետքեր):

Տապանաքարի եռատող վիմագիրը հայտնում է ոմն Զաքարիա վարդապետի անունը, որը վախճանվել է Հայոց ՌՃԸ., այսինքն՝ 1659 թ.: Վերծանությունը՝ ստորեւ.

ԱՅՍ Է ՏԼԱՂԼԱՆ ԶԼԱՔԱ/ՐԻԱՅ


ՎԼԱՂԴԱՊԵՏԻՆ, / ԹՎԻՆ ՌՃԸ. (1659):



Նկ. 1 Արձանագիր տապանաքարի գրանկարը (այս եւ ստորեւ ներկայացվող չափագրությունները Ամիրան Բաղդյանի)

Մինչ կպարզենք, թե ով է տապանագրում հիշատակված Զաքարիա վարդապետը, նախ համառոտ անդրադառնանք Հայաստանում այսօրինակ դամբարանների գոյության

Ժամանակագրությունը: Քարատապանով կամ սարկոֆագով ուղեկցվող թաղումները մեզանում տարածված են ինչպես ուրարտական ու անտիկ, այնպես էլ միջնադարի վաղ եւ երբեմն նաեւ զարգացած շրջափուլերում: Հնագետները քարատապանը բնորոշում են իբրեւ Վանի թագավորությունում գոյություն ունեցած թաղման ձևերից մեկը, «որից սկիզբ են առնում հեթանոս եւ քրիստոնյա հայերի մոտ լայն տարածում գտած եւ մինչեւ զարգացած միջնադար գոյատևած միակտուր քարաշեն սարկոֆագները»³: Այս տեսանկյունից Ս. էջմիածնի նորահայտ դամբարանը կարելի է համարել մեզ առայժմ հայտնի միակ օրինակը ժէ. դարից:



Նկ. 2 Մայր տաճարի հատակագիծը եւ նորաբաց դամբարանը՝ զանգակատան առջև

Հայաստանում պեղված դամբարաններից հայտնի են ինչպես քարաշեն, այնպես էլ կավե ու փայտե տապաններ: Վերջիններս բնորոշ են հատկապես պատմական Արտաշատի դամբարանադաշտին⁴: Ինչ վերաբերում է քարատապաններին, ապա դրանք հիմնականում տուֆից են, քանի որ տուֆն ավելի դյուրին է մշակվում, իսկ բազալտե քարատապանները սակավադեպ են՝ բնորոշ առավելապես բարձրաշխարհիկ անձանց⁵: Դրանք արտաքուստ եւ ներքուստ ունեն ուղղանկյունաձև մշակում՝ ներքուստ երբեմն մարդակերպ (անտրոպոմորֆ) փորվածքով, հիմնականում երկլանջ ծածկասալ-տապանաքարերով. այդպիսին

³ Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Ռ. ԹՈՐՈՍՅԱՆ, *Արգիշթիխիլիի սարկոֆագը*, ՊՐՀ, 1986, ՅՅ3, էջ 226:

⁴ Ժ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, *Արտաշատ II. Անտիկ դամբարանադաշտեր (1971—1977 թթ. պեղումներ)*, «Հնագիտական պեղումները Հայաստանում», հ. 17, Երևան, 1981, էջ 31—64:

⁵ Բազալտից է նաեւ Սյունյաց Գրիգոր Բ. թագավորին վերագրվող սարկոֆագը, որը թվագրվում է ԺԲ. դարով (Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Սյունյաց Գրիգոր Բ. արքայի անվանակիր սարկոֆագը, «Բանբեր հայագիտության», 2018, ՅՅ1, էջ 138, 147):

է, օրինակ, Վաղարշապատի մշակույթի տան հարեւանությամբ գտնվող ավերված վաղմիջնադարյան եկեղեցուն՝ 1979 թ. հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերված արձանագիր երկլանջ տապանաքարը⁶։ Արձանագրության վերծանությունը պարզել է Առավելյան նշանավոր տոհմից Խեչան ապոհյուպատ-պատրիկի (այսինքն՝ պատվո հուպատոսի) անունը, որի մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում պատմագիր Սեբեոսը⁷։

Կարելի է արձանագրել, որ քարատապանով ուղեկցվող թաղումները, բնորոշ լինելով դեռևս ուրարտական մշակույթին, շարունակվել են ընդհուպ մինչև ԺԲ.—ԺԳ. դդ., բայց ոչ ավելի ուշ, ուստի Զաքարիա վարդապետի նորաբաց քարատապանը կհամարեինք կրկնակի օգտագործված, եթե նրա շինության ու տեղադրության մասին չունենայինք ժամանակի պատմագիրներ Առաքել Դավրիժեցու եւ Զաքարիա Քանաքեռցու բավականին խոստովակալությունները, որոնց դեռ կանդրադառնանք։

Վերը նշեցինք, որ տապանագիրը հաղորդում է 1659 թ. վախճանված Զաքարիա վարդապետի անունը, որն ինչպես ստորեւ կտեսնենք, մատենագրությունից քաջ հայտնի, Հովհաննավանքի երբեմնի առաջնորդ Զաքարիա Վաղարշապատցին է։ Վկայված ստույգ թվականն արդեն իսկ հուշում է, որ Զաքարիան ապրել ու գործել է մի ժամանակաշրջանում, երբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում եւ բազմաթիվ այլ վանքերում ու եկեղեցիներում մեծ թափ էր ստացել եկեղեցաշինությունը, ամենուրեք բացվում էին վանական դպրոցներ եւ գրատներ։ Այս ամենին զուգահեռ ստվարացել ու կանոնավորվել էր նաեւ Ս. Էջմիածնի եւ հարակից խոշոր վանքերի միաբանությունը, ինչի մասին են վկայում Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում պահպանված 300-ից ավելի տապանագրերը՝ թվագրված ԺԷ.—ԺԹ. դդ.⁸։ Անշուշտ, նկատելի հոգեւոր ու մշակութային վերելքը պայմանավորված էր մեր երկրորդ Լուսավորիչ Ս. Մովսես Գ. Տաթևացի (1629—1633 թթ.) Ամենայն Հայոց կաթողիկոսի եկեղեցաշեն ու վարչատնտեսական բուռն գործունեությամբ, որին հավատարիմ մնացին նաեւ Ս. Էջմիածնի հետագա գրեթե

⁶ Գ. ԿԱՐԱՆՆՅԱՆ, Գ. ՍԱՐԳՍՅԱՆ, Հ. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Պ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Հայաստանի վաղ միջնադարի նորահայտ հուշարձաններ, ԲեՀ, 1992, 3^թ2, էջ 160, հմմտ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Վաղարշապատ. վանքերը եւ վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, 2016, էջ 354—355, արձ. 698։

⁷ «Պատմութիւն ՍԵԲԵՈՍԻ», աշխատասիրությամբ՝ Գ. Արքայանի, Երեւան, 1979, էջ 138։

⁸ Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցի տապանագրերի վերծանությունները տե՛ս Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Վաղարշապատ. վանքերը եւ վիմական արձանագրությունները, էջ 133—234, արձ. 150—501։

բոլոր գահակալները⁹։ Ս. Մովսես հայրապետի ջանքերով նոր ծնունդ առավ եկեղեցական վարդապետությունը, վանական դպրոցներում բարձրացվեց կրթության մակարդակը, շարունակվեց ու նոր ոճով զարգացում ապրեց գրչարվեստը եւ այլն¹⁰։ Ահա այս ժամանակի երեւելի հոգեւոր գործիչներից է ծագումով Վաղարշապատից Հովհաննես քահանայի որդի Զաքարիա վարդապետը՝ Ս. Մովսես Տաթեւացու շնորհաշատ աշակերտն ու քարտուղարը, որը ոչ միայն Երեւանի Ս. Անանիա առաքյալի անապատում (իմա՝ Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցի) հիմնված գրչության դպրոցի հայտնի գրիչներից էր, այլեւ Ս. Էջմիածնի միաբանն ու Հովհաննավանքի բազմարդյուն առաջնորդը, որը նոր շունչ հաղորդեց Ս. Մովսես Տաթեւացու հիմնած դպրոցին։ Նրա մասին ամփոփ, բայց բավականին բովանդակալից տեղեկություններ է ավանդում նախ ժամանակակից պատմագիր Առաքել Դավրիժեցին. «Զաքարիա վարդապետն, որ էր ի գեղջէն Էջմիածնի եւ էր նա առաջնորդ մեծափառ ուխտին Յոհանավանից, եւ սա եւս յաշակերտացն Մովսիսի կաթողիկոսին էր, այր երեւելի եւ փառաւոր ի մէջ աշխարհի, յոյժ հանճարեղ եւ ճոռոմախօս, խորհրդով եւ խելօք կորովի, եւ դիմօք ահարկու»¹¹։ Պատմագրի հաղորդումը նաեւ պարզում է, որ Ս. Մովսես Տաթեւացու մյուս աշակերտների պէս Զաքարիան եւս աչքի է ընկել ծավալած շինարարական գործունեութեամբ, որը հիմնականում իրականացրել է Հովհաննավանքում, որտեղ առաջնորդ էր. «...յաւուրս Փիլիպպոսի (Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսն է, 1633—1655.— Ա. Հ., Ա. Բ.) ձեռն ի գործ էարկ նորոգել զեկեղեցիսն եւ զտնէրն (սեղանատունն ու տնտեսատունը.— Ա. Հ., Ա. Բ.) Յոհանավանից, զի պարիսպն, որ շուրջանակի, նա միայն էր պիտանի... Զաքարիա վարդապետն ժողովեաց բազում վարպետս՝ քարահատ եւ փայտատաշ, եւ դարբին... սկսաւ նորոգել զվանքն. նախ զտներն եւ զխցերն ամենայն շինեալ աւարտեաց, եւ ապա զեկեղեցիսն...»¹²։ Բազմաշնորհ վարպետների խումբը գործը հաջողութեամբ ավարտում է 1652 թ., եւ Ս. Խաչի տոնին օրհնում եւ տեղադրում են Կաթողիկէ եկեղեցու վեղարը պսակող խաչը։

⁹ Այս մասին տե՛ս Վ. ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ, Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները (պատմական ակնարկ), Ս. Էջմիածին, 1996։

¹⁰ Ս. Մովսես Տաթեւացու կյանքի եւ գործունեության մասին տե՛ս Հ. ՆՆՐՍԷՍ ՎՐԳ. ԱԿԻՆԵԱՆ, Մովսէս Գ. Տաթեւացի Հայոց կաթողիկոսն եւ իր ժամանակը, Վիեննա, 1936. ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ. ԱՄԱՏՈՒՆԻ, Մովսէս Գ. Տաթեւացի կաթողիկոս Էջմիածնի, Վենետիկ, Ս. Ղազար, 1992. Շ. ԴԱՎԹՅԱՆ, Մովսէս Գ. Տաթեւացի. Ամենայն Հայոց կաթողիկոս, Երեւան, 2001. Տաթեւացուց մինչեւ Տաթեւացի, աշխատասիրութեամբ՝ Աշոտ դպիր Արեւշատյանի, Երեւան, 2002։

¹¹ ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻՇԵՅԻ, Գիրք պատմութեանց, աշխատասիրութեամբ՝ Լ. Խանլարյանի, Երեւան, 1990, էջ 282։

¹² Ն. տ.։

Մեծանուն վարդապետի կյանքին ու գործունեությանն առավել հանգամանորեն անդրադարձել է Ժէ. դարի մեկ այլ պատմագիր՝ իր իսկ աշակերտ Զաքարիա Քանաքեռցին: Պատմագրության էջերում նա քանիցս վկայակոչում է իր ուսուցչի անունը, իսկ վերջին՝ «Կոնդակ Սուրբ ուխտին Յօհաննու վանից» մասի ԺԲ. (12)՝ «Թէ ով ոք էին առաջնորդք վանացս» գլխում նախ համառոտ բնութագրում է 1637 թ. Հովհաննավանքի առաջնորդի աթոռն զբաղեցրած Զաքարիա վարդապետին՝ իբրեւ «քաջ եւ արի եւ յոյժ հանճարեղ, տեղեակ Հին եւ Նոր կտակարանաց... այր ճոռոմաբան առ ամենայն իրս եւ բանիւ արդիւնաւոր»¹³, ապա ԺԳ. (13)՝ «Պատմութիւն եւ վարք Զաքարիա վարդապետին» խորագրով գլխում մանրամասն տեղեկություններ է հաղորդում Զաքարիայի ուսումնառության, ձեռնադրությունների, Հովհաննավանքում առաջնորդության, կատարած շինարարությունների, էջմիածին վերադառնալու, այնտեղ վախճանվելու եւ թաղվելու վերաբերյալ: Ըստ Զաքարիա պատմագրի՝ Ժէ. դարասկզբին շահ Աբասի կազմակերպած բռնագաղթի հետեւանքով մանուկ Զաքարիան ծնողների հետ տեղափոխվում է Սպահան, ջուղայեցիներից ստանում իր առաջին գիտելիքները, ապա հանդիպում Մայր Աթոռ Ս. էջմիածնից եկած Դավիթ Դ. Վաղարշապատցի (1590—1629 թթ.) կաթողիկոսին, իբրեւ գրագիր ծառայության անցնում նրա ենթակայության տակ եւ ժամանակ անց կուսակրոն քահանա ձեռնադրվում. «Եւ յորժամ եկն յԱպահան Դաւիթ կաթողիկոսն, գնաց Զաքարիա եւ յարեցաւ ի նա եւ եղեւ նմա նօտար: Եւ կացեալ առ նա ժամանակ ինչ եւ յետոյ ընկալաւ աստիճան քահանայութեան մանկական տիօք եւ կուսակրօն սրբութեամբ պատարագէր ի Քրիստոս»¹⁴: Զաքարիան Սպահանում է հանդիպել նաեւ Ս. Մովսէս Տաթեւացի վարդապետին, որն իր աշակերտների հետ ժամանել էր Երեւանի Ս. Անանիա առաքյալի անապատում եպիսկոպոս ձեռնադրվելուց անմիջապես հետո: Վարդապետի համբավին քաջածանոթ՝ Զաքարիա Վաղարշապատցին աշակերտում է նրան, դառնում Ս. Մովսէս Տաթեւացու անձնական քարտուղարը: Գալով Ս. էջմիածին՝ Մովսէս եպիսկոպոսն ստանձնում է հայրապետական գահը (1629 թ.), իսկ Զաքարիային վարդապետական գավազան շնորհում. «Ընկալեալ ի նմանէ իշխանութիւն վարդապետական եւ ծառայէր նմա»¹⁵: Գահակալելով չորս տարի եւ երեք ամիս՝ Ս. Մովսէս Տաթեւացին վախճանվում, իսկ հայրապետական գահը ժառանգում է նրա աշակերտ Փիլիպոս

¹³ ԶԱՔԱՐԻԱ ՔԱՆԱՔԵՐՑԻ, Պատմութիւն. Կոնդակ Սուրբ ուխտին Յօհաննու վանից, աշխատասիրությամբ՝ Ա. Վիրաբեյանի, Երեւան, 2015, էջ 195:

¹⁴ Ն. տ., էջ 196:

¹⁵ Ն. տ.:

Ա. Աղբակեցին (1633—1655 թթ.): Վերջինս Զաքարիա վարդապետին շնորհում է եպիսկոպոսական գավազան, չնայած որ նա՝ իբրեւ գրագիր ու ռաբունապետ, շարունակում է կրել նաեւ «վարդապետ» հարգական տիտղոսը. «Ապա եղեւ կաթուղիկոս տէր Փիլիպպոս Աղբակեցի եւ արար զԶաքարիայն եպիսկոպոս եւ գաւազան ետ»¹⁶: Ձեռնադրությունից հետո, կաթուղիկոսի հրամանով, Զաքարիա եպիսկոպոսը՝ իբրեւ նվիրակ, մեկնում է Հունաստան, իսկ վերադառնալուց հետո՝ 1637 թ., նշանակվում Հովհաննավանքի առաջնորդ. «Հարկեալ ի կաթուղիկոսէն՝ երթեալ նստի առաջնորդ ի Յօհաննու վանք՝ ի թուին ՌՁԶ. (1637)»¹⁷: Զաքարիա Վաղարշապատցու գործունեությունը Հովհաննավանքում նշանավորվել է հատկապես բարենորոգչական աշխատանքներով, միաբանությունն ստվարացնելով, դպրոցը զարգացնելով եւ այլն. «Շինեաց ի մէջ հին պարսպին պարիսպ հարաւոյ կողմն եկեղեցւոյն, զտնտեսատունն, զսեղանատունն, զխցերն եւ զհոյակապ աղիւսաշէն հրուանդանքն... ժողովեաց զբազում գրեանս եւ ստացաւ բազում աշակերտս, որ եւ են՝ տրուպ Զաքէոսս, ընդ նոսա: Հաստատեաց եւ դպրատունս եւ զնուաստութիւն իմ կարգեաց ուսուցիչ մանկանց»¹⁸: Տեղին է նկատում հնագետ Կարո Ղաֆադարյանը, երբ նշում է, որ անուրանալի է Զաքարիա Վաղարշապատցու դերը Հովհաննավանքի դպրոցի հիմնադրման ու կայացման գործում, մասնավորապես՝ նա իր վանահայրութեան օրոք մեծացրեց դպրոցը, ավելացրեց աշակերտների թիվը, տարբեր վայրերից հրավիրեց հմուտ ու գիտակ ուսուցիչների, որոնցից են՝ Սիմեոն Զուղայեցին, Նիկողայոս Իլովացին, Զաքարիա Քանաքեռցին, եւ որն ամենակարեւորն է՝ այս դպրոցի հիման վրա էջմիածնում ստեղծվեց հայտնի Ժառանգավորաց դպրոցը, որը «ամենաբարձրն էր Արարատյան նահանգում եւ, ընդհանրապես, բոլոր հայկական դպրոցների մէջ, եւ նա էր, որ հետագայում հիմք դարձավ էջմիածնի ճեմարանին»¹⁹:

Մաշտոցյան Մատենադարանի (այսուհետ՝ ՄՄ) ՀՅ 3071, Հովհաննավանքում եւ Ուշիի վանքում 1651—1661 թթ. ընդօրինակված ժողովածուի ընդարձակ հիշատակարանում գրիչը, որը միեւնույն Զաքարիա Քանաքեռցի պատմագիրն է, քանիցս վկայակոչում է իր ուսուցչի՝ Զաքարիա Վաղարշապատցու անունը, որը բնութագրվում է իբրեւ «քաջ ռաբունապետ», «ջահ անշէջ եւ պարիսպ ազամանդեայ», «վէմ հաստատուն», որը «վերստեան նորոգեաց զեկեղեցիքս, որ աւերեալ էին (թեպետ բնագրում էր է.— Ա. Հ., Ա. Բ.)

¹⁶ Ն. տ.:

¹⁷ Ն. տ.:

¹⁸ Ն. տ., էջ 196—197:

¹⁹ Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ, Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները, Երեւան, 1948, էջ 55:

յանօրինաց»²⁰։ Զեռագրի ընդօրինակումն ավարտելուց հետո (1661 թ.) Զաքարիա պատմագիրն այն նվիրաբերում է Հովհաննավանքի դպրոցին՝ ի վայելումն մանուկների եւ ժամանակի հոգեւոր ու աշխարհիկ երեւելի այրերի, որոնց շարքում հիշատակում է նաեւ վանքի նորընտիր առաջնորդ Հովհաննես վարդապետ Կարբեցուն՝ Զաքարիա Վաղարշապատցու աշակերտին²¹, քանզի Զաքարիան արդեն վախճանվել էր. «Յիշեա՛ գթութեամբ Քո զառաջնորդ սուրբ ուխտիս Յօհանէս վարդապետն եւ զտէրն մեր զԶաքարիա ռաբունապետն՝ զհանգուցեալն ի կաճառս սրբոցն...»²²։

Բերված հիշատակությունները փաստում են, որ Զաքարիա Վաղարշապատցու աշակերտներից մեկն էլ նույնանուն պատմագիր Քանաքեռցին էր, որին նա հայոց լեզվի ուսուցիչ է կարգել Հովհաննավանքում, իսկ ծագումով Կարբից Հովհաննես վարդապետին 1646 թ. իր իսկ կամքով եպիսկոպոս է ձեռնադրել ու նշանակել առաջնորդական փոխանորդ։ Զաքարիա Վաղարշապատցին նույն թվականին մեկնել է Սպահան եւ Հովհաննավանք վերադարձել 1648 թ.՝ վերստին զարկ տալով եկեղեցաշինությանը։ Վարդապետը 1656 թ. մեկնել է Երուսաղեմ, իսկ վերադարձից հետո Ս. էջմիածնի միաբանները հորդորել են վերադառնալ Մայր Աթոռ։ Այստեղ էլ երեք տարի անց՝ 1659 թ., վախճանվել ու թաղվել է իր իսկ կառուցած դամբարանում։ Դավրիժեցու հաղորդմամբ՝ «նախ քան զվախճանն իւր ինքն փորեաց զիւր գերեզման, եւ պատրաստեաց քար տապանի (նկատի ունի քարատապանը.— Ա. Հ., Ա. Բ.), եւ ի յուլիս ամսոյ տասն՝ յաւուր տօնի Վարդավառին վճարեաց զայս կեանս մահուամբ... զոր յիւրում պատրաստեալ գերեզմանին թաղեցին իւրով տապանաւն»²³։ Այլ ամիս-ամսաթիվ է նշում Զաքարիա Քանաքեռցին. «Եւ փորեաց զգերեզմանն իւր առաջի զանգակատանն եւ սալայատակ արար զտեղին... փոխեցաւ առ յոյսն ամենայնի Քրիստոս, ի ՌՃԸ. (1659) թուին, յունիս ամսոյ Լ. (30)²⁴, յաւուր կիրակէի Վարդավառին, եւ եղաւ ի տապանի

²⁰ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ժ., խմբագրութեամբ Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, 2019, սիւն 333։

²¹ Զաքարիա Քանաքեռցին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաեւ Հովհաննես Կարբեցու մասին՝ նրան բնութագրելով իբրեւ Զաքարիա Վաղարշապատցու հաջորդի, որը վարքով գրեթե չէր տարբերվում իր նախորդից (մանրամասն տե՛ս ԶԱՔԱՐԻԱ ՔԱՆԱՔԵՐՑԻ, էջ 195, 198, հմմտ. Ա. ԱՍԱՏՐՅԱՆ, Կարբի. պատմություն, հուշարձաններ, ազգագրություն, Երեւան, 2010, էջ 75–76)։

²² Նույն տեղում, սյուն 340։

²³ Ա.ՌԱՔԵԼ ԴԱՒՐԻԺԵՑԻ, էջ 283։

²⁴ Ճիշտը Դավրիժեցու հաղորդածն է, քանի որ ըստ գերմանացի ականավոր մաթեմատիկոս Կառլ Դաուսի բանաձեւի՝ 1659 թ. Զատիկն ապրիլի 3-ին է եղել, որից 14 շաբաթ անց,

անդ, զոր ինքն փորեաց»²⁵։ Փաստորեն, հայտնաբերված քարատապանի գոյությունն այդ վայրում²⁶ վավերացվում է նաեւ պատմիչների վկայություններով, որոնց հիմամբ կարելի է հավաստի համարել նաեւ դամբարանի թվագրումը։ Նկատենք, որ վերոհիշյալ պատմագիրները տապանաքարի արձանագրության մասին որեւէ տեղեկություն չեն հաղորդում, ինչը եւս վկայում է տապանաքարի՝ ի սկզբանե երեսնիվայր գրված լինելու մասին, այսինքն՝ նրանք տապանագիրը չեն տեսել։

Զաքարիա վարդապետի գործունեությունը լուսաբանող լրացուցիչ տեղեկություններ են պահպանվել նաեւ ինչպես վիմագրերում, այնպես եւ նրա գրչագրած ու պատվերով ընդօրինակված ձեռագրերի հիշատակարաններում։ Իբրեւ Հովհաննավանքի առաջնորդ՝ նա ավելի վաղ հիշատակված է նույն վանքի Կաթողիկե եկեղեցու 1639 թվակիր նվիրատվական վիմագրերից մեկում, ըստ որի՝ Աղաբաբի որդի Ավագ Երեւանցին եւ իր ամուսին Դաստագուլը, միաբանելով սուրբ ուխտին, Փարպիից կալվածք են գնել ու նվիրել Ս. Կարապետ եկեղեցուն, որի դիմաց՝ «...առաջնորդ սորա Զաքարիա վարդապետ՝ հանդերձ Կ. (60) միաբանօք, խոստացան պատարագել զՔրիստոս, վասն մեր տօն Մեծահրաշին յամենայն ամի...»²⁷։ Դատելով վիմագրից՝ Զաքարիա վարդապետի առաջնորդության օրոք վանքն ուներ առնվազն վաթսուն միաբան։

Նշանավոր վարդապետի գործունեությունը լավագույնս արտացոլված է նաեւ մեզ հասած մի քանի ձեռագրերի գրչության եւ հետագայի հիշատակարաններում (ՄՄ ՅԺ201, 503, 507, 659, 953, 9147)։ Աշակերտելով Ս. Մովսես Տաթևացուն՝ Զաքարիա վարդապետն սկսել է գրչարվեստով զբաղվել Երեւանի Ս. Անանիա առաքյալի անապատում, որտեղ 1620-ականների սկզբներին Ս. Մովսես Տաթևացին գրչության դպրոց էր հիմնել։ Վաղագույն՝ 1623 թվակիր ձեռագիրը (ՄՄ ՅԺ9147), որից

այսինքն՝ հուլիսի 10-ին նշվել է վարդավառը։ Մեզ հաղորդած այս տեղեկությունների համար շնորհակալություն ենք հայտնում ազգագրագետ Հասմիկ Աբրահամյանին։

²⁵ ԶԱՔԱՐԻԱ ՔԱՆԱՔԵՌԵՅԻ, էջ 197–198, հմմտ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԵՊՍ. ՇԱՀԽԱԹՈՒՆՅԱՆՅ, Ստորագրություն Կաթողիկե էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրությանը Ա. Տեր-Ստեփանյանի, Ս. էջմիածին, 2014, էջ 24։

²⁶ Նշենք, որ բացի Մայր տաճարի զանգակատան աջ եւ ձախ կողմում գտնվող Ամենայն Հայոց հայրապետների շիրիմներից, մի տապանաքար էլ պահպանվել է տաճարի հարավային կողմում, եւ ըստ տապանագրի՝ ննջեցյալը ծագումով Զուղայից Զանխաթունենց տոհմից խոջա-վաճառական Մատուրի որդի խոջա Գրիգորն է՝ վախճանված 1616 թ.։ Սա լավագույնս վկայում է այն, որ Մայր տաճարի շուրջը թաղումներ են արվել դեռեւս ժէ. դարի սկզբներին (Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Վաղարշապատ. վանքերը եւ վիմական արձանագրությունները, էջ 126, արձ. 141)։

²⁷ Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ, Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները, էջ 80–81, արձ. 12։

ընդամենը մի քանի թերթ է մեզ հասել, տարբեր նյութերի ժողովածու է («Գոլք Սաղմոսին», «Վասն Սաղմոսի եւ ժամատեղեաց», Ներսես Շնորհալու հանելուկներ, «Հաւատով խոստովանիմ» աղոթքը, Հովսեփ Աղթամարցու տաղեր), որի վերջում գրեթե անվնաս պահպանվել է գրչության հիշատակարանը: Երեւանի Ս. Աստվածածին եկեղեցու (թերեւս Կաթողիկէն է) եւ Ս. Անանիա առաքյալի անապատի հովանու ներքո ընդօրինակված ձեռագրի գրիչ Զաքարիան, որը, ըստ ամենայնի, միեւնոյն Զաքարիա Վաղարշապատցին է, հիշատակարանում գրվատանքով է բնութագրում մեծ ռաբունապետ Ս. Մովսէս Տաթեւացուն. «Տիեզերալոյս եւ համակ բարի, մեծափառ եւ հեզայհոգի, ճշմարիտ էկլէսիաստէս, երիցս երանեալ հայրս հանուրց իշխաւղ եւ իշխեցող, պատուական եւ սրբայսնունդ հայրապետ եւ քաջ ռաբունապետ...»²⁸:

Առավել խոսուն է Երեւանի Ս. Անանիա առաքյալի անապատում 1625 թ. ընդօրինակված Ժամագրքի հիշատակարանը (ՄՄ 3^թ507): Գրիչ Զաքարիա Վաղարշապատցին (հիշատակարանում՝ էջմիածնեցի) անվանապես հիշատակում է Ս. Մովսէս վարդապետի աշակերտներից շատերի՝ արդեն հանգուցյալներ Արիստակէս Շամբեցի, Իսրայել Մեղրեցի, Նաեւ՝ Խաչատուր Կեսարացի, Փիլիպոս Աղբակեցի եւ այլ վարդապետների, իր մորեղբայր Կարապետ եպիսկոպոսի, գրիչներ Մինասի, Պողոսի, Առաքելի, Եսայու անունները, երբեմն նաեւ՝ միաբանների զբաղեցրած պաշտոնները, օրինակ՝ Զաքարիա լուսարար, Ղուկաս եւ Ղազար ջահընկալներ, Կարապետ խոհարար եւ այլք²⁹: Նշված երեւելի հոգեւորականների անունները կարդում ենք նաեւ Զաքարիա Վաղարշապատցու պատվերով՝ 1660 թ. Սպահանում Աստվածատուր գրչի ընդօրինակած Աստվածաշնչի հիշատակարանում (ՄՄ 3^թ201), որտեղ ուշագրավ է հատկապես պատվիրատու Զաքարիային բնութագրող հատվածը. «Չնչին ես եւ եղուկ եղկելիս, եւ ամենամեղ պարտականս բիւրոց, եւ Ռ.աց (1000) քանքարաց Զաքարիա, ի տանէս Արարատեան, ի Վաղարշապատ, շողակաթիկ Սուրբ Աթոռոյս էջմիածնի, առաջնորդ Ամատունեաց Սրբոյ Կարապետիս, որ ի ստորոտս Արագածու եւ ի գաւառիս Կարբոյ եւ յԱնբերդոյ... յուսացեալ ի յուսալին ամենից յամենասուրբ Երրորդութիւնն, որ ետ կարողութիւն նորոգել զսուրբ տաճարքս զայսոսիկ աստուածաբնակք: Որ եւ ամենայն զարդիւք

²⁸ Հայերեն ձեռագրերի ժե. դարի հիշատակարաններ, հ. Բ., կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երեւան, 1978, էջ 99, 3^թ147:

²⁹ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ., կազմեցին՝ Օ. Եզանեան, Ա. Զեյթունեան, Փ. Անթաբեան, Ա. Քեօշկերեան, Երեւան, 2004, սիւն 1047, հմմտ. Հայերեն ձեռագրերի ժե. դարի հիշատակարաններ, հ. Բ., էջ 176, 3^թ256ա:

շնորհօքն Քրիստոսի զարդարեցի զսուրբ եկեղեցիքս...»³⁰։ Համանման է նաեւ ժամանակագիր Դավիթ Բաղիշեցու հիշատակությունը, որը նույնպես Ս. Մովսես Տաթևացի եւ Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսների օրոք գործած նշանավոր վարդապետների շարքում երկիրցս նշում է նաեւ Զաքարիա վարդապետ Վաղարշապատցու անունը։ Երեւելի վարդապետները բնութագրված են «գլխաւորք եւ անյաղթ փիլիսոփայք եւ սիւնք եկեղեցոյ, աշակերտք Մովսէսի, որք աշխատեցան ի շինումն սուրբ էջմիածնին»³¹։

Տապանագրի համաձայն եւ ըստ պատմագիրների՝ Զաքարիան վախճանվել է 1659-ին, ուստի առաջին հայացքից հակասություն է առաջանում 1660 թ. հիշատակարանում նրա անվան վկայության շուրջ։ Կարծում ենք՝ այս երեւույթի միակ բացատրությունը կապված է գրչագրումն ավելի վաղ սկսելու եւ արդեն Զաքարիայի մահից հետո ավարտելու հետ, որտեղ գրիչը մահվան մասին հավելյալ չի հիշատակել։

Զաքարիա Վաղարշապատցու անունը վկայված է նաեւ ՄՄ 3507 ձեռագրի 1651 թվակիր հետագայի հիշատակարանում, համաձայն որի՝ Զաքարիան իր երբեմնի ընդօրինակած ժամագիրքը նվիրել է Հովհաննավանքի Ս. Կարապետ եկեղեցուն եւ նույն թվականին նորոգել եկեղեցիները. «Ես՝ Զաքարիա վարդապետ, առաջնորդ սուրբ ուխտիս Յօհաննուվանից, ընդ բազում արդեանց իմոց, զոր արարի, ետու եւ զձեռագիր ժամագիրքս յիշատակ ի Սուրբ Կարապետս, յամի որում նորոգեցի զեկեղեցիք ի թուին Ռ. եւ Ը. (1651)։ Արդ, մի ոք հանցէ զսա ի դրանէ Սուրբ Կարապետիս, վասն Աստուծոյ աղաչեմ»³²։ Աղբյուրագետ Վազգեն Հակոբյանի համոզմամբ՝ այս հիշատակարանը Զաքարիա վարդապետի ինքնագիրն է³³ (նկ. 4ա)։ Գրեթե նույնաբովանդակ վկայություն է պահպանվել նաեւ ՄՄ 3503, Կ. Պոլսում 1601 թ. ընդօրինակված Ժողովածուի 1651 թ. հիշատակարանում, որտեղ Հովհաննավանքի առաջնորդ Զաքարիա վարդապետը հաղորդում է, որ «ընդ բազում աշխատանաց իմոց եզի եւ յիշատակ ի

³⁰ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զեյթունեան, Փ. Անթաբեան, Երեւան, 1984, սիւն 877, հմմտ. Հայերեն ձեռագրերի ժէ. դարի հիշատակարաններ, հ. Գ., կազմեց՝ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ, Երեւան, 1984, էջ 920, 3507/ա։

³¹ ԴԱՎԻԹ ԲԱԳԻՇՅԱՆԻ ժամանակագրությունը (Ժէ. դար), «Մանր ժամանակագրություններ», ԺԳ.—ԺԸ. դդ., հ. Բ., կազմեց՝ Վ. Հակոբյան, Երեւան, 1956, էջ 357։

³² Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ., սիւն 1049, հմմտ. Հայերեն ձեռագրերի ժէ. դարի հիշատակարաններ, հ. Գ., էջ 428, 3503/ա։ Զ. Միքայել Զամչյանը եկեղեցիների նորոգումը վերագրում է 1652-ին. «Ի սմին ժամանակի նորոգեցին եւ կանգնեցին այլք եւս զվանս եւ զեկեղեցիս ի բազում տեղիս... Զաքարիա վարդապետ ի զեղջէ էջմիածնի, զուխտն Յօհաննավանից՝ հանդերձ եկեղեցեաւն, ի թուին Հայոց ՌՃԱ. (1652)» (ՄԻՔԱՅԷԼ ԶԱՄՉԵԱՆՅԱՆ, Պատմութիւն Հայոց, հ. Գ., Երեւան, 1984, էջ 648)։

³³ Հայերեն ձեռագրերի ժէ. դարի հիշատակարաններ, հ. Գ., էջ 428, ծնթ. 25։

դուռն Սուրբ Կարապետիս զ[ը]նթհանրական գիրքս՝ մնալ մինչեւ յաւիտեան: Թվին ՌՃ. (1651)»³⁴: Նույնն է նաեւ ՄՄ ՅՄ 659, Կաֆայում 1368 թ. ընդօրինակված Կանոնագրքի 1651 թ. հիշատակարանը, ըստ որի՝ ձեռագիրը Հովհաննավանքի Ս. Կարապետ եկեղեցուն նվիրաբերելուց բացի, Զաքարիա վարդապետը վերստին նշում է նաեւ եկեղեցիները նորոգելու մասին. «...ետու եւ զԿանոնագիրքս յամի ՌՃ. (1651), որում ամի նորոգեցի զեկեղեցիքս»³⁵: Նշված օրինակներն ինքնին վկայում են նաեւ Զաքարիա վարդապետի ձեռագրապահպան առաքելության մասին, որի արդյունքում մեծապես հարստացել է Հովհաննավանքի մատենադարանը:

Վանքը նորոգելու առումով հատկանշելի է նաեւ ՄՄ ՅՄ 953 Մաշտոցում պահպանված 1656 թ. ծավալուն հիշատակարանը, որի հեղինակը Զաքարիա Վաղարշապատցին է: Հիշատակագիր Յոհան քահանա Տաթեւացին հեղինակի անունից որոշ մանրամասներ է հաղորդում, մասնավորապես՝ Հովհաննավանքում իր կենդանության օրոք Զաքարիան առաջնորդական փոխանորդ է կարգել Հովհաննես Կարբեցուն, «...որ է յաջորդ իմ եւ փոխանորդ ի Սուրբ Աթոռս (նկատի ունի Հովհաննավանքը.— Ա. Հ., Ա. Բ.) ի կենդանության իմում եւ յետ մահուն»³⁶, իսկ ինքն ուղեւորվել է Սպահան եւ վանքի նորոգման համար հանգանակություն կազմակերպել, որը հետագայում ծառայեցրել է համալիրի հիմնանորոգմանը, քանզի «խախտեալ եւ հնացեալ բովանդակ շինուածքն սուրբ եկեղեցեացն, եւ ոմանց ի նոցանէ փայտիւ զտանիսն ծածկեալ, որ օգնականութեամբն Աստուծոյ վերստին նորոգեցաք մեծապայծառ ճոխութեամբ...»³⁷:

ՄՄ ՅՄ 507 ձեռագրում պահպանվել է նաեւ Զաքարիա վարդապետի աշակերտ, պատմագիր Զաքարիա Քանաքեռցու 1680 թվակիր ինքնագիր հիշատակարանը (նկ. 4ա—բ), որն առնչվում է ձեռագրի նորոգմանն ու կազմմանը՝ ձեռամբ Զաքարիա պատմագրի: Հիշատակարանում կազմողը չի շրջանցել նաեւ իր ուսուցչի՝ Զաքարիա Վաղարշապատցու անունը, որը միաժամանակ նաեւ ձեռագրի գրիչն ու նվիրատուն է. «Եւ որք վայելեն զսայ, յիշեսցեն զաշխատաւորսն, որք ունին երախտիք առ դրան Սուրբ Կարապետիս՝ զԶաքարիա քաջ ըմբռնապետն՝ զառաջնորդ

³⁴ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ., սիւն 1036, հմմտ. Հայերեն ձեռագրերի Ժէ. դարի հիշատակարաններ, հ. Գ., էջ 428, ՅՄ 681:

³⁵ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ., կազմեց՝ Օ. Եգանեան, Երեւան, 2007, սիւն 236:

³⁶ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Գ., սիւն 1414—1415, հմմտ. Հայերեն ձեռագրերի Ժէ. դարի հիշատակարաններ, հ. Գ., էջ 710, ՅՄ 1078/ե:

³⁷ Ն. տ.:

ուխտիս, որ զգիրքս գրեալ՝ եղ յիշատակ աստ, եւ Յօհաննէս վարդապետ (Կարբեցի.— Ա. Հ., Ա. Բ.)՝ փոխանորդ նորա, եւ այլ միադէն (միայնակյաց.— Ա. Հ., Ա. Բ.) միաբանք ուխտիս, եւ զիս՝ փանաքի եւ մեղապարտ Զաքարիա կազմօղս (Քանաքեռցի.— Ա. Հ., Ա. Բ.), եւ որք յիշեն, յիշեալ լիցին ի Քրիստոսէ օրհնելոյն յաւիտեանս. ամէն»³⁸:

Ընդհանրացնելով վերոբերյալ հիշատակությունները՝ կարելի է արձանագրել.

ա. Ս. Էջմիածին Մայր տաճարի զանգակատան դիմաց 2019 թ. հայտնաբերված քարատապանի վերագիր տապանաքարի վիմագրում հիշատակված է Ս. Մովսէս Տաթեւացու աշակերտ, գրիչ, ստացող, Ս. Էջմիածնի միաբան, Հովհաննավանքի երբեմնի առաջնորդ ու տեղի դպրոցի երախտավոր Զաքարիա վարդապետ Վաղարշապատցին:

բ. Տապանաքարի՝ քարատապանի վրա երեսնիվայր դիրքով փաստագրումն ու պատմագիրների նկարագրություններում տապանագրի վերծանության կամ դրա մասին հիշատակության բացակայությունն ինքնին թույլ են տալիս ենթադրել, որ արձանագիր տապանաքարն ի սկզբանե հենց երեսնիվայր է դրվել:

գ. Նորահայտ տապանագրում առկա թվականն ու պատմագիրների վկայությունները Զաքարիայի՝ Մայր տաճարի զանգակատան դիմաց թաղվելու մասին հիմնավոր են դարձնում դամբարանի թվագրումը, ինչով պայմանավորված՝ այն ուշ միջնադարից մեզ հասած առայժմ միակ գտածոն է, որը լրացնում է մեր պատկերացումները միջնադարում քարատապանով ուղեկցվող թաղումների ժամանակագրության համապատկերում:

РЕЗЮМЕ

23 декабря 2019 года при демонтаже плиточного настила вокруг колокольни Кафедрального собора Святого Эчмиадзина, на расстоянии 8,85 м к западу от входа в колокольню и на глубине около 0,60 м от уровня плит был обнаружен саркофаг с гладко вытесанным надгробным камнем, с высеченной на нем надписью. Согласно эпитафии, здесь покоится скончавшийся в 1659 году Закария Вардапет (архимандрит).

³⁸ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ., սիւն 1050:

Историограф Аракел Даврижеци, а позднее и Закария Канакерци для данного периода упоминают священнослужителя Святого Эчмиадзина, бывшего настоятеля монастыря Ованнаванк и одного из покровителей местной школы архимандрита Закарию Вагаршапатского. Последний, согласно историографам, был учеником Мовсеса Татеваци (1629—1633 гг.), его секретарем, который получил из рук Католикоса Пилипоса Ахбакеци (1633—1655 г.) епископский жезл, а перед своей кончиной изготовил близ колокольни собственный саркофаг, в котором и был погребен. Эти упоминания историографов подтверждают указанную на саркофаге дату, а значит это первая известная нам подобная находка XVII века.

Исследованиями было установлено, что Закария Вардапет также копировал и заказывал рукописи, о чем свидетельствует ряд дошедших до нас памятных записей о создании и дальнейшей судьбе манускриптов.


SUMMARY

On December 23, 2019, while dismantling the tile floor around the bell tower of the Cathedral of Holy Etchmiadzin, at a distance of 8.85 m west of the entrance to the bell tower and at a depth of about 0.60 m from the level of the slabs, a sarcophagus with a smoothly carved tombstone and a commemorative inscription was found. According to the epitaph, Archimandrite Zakaria, who died in 1659, was buried there.

For the given period, historiographers Arakel of Tabirz and later Zakaria of Kanaker mention the name of Archimandrite Zakaria of Vagharshapat, clergyman of Holy Etchmiadzin, the former abbot of the Monastery of Hovhannavank and one of the founders of the local school. According to the historiographers, he was one of the disciples of Movses of Tatev (Catholikos 1629—1633) and his secretary, who was ordained bishop by Pilipos of Aghbak, Catholikos of All Armenians (1633—1655). Before his death, he made his own sarcophagus near the bell tower, in which he was buried. These evidences of historiographers confirm the date indicated on the sarcophagus, which means that this is the first discovery of the seventeenth century known to us.

Studies have shown that Archimandrite Zakaria also copied and ordered manuscripts, as evidenced by a number of memorable colophons that have reached us about the creation and further fate of manuscripts.

ԿՏՐՎԱԾՔ 3-3




ԲԵՅՎԱԾ ԴԱՐՔԱՐԱՆԻ ՏԵՄԸ



ՏԵՊԵՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՄԻ ՏԵՄԸ



ՏԵՊԵՐԱԿԱՆ ԱՉՔԱՐԱՆԻ ԹՅՈՒՆ



Նկ. 3ա—Ե Նորաբաց Բարատապանը եւ վերադիր արձանագիր տապանաբարը

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, ՀՊՄՀ, ԳՀՃ, ՍՎԴ

ՎՃԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՒ ԶԻՎԱԴԻ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ ՎԱՆԻ ՆԱՅԱՆԳՈՒՄ (1914 Թ. ՆՈՒԷԼԻՍ-ՆՈՅՆԱՐԵՐ)

Օսմանյան Թուրքիայի ռազմական նախարար էնվերը, հիմք ընդունելով դաշնակցության հետ ունեցած բավական սերտ շփումները, նախքան Ռուսաստանի դեմ պատերազմելը՝ 1914 թ. ամռանը եւ աշնանը, պատգամավորներ ուղարկեց նախ էրզրում, ապա Վան եւ Մուշ՝ հայերի հետ բանակցելու, նրանց իրենց կողմը գրավելու¹ եւ Արեւելյան Հայաստանում ռուսական իշխանությունների դեմ «յեղափոխութիւն յարուցանելու փորձ կատարելու» համար²։ 1914 թ. հուլիս-օգոստոսին էրզրումում հրավիրված Հ. Յ. դաշնակցության 8-րդ ընդհանուր ժողովի ժամանակ իթիհատի նշանավոր ներկայացուցիչներ Նաջի, Հիլմի եւ Շաքիր բեյերը դաշնակցության ներկայացուցիչներ Ակնունուն, Ռոստոմին եւ Ա. Վռամյանին խոստանում էին Ռուսաստանի դեմ պայքարի դուրս գալու եւ թուրքերի հետ Կովկասը նվաճելու դեպքում հայերին զիջել ինչպես Կարսը, Երեւանի նահանգը, Գանձակի նահանգի հայաբնակ շրջանները, այնպես եւ՝ Վանը, Բիթլիսը, էրզրումի նահանգի մի մասը եւ այդ տարածքներից կազմել ինքնավար Հայաստան՝ Օսմանյան պետության հովանու ներքո³։ Այդ մասին Ս. Վրացյանն իր հուշերում հայտնում է, որ էրզրումում նոր էր վերջացել դաշնակցության 8-րդ ընդհանուր ժողովը, երբ տեղ հասան

¹ Ե. ԱԻ. ՔԷՆՅ. ԳԵՂԱՄԵԱՆՅ, Հայերի ազատագրական շարժումները XX դարում, կամ Հայկական հարցի եօթներորդ շրջանը (մասն երկրորդ), Բաքու, 1915–1917, էջ 584։

² ՀԱԱ, ֆ. 1120, ց. 1, գ. 76, թ. 37։

³ Ե. ԱԻ. ՔԷՆՅ. ԳԵՂԱՄԵԱՆՅ, նշ. աշխ., էջ 585։ Այդ մասին ավելի հանգամանորեն տե՛ս նաեւ Հ. ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ, Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութիւնէն մինչեւ Ժ. Ընդ. ժողովը (1890–1924), Աթէնք, 1988, էջ 108, նաեւ Ա. ԱՄՈՒՐԵԱՆ, Հ. Յ. Դաշնակցութեան Ը. (էրզրումի) Ընդհ. ժողովի մասին (գումարուած 1914 թուի յուլիսի 25-ից մինչեւ օգոստոս 17), «Ազգակ Շաբաթթօրեակ», Բէյրութ, 1980 յունուար 27, թիւ 2, էջ 22–25, փետրուար 3, թիւ 3, էջ 43–47, փետրուար 10, թիւ 4, էջ 68–70, փետրուար 17, թիւ 5, էջ 91–93, փետրուար 24, թիւ 6, էջ 115–116։ Նախատեսվում էր Թիֆլիսի, Քութայիսի նահանգները, Բաթումի շրջանը եւ Տրապիզոնի նահանգի մի մասը տալ Վրաստանին, իսկ Դաղստանը, Բաքվի նահանգը եւ Գանձակի նահանգի մի մասը՝ Կովկասի թաթարներին. տե՛ս Ա. ԴՅՈ, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914–1915 թուականներին, Երեւան, 1917, էջ 73–74։

իթթիհատի ներկայացուցիչներ Բեհաեդդին Շաքիրը եւ Նաջի բեյը, որոնք ժողովի մասնակիցներին առաջարկեցին հակառուսական ապստամբական շարժում ծավալել Կովկասում՝ փոխարենը խոստանալով Հայաստանի ինքնավարություն կովկասյան եւ մասամբ սահմանակից արեւմտահայկական հողերից: Սակայն Դաշնակցությունը չընդունեց երիտթուրքերի այդ առաջարկը՝ միաժամանակ հայտնելով, որ արեւմտահայությունը կշարունակի, չեզոքություն պահպանելով, կատարել իր պարտքը Օսմանյան հայրենիքի հանդեպ⁴:

Այդ մասին է փաստում նաեւ Ե. Տեր-Մինասյանը Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությանն ուղղված 1915 թ. նոյեմբերի 11-ի իր զեկուցագրում⁵:

Շարունակելով արեւմտահայերին սիրաշահելու քաղաքականությունը՝ Նաջի բեյը 1914 թ. սեպտեմբերի սկզբներին էրզրումից մեկնեց Վան: Նրա ուղեւորության բուն նպատակն այս անգամ Վանի նահանգի հայությունը Ռուսաստանի դեմ հանելն էր եւ նրանց մեջ հավատ ներշնչելը Օսմանյան Թուրքիայի բարյացակամության նկատմամբ: Այդ նպատակով Վանում սկսվեցին խորհրդակցություններ եւ հանդիպումներ, որոնց մասնակցում էին մի կողմից Դաշնակցության ներկայացուցիչներ Ա. Վոսմյանը (որը սեպտեմբերի 16-ին Կ. Պոլսից ժամանել էր Վան)⁶, Իշխանը, Արամը եւ Վ. Փափագյանը, իսկ մյուս կողմից՝ իթթիհատի ներկայացուցիչ Նաջի բեյը, Վանի նահանգապետ Թահսինը եւ իթթիհատի Վանի մասնաճյուղի քարտուղար Ֆուադը: Բանակցությունները վերաբերում էին Կովկասյան ճակատում առաջիկա՝ Սարիղամիշի ճակատամարտի ժամանակ հայերի կողմից թուրքերին ակնկալվող օգնությանը եւ այն «օգուտներին», որ հայերը կարող էին եւ պետք է ստանային ապագայում: Ըստ այդմ՝ Նաջի բեյը ներկայացնում էր իթթիհատի քաղաքական ծրագիրն Առաջին աշխարհամարտի տարիներին, որի համաձայն՝ երիտասարդ եւ վերածնվող Թուրքիան, դաշնակցելով հզոր Գերմանիայի հետ, պետք է սաստեր Ռուսաստանի ռազմական հզորությունը եւ նրան հետ շարտեր դեպի հյուսիս՝ Կովկասյան լեռներից այն կողմ: Անդրկովկասը նվաճելու դեպքում Թուրքիան չէր պատրաստվում այն միացնել կայսրությանը, այլ

⁴ Ս. ՎՐԱՑԵԱՆ, Նիկոլ Աղբալեանի մասին, Բ., «Ակոս», Բէյրութ, 1957, թիւ 9 (98), էջ 64:

⁵ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու)», խմբ.՝ Մ. Ներսիսյան, Երեւան, 1991, էջ 400:

⁶ Հ. ՄԱՆՈՒԿԵԱՆ, Դէպքերը Վասպուրականում, «Վէմ», Փարիզ, 1937, թիւ 1, յունուար-մարտ, էջ 53:

նախատեսում էր դաշնային սկզբունքով ստեղծել Հայաստանի, Վրաստանի եւ Կովկասի թաթարների երեք ինքնուրույն պետություն՝ սուլթանի հովանու ներքո⁷։ Նման հնարավորություն ստանալու համար հայերը պետք է ապացուցեին իրենց նվիրվածությունն Օսմանյան Թուրքիային եւ օգնություն ցուցաբերելն առաջիկա պատերազմի ժամանակ։ Ռուսաստանի դեմ ոտքի կանգնելու եւ պայքարելու համար նրանք պետք է կազմակերպեին արեւմտահայերից բաղկացած կամավորական ինքնուրույն ջոկատներ, որոնք կարող էին ունենալ բարոյական մեծ նշանակություն՝ որպես հայ-թուրքական «համերաշխության» անքննելի ապացույց։

Իթթիհատականները ենթադրում էին, որ այդ ծրագրով իրականություն կդառնար հայերի քաղաքական ինքնավարության եւ անկախության խնդիրը, որը նրանց կնվիրեր ոչ թե Եւրոպան, որ մինչ այդ ոչ մի բան չէր արել եւ չէր էլ պատրաստվում անել, կամ էլ Ռուսաստանը, այլ երիտասարդ, լուսավորյալ եւ առաջադիմական Թուրքիան, որին չէր կարելի շփոթել բռնատիրական Թուրքիայի հետ։

Երիտթուրքերը համոզված էին, որ քաղաքական այդ բարդ մտահղացումն ի վերջո լուծելու էր հայկական հարցը, որով թուրքերը մեկընդմիջտ «կփակեին» Եւրոպայի բերանը։ Նրանք հավաստիացնում էին, որ Օսմանյան լայնածավալ կայսրությունն այնքան հարուստ էր հողատարածքներով, որ կենտրոնախույս տրամադրություններով լեցուն Արեւմտյան Հայաստանի տարածքն իրենց ամենեւին էլ պետք չէր, քանի որ այն ավելորդ հոգս էր ու վտանգ՝ երկրի ներքին կայունության գործում, եւ անընդհատ առիթ կարող էր ծառայել Եւրոպայի անմիջական միջամտության համար։ Երիտթուրքերը միաժամանակ վստահեցնում էին, որ բարենորոգումների իրագործումը հնարավոր կլիներ միայն պատերազմի ավարտից հետո⁸։

Ըստ էության՝ իթթիհատի քաղաքական ծրագիրը կարծես թե նման էր մի վերջնագրի, որի կատարումից էր կախված հայերի լինել-չլինելու հարցն Օսմանյան Թուրքիայում։ Ինչ վերաբերում էր Անգրկովկասյան համադաշնության ստեղծմանը, ապա այն ոչ թե հայկական ինքնավարության՝ երիտթուրքերի սրտաբուխ ցանկությունն էր, այլ Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ բաժանարար գոտու ձեւավորման մի նախագիծ, որին նրանք վաղուց էին սպասում։ Չէ՞ որ Ռուսաստանի հետ

⁷ Տե՛ս «Оборона Вана, 7 апреля — 4 мая 1915 г.», М., 1917, էջ 6—7, նաեւ Լէօ, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հտ. Բ., Փարիզ, 1925, էջ 76։

⁸ Տե՛ս «Оборона Вана», էջ 9—10։

սահմանային անմիջական հարեանությունը դամոկլյան սրի պես միշտ կախված էր Թուրքիայի գլխին:

Վանի դաշնակցականները ծայրահեղ զսպված վերաբերվեցին գայթակղիչ այս խոստումներին, չնայած ամենեւին դեմ չէին նմանատիպ քաղաքական ծրագրի իրագործմանը: Շրջանցելով իթթիհատականների անկեղծության աստիճանը՝ հայկական կողմը մեկ անգամ եւս հավաստիացրեց, որ ծրագիրն անիրագործելի է՝ թե՛ իրենց մասնակցության եւ թե՛ հայ ժողովրդական զանգվածներին համոզելու անհնարության առումով: Բանն այն էր, որ իթթիհատականները չէին կատարել 1908 թ. հեղաշրջման օրերին արեւմտահայերին տրված եւ ոչ մի խոստում, որով կորցրել էին իրենց վստահությունը հայության շրջանում: Ժողովրդական զանգվածները իթթիհատականներին հավատում եւ վստահում էին այնքան քիչ, որքան հին թուրքերին: Նաչի բեյը փորձում էր արդարանալ՝ նշելով, որ հայկական բարենորոգումները չէին իրականացել ոչ թե երիտթուրքերի ցանկության, բարի կամքի բացակայության, այլ արտաքին՝ պատերազմների (Թուրք-իտալական եւ Բալկանյան) պատճառով, որով հնարավորություն չէր տրվել զբաղվելու ներքին շինարարությամբ:

Ակնհայտ էր, որ երիտթուրքերը, որոնք չէին համաձայնել անգամ անդամահատված հայկական բարենորոգումների անցկացման հետ եւ մեծ հնարամտությամբ տապալել էին այն, այժմ ի՞նչ երաշխիքով էին հայերին խոստանում ինքնավարություն: Մի բան էր միայն պարզից էլ պարզ, որ նրանք խաբում էին՝ ժամանակ շահելու համար: Միակ երաշխիքը, որ Վանի դաշնակցականները խոստացան իրենց թուրք ընկերներին, այն էր, որ իրենք ջանք չէին խնայի Վանի հայությանը խիստ չեզոքության սահմաններում պահելու գործում, որ նրանք՝ որպես օսմանյան երկրի քաղաքացիներ, օրենքով, պատվով եւ արդարացիորեն կկատարեին հայրենիքի հանդեպ իրենց վրա դրված բոլոր պարտականությունները: Կարծում ենք, որ դա միակ ճիշտ պատասխանն էր եւ պայմանավորված էր քաղաքական համահունչ գործընթացներով: Հայերը, որոնք գտնվում էին Օսմանյան Թուրքիայի եւ Ռուսաստանի սահմանագլխին, ստիպված էին եւ պարտավոր էին իրենց քաղաքացիական պարտքը սրբություն կատարել երկու պետությունների համար էլ, այսինքն՝ արեւելահայերը զորք պետք է տրամադրեին ռուսներին, իսկ արեւմտահայերը՝ թուրքերին:

Վանի բանակցություններն ընդհատվեցին, եւ համաձայնություն չկայացավ: Թուրքերը Վանից հեռացան այն համոզմամբ, որ եթե հայերն

իրենց հետ չեն, ապա Ռուսաստանի կողմն են: Իթիհատականները թեև իրենց հիասթափությունը եւ սառնությունը շարտահայտեցին իրենց «բարեկամ» դաշնակցականների նկատմամբ, սակայն վերջիններս իթիհատի համար դարձան խիստ կասկածելի⁹:

Հայերի հանդեպ առկա անվստահությունն ու կասկածամտությունը շուտով առիթ դարձան, որ Օսմանյան կառավարությունը Վասպուրականի հայերի նկատմամբ սկսի պետական հալածանքի քաղաքականություն վարել, որ եւ կարճ միջոցում սպառնալից չափերի հասավ: Կոտորածների նախապատրաստական ընթացքն արտացոլող հեռագրերից մեկում, որը թվագրվում է 1914 թ. նոյեմբերի 29-ով, նշվում էր, որ մինչեւ հայերի վերաբերյալ հաստատուն ու հստակ հրամաններ ստանալը հարկավոր էր իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք բխում էին տեղական պայմաններից: Ընդ որում՝ կարեւոր միջոց էր համարվում ռադիոհաղորդիչ եւ հեռագրական սարքերի առգրավումը, որոնք հայերը գործածում էին միմյանց եւ արտասահմանում գտնվող իրենց համախոհների հետ հաղորդակցվելու համար: Հատկանշական է նաեւ մեկ այլ՝ Վանի նահանգային իշխանություններին ուղղված Անվտանգության վարչության հեռագիրը, ըստ որի՝ պահանջվում էր անհապաղ պատասխանել, թե ինչպիսին են Վանի հայկական դպրոցից ռադիոհաղորդիչ/հեռագրական սարքերն առգրավելու արդյունքները¹⁰:

Արդեն 1914 թ. օգոստոսի երկրորդ կեսից եւ սեպտեմբերի սկզբներից հալածանքներ սկսվեցին Վասպուրականի հայ պաշտոնյաների դեմ, որը ծնեց անվստահության եւ կասկածի մի նոր առիթ: Վերջիններս, որոնք պաշտոններ ստանձնելու իրավունք էին ստացել միայն 1908 թ. սահմանադրությունից հետո, շատ չնչին տոկոս էին կազմում Վանի հայաբնակ շրջաններում եւ պետական համակարգում: Նրանք ոչ միայն առանց պատճառաբանությունների ազատվեցին իրենց զբաղեցրած պաշտոններից եւ հեռացվեցին ասպարեզից, այլեւ ենթարկվեցին խիստ հետապնդումներին:

Սկզբում պաշտոնանկ արվեցին պատասխանատու հայ կայմակամները, որոնց ներկայությունը կարող էր այս կամ այն ազդեցությունն ունենալ ժողովրդի վրա: Այսպես, առանց որեւէ հիմնավորման, իր պաշտոնից հեռացվեց Վանի նահանգի Ալշավազ գավառի կայմակամ Պետրոս բեյը, եւ նրա տեղը նշանակվեց վանեցի Նաջի բեյը:

⁹ Տե՛ս «Оборона Вана», էջ 10, նաեւ Ի. АНАНОВЪ, Судьба Армении, Москва, 1918, էջ 21:

¹⁰ Թ. ԱՔՁԱՄ, Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ. հալոց ցեղասպանությունը եւ էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում, Երեւան, 2015, էջ 193:

Ավելի ուշ՝ 1914 թ. դեկտեմբերի 27-ին, Թալեաթը Վանի, էրզրումի եւ Բիթլիսի նահանգներ է ուղարկում գաղտնի մի հրաման, որով անհրաժեշտության էր համարում դադարեցնել այդ շրջանների ոստիկանության լիազորի ու այն պաշտոնյաների ծառայությունը, որոնք հայկական համայնքի անդամներ էին, քանի որ նրանք իրենց աշխատանքի բերմամբ կարող էին «չարի ու խարդավանքի» գործիք դառնալ: Եւ «...եթե նման գործողություններ կատարելիս բարդություններ ծագեն, նահանգ[ային] իշխանություններն այդ մարդկանց պետք է ուղարկեն նահանգի հեռավոր վայրերը, ստիպեն հրաժարական տալ եւ անվավեր դարձնեն նրանց [պաշտոնական] փաստաթղթերը: Եթե դա անիրականանալի կամ անախորժ լինի, [տեղական իշխանությունները] պետք է այդ մարդկանց անունների ցուցակ ուղարկեն, որպեսզի այստեղի [պաշտոնյաները] նրանց ուղարկեն այլ նահանգներ»¹¹:

Այս հրամանի հիմամբ՝ Վանում պաշտոնանկ արվեցին նաեւ այնպիսիները, որոնք գրեթե ազդեցություն չունեին կառավարության գործունեության ընթացքի վրա: Այսպես՝ իշխանությունները, նպատակահարմար չհամարելով Վանի երեք հայ ոստիկանների՝ Պողոս Տեր-Պողոսյանի, Շահեն Փրթոյանի եւ Արմենակ Շատախցյանի հետագա աշխատանքը Վանում, նրանց առաջարկեցին տեղափոխվել Մոսուլ. նրանցից միայն առաջին երկուսը համաձայնեցին¹²:

Թաներ Աքչամը գաղտնի այս հրամանից եզրակացնում է, որ 1914 թ. դեկտեմբերին, կամ միգուցե դրանից էլ ավելի վաղ, Կ. Պոլսում հայ պաշտոնյաների նկատմամբ համապատասխան որոշումներ արդեն կայացվել էին, եւ որ նահանգներում կառավարության մեջ աշխատող բոլոր հայ գործիչներին աշխատանքից ազատելու վերաբերյալ Թալեաթի կողմն էր¹³:

Սակայն կառավարությունը չբավարարվեց միայն դրանով: Ամրապնդելով իր դիրքերը տեղերում՝ նա իր կտրուկ վերաբերմունքն արտահայտեց նաեւ նոր՝ կատաղի եւ հայատյաց պաշտոնյաներ նշանակելու գործում: Այդպես 1914 թ. սեպտեմբերին (ըստ Հ. Մանուկյանի՝ հոկտեմբերի սկզբին)¹⁴ Վանի կուսակալ նշանակվեց արյունարբու Զեւդեթ Բեյը¹⁵,

¹¹ Անդ, էջ 194:

¹² Տէս Ա. ԴՕ, նշ. աշխ., էջ 76:

¹³ Տէս Թ. ԱՔԶԱՄ, նշվ. աշխ., էջ 194:

¹⁴ Տէս Հ. ՄԱՆՈՒԿԵԱՆ, նշ. աշխ., էջ 53:

¹⁵ Տէս ՀԱԱ, ֆ. 421, ց. 4, գ. 20, թ. 29:

իսկ Վանի նախկին կուսակալ, կրթված, «հաշտասեր» եւ «արդարամիտ» Թահսին բեյն ստանձնեց էրզրումի կուսակալի պաշտոնը: Իրեն խայտառակ շանելու, իր սկզբունքներին հակառակ չգործելու համար նա թողեց եւ հեռացավ¹⁶: Ավանցի ճանապարհին կազմակերպված հրաժեշտի ժամանակ, որին ներկա էին պետական պաշտոնյաներ, ազգային ներկայացուցիչներ, երեսփոխան Ա. Վռամյանը եւ ուրիշներ, Թահսին բեյը, շնորհակալություն հայտնելով Վանի հայերին՝ իրենց «անկեղծ, անխարդախ գործունէութեան»¹⁷ եւ մասնավորապես՝ զորակոչին եւ պատերազմական տուրքերին գործուն մասնակցություն ցուցաբերելու համար, նշեց. «...ցաւով կը բաժնուիմ ձեզմէ եւ այս երկրէն, որու վերաշինման, ժողովուրդներու բարի դրացիութեան եւ յառաջդիմութեան ջերմ փափաքող մ'էի: Կերթամ, բայց ձեզ հետ պիտի լինիմ, մանաւանդ որ իմ յաջորդս Զէվտէթ պէյ, ահա որ հոս է (ցոյց տալով), թէ եւ երիտասարդ, բայց անպայման վստահ եմ իրեն, թէ պիտի շարունակէ այն գործերն եւ աշխատանքները, զոր կիսատ թողուցի.. Մնաք բարով, հայրենակիցներ...»¹⁸:

Մեկնող կուսակալի այն խոսքը, թե իրեն պետք է հաջորդի Զեւթեթը, ճշող տպավորություն թողեց բոլորի վրա: Այդ մասին Հ. Կոսոյանը հիշում է. «...Բնական նախազգացում մը կը խօսէր մեր սրտերուն, թէ կացութեան սա փափուկ եւ անստոյգ վիճակին մէջ, սեւ մը պիտի բերէ այս երկրին: Կը զգայինք, թէ Զէվտէթը ոճրագործ մ'է, անկէ բարիք, խելօք վարչականութիւն սպասելն անմտութիւն է: Զէ որ զինք պատանի հասակէն կը ճաննայինք»¹⁹:

Զեւթեթը 1898—1906 թթ. պաշտոնավարած Վանի խաղաղասեր ու շինարար նախկին կուսակալի՝ ծագումով ալբանացի Թահիր փաշայի որդին էր²⁰ եւ էնվերի քեռայրը²¹: Այդ էր պատճառը, որ հայ իրականության մեջ կային մարդիկ, որոնք բարձր էին գնահատում նրա անցյալը²²: Ներկա

¹⁶ Տէս Կ. ՍՈՒԽԵՅԱՆ, Թեժ մարտերը Վանի Քաղաքամիջում, Երեւան, 2000, էջ 8:

¹⁷ ՌՈՒՐԷՆ, Հայ-թրքական կնճիռը, Գահիրէ, 1924, էջ 92:

¹⁸ Հ. ԿՈՍՈՅԱՆ, Վան-Քաղաքամիջի ապրիլեան կռիւները, Երեւան, 1992, էջ 9:

¹⁹ Անդ:

²⁰ Ըստ Մ. Էպիղաթյանի՝ Զեւթեթը, որը «բարձրահասակ, թուխ, առնական, գեղեցիկ դէմքով երիտասարդ մըն էր 30—35 տարեկան...», ոչ թե ալբանացի էր, այլ «...Մոնթէնէկրոցի Թահիր փաշային զաւակը»: Տէս Մ. ԷՊԼԻՂԱԹԵԱՆ, Կեանք մը ազգիս կեանքին մէջ. ակնատեսի եւ մասնակցողի վկայութիւններ (1903—1923), Անթիլիաս, 1987, էջ 87:

²¹ Տէս Հ. ՖԻՐԵՅՈՒՆԵՐ, Հայաստանը 1915-ին. Թե ինչ է թաքցել Կայսերական կառավարությունը գերմանահպատակներից, հին մշակույթ ունեցող ժողովրդի կոտորածը թուրքերի կողմից, թարգմ. գերմ. Հ. Ղուկասյան, Երեւան, 2000, էջ 66:

²² Նրա մասին Մ. Էպիղաթյանը հիշում է. «Ուրեմն ճէվտէթ հայ ժողովուրդէն ճանչցուած էր դեռ պատանեկան հասակէն, եւ իր յարաբերութիւնները առհասարակ որոշ հակակրութեան

առիթով Ա. Դարբինյանը նշում է, որ «այս ճեմտէթ պէյը զաւակն էր ալ-պանացի Թահիր փաշային, որ ինը տարի խաղաղութեամբ կառավարած էր Վանի նահանգը: Իր հօրը ազդեցութեան տակ ճեմտէթ երիտասարդ տարիքէն բարեկամական վերաբերում ունէր դէպի հայերը: Ինչպէս աս-կէ առաջ յիշած եմ. Վարդգէսին բանտին մէջ այցելութեան կու գար: «Ազ-նիւ, յեղափոխական է»,— ըսած էր ինձ Վարդգէս, անոր մասին»²³:

Սակայն նա աչքի էր ընկնում իր հարափոփոխ նկարագրով²⁴: Հ. Մորգենթաուն ներկայացնում է, որ Զեւդեթը կարող էր լինել «պահ մը բա-րեացական ոչ-խսլամներուն հանդէպ, յաջորդ պահուն թշնամական, կեղ-ծաւոր, դաւող եւ վայրագ, համաձայն իր ցեղին յոռեգոյն աւանդութիւն-ներուն: Ան կ'ատէր Հայերը, եւ սրտովին համակիր էր հայկական խնդիրը լուծելու համար կազմակերպուած վաղեմի թրքական ծրագիրին»²⁵:

Իսկ Ռ. դե Նոգալեսի բնութագրմամբ՝ Զեւդեթն ամենաեռանդուն կա-ռավարիչներից մեկն էր՝ մոտ քառասուն տարեկան, կարճ կտրած բեղե-րով, միջինից բարձր հասակով, սեւ մազերով եւ սեւ աչքերով: Նա հագն-վում էր փարիզյան վերջին նորաձեւությամբ: «Լավ կրթված եւ վարվե-ցող, ինչպէս իսկական օսմանյան բէյը, սիրալիր եւ առատաձեռն, երբ այն իրեն պետք էր, սակայն իրականում հովազ էր մարդկային կերպա-րանքով՝ պատրաստ ճանապարհից հեռացնել ցանկացածին, ով կփոր-ձեր իրեն խանգարել, կամ գիտեր ավելին, քան պետք էր: Գաղտնի հրա-մաններն ի կատար ածելու համար Զեւդեթը սովորաբար օգտագործում էր թույն, պարան կամ փամփուշտ...»²⁶:

1906—1908 թթ. Վանի կուսակալ Ալի բէյի օրոք (որը դաժան քաղաքա-կանություն էր վարում հայերի նկատմամբ եւ որը հետագայում Բաթու-մում սպանվեց մի հայի ձեռքով) Զեւդեթը եղել էր Սարայի կայմակամը, սահմանադրությունից հետո՝ Հեքքեարիի (Բաշկալեի) մյութեսարիֆը,

մը դրոշմը չէին ձգած: Քաջ ու զինավարժ, ալլեւայլ քաղաքներու փոխ-կառավարիչ (գայնագամ) եղած, մասնաւորապէս փայլած էր աւագակներ հետապնդելու գործին մէջ».
տես Մ. ԷՊԼԻՎԱԹԵԱՆ, նշ. աշխ., էջ 87:

²³ Ա. ԴԱՐԲԻՆՅԱՆ, Հայ ազատագրական շարժման օրերէն. Յուլի 1890 էն 1940, Փարիզ, 1947, էջ 156:

²⁴ Վանի կուսակալ եղած ժամանակ Զեւդեթն ինչ-ինչ պատճառներով վիճում է Վանի իտալական փոխհյուպատոսի հետ եւ անպատվում նրան: Հյուպատոսը բարոյական հատուցում է պահանջում, որի համար Թահիր փաշան պահանջում է, որ իր որդին ներդրություն խնդրի հյուպատոսից: Սակայն Զեւդեթն, ինքն իրեն վիրավորելով սրունքից, «չերթար ներդրութիւն խնդրելու». տես Մ. ԷՊԼԻՎԱԹԵԱՆ, նշ. աշխ., էջ 88:

²⁵ «Ամերիկեան դեսպան Մր. Մօրկընթաուի յիշատակները եւ հայկական եղեռնին գաղտնիքները», Կ. Պոլիս, 1919, էջ 247:

²⁶ P. DE NOGALÉS, Четыре года под полумесяцем, Москва, 2006, с. 61—62.

իսկ 1914 թ. վերջին՝ Վանի նահանգապետ-կուսակալը՝ վալին, եւ իրականում «մի սրիկայ դէմք» էր²⁷։ Դեռ պատերազմից առաջ նա աչքի էր ընկել իր թունոտ ատելությամբ ու հայերի դեմ ոճրագործություններով։ Նա էր, որ հայերին տանջում էր ամենադաժան եղանակներով։ Դավոյի 1908 թ. դավաճանության ժամանակ Սարայ գավառի կայմակամ Զեւդեթը, ձերբակալելով Աբաղայի Խաչան գյուղում առեւտրով զբաղվող վանեցի Պողոս եւ Պետրոս Փիրումյաններին՝ որպես հեղափոխականների, ենթարկում է անասելի կտտանքների։ Իսկ վերջում երկու կատու է գցում Պետրոսի վարտիքը, հարվածում դրանց, որ ծվատեն ու հոշեն ձերբակալվածի անդամները, որից էլ վերջինս հաջորդ օրը եւեթ մահանում է։ Խաչանում նրա կատարած մյուս հրեշույթյունների մասին «Ազատամարտը» գրում է. «Նոյն իսկ կառավարութեան կողմէն նշանակուած բժշկական քննութիւնը ցոյց տուաւ, թէ ինչպէս Հայերը խարանած, ոտքերը պայտած, ողջերու գանկերը բանալով ճճուններ լեցուցած, քանի մը մարդիկ ողջ ողջ թաղած է, յետոյ չի նայած Սարայի մէջ կատարած իւր բոլոր այս շահատակութիւններուն եւ անոնց դէմ եղած բողոքներուն՝ տեղւոյս դատարանը զինքը բոլորովին արդար ու անպարտ ճանչցաւ, առանց քքնելու եւ բանտարկելու, այն պարզ պատճառով, որ ան Վանի նախկին կուսակալ Թահար փաշայի որդին է եւ բազմաթիւ կապեր ունի տեղւոյս շատ մը պաշտօնեաներու հետ»²⁸։

Ամբողջ երկրում Զեւդեթը հայտնի էր որպես «բաշկալեցի պայտառ», քանի որ խոշտանգումների այդ գիտակը, Հ. Մորգենթաուի բնորոշմամբ, «հնարած էր այն՝ ինչ որ թերեւս բոլոր չարչարանքներուն գլուխ-գործոցն էր - իր հայ զոհերուն ոտքերուն պայտ գամել»²⁹։ «Դավոյի գործով» նա ծեծում, պայտում եւ տանջամահ է անում 12 տարեկան մի հայ տղայի՝ Սարգսին՝ ստիպելով, որ նա ցույց տա զենքի պահեստների տեղը։ Այստեղից է նրա՝ «նալբանդ գայմագամ» կամ «Ղասաբ Թափուրի» մականունը։ Զեւդեթի մասին Ա. Մանդելշտամը հիշում է. «Հենց նորին գերազանցությանն (խոսքը Զեւդեթի մասին է. - Ա. Հ.) է պատկանում խոշտանգումների երկու ձեւի գյուտի պատիվը, դրանցից մեկը հայերի ներբանները պայտեն է, ինչպես գրաստներին, նորություն, որի համար նրա գյուտարարն արժանացել է «բաշկալեցի պայտառ» մականվան, մյուսը կատուններով խոշտանգելն էր, որի դեպքում կատուներ էին խցկում

²⁷ Ա.-Ղ0, նշ. աշխ., էջ 76, նաեւ Օ. Մխիթարեան, Վանի հերոսամարտը, Սօֆիա, 1930, էջ 34։

²⁸ «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1909, յուլիս 13/26, թիւ 28։

²⁹ «Ամերիկեան դեսպան Մր. Մօրկլենթաուի յիշատակները...», էջ 255։

խոշտանգվողների հագուստի տակ եւ ապա ծեծում կենդանիներին, որ նրանց ստիպեն իրենց ատամներն ու ճանկերը խրել զոհի փորոտիքը»³⁰։

Ա. Կեոբկիզյանը նկատում է, որ վանեցին չարագուշակ վերաբերմունք ունեն Ջեղեթի նկարագրի ու հակումի նկատմամբ, որն արդյունք էր տարիների ընթացքում Վանի կուսակալության այս կամ այն գավառում՝ Ոստանում, Բերկրիում, Աբաղայում, Նորդուզում եւ Բաշկալեում «պարբերաբար նրբացած ու կատարելագործուած, երեւան բերած ու գործադրած» նրա բարբարոսական եւ քստմենլի եղեռնագործությունների։ Մարդկանց կենդանի պաշտելը, անլուր շարշարանքով սպանելը, շամփրելն ու ամորձիքները տրորելով խոշտանգելը «սիրելի էին իր բնագրին, հրճուանք՝ իր հոգուն։ Անիկա ոճիրներու սիրահար հրէշ մըն էր պարզապէս, գազան ու անսիրտ։ Ահռելի հակասութիւն իր վայելուչ արտաքինի եւ թաթար առնաւուտ ներքինի միջեւ։ Վանեցիք ամենայն իրաւամբ զայն կը ճանչնային «նալպանտ միւթէսարիֆ»³¹։ Վանի պարբերականները Ջեղեթի նշանակումից դեռ երկու տարի առաջ, երբ նա վարում էր Բաշկալի մյուլթեսարիֆության պաշտոնը, նրան հրապարակավ այդ «սեւ տիտղոսն» էին տվել։ Ահա թե ինչու Վասպուրականի հայությունն առանձնապէս «գէշ նախազգացումով լեցուեցաւ, երբ Ջէվտէթն ստանձնեց կուսակալութեան պաշտոնը այդ ծանր օրերուն»³²։

Ջեղեթը շարագործությունների, դավադրական ծրագրերի, կեղծելու, խաբելու մեծ վարպետ էր, բարբարոս բնավորության տեր անձնավորություն։ Ինչպես Թուրքիայում ավստրո-հունգարական զինվորական լիազոր Յոզեֆ Պոմիանկովսկին է բնութագրում, նա հանդիսանում էր «իսկական հրեշ՝ մարդկային կերպարանքով»³³։ Կ. Սուլախյանը նրան անվանում է «ռդենկոտը հագած, ձեռնոցներով գազանանոցի պետ»³⁴։ Իսկ միսիոներուհի Քեթե էհրհոլդը նկատում է, որ «նա թերեւս սիրալիր էր առնչվելիս, բայց ուղղակի ահավոր հայատյաց էր»³⁵։

Ահա այդ Ջեղեթն էր առաջ քաշվել հայաշատ Վանի նահանգի նահանգապետ-կուսակալի պաշտոնում, որպեսզի սրախողխող աներ անմեղ

³⁰ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», էջ 597–598, նաեւ A. MANDELSTAM, Le sort de l'Empire ottoman, Lausanne-Paris, 1917, էջ 248–278։

³¹ Ա. ՎԵՐ. ԿԵՕՐԿԻԶՅԱՆ, Վասպուրականի հերոսամարտը, 1915 ապրիլ 7 – 1915 մայիս 7, յույս եւ լոյս, Պեյրութ, 1965, էջ 83։

³² Հ. ԿՈՍՈՅԵԱՆ, նշ. աշխ., էջ 9–10։

³³ (Հ.) Վ. ԳՈՒՍՏ, Հայերի ցեղասպանությունը. աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը, Երեւան, 2002, էջ 160։

³⁴ Կ. ՍՈՒԽՅԱՆ, նշվ. աշխ., էջ 12։

³⁵ (Հ.) Վ. ԳՈՒՍՏ, նշվ. աշխ., էջ 160։

բնակչությանը: Ճիշտ է՝ Զեւդեթը պաշտոնական հայտարարությամբ խոստացել էր անշեղ կերպով հետեւել իր նախորդի՝ Թահսինի «զարգացման եւ բարձրացման ճամբուն»³⁶, սակայն ըստ Հ. Մորգենթաունի՝ կասկած չէր հարուցում, որ Զեւդեթը, որը չնայած իր կյանքի մեծ մասն անց էր կացրել Վանում, նահանգապետ էր դարձել հայերին բնաջնջելու ցուցումով: «Այս կարգադրութիւնը,— գրում է Հ. Մորգենթաուն,— ինքնին շատ վրդովիչ էր: Թիւրք պաշտօնէութեան մէջ միշտ գտնուած է փոքրամասնութիւն մը մարդոց, որոնք հաւատացած չեն, թէ ջարդը պետական քաղաքականութիւն մըն է, եւ որոնց կարելի չէ վստահիլ որ ճշդապահօրէն կը կատարեն կեդրոնի Կառավարութեան ամենէն արինդուշտ հրահանգները: Հետեւաբար, ամեն անգամ որ ջարդեր ծրագրուած են, սովորութիւն եղած է նախ տեղափոխել այդ կարգի «անվստահելի» պաշտօնեաները եւ անոնց տեղը դնել աւելի վստահելի նկատուած անձեր»³⁷

Այսպիսի իրավիճակ էր տիրում Վանում, երբ զորահավաքից շուրջ 90 օր հետո՝ Սեւ ծովում տեղի ունեցած նավային միջադեպից եւ Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերությունները խզելուց հետո³⁸, Թուրքիան հռչակեց ջիհադ՝ սրբազան պատերազմ³⁹:

1914 թ. նոյեմբերի 11-ին Ստամբուլի սուլթան Մեհմեդ Ֆաթիհ մզկիթում սուլնի մահմեդականների հոգեւոր առաջնորդ շեյխ-ուլ-իսլամ Մուստաֆա Հայրի էֆենդին, պարզելով ջիհադի դրոշը (Սանճաղը-Շէրիֆը), հավաքված մահմեդական ժողովրդի ներկայությամբ ընթերցեց օսմանյան հայտնի աստվածաբանների կողմից հարց ու պատասխանի ձեւով կազմված եւ սուլթան Մեհմեդ Ե.-ի հաստատած 5 ֆետվերը (հրովարտականները.— Ա. Հ.) եւ հռչակեց սուլնի մահմեդականների ջիհադ՝ «սրբազան պատերազմ»⁴⁰ «...մոլեռանդներին մղելու անմեղ ժողովուրդներին կոտորելու, արյունը թափելու... լափելու եւ լիզելու...» համար⁴¹:

1914 թ. նոյեմբերի 13-ի հատուկ ֆետվով Օսմանյան կայսրության շիա մահմեդականների բարձրագույն հոգեւոր ներկայացուցիչները ջիհադ հայտարարեցին նաեւ Անտանտի երկրներին⁴²: Այդ նպատակով մզկիթներում,

³⁶ «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար», հտ. ԺԱ., Պէյրուիթ-Յոնուար, 2015, էջ 295:

³⁷ «Ամերիկեան դեսպան Մր. Մօրկընթաուի յիշատակները...», էջ 246:

³⁸ Տէս Հ. ԿՈՍՈՅԵԱՆ, նշ. աշխ., էջ 11:

³⁹ Զիհադի ամբողջական տեքստը տես ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 80, թ. 1—4, նաեւ գ. 149, թ. 1—2:

⁴⁰ МУСТАФА КЕМАЛЬ, Путь новой Турции, т. IV, Москва, 1934, с. 350.

⁴¹ Յ. ՍԱՐՈ, Ատրպատականի գոյամարտը, Թեհրան, 1964, էջ 5:

⁴² Տէս Ե. ЛУДШУВЕЙТ, Турция в годы первой мировой войны 1914—1918 гг., военно-политический очерк, М., 1966, էջ 60.

տներում եւ հասարակական վայրերում թուրքերի, քրդերի բոլոր խավերի մեջ ծավալվեց պետական եւ մասնավոր քարոզչություն: Զիհադին մասնակցելու էին հրավիրվում ինչպես Օսմանյան կայսրության, այնպես եւ տարածաշրջանի մյուս մահմեդականները, որոնց գաղտնի հրամանով տեղեկացվում էր, որ եթե որեւէ թուրք կամ քուրդ համարձակվի ապաստան տալ իր ծանոթ կամ հարեւան հայ ընտանիքին, ապա նա կճանաչվի թուրքական կառավարության դավաճան, Մուհամեդ մարգարեի թշնամի, թուրքական կիսալուսնի դրոշակը սրբապղծող եւ հանդերձյալ կյանքում դրախտին արժան չի լինի: Բացի այդ՝ կարգադրվում էր բռնագրավել հայերի ողջ ինչքն ու ունեցվածքը, նաեւ խլել գեղեցիկ աղջիկներին:

Պատերազմի հայտարարությամբ եւ ջիհադի հրապարակումով միանգամից փոխվեց դրությունը Վանում, եւ ինչպես Հ. Կոստյանն է նկատում, «ստեղծուեցաւ քաղաքական աւելի փափուկ, աւելի վտանգաւոր կացութիւն»⁴³:

Այն, ակներեւաբար, խորթություն եւ թշնամանք հրահրեց մահմեդական եւ քրիստոնյա ազգաբնակչության միջեւ: «Մոլեռանդ թուրք ու քուրդ տարրերը, հրահրուած ճիհատով, թոյնով եւ ատելութեամբ լեցուեցան քրիստոնեայ բնակչութեան դէմ, մասնաւորապէս հայ տարրերի դէմ»⁴⁴: Արծկեցի վերապրող Ալեքսան Խլոյանը հիշում է. «Մեր դրացի երկու աչքից կույր Մստաֆան, իր թոռան՝ Ահմոյի ձեռքը բռնելով, նրան ասաց.— Որդի՛, տար ինձ այնտեղ, որտեղ որ կան ընկած հայի սպանված դիակներ: Ահմոն տարավ նրան իմ ընկեր Արսենի եւ Հովսեփի դիակների մոտ: Մստաֆայի ձեռքին թոնրից հաց հանելու մի երկաթյա շամփուր կար: Նա այդ շամփուրով ծակոտեց սպանված երկու դիակների սրտերը եւ հարցրեց իրեն ուղեկցող Ահմոյին.— Որդի՛, ասա տեսնեմ՝ շամփուրը արնոտվեց... Եւ երբ թոռը հայտնեց.— Այո՛, պա՛պ, արնոտեց: Այն ժամանակ Մստաֆան դեն շարտեց շամփուրը եւ երկու ձեռքը երկինք բարձրացնելով՝ այս խոսքերը մրմնջաց.— Հէ՛յ, Ալլահ, ես կույր եմ, չկարողացա կենդանի հայ սպանել, որ ջեննեթին արժանի լինեմ: Բայց իմ կույր տեղովս էլի իմ շամփուրով երկու հայի սիրտ ծակեցի՝ հանելով նրանց արյունը: Իմ ուխտն ընդունելի համարիր եւ ջեննեթում ինձ տեղ տուր»⁴⁵:

Այդ առումով մտահոգիչ էր նաեւ Վանում զորակոչի ժամանակ պահակ-ոստիկանության մեջ ծառայություն անցած վանեցիկների

⁴³ Հ. ԿՈՍՏՅԱՆ, նշ. աշխ., էջ 13:

⁴⁴ Անդ, էջ 11:

⁴⁵ Մ. ՔԵՆԵՇՅԱՆ, Արծկեի փրկված հայ բեկորը, Երեւան, 2014, էջ 20:

հիշողությունը, որոնք ջիհադի օրերին պատահականորեն ներս էին մտել Վանի «Ուլու ջամ» (կենտրոնական մզկիթ,— Ա. Հ.)⁴⁶ եւ ականատես եղել հետեւյալին. «Սովորական շրջագայություն կը կատարէինք, առաջնորդութեամբ թուրք տասնապետի մը: Յուրտի եւ յոգնածութեան պատճառաւ ներս մտանք մզկիթը, ուր հոծ բազմություն մը կար: Ամենքը երկիւղածութեամբ կը լսէին քարոզիչը, որ ճիհատի բացատրությունը կուտար իր ունկնդիրներուն: Անոր խօսքերէն թոյն եւ արին կը կաթէր: «Միւսիւման չէ նա եւ անհաւատներէն աւելի վատթար, որ սուր չի վերցնէր մեր խալիֆայի սուրբ հրամանի համար, մեր երկիրը քանդող գեաւուրներու դէմ: Մեր թշնամիները եւ այս երկրի մէջ կան եւ դուրսը, բայց պէտք է ատոր համար ձեր աչքերը լայն բանաք, լաւ խելամուտ ըլլաք կրօնի թշնամիներու բոլոր գործերուն»: Այս միջոցին կարգաց թուղթ մը, որու բովանդակութեան ինչ ըլլալը չհասկցուեցաւ, որովհետեւ աւելի արաբերէնի կը նմանէր: Բայց «միսիւման», «խրիսթիան» եւ «գեաւուր» բառեր ուշադրութեան կը զարնէին... Այն տպաւորութեան տակ ենք, թէ անոնց այնքան պատերազմը կարծես չի հետաքրքրէր, որքան ներքին հաշիւները մաքրել կուզէն եւ թուրք ժողովուրդը ատոր կը պատրաստեն»⁴⁷:

Արդյունքում՝ Վանում ստեղծվեց «հեղձուցիչ քաղաքական մի մթնոլորտ», «խճճված հարաբերությունների անքակտելի մի հանգույց», որի անմիջական ծանր հետեւանքներն աստիճանաբար սկսեց կրել Վասպուրականի հայությունը: Յիշատակն այն է, որ հետագայում Վասպուրականի ջարդարարությունից համար կիրառված մահմեդական մոլեռանդության փորձն օգտագործվեց նաեւ Արեւմտյան Հայաստանի այլ շրջաններում: Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության արխիվում ֆրանսահայ նշանավոր պատմաբան Արթուր Բեյլերյանի հայտնաբերած փաստաթղթերից մեկը հաստատում է, որ 1915 թ. հունվարի սկզբին տեղի ունեցած իթթիհատի գաղտնի ժողովի ընդունած «10 հրահանգ»-ներից 3-րդում նշվում էր, որ անհրաժեշտ է «գրգռել մահմեդական հասարակությանն այն մեթոդներով, որոնք կիրառվել են այնպիսի նահանգներում, ինչպես Վանը, էրզրումը կամ Ադանան, որտեղ հայերը իրենց դեմ հարուցեցին մահմեդականների ատելությունը, եւ առաջ բերել կազմակերպված ջարդ...»⁴⁸:

⁴⁶ Նախկինում այն եղել է Վանի ս. Սիոն Գազկաշեն տաճարը:

⁴⁷ Հ. ԿՈՍՏԵՆՆ, նշ. աշխ., էջ 11—12:

⁴⁸ «Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը եւ հայերը ֆրանսիական արխիվներում (1914—1918)», հտ. 1, աշխատ.՝ Ա. Պեյլերյանի, առաջ.՝ Ժան-Բատիստ Դյուրոզելի, թարգմ. ֆրանս.՝ Վ. Պոլոսյանը, Երեւան, 2005, էջ XXIX—XXX:

Սկզբում Զեւդեթը բացակայում էր Վանից, քանի որ Կովկասյան ճակատում ստանալով Պարսկաստանի սահմանագլխի թուրքական զինված ուժերի կրկնակի պաշտոններ՝ կռվում էր ռուսների դեմ: Ի դեպ, Մակուի ռուսական հյուպատոսի (Վանի նախկին փոխհյուպատոս) վկայությամբ, Բաշկալեում մյուլթեսարիֆ եղած ժամանակ մեծ է եղել նրա դերակատարությունը քրդերին ռուսների դեմ հրահրելու գործում, որի իրագործման համար նրա տրամադրության տակ էին դրվել հսկայական գումարներ⁴⁹:

Սակայն 1915 թ. գարնանը ռուսների նահանջից հետո նա փորձեց իրագործել իր հայաջինջ ծրագիրը: Վանեցին նկատել էր, որ Թ. Զեւդեթը փոխել էր իր վերաբերմունքը հայերի նկատմամբ: «Եթէ այդ սկզբին հոգեբանական տպաւորութիւն մ'էր, նախազգացում, յետոյ անմիջական արգասիք էր արդէն պետական եւ Զէվտէթեան ռէժիմին, որ այլեւս մերկապարանոց փաստ էր, թէ Վասպուրականի մէջ հայութիւնը իր կատարած բոլոր զոհաբերութիւններով կը նկատուի անվստահելի եւ վնասակար»⁵⁰:

Թուրք զինվորականությունը տոգորված իթթիհատական ազգայնամոլությամբ եւ «էնվերյան երազներով», զորահավաքի ժամանակ ստեղծել էր խայտաբղետ, այլազան ու անկիրթ մի զինվորականություն, որի մեծ մասը կենտրոնացել էր պատերազմական ռազմաբեմում, իսկ մյուս մասը՝ «միլիս» անունով, դեռ մնում էր գավառներում: Վասպուրականի հայերի զանգվածային կոտորածներն ու տեղահանությունները եւ բանակ կանչված հայ զինվորների զինաթափումն ու խմբակային կոտորածները մեծ մասամբ կատարում էին հենց այդ միլիսների զինվորները:

Թուրքական կառավարությունը շարժման մեջ դրեց Վանի նահանգի համիդեական զնդերը, որոնց հրամանատարն էր Աբդու Գատերը: Միաժամանակ հրամաններ ուղարկվեցին Նորդուզի, Շատախի, Գավաշի, Կարճկանի, Խիզանի, Մոկսի եւ Սպարկերտի քուրդ բեյերին, որ կազմակերպեն կառավարական զենքերով զինված քրդական խմբեր⁵¹: 16—70 տարեկան զինված քրդերը եւ բաշիբոզուկ միլիսները, մնալով իրենց տեղում, կառավարության գաղտնի թելադրանքով սկսեցին սանձարձակ շահատակությունները եւ ահաբեկումները, որով հայերի համար ստեղծվեց անապահովության իրական վիճակ⁵²:

⁴⁹ СГВИА РФ, ф. 551, г. 1, к. 5, л. 218—219.

⁵⁰ Հ. ԿՈՍՏԵԱՆ, նշ. աշխ., էջ 13:

⁵¹ Տե՛ս անդ:

⁵² Տե՛ս Ա. ՎԵՐ. ԿՅՈՐԿԻՋԵԱՆ, Անմոռանալի յուշեր. Մեր ազգային գոյապայքարը 1915—1922-ի զուլումի տարիներուն, Պէյրուս, 1965, էջ 46:

Մեծ հոգաժողովյամբ կազմակերպվեցին նախկինում իրենց «սխալագործություններով» եւ վայրագություններով աչքի ընկած չեթեականավազակային խմբեր (քրդերից, չերքեզներից, լազերից եւ այլն), որպեսզի հեշտացվի հայերի բնաջնջման գործը, ինչպես նաեւ խռովություններ բարձրացվեն Ռուսաստանի սահմանամերձ շրջաններում: Փ. Թերլեմեզյանը նկատում է, որ այդ խմբերը «իբր թե պիտի գործեին ռուսների դեմ, բայց հետո պարզվեց, որ դրանց միայն գործը եղավ բոլորովին անմեղ հայ կնիկներ, երեխաներ ու գյուղացիներ մորթոտելը»⁵³: Իսկ գերմանացի լրագրող Ֆոն Տիսկան վկայակոչում էր, որ «չեթենները, 1877—1878 թթ. պատերազմի հին բաշիբուզուկները, կրկին հայտնվեցին այնտեղ, որտեղ էժան ձեւով կարելի էր ավար ձեռք բերել եւ սպանել առանց ռիսկի դիմելու... Վստահորեն կարելի է հաստատել, որ չեթեններին հրահրում եւ առաջնորդում էին երիտթուրքերը»⁵⁴:

Միաժամանակ պահեստի զորքերի շարքերից ընտրվեցին ամենավարժ եւ աչքի ընկնող զինվորներ, իսկ նրանցից կազմվեցին առանձին խմբեր, որոնց կոչումը լինելու էր կատարել ամենահանդուգն ձեռնարկումները: Այդպես՝ երիտթուրքերի ներկայացուցիչ Նաջի բեյը էրզրումի եւ Վանի զորքերի միջից ընտրեց 3000 լավագույն զինվորների եւ այդ հրոսակախմբի գլուխ անցած՝ շարժվեց դեպի Պարսկաստան՝ ռուսների դեմ խռովություններ եւ հարձակումներ կազմակերպելու համար⁵⁵: Իսկ Քյազիմ բեյը Սեյար եւ Սապըթ նորակազմ զորաբաժիններով տեղափոխվեց Սարայ եւ Բաշկալե:

Վանի հայերին կոտորելու համար թուրքական կառավարությունը բանտերից ազատեց եւ ներում շնորհեց նաեւ կողոպտիչ ու մարդասպան քուրդ եւ թուրք քրեական հանցագործներին, գողերին ու ավազակներին, «իսկ շատ շատեր, որոնք իբրեւ փախստական կը հետապնդուէին, իջան լեռներէն եւ ընդունուեցան գրկաբաց»⁵⁶:

Նրանք մտան միլիսների մեջ եւ նրանցից կազմեցին ոստիկանական հրոսակախմբեր: Դրանցից մեկը (մոտ 600 հոգի) Վանում գլխավորում էր քուրդ ցեղապետ Բշարե Չաթոն, որը հարձակումներ էր գործում հայկական շրջանների վրա, կոտորում ու կողոպտում էր մարդկանց,

⁵³ Փ. ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ, *Կյանքիս հուշերը*, Երեւան, 2017, էջ 321:

⁵⁴ «Գերմանիան եւ Հայաստանը 1914—1918 թթ. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու», հտ. 1., հրատ. եւ ներած.՝ դոկտ. Յոհաննես Լեփսիուսի, թարգմ. գերմ.՝ Վ. Մինալյան, Երեւան, 2006, էջ 298:

⁵⁵ Տէս Ա.-ԴՕ, նշ. աշխ., էջ 80:

⁵⁶ Հ. ԿՈՍՈՅԵԱՆ, նշ. աշխ., էջ 13—14:

բռնաբարում կանանց ու աղջիկներին: Այդպես՝ Արճեշի շրջանի Հասալը-սինակ գյուղում նա տեղավորվում է հայ ընտանիքներից մեկում, կերուխում անում եւ վերջում էլ պահանջում, որ տանտերը՝ Սեդրակը, իր կնոջն իրեն տրամադրի: Տանտերն իհարկե չի համաձայնում, բայց դա շատ ծանր է նստում նրա վրա՝ ընդհուպ մինչեւ շիկացած շամփուրներով նրա ձեռքերն ու դեմքը դաղելը: Նմանատիպ գործողություններ նա կատարում է նաեւ Բերկրիի Գյուզակ, Գործոթ եւ Արճակի Տաղվերան գյուղերում: Այս ամենը վկայում էր, որ Վանում «նոր սանկցիա է ստանում հին բարբարոս ըէֆիմը, նուիրագործում է անցած օրերի բարբարոս գործողությունը»⁵⁷: Այս ամենի մասին դեպքերի ականատես Եղիշե Բուրանյանը հիշում է. «Թուրքական անզոր բանակը, անվստահ իր ուժերին, դիմեց քրդական հորդանների օգնությանը եւ նոր ուժերով [զենքով] զինեց քրդական համիդեականներին գերմանական զենքերով, տեխնիկայով, բանտերից ազատեց գազանաբարո բանդիտներին, գողերին, մարդասպաններին՝ իր զորքի ջախջախված շարքերը համալրելու»⁵⁸:

Հայերի կոտորածները կանխվում էին միայն այն չափով, որ չափով ռուսական բանակն իր առաջխաղացման ճանապարհին գրավում էր հայկական այս կամ այն բնակավայրը: Եւ ընդհակառակը՝ հայերի կոտորածները սաստկանում էին այն վայրերում, որտեղից ռուսական բանակը՝ պատերազմական հանգամանքների թելադրանքով, նահանջում էր, իսկ հայ բնակչությունը միշտ չէ, որ տեղյակ էր լինում այդ նահանջին եւ չէր հասցնում շարժվել նրա հետ միասին⁵⁹:

Այս ամենից գծագրվում էր մոտավոր այն պատկերը, որ մինչեւ 1914 թ. օգոստոսը երիտթուրք ղեկավարներն արդեն գտնվում էին արեւմտահայության եւ մասնավորապես Վանի հայերի նկատմամբ ցեղասպանության քաղաքականության իրագործման նախաշեմին, քաղաքականություն, որի հիմնական թիրախներն էին քաղաքական այն խմբերը, որոնք ենթադրաբար կապ ունեին Ռուսաստանի հետ եւ հավանաբար կարող էին օգնություն հատկացնել հայ կամավորական ջոկատներին:

⁵⁷ Ա.ԴԹ, նշ. աշխ., էջ 103:

⁵⁸ Ե. ԲՈՒՐԱՆՅԱՆ, Իմ անցյալի հուշերից. Վասպուրականի ողբերգությունը, Երեւան, 2013, էջ 53:

⁵⁹ ՏԵՍ Ա. ԵՍԱՅԱՆ, Հայկական հարցը եւ միջազգային դիվանագիտությունը, Երեւան, 1965, էջ 78:

РЕЗЮМЕ

Военный министр Османской Турции Энвер, основываясь на свою тесную дружбу с членами партией Дашнакцутюн, до начала войны с Россией, летом и осенью 1914 г. отправил своих эмиссаров сначала в Эрзурум, затем в Ван и Муш, чтобы договориться с армянами, уговорить перейти их на свою сторону и организовать восстание против российских властей в Восточной Армении. Политическая программа Иттихада казалась ультиматумом, от выполнения которого зависело существование армян в Османской Турции.

Вскоре османское правительство начало политику государственного преследования армян в Васпуракане, в результате чего подозрения в недоверии к армянам стали тревожными. Уже во второй половины августа и в начале сентября 1914 г. началось преследование армянских чиновников в Ванском вилаете, а с 11 ноября 1914 года Турция объявила джихад — «священную войну» суннитский мусульман против христиан.

SUMMARY

The Minister of War of Ottoman Turkey, Enver, based on his close friendship with the members of the Armenian Revolutionary Federation party, before the outbreak of the war with Russia, in summer and autumn of 1914 sent his emissaries first to Erzurum, then to Van and Mush in order to reach an agreement with the Armenians, to take them to his side and organize an uprising against the Russian authorities in Eastern Armenia. The political program of Ittihad seemed an ultimatum, on the implementation of which the question of the existence of the Armenians in Ottoman Turkey depended.

Soon, the Ottoman government began pursuing a policy of state persecution of the Armenians in Vaspurakan: as a result, suspicions of distrust of the Armenians became alarming. Already in 1914, in mid-August and early September, Armenian officials of Van province began being persecuted, and already on November 11, 1914 Turkey declared jihad, a “holy war” by Sunni Muslims against the Christians.

ՀԱՄՕ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, դոցենտ, ՀԱԱՀ, ՀՀ ԳԱԱ ՊԻ

«ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ ՎԵՐԱԿԱՆԵՐԻ ՍԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԶԱՆՔԵՐԸ 1920-ԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻՆ

Բոլշեւիկեան կուսակցութիւնն ու նրա առաջնորդներն ընդգծուած բացասական վերաբերմունք ունէին կրօնի, եկեղեցու, հոգեւորականների ու կրօնական-եկեղեցական գրականութեան նկատմամբ: Ասուածը վերաբերում է ինչպէս Խորհրդային Միութեանն ամբողջապէս, այնպէս եւ Խորհրդային Հայաստանին մասնաւորապէս:

Եկեղեցու նկատմամբ Խորհրդային իշխանութիւնների քաղաքականութիւնը ԽՍՀՄ գոյութեան եօթ տասնամեակի ընթացքում միագիծ չի եղել, այլ, պայմանաւորուած Միութեան ներքին կամ արտաքին խնդիրներով, վայրիվերումներ է ունեցել: Եթէ նախապատերազմեան շրջանում հոգեւորականները ենթարկուած էին զանգուածային բռնութիւնների, հալածանքների, բանտարկութեան, աքսորի, ծաղրի ու պարսաւանքի, ամենատարբեր ճանապարհներով ու պատրուակներով խոչընդոտւում, լաւագոյն դէպքում սահմանափակուած էին կրօնական քարոզչութիւնը, հոգեւոր-եկեղեցական հրատարակութիւնների տպագրութիւնն ու տարածումը, ապա Երկրորդ աշխարհամարտի տարիներին ու յետպատերազմեան շրջանում առաւել նպաստաւոր դրութիւն ստեղծուեց եկեղեցու համար:

Այս դէպքում մեզ հետաքրքրում է 1920-ական թուականներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից «Արարատ» ամսագրի հրատարակութիւնը վերսկսելու կամ նոր պարբերական հրատարակելու փորձերը. խնդիր, որ մինչ այս գիտական քննութեան չի ենթարկուել: Սրա պատճառներից կարող են լինել արխիւային նիւթի սակաւութիւնն ու ցրուածութիւնը: Ուստի մեր շարադրանքի հիմքը կազմում են Հայաստանի ազգային արխիւի տարբեր ֆօնդերում պահուող անտիպ վաւերագրերը:

Յայտնի է, որ, պայմանաւորուած ֆինանսական ու քաղաքական աննպաստ դրութեամբ, 1868 թուականից Մայր Աթոռի կողմից հրատարակուող «Արարատ» ամսագրի տպագրութիւնը Հայաստանի առաջին

Հանրապետության շրջանում դադարեցուեց. 1920 թ. առաջին ամիսներին լոյս տեսան պարբերականի 1918 թ. ապրիլ-դեկտեմբերի եւ 1919 թ. յունուար-դեկտեմբերի միացեալ համարները¹: «Արարատին» զուգահեռ՝ արդէն 1920 թ. յունուարից Մայր Աթոռն սկսեց հրատարակել «Էջմիածին» շաբաթաթերթը, որը կարճ կեանք ունեցաւ. սեպտեմբերին սկսուած թուրք-հայկական պատերազմի պատճառով նրա վերջին համարը հրատարակուեց հոկտեմբերի 4-ին²:

1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի խորհրդայնացումից յետոյ նոր իշխանութիւնները նպատակային քայլեր ձեռնարկեցին Հայ Եկեղեցու ունեցուածքը բռնագրաւելու նպատակով: Հայաստանի յեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 17-ի դեկրետով Հանրապետության տարածքում գործող բոլոր ազգութիւնների հոգեւոր հաստատութիւնների մշակութային եւ կրթական հիմնարկութիւնները պետականացուեցին եւ յանձնուեցին լուսաւորութեան ժողովրդական կոմիսարիատին: Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՀՍԽՀ) լուսաւորութեան ժողկոմ Աշոտ Յովհաննիսեանի նոյն օրուայ հրամանի համաձայն՝ դրանք փոխանցուեցին տեղական յեղկոմների լուսաւորութեան բաժիններին: Որպէս բացառութիւն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարանը, հնագիտական եւ ազգագրական թանգարանները, մատենադարանը եւ տպարանը անմիջապէս ենթարկուելու էին լուսժողկոմատին՝ վերակազմուելով վերջինի կողմից նշանակուող կոմիսարի ղեկավարութեամբ: Հայեղկոմի 1921 թ. փետրուարի 5-ի դեկրետով Էջմիածնի պետականացուած՝ մշակութային ու կրթական հաստատութիւնների միաւորմամբ ստեղծուեց Հայաստանի գիտական առաջին հիմնարկութիւնը՝ Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտը³:

Հասկանալի է՝ Մայր Աթոռի տպարանի պետականացումը վերջինի համար առաւել դժուարացրեց հրատարակչական գործունէութիւն իրականացնելը, կրօնական-եկեղեցական գրականութեան տպագրութեան գործը: Այդուհանդերձ՝ Մայր Աթոռը տպարանի կորստի հետ

¹ «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գիրք Ե., Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Առաջին Հանրապետութեան տարիներին (1918—1920 թթ.), կազմեց՝ Ս. Բեհբուզեան, Երեւան, 1999, էջ 235:

² Ա. ՅԱՎՈՐԵԱՆ, Հայաստանի Հանրապետութեան պարբերական մամուլի պատմութիւն (1918—1920 թթ.), Երեւան, 2005, էջ 61—63:

³ Հ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ, Եկեղեցու սեփականութեան բռնագրաւումը Խորհրդային Հայաստանում (1920 թ. դեկտեմբեր — 1921 թ. փետրուար), «Լրաբեր հասարակական գիտութիւնների», Երեւան, 2014, թիւ 1, էջ 95—102:

հեշտութեամբ չհաշտուեց: Մասնաւորապէս 1921 թ. սեպտեմբերի 6-ին ՀՍԽՀ Ժողկոմխորհին ուղղուած զեկուցագրում Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Դ. Սուրենեանցի լիազօր ներկայացուցիչներ Խորէն, Գէորգ եւ Բագրատ արքեպիսկոպոսներն ընդգծում էին, որ Սուրբ Էջմիածնի համար կենսական խնդիր է սեփական տպարան ունենալը՝ եկեղեցական-կրօնական գրքեր, հայրապետական կոնդակներ, կարգադրութիւններ, օրացոյց եւ «Արարատ» կրօնական-հայագիտական ամսագիր տպագրելու համար⁴: Մայր Աթոռում դեռեւս զուր ակնկալիք ունէին, թէ պետութիւնը, հնարաւոր է, բռնագրաւած տպարանը ետ վերադարձնի: Այս առաջարկը քննարկուեց Ժողկոմխորհի սեպտեմբերի 20-ի նիստում եւ բացասական արձագանք ունեցաւ: Փոխարէնը պետականացուած տպարանի վարչութեանը հրահանգուեց կատարել Մայր Աթոռի հրատարակութիւնների պատուէրները: Այդ աշխատանքները հսկելու էր կաթողիկոսի ներկայացուցիչը: Բացի այդ՝ Մայր Աթոռին իրաւունք էր տրուում սեփական տպարան ունենալ⁵: Թէ այդ հնարաւորութիւնն ինչպէս էր իրագործուելու, երբ եկեղեցուց պետութիւնը բռնագրաւել էր նրա ունեցուածքը, գուցէ միայն որոշում ընդունողներին էր յայտնի: Ուստի այս որոշումները մնացին թղթի վրայ՝ յետագայում գործնական կիրառութիւն չունենալով:

1920-ականներին Մայր Աթոռը հրատարակչական աշխատանքներ կատարելիս ակնյայտ խոչընդոտների էր հանդիպում: Կրօնական-եկեղեցական հրատարակութիւններն իշխանութիւնների համար ամենեւին խրախուսելի չէին: Նոյնիսկ եկեղեցական օրացոյցների տպագրութիւնը մեծ դժուարութիւնների էր հանդիպում. իշխանութիւնները տարբեր ճանապարհներով խոչընդոտում էին: Ահա այսպիսի աննպաստ պայմաններում Մայր Աթոռը ջանքեր գործադրեց՝ կրօնական-եկեղեցական պարբերական հրատարակելու նպատակով:

Այս առումով հետաքրքրական կարող է լինել ԽՍՀՄ այլ հանրապետութիւնների հետ զուգահեռների անցկացումը: Փաստենք, որ միութենական միւս հանրապետութիւնների եկեղեցական կառույցները եւս անմխիթար դրութեան մէջ էին գտնուում: Այսպէս՝ 1917 թ. հոկտեմբերին Պետրոգրադում իշխանութեանը տիրանալուց կարճ ժամանակ անց՝ 1918 թ., բոլշեւիկները դադարեցրին 1888 թ. յունուարից Ռուս

⁴ «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան (1921–1938 թթ.)», կազմեց՝ Ս. Բեհրուդեան, Երեւան, 1994, էջ 21–22:

⁵ Ս. ՍՏԵՓԱՆԵԱՆՑ, Հայ Առաքելական եկեղեցին ստալինեան բռնապետութեան օրօք, Երեւան, 1994, էջ 13–14:

Ուղղափառ Եկեղեցու կողմից հրատարակուող «Церковные ведомости» պարբերականի տպագրութիւնը: Մէկ տասնամեակից աւելի Ռուսական Եկեղեցին պաշտօնաթերթ չունէր⁶: Միայն 1931 թ. իշխանութիւնները թոյլատրեցին «Журнал Московской Патриархии» պարբերականի հրատարակումը, որն իշխանութիւնները «հանդուրժեցին» մինչեւ 1935 թ.: Ռուս Եկեղեցին հրատարակչական գործունէութիւն ծաւալելու թոյլտուութիւն ստացաւ միայն 1943 թ., երբ ամսագրի հրատարակութիւնը վերսկսուեց⁷: 1925 թուականից Ուկրաինական Եկեղեցին հրատարակում էր «Украинский православный благовестник» անուանումով երկշաբաթաթերթ: Պարբերականի վերջին էջում նշում էր «Укрглавлит»-ի թոյլտուութեան ամսաթիւը եւ համարը: Հայաստանի ազգային արխիւի ֆ. 409-ում մեզ յաջողուել է յայտնաբերել երկշաբաթաթերթի համարներից 5-ը՝ հրատարակուած 1925 թ. սեպտեմբերից մինչեւ 1926 թ. ապրիլը⁸:

Հայաստանի խորհրդայնացումից յետոյ պարբերական հրատարակելուն՝ Մայր Աթոռի մեզ յայտնի առաջին փորձը եղել է 1923 թ. մայիսին: Սինոդի անդամների եւ էջմիածնում գտնուող թեմական առաջնորդների հետ խորհրդակցութիւն անցկացնելուց յետոյ Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ե. Սուրենեանցը Երեւանի փոխթեմակալ Խորէն արքեպիսկոպոս Մուրադբէկեանին յանձնարարեց Գէորգեան հոգեւոր ճեմարանի վերաբացման եւ «Արարատ» ամսագրի վերահրատարակման խնդրի վերաբերեալ ՀՍԽՀ ժողկոմխորհի հետ բանակցութիւններ սկսել⁹: Այդ հարցով Խորհրդային Հայաստանի իշխանութիւններին ուղղուած դիմումին էջմիածնի կոմիսար Գրիգոր Վարդանեանը, որի միջոցով էին իրականացում Մայր Աթոռի եւ ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի փոխյարաբերութիւնները, 1923 թ. հոկտեմբերի 28-ին պատասխանեց, որ հանրապետութեան իշխանութիւնների կողմից «թոյլատրում է ունենալ պարբերական թերթ, բայց ոչ իբրեւ օրգան էջմիածնի»¹⁰:

Իշխանութիւնների համար պայման էր նաեւ, որ Մայր Աթոռի պարբերականը տպագրի միայն կրօնական-աստուածաբանական նիւթեր

⁶ Ռուս վտարանդիները 1922 թ. արտասահմանում վերսկսեցին պարբերականի հրատարակութիւնը:

⁷ <https://www.rop.ru/istoriya> (այցելութիւնը՝ 27.11.2019 թ.):

⁸ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 42, թ. 1—31 շրջ.: Արխիւային գործում պահւում են պարբերականի 1925 թ. սեպտեմբերի 1-ի թիւ 17-ը, 1926 թ. յունուարի 1-ի թիւ 1-ը, յունուարի 15-ի թիւ 2-ը, փետրուարի 1-ի թիւ 3-ը, ապրիլի 19-ի թիւ 8-ը:

⁹ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 55, թ. 17 շրջ.:

¹⁰ Ն. տ., գ. 12, թ. 2:

(եկեղեցական օրացույցների հրատարակությունը թույլատրելը եւս հիմնականում սրանով էր պայմանավորված): Այն է՝ հայագիտական բնութի ուսումնասիրություններ տպագրելը չէր խրախուսում, ինչը տասնամեակներ շարունակ «Արարատ» ամսագրի մեծագույն առաւելությունն էր հանդիսացել եւ հռչակ բերել նրան: Միւս կողմից՝ նիւթերի քանակը սահմանափակ էր, երբեմնի յօդուածագիրները, որ մինչխորհրդային ժամանակահատուածում պաշտօնավարել կամ դասախօսել էին Գէորգեան հոգեւոր ճեմարանում եւ կապուած էին Մայր Աթոռի հետ, Հայաստանի խորհրդայնացումից յետոյ հեռացել էին վերջինից եւ ոչ միայն շահագրգռություն չունէին, այլեւ խուսափում էին համագործակցությունից՝ իշխանությունների «սեւ ցուցակում» չյայտնուելու համար: Գիտական պատրաստություն ունեցող հոգեւորականների թիւը եւս նուազել էր, շատերը բռնությունների եւ հետապնդման էին ենթարկուել, որոշները հեռացել էին Եկեղեցուց, կարգաթող եղել: Իշխանությունները սահմանափակել էին նաեւ Սփիւռքի աշխարհիկ եւ հոգեւոր գործիչների հետ Սուրբ Էջմիածնի համագործակցութեան հնարավորությունը:

Ի դէպ, 1920-ականներին խորհրդային Հայաստանում նոր պարբերական հրատարակելու համար անհրաժեշտ էր ստանալ ՀՍԽՂ գրականության, հրատարակչության եւ խաղացանկի վերահսկողության վարչության (Հայգլալիտ) թույլտուությունը: Վերջինը, իր հերթին, հարցը համաձայնեցնում էր ՀԿ(բ)Կ կենտկոմի հետ: Խորհրդային համակարգի տեսակէտից ոչ ընդունելի հրատարակությունները գրաքննիչներն արգելում էին¹¹:

Իշխանությունների թույլտուությունն ստանալուց յետոյ Մայր Աթոռի առաջնահերթ խնդիրը դարձաւ անհրաժեշտ գումարների հայթայթումը: Ինչպէս յետագայ շարադրանքում կտեսնենք, դրամական միջոցների անբաւարարությունը խոչընդոտ էր հանդիսանում Մայր Աթոռի համար պարբերական հրատարակելու հարցում:

Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ե. Սուրենեանցի 1924 թ. յունուարի 1-ի կոնդակով, Հայրապետական սինոդի եւ դիւանի փոխարէն, իր նախագահութեամբ հիմնուեց նոր մարմին՝ Գերագոյն հոգեւոր խորհուրդ, որի անդամներ նշանակուեցին Մեսրոպ Տէր-Մովսիսեան, Խորէն Մուրադբէկեան, Բագրատ Վարդազարեան արքեպիսկոպոսները, Գարեգին Յովսէփեանց, Զաւէն Բաբայեան, Գիւտ Տէր-Ղազարեան եպիսկոպոսները:

¹¹ Հ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ, Փաստաթղթեր խորհրդային Հայաստանի Գլաւլիտի կազմակերպման մասին, «Պատմաբանասիրական հանդէս», Երեւան, 2017, թիւ 3, էջ 188:

Մայր Աթոռի եւ թեմերի կրօնական, վարչական, տնտեսական գործերը ենթակայ էին ԳՂԽ քննութեանը եւ վերջնական լուծմանը: Սրանով կաթողիկոսի լիազօրութիւնները մասնակի սահմանափակուեցին¹²:

«Էջմիածնում պարբերական թերթ ունենալու խնդիրը» քննարկուեց նորաստեղծ Գերագոյն հոգեւոր խորհրդի 1924 թ. յունուարի 16-ի նիստում: Հաշուի առնելով իշխանութիւնների դրական վերաբերմունքը՝ որոշուեց հրատարակել «Արարատ» անուանումով «կրօնական-ազգային պարբերական», որն ունենալու էր 4—5 տպագրական մամուլ ծաւալ: Պարբերականում հրատարակուելիք յօդուածները նախապէս քննարկուելու եւ արժանանալու էին խմբագրական յանձնախմբի հաւանութեանը: Ուշագրաւ մի հանգամանք. արձանագրութեան մէջ յատուկ կարեւորւում էր այն աւանդական ուղղագրութեամբ հրատարակելու համար միջոցներ ձեռնարկելը եւ միայն այդ հարցում անյաջողութեան հանդիպելու պարագայում նոր ուղղագրութեամբ տպագրելը¹³:

Խնդիրն այն է, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին չէր ընդունում ՀՍԽՀ ժողկոմխորհի 1922 թ. մարտի 4-ի դեկրետով¹⁴ կատարուած ուղղագրական փոփոխութիւնը: Նոյնիսկ իշխանութեան ներկայացուցիչներին ուղղուած դիմումներում Մայր Աթոռի միաբանները շարունակում էին կիրառել դասական ուղղագրութիւնը: Այս հանգամանքը ՀՍԽՀ բարձրաստիճան պաշտօնեաներին ամենեւին դուր չէր գալիս, որոնք ուղղակի եւ անուղղակի բարձրաձայնում էին դա: Մասնաւորապէս 1925 թ. նոյեմբերի 13-ին լուսաւորութեան ժողկոմատի կողմից ժողկոմխորհի գործերի կառավարչութեանն ուղղուած «գաղտնի» նշագրումով գրութիւնում լուսժողկոմ Ասքանազ Մուսեանի անունից առաջարկում էր Մայր Աթոռի հետ պետութեան փոխյարաբերութիւնների պատասխանատու, հողագործութեան ժողկոմ Արամայիս Նրզնկեանի միջոցով հոգեւորականներին տեղեկացնել, որ «...նոր ուղղագրութիւնը արտադրական եւ պարտադիր է նաեւ նրանց համար: Առաջարկել այսուհետեւ բոլոր գրութիւնները ուղարկել նոր ուղղագրութեամբ գրած, հակառակ դէպքում նրանց գրութիւնները չեն ընդունուի»¹⁵: Սա ուշագրութեան արժանի կարեւոր փաստ է:

¹² ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 8, թ. 3, Պ. Յովհաննիսեան, Արժէքաւոր վաւերագիր Մայր Աթոռի 1920-ական թուականների կացութեան վերաբերեալ (Մեսրոպ արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեանի նորայայտ նամակը պրոֆէսոր Նիկողայոս Ադոնցին), «Էջմիածին», 2001, Բ.—Գ., էջ 96—104:

¹³ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 12, թ. 2:

¹⁴ «ՀՍԽՀ դեկրետների եւ որոշումների հաւաքածու», Երեւան, 1922, №5, էջ 37—40:

¹⁵ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 307, թ. 16:

Պարբերական հրատարակելու թույլտուութիւն ունենալով հանդերձ՝ Մայր Աթոռը, զրկուած լինելով իր հիմնական եկամուտներից, այդ նպատակի համար անհրաժեշտ նիւթական հնարաւորութիւններ չունէր։ Այդ առումով կարելոր էր համարուում թեմերից դրամական միջոցների ներգրաւումը։ Գերագոյն հոգեւոր խորհրդի 1925 թ. յունուարի 16-ի նիստում արձանագրուեց, որ «Արարատ» խորագրով ժողովածուում լուսաբանուելու էին Հայոց Եկեղեցու բարենորոգութեանը (բարեփոխմանը) վերաբերող խնդիրները, իսկ թեմական առաջնորդներին առաջարկուեց իրենց մասնակցութիւնը բերել այդ աշխատանքներին¹⁶։

Դրամական միջոցների անբաւարարութիւնը Գերագոյն հոգեւոր խորհրդին ստիպեց ամսագրի փոխարէն նոյնանուն ժողովածու հրատարակել։ Այս փաստն արձանագրելով՝ 1925 թ. սեպտեմբերի 22-ին Այրարատեան, Սիւնեաց, Շիրակի, Թիֆլիսի, Արցախի, Բաքուի, Նոր Նախիջեւանի, Հիւսիսային Կովկասի եւ Աստրախանի, Գանձակի թեմերին ուղղուած շրջաբերականում խորհուրդը տեղեկացնում էր, որ «Արարատ» ժողովածուում տեղ էին գտնելու Հայ Եկեղեցու դրութեան եւ նրա բարեփոխման մասին ուսումնասիրութիւններ՝ մինչեւ 2—2,5 մամուլ ծաւալով։ Ժողովածուի նիւթերի հայթայթման եւ հրատարակութեան հարցում ԳՀԽ-ն ակնկալում էր թեմերի օժանդակութիւնը։ Նշենք, որ ցանկալի էր դիտուում յօդուածներ պատրաստել Հայոց Եկեղեցու բարեփոխման վերջին շրջանի պատմական տեսութեան, Եկեղեցու արդի կացութեան, ծիսակատարութիւնների կազմակերպման, պատմութեան հոլովոյթում ազգային-եկեղեցական ժողովի նշանակութեան, կրօնի գոյութեան իրաւունքի (որն այդ շրջանում արհեստականօրէն քննարկուող հարցերից էր), հայկական մշակոյթի ու գրականութեան մէջ Եկեղեցու դերի, Եկեղեցու եւ հոգեւորականների ապահովութեան խնդրի եւ այլ յարակից հարցերի վերաբերեալ¹⁷։

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում «Արարատ» անուամբ ժողովածու հրատարակելու լուրը ոգեւորութիւն էր առաջ բերել խորհրդային Հայաստանում ու նրա սահմաններից դուրս գտնուող հայ հոգեւորականների շրջանում։ Այդ մասին են վկայում նրանց ուղարկած նամակներն ու պատրաստի յօդուածները։ Այսպէս՝ 1925 թ. նոյեմբերին Մայր Աթոռում ժողովածուի խմբագրութեան անունով ստացուել էին՝ Կրասնոդարից Արսէն աւագ քահանայ Վարդանեանի «Մեր եկեղեցիների ապահովութեան

¹⁶ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 25, թ. 45 եւ շրջ.։

¹⁷ ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 1003, թ. 2, ֆ. 409, ց. 1, գ. 45, թ. 1—2։

խնդիրը», Անապայից Պողոս քահանայ Տէր-Մինասեանի «Անապայի աղօթատան շուրջը» վերնագրերով յօդուածները եւ այլն¹⁸:

Չնայած Հայ Եկեղեցու համար ստեղծուած ծանրագոյն պայմաններին՝ Մայր Աթոռում ոչ պակաս ոգեւորութիւն էր տիրում «Արարատ» ամսագրի հրատարակութիւնը վերսկսելու հարցում: Գէորգեան հոգեւոր ճեմարանի վերաբացման եւ «Արարատ» ժողովածուի հրատարակման խնդիրները քննութեան առնուեցին Գերագոյն հոգեւոր խորհրդի 1926 թ. փետրուարի 4-ի նիստում: Այս մասին մանրամասն զեկուցում ներկայացրեց խորհրդի անդամ, ականաւոր հայագէտ Գարեգին արքեպիսկոպոս Յովսէփեանցը: Արձանագրելով, որ նիւթական միջոցների պակասի, սեփական տպարան չունենալու եւ այլ պատճառներով «Արարատի» հրատարակման հարցն առկախ է մնացել, նա բարձրաձայնում է Մայր Աթոռի միաբանների շրջանում տարածուած մտայնութիւնը, որն արդիական է նաեւ այսօր. «Ամէնքս խորապէս գիտակցում ենք, որ առանց դպրոցի, մամուլի եւ տպարանի մենք չենք կարող ծառայել Եկեղեցու բարձր նպատակներին»¹⁹: Նիստի վերջում խորհրդի մշտական անդամներին յանձնարարուեց «Արարատ» ժողովածուի հրատարակութեան աշխատանքներն արագացնել: Ցանկալի էր համարում սեփական տպարան ունենալը: Բացի այդ՝ որոշուեց հրատարակել երկշաբաթաթերթ՝ «հաւատացեալների հետ կենդանի կապ պահպանելու եւ ապագայում գումարուելիք Ազգ[ային] եկեղեցական» ժողովին դրուած հարցերի լուսաբանութեան համար», ինչի կապակցութեամբ թեմական առաջնորդները խոստացան դրամական օժանդակութիւն յատկացնել²⁰:

Փաստօրէն, տեսնելով, որ ծաւալուն ժողովածու հրատարակելը գրեթէ անլուծելի խնդիր է, Մայր Աթոռում հակուեցին (ամենայն հաւանականութեամբ Ուկրաինական Եկեղեցու օրինակով) ամսաթերթ հրատարակելու տարբերակին: Այնուհետեւ Մայր Աթոռը շրջաբերականով ծանուցեց Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնութեամբ «Արարատ» կրօնական-բարոյական, եկեղեցական-պատմական ամսաթերթի հրատարակման մասին: Նշում էր, որ այն հրատարակուելու է ամիսը մէկ անգամ՝ 2—2,5 մամուլ ծաւալով: Իւրաքանչիւր համարի արժէքը կազմելու էր 40 կոպէկ: Խմբագիրը լինելու էր Գիւտ եպիսկոպոս Տէր-Ղազարեանցը: Պարբերականն ունենալու էր հետեւեալ բաժինները.

¹⁸ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 48, թ. 1—7:

¹⁹ Ն. տ., գ. 55, թ. 18:

²⁰ Ն. տ.:

«1. Կրօնական-բարոյական-առաջնորդողներ՝ կրօնական-եկեղեցական կեանքին վերաբերող, Ս. Գրքի բացատրութիւններ,

2. Եկեղեցու պատմութեան, գրականութեան, արուեստի մասին յօդուածներ,

3. Հայոց եկեղեցին Միութեան սահմաններում եւ արտասահմանում,

4. Եկեղեցական բարեփոխութեան մասին յօդուածներ եւ բացատրութիւններ,

5. Զեկուցումներ եւ թղթակցութիւններ թեմերից,

6. Օտար եկեղեցիների քրոնիկոն,

7. Գրախօսութիւն եկեղեցական-կրօնական-պատմական եւ գեղարուեստական գրուածքների,

8. Պետական եւ եկեղեցական կարգադրութիւններ եւ լուրեր Հայոց եկեղեցու մասին,

9. Գիտական մանրալուրք,

10. Յայտարարութիւններ»²¹:

Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ առաջարկուող գրեթէ նոյնութեամբ համընկնում է Մայր Աթոռի՝ նախկինում հրատարակած «Արարատ» ամսագրի եւ 1944 թուականից անխափան հրատարակուող «Էջմիածին» ամսագրի նիւթերին: Հաւանական է, որ վերջինի հրատարակման ժամանակ խմբագրակազմը ձեռքի տակ ունեցել է նշեալ առաջարկները:

Եկեղեցական ամսաթերթ հրատարակելու լուրը ոգեւորութեամբ ընդունեցին հոգեւորականները եւ հաւատացեալները: Օրինակ՝ 1926 թ. մարտի 31-ին Գերագոյն հոգեւոր խորհրդին ուղղուած նամակում Ղրիմից Յարութիւն քահանայ Տէր-Ենոքեանը խնդրում էր «Արարատ» թերթը լոյս տեսնելու դէպքում իրեն օրինակներ ուղարկել՝ խոստանալով պարբերականի համար բաժանորդներ գտնել²²:

1926 թ. սեպտեմբերի 29-ին գումարուած Գերագոյն հոգեւոր խորհրդի ընդլայնուած կազմի նիստի բացման ելոյթում Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ե. Սուրենեանցը յիշեցրեց «Արարատ» ամսագրի հրատարակութեան ընդհատման եւ պետութեան կողմից վանական տպարանը բռնագրաւելու պատճառով թերթ հրատարակելու հնարաւորութիւնից զրկուած լինելու մասին: Նա թեմերի ներկայացուցիչներին յորդորեց ջանքեր գործադրել այդ բացը լրացնելու նպատակով, մանաւանդ որ

²¹ Ն. տ., գ. 59, թ. 1–2:

²² Ն. տ., թ. 3:

իշխանութիւններից պարբերական հրատարակելու թոյլտուութիւն է ստացուել: «Ուրեմն՝ ժողովականներ, երբ էջմիածինը ջրաղացը շինել—պատրաստել է, ձեզ մնում է ջրաղացին անհրաժեշտ ջուրը մատակարարել, որ բանի ու գործի: Եւ ես յոյս ունեմ, որ մեր թեմերը ամէն ջանք գործ կդնեն այս պակասը եւս լրացնելու»,— իր խօսքը պատկերաւոր կերպով եզրափակեց կաթողիկոսը²³:

Եկեղեցական պարբերականի հարցը շոշափուեց նաեւ Գերագոյն հոգեւոր խորհրդի նախորդ ամիսների գործունէութեան վերաբերեալ՝ Գիւտ եպիսկոպոսի զեկուցման մէջ, որից պարզ է դառնում, որ թերթի հրատարակութեան թոյլտուութիւնը բանաւոր էր: Թեմերի առաջնորդների կողմից 1250 օրինակ սպառելու յանձնառութեան դէպքում ԳՀԽ-ն մտադիր էր մինչեւ 1927 թ. յունուար ամիսը տպագրել «Արարատ» թերթի առաջին համարը (իւրաքանչիւր օրինակը 50 կոպէկ արժէքով): Վերջում որոշուեց թերթի հրատարակման ժամանակահատուածի եւ տպաքանակի յստակեցումը վերապահել ԳՀԽ-ի մշտական անդամներին, իսկ թեմերի առաջնորդներին պարտաւորեցնել իրենց թեմերում տարածել այն²⁴: Իբրեւ վերը նշուած որոշման շարունակութիւն՝ ԳՀԽ-ի ընդլայնուած կազմի հոկտեմբերի 1-ի նիստում հաստատուեց «Արարատի» հրատարակութեան նախահաշիւը: Ըստ այդմ՝ պարբերականը 1200 օրինակով հրատարակելու դէպքում անհրաժեշտ էր լինելու 600 ռուբլի (տպագրական թղթի եւ շարուածքի համար՝ 400 ռ., փօստային առաքման համար՝ 100 ռ., աշխատակիցների վարձատրութեան համար՝ 100 ռ.): Ծախսերը ծածկելու նպատակով նախատեսւում էր թերթի տպագրուած իւրաքանչիւր օրինակը վաճառել 50 կոպէկով, որով ելքի եւ մուտքի գումարներն իրար կհաւասարուէին²⁵:

Չնայած եղած ոգեւորութեանն ու ջանքերին՝ նիւթական եւ կազմակերպչական պատճառներով «Արարատի» նոր համարն այդպէս էլ լոյս աշխարհ չէր գալիս: Այստեղ աւելորդ է խօսել Մայր Աթոռի պարբերականին Խորհրդային Հայաստանի իշխանութիւնների կողմից նիւթական աջակցութիւն ցուցաբերելու հնարաւորութեան մասին: Նման հարցադրումն ինքնին բացառում էր, եւ դրանով է պայմանաւորուած, որ Գերագոյն հոգեւոր խորհուրդը նիւթական աջակցութեան խնդրանքով պետութեանը չի էլ դիմել: Ի դէպ, 1920-ականներին Խորհրդային Հայաստանում

²³ Ն. տ., գ. 69, թ. 2 շրջ.:

²⁴ Ն. տ., թ. 3 շրջ., 5—6:

²⁵ Ն. տ., թ. 11, 12:

պետական աջակցություններ կրօնական/հակակրօնական բովանդակություններով պարբերականներ էին տպագրում՝ 1924—1928 թթ. Երեւանում Մեսրոպ քահանայ Մելեանի եւ գործընկերների հրատարակած «Ազատ եկեղեցի» կրօնաբարոյական եւ պատմագիտական շաբաթաթերթը եւ 1928 թվականից կրկին Երեւանում հրատարակուող ՀՍԽՀ մարտնչող անաստուածների միություն «Անաստուած» պաշտօնաթերթը։ Այսպէս՝ ՀԿ(Բ)Կ կենտկոմի քարտուղարութեան 1926 թ. փետրուարի 4-ի եւ 1928 թ. փետրուարի 27-ի նիստերում որոշուել է համապատասխանաբար «Ազատ եկեղեցի» եւ «Անաստուած» պարբերականների տպագրութեան համար դրամական միջոցներ յատկացնել²⁶։

«Արարատի» հրատարակութեան հարցում յաջողութիւն չարձանագրելուց յետոյ Գերագոյն հոգեւոր խորհուրդը որոշեց այլ անուանումով պարբերական հրատարակել։ Տպաւորութիւն կար, թէ իշխանութիւններին կարող էր դուրեկան չլինել Թուրքիայի գերիշխանութեան ներքոյ գտնուող արեւմտահայկական հողերը խորհրդանշող «Արարատ» անուանումը։ ՀՍԽՀ ժողկոմխորհի բանաւոր թոյլտուութիւնից յետոյ 1930 թ. գարնանը Մայր Աթոռում որոշուեց «Էջմիածնի տեղեկաբեր» անուանումով նոր պարբերական հրատարակել։ Այն խմբագրելու էին Գարեգին արքեպիսկոպոս Յովսէփեանցը եւ Մատթէոս արքեպիսկոպոս Մատթեոսեանը²⁷։ 1930 թ. մայիսի 28-ին ՀՍԽՀ պետական իշխանութեան բարձրագոյն մարմինն՝ Կենտրոնական գործադիր կոմիտէին ուղղուած դիմումում, ի շարս այլ խնդիրների, Գերագոյն հոգեւոր խորհուրդը բարձրացրեց նաեւ եկեղեցական պարբերականի հրատարակման հարցը՝ համապատասխան թոյլտուութիւն ակնկալելով։ Յուլիսի 6-ին կենտգործկոմի քարտուղար Գ. Մովսէսեանը պատասխան գրութեամբ այս առթիւ արձանագրում էր, որ «Գրառեպգլխավարի մարմինները չեն կարող արգելել կրօնական հարցերի վերաբերեալ տպագիր գրուածքների հրատարակութիւնը, եթէ միայն այդ գրուածքները մասնաւորապէս հակախորհրդային նպատակներ չեն հետապնդում»²⁸։ Հիմք ընդունելով այս հաւաստիացումը՝ յուլիսի 14-ին Գարեգին արքեպիսկոպոսին ուղղուած գրութիւնում տեղեկացնելով կենտգործկոմից ստացուած գրաւոր դիրքորոշման մասին՝ Գերագոյն հոգեւոր խորհրդի անդամներ Խորէն, Բագրատ եւ Գիւտ արքեպիսկոպոսները նրան յորդորում էին «ըստ

²⁶ ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 11, թ. 11, ց. 8, գ. 22։

²⁷ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 118, թ. 1։

²⁸ «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան (1921—1938 թթ.)», էջ 220—221։

հնարաւորութեան աշխատել փութացնել առաջին տետրակի տպագրութիւնը՝ բովանդակութեան հետ նախապէս ծանօթացնելով Խորհրդիս»²⁹։

Արձանագրենք, որ «Էջմիածնի տեղեկաբեր» պարբերականին եւս վիճակուած չէր լոյս աշխարհ գալ՝ չնայած դրան սպասողների առկայութեանն ու գործադրուող ջանքերին։ Այսպէս՝ Հիւսիսային Կովկասի եւ Աստրախանի թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Վարդազարեանը, որ ընդամէնը մէկ ամիս առաջ էր վերադարձել Սուրբ Էջմիածնից, 1930 թ. օգոստոսի 20-ին Գերագոյն հոգեւոր խորհրդին ուղղուած նամակում վստահութիւն էր յայտնում, թէ «ամենայն հաւանականութեամբ արդէն լոյս տեսած կլինի մինչեւ այժմ Ս. Էջմիածնի Տեղեկաբերը» եւ խնդրում ամսագրից ոչ աւել եւ ոչ պակաս 500 օրինակ ուղարկել թեմի համայնքների կարիքների համար³⁰։

Պարբերական հրատարակելու հարցում մէկ տասնամեակ տեւած անյաջող փորձերից յետոյ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններն ասես ընկրկեցին։ Իսկ 1930-ականների կէսերին ԽՍՀՄ-ում նոր թափ հաւաքած քաղաքական բռնաճնշումների պայմաններում նոյնիսկ անհնար էր նման հարցեր բարձրացնել։ Ի դէպ, ՀՍԽՀ իշխանութիւնները Մայր Աթոռին վերջին անգամ օրացոյց հրատարակելու թոյլտուութիւն տուեցին 1935 թ. աշնանը, երբ «Պետհրատի» տպարանում տպագրուեց 1936 թ. եկեղեցական օրացոյցը³¹։ Մայր Աթոռը պարբերական հրատարակելու հնարաւորութիւն ստացաւ միայն 1944 թ. յունուարին, երբ սկսեց անխափան տպագրուել «Էջմիածին» ամսագիրը։

Այսպիսով՝ կրօնական-եկեղեցական ամսագիր, ժողովածու կամ թերթ հրատարակելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շուրջ տասնամեայ ջանքերը 1920-ականներին դրական արդիւնքի չյանգեցրին։ Իշխանութիւնների ոչ բարեհաճ վերաբերմունքի պայմաններում, կազմակերպչական ուժերի եւ դրամական միջոցների անբաւարարութեան պատճառով, «Արարատ» եւ «Էջմիածնի տեղեկաբեր» պարբերականներն այդպէս էլ լոյս աշխարհ չեկան։ Չնայած պետական-կուսակցական մարմինների իրականացրած հակակրօնական՝ նպատակաուղղուած քարոզչութեանը՝ 1920-ական թուականներին Խորհրդային հանրապետութիւններում զգալի թիւ էին կազմում ջերմեռանդ հաւատացեալները։ Ասուածի վառ վկայութիւններից

²⁹ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 118, թ. 1։

³⁰ Ն. տ., թ. 3։

³¹ «Հայ գիրքը 1931–1940 թուականներին», կազմողներ՝ Օ. Գիւլումեան, Ս. Գրիգորեան, Երեւան, 2018, էջ 356։

է, թերեւս, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակած եկեղեցական օրացոյցների եւ հրատարակելիք պարբերականի նկատմամբ նախկինի օրինակով եղած մեծ պահանջարկը:

РЕЗЮМЕ

В декабре 1920 года после советизации Армении культурные и образовательные учреждения Первопрестольного Святого Эчмиадзина, в том числе типография, подверглись экспроприации. Это обстоятельство осложнило издание не поощряемой властями церковно-религиозной литературы. В таких неблагоприятных условиях Святой Эчмиадзин приложил усилия для возобновления издания журнала «Арагат», прекратившего издаваться в 1919 году. Получив разрешение от советских властей, с октября 1923 года начались работы по изданию церковно-религиозной периодики. Несмотря на разрешение, серьезнейшим препятствием для издания периодики была нехватка финансовых средств.


В работе, где представлены нововыявленные документы, показано, что почти десятилетние усилия Первопрестольного Святого Эчмиадзин по изданию церковно-религиозного журнала, сборника или газеты не привели к положительным результатам в 1920-х годах. В условиях неблагоприятного отношения властей, а также из-за отсутствия организаторских сил и финансовых средств «Арагат» и «Справочник Эчмиадзина» так и не увидели свет. Только в 1944 году Эчмиадзин начал издавать журнал «Эчмиадзин», который до сих пор продолжает публиковаться.

SUMMARY

In December 1920, after the Sovietization of Armenia, the cultural and educational institutions of the Mother See of Holy Etchmiadzin, including the printing house, were expropriated. This circumstance complicated the publication of religious-ecclesiastical literature not encouraged by the authorities. In such unfavorable conditions, the Mother See made efforts to resume the publication of “Ararat” monthly ceased to be published in 1919. With permission of the authorities

of Soviet Armenia, in October 1923, the Mother See of Holy Etchmiadzin started works on the publication of religious-ecclesiastical periodicals. Despite the resolution, a serious obstacle to the publication of periodicals was the lack of financial resources.

On the basis of newly discovered documents, the study shows that the decades-long efforts of the Mother See of Holy Etchmiadzin to publish a religious-ecclesiastical magazine, collection of works or a newspaper did not lead to positive results in the 1920s. Due to the unfavorable attitude of the authorities and lack of organizational forces and financial resources, the periodicals “Ararat” and “Etchmiadzin Directory” were not published. Only in 1944, the Mother See of Holy Etchmiadzin began publishing “Etchmiadzin” monthly, which is still published uninterruptedly.



ԳԱՂՏՆԱԶԵՐԾՎԱԾ ՄԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Ներկայացվող հատվածը ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության 1982 հուլիս 19 թվագրյալ «Worldwide Report: Terrorism»՝ շուրջ 200 էջանոց տեղեկագրից է, որ գաղտնագերծվել է 2007-ին: Թարգմանական գլուխները ֆաղված են այլազան օտար աղբյուրներից: Հարավսլավական, գերմանական, ֆրանսիական, իսպանական եւ շվեյցարական նյութերի կողմին 5-ից 27-րդ էջերում «Armenian Affairs» վերտառությամբ գլուխն է, որ վերցված է Թուրան գործակալության 1982-ին՝ Ստամբուլում հրատարակած «Tarihin Işığında Ermeni Dosyası» («Armenian Dossier In the Light of History»․ «Հայկական գործը (թղթածրարը) պատմության լույսի ներքո») գրքից:

Գրքի հեղինակ Քեմալ Անադոլը (1933–2013 թթ.) համացանցում ներկայացված է իբրեւ լրագրող եւ հրապարակախոս: Սակայն առավել հավանական է, որ նա, առնվազն, լուրջ կապեր է ունեցել թուրքական հատուկ ծառայությունների հետ, եթե խուսափենք *սպասավոր* բառի կիրառությունից: Ի մասնավորի՝ «Ժողովրդավարությամբ» հայտնի իր հայրենիքում Քեմալն ազատ տիրապետում է դատական փակ գորոցներում պահվող նյութերին, տեղեկություններ ունի Ռոֆֆելլեր հիմնադրամի կազմակերպած գաղտնի հանդիպումների մասին (նուր Թուրքիան անգամ հրավիրված չի եղել) եւ այլն:

Թուրք ուսումնասիրողն անդրադարձել է հայ-թուրքական հարաբերություններին, հայկական ցեղասպանությանն ու ահաբեկչական կազմավորումներին, ինչպես եւ եւրոպական երկրների դիրքորոշմանը Հայկական հարցի շուրջ: Տարվելով Հայոց Եղեռնը հերքելու անիրագործելի մտքով՝ Քեմալը չի խորշել պատմական արդարության դեմ մեղանշելուց, անգամ հանդգնել է ֆաղվածաբար հոխորտալ Տիգրան Մեծի դեմ՝ կրկնաբար նրան շփոթելով Տիրան (Տիգրան) Փիլիսոփայի հետ: Այս կարգի օրինակները չենք կարող նպատակադրված զեղծարարություն համարել, որովհետեւ դրանցից «թուրքերի անմեղություն» վերաբերյալ որեւէ շոշոփելի օգուտ չի լինի ֆաղել, այլ ընդամենն ի ցույց է դրվում գրողի տարական տգիտությունը: Պատմությունը կեղծելու բնագոյն արթնանում է, երբ շահադրանքն սկսում է առնչվել Եղեռնին կամ դրան նախորդած տարիներին, Հայքի տարածքում հայոց բնիկ եւ վաղ-վաղնջաբնակ լինելուն: Այստեղ արդեն Քեմալը դիմում է «մաթեմատիկական մանր խորամանկություններին» (ոչ թե հայ բնակչության թիվն է գրանցում, այլ միայն՝ անձնագիր ունեցողներին), հայկական

տեղանուններն է օտար ձեւերով փոխարինում, որ ազգային հետքը ջնջի: Օրինակ, «գլխական սկզբունքայնությամբ հայտնի» իր նախորդներից օգտվելով, մոռացության է տալիս Կարին անունը եւ ջանք ու եռանդ չի խնայում ապացուցելու, որ էրզրումն Արգի Ռում է՝ հույների երկիր: Թողուցիկ հայացքով թե՛ այս միտքն առաջինը երկնողը, թե՛ կրկնողը կարող են բավարարված բերել՝ հաշվելով, թե ապացուցեցին, որ այդ տարածքը հայկական բնօրրան չէ: Բայց միեւնույն է՝ կատարյալ երանության համար պետք էր ապացուցել, որ հույներինն էլ չէ երկիրը, այլ թուրքերինը: Այլապես ցանկացած անկողմնակալ ընթերցող պիտի նկատի՝ Հայերին չե՛ք կամենում վերադարձնել իրենց հողերը, ուրեմն տվե՛ք հույներին: Ընդ որում՝ Կարինը հունացնելու անտանելի բեռը «սկզբունքայինները» ստանձնել են Ֆրանսիական հանրագիտարանում գրվածը հերքելու՝ ի սկզբանե ձախույլալ նպատակով՝ ըստ ամենայնի անտեղյակ լինելով, որ հանրագիտարանները լուրջ մարդիկ են կազմում, ոչ թե պատահականության զոհերը: Այստեղ հարկ է նշել մի կարեւոր հանգամանք. ինչպես Քեմալն է սիրով օգտագործել իր նախորդների կեղծիքները, նույն ձեւով իր կիրառած շատ միջոցներ կարելի է գտնել թուրք դիվանագիտական էջերոնի համար նախատեսված՝ «Armenian Claims and Historical Facts: Questions and Answers» (Հայկական պահանջատիրություն եւ պատմական փաստեր. Հարցեր եւ պատասխաններ) ուղեցույց-գրքույկում*, որ պետք է օգնի խուսափել իրենց համար տհաճ հարցերից: Ինչեւէ, վերետուր բերված ու նմանատիպ այլազան դեպքերով կարող ենք վստահանալ, որ գլխական առումով աշխատանքը որեւէ հետաքրքրություն չի կարող ներկայացնել, հետեւաբար անիմաստ է տարբեր էջերում հայտնված հերյուրանքներն ուշադրության արժանացնելը, առավել եւս հերքելը: Այն կարող է օգտակար լինել միայն «ինչպես կեղծել պատմությունը» կամ «ինչպես մերժել նշմարտությունը» խորագրերի ներքո:

Փոխարենը Քեմալի աշխատությունը գեղեցիկ կերպով մատնում է, թե հոգեբանական ինչ բարդույթներով ու վախերով են տառապել աշխատանքի հեղինակն ու իր պատվիրատուները: Շարադրանքում գրեթե բոլոր հայերն՝ աշակերտ, ուսանող, դասախոս կամ խանութպան... բոլորը հակաթուրք զինյալներ են կամ ահաբեկիչներ: Այս համապատկերում առանձնակի սարսափ կա հայ հոգեւորականության հանդեպ. եթե մնացյալ հայերը պարզապես ահաբեկիչներ են, ապա հայ հոգեւորականը ոչ թե սովորական ահաբեկիչ է, այլ ահաբեկչության փորձագետ, որ կարող է ցանկացած մեկի «ուղեղը լվանալ» ու դարձնել «թուրքատյաց հմուտ զինյալ»: Հեղինակը փորձել է բացահայտել զինյալներ պատրաստելու հայ հոգեւորականության գաղտնիքը. պարզվում է՝

* *SKU* Center for Strategic Research, Ankara, 2005, 72 էջ:

հոգեւոր դպրոցներում հայ եկեղեցականները Մայրենի լեզու եւ Հայոց պատմություն են դասավանդում աշակերտներին, դասարաններում փակցնում են Հայաստանի ֆարտեզը եւ աննկատ կերպով աշակերտներին վեր են ածում «հմուտ» կամ վարժ «գինյալների», ու թերեւս դա է պատճառը, որ հայոց հոգեւոր դպրոցներից շատերը վարժարան են կոչվել: Հենց այսպես է Մայրենի լեզվի ու Հայրենի պատմության ուսուցումը անհիմն վախերի պատճառ դարձել: Իսկ ինչ վերաբերում է Մեծ Հայքի ֆարտեզը լսարաններում փակցնելուն, ուրախալի է գոնե, որ Քեմպլը տեղյակ չէ, որ Հայոց պատմությունից բացի՝ հոգեւոր կրթական հաստատություններում նաեւ Համաշխարհային պատմություն են ուսանում՝ համապատասխանաբար փակցնելով աշխարհի ֆարտեզը:

Անհաղթահարելի վախեր են նկատվում նաեւ, երբ հեղինակն արձանագրում է, որ հարուստ հայերը կարիֆալորներին օժանդակելու համար բարեգործական կազմակերպություններ են հիմնում կամ մարզական ակումբներ՝ մարմնակրթության համար: Քեմպլի կանխատեսմամբ հիշյալ կառույցները ահաբեկչական բռնիքներ են: Բայց այդ բոլոր հաստատություններից ամենասարսափելին, թերեւս, Փարիզում գործող գրադարանն է, որ Քեմպլի պատկերացումներին հետեւելով՝ առավել տեղին կլինի բնորոշել իբրեւ «ահաբեկչության ուրջ», որովհետեւ հետազոտողը չի կարողացել երեւակայել, թե իր գիտեցած ահաբեկչությունից բացի՝ ուրիշ ինչով կարելի էր զբաղվել գրադարանում:

Իրենց վախերի աղբյուրը գտնում ենք վերելում հիշատակված ուղեցույցի էջերում. «1973-ից 1986-ն ընկած տասներեփամյա շրջափուլում հայ ահաբեկիչները մոտ 200 գրոհ են կազմակերպել թուրքական դիվանագիտական եւ ոչ դիվանագիտական հաստատությունների վրա»*: ՀԴԲ (FBI-Federal Bureau of Investigation) 1984 թ. սեպտեմբերյան հետազոտության մեջ պատկերացումներ էր բերվող աղյուսակն է**։ Ինչպես կարող ենք տեսնել, գրոհների թիվը կտրուկ տարբերվում է: Սակայն իրենց համար ահագոյուն թիվը չէ, այլ ճշմարտության, պատմականության, մարդկության դեմ գործված մեղքի պատասխանատվության սարսափը:

* * *

Փաստաթղթում հանախ են կիրառված կլոր եւ ուղիղ փակագծերը: Վերջիններս անգլերեն թարգմանողների ընդմիջարկություններն են, ուստի մենք օգտագործել ենք սուր՝ <> փակագծեր: Հեղինակի ծանոթագրությունները

* Անդ, էջ 49:

** Գաղտնագերծել է ԿՀՎ-ն՝ 2009-ին:

A Chronology of Armenian Terrorism, October 1973-June 1984			
Date	Location of Attack	Group/Name Used	Incident Description
1973			
26 October	New York City, United States	Yanikian Commandos	Smoke bomb sent to Turkish Consulate
1974			
26 October	New York City, United States	Yanikian Commandos	Bomb sent to Turkish Consulate
1975			
20 January	Beirut, Lebanon	Prisoner Karekin (Gourgen) Yanikian Group	Bomb discovered at World Council of Churches office
20 February	Beirut, Lebanon	Yanikian Group	Bombing of Turkish Airlines office
22 October	Vienna, Austria	ASALA and JCAG	Assassination of Turkish Ambassador and driver
24 October	Paris, France	ASALA and JCAG	Assassination of Turkish Ambassador
1976			
28 May	Zurich, Switzerland	JCAG	Bombing of Turkish Consulate and a Turkish bank
1977			
14 May	Paris, France	New American Resistance * (NAR)	Bombing of Turkish tourism office
9 June	Rome, Italy	JCAG	Assassination of Turkish Ambassador to the Vatican
1978			
3 January	London, England	NAR	Bombing of Turkish bank
	Brussels, Belgium	NAR	Bombing of apartment of a Turkish Embassy counselor
2 June	Madrid, Spain	ASALA and JCAG	Assassination of brother, wife, and chauffeur of Turkish Ambassador to Spain
6 December	Geneva, Switzerland	NAR	Bombing of Turkish Consulate
17 December	Geneva, Switzerland	NAR	Bombing of Turkish Consulate
1979			
January	Madrid, Spain	JCAG	Bombing of British Airways and TWA offices
8 July	Paris, France	JCAG	Bombing of Turkish tourism office and Turkish labor attache's office
12 October	The Hague, Netherlands	JCAG	Assassination of son of Turkish Ambassador
9 December	Rome, Italy	NAR	Bombing of El Al and British Airways offices, injuring nine
22 December	Amsterdam, Netherlands	JCAG	Bombing of Turkish Airlines office
	Paris, France	Commandos of Armenian Avengers (probably JCAG)	Assassination of Turkish press attache
1980			
19 January	Spain	JCAG	Bombing of British Airways, TWA, Swissair, and Sabena Airlines offices (JCAG later denied responsibility)

15

Secret

Approved For Release 2009/04/22 : CIA-RDP85S00315R000200060002-3

գետեղել ենք վերջում (ինչպես բնագրում է) եւ պահել ենք դրանց համա-
րակալումը: Մեր ծանոթագրությունները դրել ենք տողատակում: Անձանց
եւ կառույցների անունները, որ չենք կարողացել նշտել, ներկայացրել ենք
բնագրային զուգահեռներով:

ԹԱՐԳՄԱՆԻԶ՝ ԱՐՇԱԿ (ԿՐՏՍԵՐ) ՄԱԴՈՅԱՆ

Approved For Release 2009/04/22 : CIA-RDP85S00315R000200060002-3

A Chronology of Armenian Terrorism, October 1973–June 1984 (continued)

Date	Location of Attack	Group/Name Used	Incident Description
1 February	Brussels, Belgium	NAR	Bombing of Aeroflot and Turkish Airlines offices
	Paris, France	NAR	Bombing of Soviet information office
6 February	Bern, Switzerland	JCAG	Attempted assassination of Turkish Ambassador
17 April	Rome, Italy	JCAG	Attempted assassination of Turkish Ambassador to the Vatican
6 October	Beverly Hills, United States	JCAG	Firebombing of Turkish Consul General's residence
12 October	Los Angeles, United States	JCAG	Bombing of Music City Tours
	New York City, United States	JCAG	Bombing of Turkish mission to the United Nations
1 December	Paris, France	JCAG	Bombing of British Airways, Lufthansa, and Sebena Airlines offices
17 December	Sidney, Australia	JCAG	Assassination of Turkish General Consul and bodyguard
1981			
2 April	Copenhagen, Denmark	JCAG	Attempted assassination of Turkish labor counselor
13 June	Anaheim, United States	JCAG	Bombing of Anaheim convention center
20 November	Los Angeles, United States	JCAG	Bombing of Turkish Consulate
1982			
28 January	Los Angeles, United States	JCAG	Assassination of Turkish Consul General
22 March	Cambridge, United States	JCAG	Bombing of Turkish Consulate
8 April	Ottawa, Canada	ASALA and Armenian Liberation Front (probably linked to JCAG)	Attempted assassination of Turkish Commercial Counselor
24 April	Cologne, West Germany	NAR	Attempted bombing of Turkish bank
	Dortmund, West Germany	NAR	Bombing of Turkish bank
4 May	Boston, United States	JCAG	Assassination of the honorary Turkish consul
27 May	Ottawa, Canada	JCAG	Assassination of Turkish military attache
7 June	Lisbon, Portugal	JCAG	Assassination of Turkish attache and wounding of wife, who later died
9 September	Burgas, Bulgaria	Combat Units of Justice Against Armenian Genocide (probably JCAG)	Assassination of Turkish administrative attache
22 October	Boston, United States	JCAG	Attempted bombing of honorary Turkish Counsel (alleged member of JCAG arrested aboard aircraft in Boston)
1983			
9 March	Belgrade, Yugoslavia	JCAG	Assassination of Turkish Ambassador to Yugoslavia
14 July	Brussels, Belgium	ASALA, JCAG, and ARA	Assassination of Turkish administrative attache
27 July	Lisbon, Portugal	ARA	Takeover of Turkish Embassy, which resulted in killing of hostages and deaths of five terrorists
1984			
20 June	Vienna, Austria	ARA	Car bomb assassination of Turkish labor attache

* Analysis of the types and nationalities of targets, locations, and forensic evidence indicates the NAR may also be a cover name used by the ARF in claiming attacks against Turkish targets.

25X1

Secret

16

Approved For Release 2009/04/22 : CIA-RDP85S00315R000200060002-3

ԹՈՒՅԼԱՏՐՎԵԼ Է ԳԱՂՏՆԱԶԵՐԾՄԱՆ 2007/02/09

CIA-RDP82-00850R000500080044-0

ՄԻԱՅՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹՂԹԱԾՐԱՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

[Cemal Anadol, Tarihin Işığında Ermeni Dosyası (թուրքերեն),
Ստամբուլ, 1982, էջ 386—425]

Ֆրանսիան եւ հայկական կազմակերպություններն այսօր

Հնչակյան [Սոցիալ-դեմոկրատ կուսակցության] եւ Դաշնակցական [Հայ յեղափոխական դաշնակցություն] կազմակերպություններն իրենց գործողությունների մեծագույն մասն ի սկզբանե ծրագրել են Ֆրանսիայից դուրս՝ այն պատճառով, որ Ֆրանսիան աշխարհի ազգությունների առաջատարն է «հայերին» հրահրելու գործում:

Ֆրանսիային թվում է, թե դեռ պատերազմում է Առաջին աշխարհամարտում: Տեղին է հիշել, որ տարիներ առաջ Դամասկոսում ֆրանսիական հյուպատոսարանում հատուկ ծառայությունների գործակալներն առգրավեցին «Արաբական հեղափոխական հանձնաժողովներին» (Arab Revolutionary Committees) վերաբերյալ փաստաթղթեր:

Առաջին աշխարհամարտից հետո Ֆրանսիան <քաղաքական> առեւտուր էր սկսել իրենց «Անտանտ ուժեր» հորջորջող Մեծ Բրիտանիայի եւ Իտալիայի, ինչպես նաեւ դաշինքին ապավինած Հունաստանի, Սերբիայի եւ Ռումինիայի հետ. վերջիններս Օսմանյան կայսրության մնացորդների <վերաձեւման> հարցում իրենց բախտն ու ճակատագիրը վստահել էին այս ուժերին: Ֆրանսիան կամենում էր, որ Այնթապը, Ուրֆան ու Ադանան, նաեւ «Կիլիկիայի հայկական պետությունը» իր հովանու ներքո լինեն:

Ֆրանսիան այսօր օժանդակում է հայկական մի շարք ահաբեկչական կազմակերպությունների, ինչպիսիք են, օրինակ, Բեյրութում՝ «Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակը» (Armenian Secret Army for the Liberation of Armenia-ASALA*), Լոս Անջելեսի՝ «Հայկական ցե-

* ԱՍԱԼԱ-ի վերաբերյալ տե՛ս Կ. ՎԱՐԳԱՆՅԱՆ, Պայթյուններ Թուրքիայում եւ... ոչ միայն. ASALA-ն ներսից, Երեւան, 2018:

ղասպանության արդարության մարտիկները» (Justice Commandos of the Armenian Genocide-JCAG), Փարիզում՝ «Հայկական նոր դիմադրության կազմակերպությունը» (New Armenian Resistance Organization-NAR) եւ «Հայկական անկախություն եւ ազատությունը» (Armenian Liberation and Freedom-EKO), Բեյրութի՝ «Գործողության երիտասարդաց խումբը» (Youth Action Group—GEGE) եւ «Հայ ազատագրական ճակատ — հոկտեմբերի 3-ի մարտիկները» (Armenian liberation front—3 October Commandos), Ժնևի՝ «Հունիսի 9-ի հայկական կազմակերպությունը» (9 June Armenian Organization): Այս աշակցությունը բխում է Ֆրանսիայի՝ «Թուրքերի դեմ վաղեմի թշնամանքից»: Հայերին գրգռելու ֆրանսիական ջանքերը չեն զիջում սադրանքների ու հրահրման խորհրդային փորձերին:

Զանազան երկրներում, Ինտերպոլի հավաքած տեղեկությունների համաձայն, հայկական ամենագործուն կազմակերպության՝ ԱՍԱԼԱ-ի զինյալները մարզվում են Սիրիայի Ամմուրիյե (Ammuriye) եւ Լիբանանի Դամուր ու Սիդոն (Damur and Sidon) ճամբարներում, որ վերահսկում են «Նայեֆ Հավաթմեհ» (Naif Hawathme<h>) եւ «Դոկտոր Զորջ Հաբաշ» (Dr George Habash) կառույցները:

Այս ճամբարներում խորհրդային հետախուզական կազմակերպության՝ ՊԱԿ-ի (KGB) մասնագետները զինյալների համար հատուկ վերապատրաստում են անցկացնում: Օրինակ՝ պարզվեց, որ 1981-ին ՊԱԿ-ի աշխատակից՝ հայկական արմատներով <Կարեն> Բրուտենցը Դամասկոսից հարավ ընկած (Ամմուրիյե) ճամբարում հավաք է անցկացրել՝ մասնակցությամբ 317 հոգու, որոնցից չորսը արեւմտագերմանական Կարմիր բանակից էին, վեցը՝ իտալական Կարմիր բրիգադներից, չորսը՝ ճապոնական Կարմիր բանակից, երեքը՝ Իսպանիայի բասկյան կազմակերպությունից, մնացյալ հարյուր յոթանասունն իրանցի էին, իսկ հարյուր երեսունը՝ թուրք:

Հայկական 11 կազմակերպություններից, որոնք բաժանված են «մահվան» եւ «քարոզչության» խմբերի, երեք գլխավորների նպատակն ու գործունեությունը նույնական են, սակայն տարբեր են կիրառած եղանակները:

ԱՍԱԼԱ-ն առաջին անգամ հայտնի դարձավ 1975 թ. հունվարի 1-ին՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գրասենյակի վրա ուժահար հարձակմամբ: Սա մի կազմակերպություն է, որ իրեն համարում է «Միջազգային ահաբեկչական շարժման» մաս ու հայտարարում, որ իր պայքարը կարող է պսակվել բացառապես զենքի ուժով:

Իր տարածած հոչակագրի համաձայն՝ ԱՍԱԼԱ-ն հետապնդում է հետեւյալ նպատակները.

1. Ազատագրել հայկական զավթված տարածքներն ու դրանց վրա հիմնել միացյալ, սոցիալ-դեմոկրատական Հայաստան (ըստ ԱՍԱԼԱ-ի՝ Խորհրդային Հայաստանն «ազատյալ տարածք» է, իսկ Թուրքիայի՝ Արեւելյան Անատոլիայի շրջանները՝ «հայկական զավթված հողեր»):

2. Հայությանը շնորհիւ ինքնորոշվելու իրավունք, երբ նրանք վերադառնան իրենց հայրենիք:

3. Ստիպել Թուրքիային ճանաչել «ցեղասպանությունը»՝ իբրեւ պատմական իրողություն:

4. Նշյալ հիմքերով Թուրքիային ստիպել փոխհատուցում վճարել:

ԱՍԱԼԱ-ն համագործակցում է Թուրքիայի անջատողական որոշ կազմավորումների հետ: 1980 թ. ապրիլի 8-ին ԱՍԱԼԱ-ն եւ Ապոչական (Apoist) շարժման ներկայացուցիչները (Քուրդիստանի աշխատավորների կուսակցություն) Լիբանանի Սիդոն քաղաքում մամլո ասուլիսի ժամանակ հայտարարեցին, որ զինակցում են միմյանց՝ Թուրքական կառավարության դեմ: Այդ ասուլիսի ժամանակ միայն աչքերի հատվածում բացվածք ունեցող սեւգիմակավոր 12 տղամարդ եւ 2 կին ներկայացան իբրեւ «Հայ ջոկատայիններ եւ քուրդ հեղափոխականներ Թուրքիայից» եւ հայտնեցին իրենց շրջապատող «Dr George Habash»-ին հավատարիմ «Պաղեստինյան ջոկատայիններին», որ ցանկանում են «ամրապնդել կապերը պաղեստինյան կազմակերպությունների հետ»²⁸⁵:

ՀՅԱՄ-ը (JCAH) հիմնվել է Հայոց կարծեցյալ ցեղասպանության, որ անպատիժ մնացած է համարվում, վրեժխնդրության եւ հայերի իրավունքների վերականգնման նպատակով:

ՀՅԱՄ-ը ցանկանում է.

1. Ստիպել Թուրքիային ընդունել 1915 թ. հայկական ցեղասպանությունն ու հատուցում վճարել,

2. Վերականգնել 1920 թ. Սեւրի պայմանագրում նշված հայկական հողերի սահմանները:

Ակնհայտ է, որ ՀՅԱՄ-ը հետապնդում է նույն՝ ՀՅԴ-ի նպատակները: Իսկ նրանց վերջնական նպատակը, ինչպես եւ պետք էր կարծել, համահունչ է ԱՍԱԼԱ-ի հոչակածին, այն է՝ հիշյալ տարածքների միավորումը Խորհրդային Հայաստանի հետ:

«Հայկական նոր դիմագրության կազմակերպությունը» հայտնի

դարձավ 1977 թ. մայիսի 14-ին՝ Փարիզում Թուրքիայի զբոսաշրջային գրասենյակի վրա ումբային հարձակումից հետո:

Այժմ արդեն բացահայտ է, որ այս միջազգային ահաբեկչական կազմակերպություններն աշխարհն արյամբ են հեղեղում՝ ԱՄՆ-ում բնակվող հայերի աշակցությամբ եւ խորհրդային գործակալների քաջալերությամբ: Ֆրանսիան այսօր, փաստացի, հաստատում է «Հայկական հարցի» գոյությունը: Բացի այդ՝ իրենց ակադեմիկոս հռչակող որոշ մոլեռանդ հայեր, ինչպես օրինակ՝ Միշիգանի համալսարանի Ռուսաստանի պատմության դասախոս Դենիս Փափազյանն ու Հայկական համաժողովի ատենապետ Ա. Օ. Սարգսյանը, գրքեր են գրում, ուր եղծվում են փաստերն ու վավերագրերը, եւ որոնցում թուրքերը ներկայացվում են «կեղծյալ» կերպարով:

Անկասկած նշանակալից է Հայոց պատրիարք Շնորհ Գալուստյանի եւ մի քանի այլ նշանավոր հայերի արձագանքն այն վկայություններին, թե [Թուրքիայում] բնակվող 50 000-ից 60 000 հայեր նախկինի պես առերեսվում են ցեղասպանության վտանգին եւ մշակութային կայսերապաշտության ճնշման ներքո են: Բացի այդ՝ Ֆրանսիայի պետական խորհրդի հաստատած բանաձեւն առ այն, որ «հայերը Թուրքիայում ճնշված չեն»²⁸⁶, համակողմանիորեն լուսաբանվելու դեպքում կարող է սթափեցնել արեւմտյան աշխարհը եւ հայկական չղադարող սպանությունները ներկայացնել իբրեւ աններելի հանցանք:

Այժմ արդեն հայտնի է, որ Թուրքիայում որոշ հայ հոգեւորականներ նույնպես օժանդակել են հայկական ահաբեկչական կազմակերպություններին, որ ցայսօր խլել են 19 թուրքի կյանք: <Հայտնի է> նաեւ, որ հայ եւ ասորի որբերին տեղափոխել են Նրուսաղեմ՝ իբրեւ թե «հոգեւոր կրթություն» ստանալու համար, սակայն «ուղեղի լվացման միջոցով» նրանք բացառապես վեր են ածվել «թուրքատյաց» զինյալների²⁸⁷:

Թուրքական անվտանգության ուժերը մեծ հետաքննություն սկսեցին այս կապակցությամբ, երբ արտասահման մեկնող հայ հոգեւորականի մոտ հայտնաբերվեցին որոշակի փաստաթղթեր: Խուզարկության արդյունքում պարզվեց, որ երեխաների՝ նմանատիպ առաջին խումբը Նրուսաղեմ է մեկնել 1968-ին՝ Ստամբուլի Բեյօղլու շրջանի Սուրբ Ներսիսի վանքում: Եկեղեցու քահանա Վարուժան Հիրկացյանի (Varujan Hirkacyan) վերակացությամբ:

Հենց այս ծրագրով, չնայած Թուրքիայի հայ քաղաքացիների դիմադրությանը, որոշ հոգեւորականներ Անատոլիայի շրջաններից հավաքում

են հայ ու ասորի որբերի եւ նախ բերում նրանց Ստամբուլ՝ իբրեւ թե «հոգեւոր կրթության»։ Այնուհետեւ այդ երեխաները տասնհոգիանոց խմբերով տեղափոխվում են Երուսաղեմի Հայոց ժառանգավորաց վարժարան։ 1968-ի առաջին խմբին հաջորդեցին երկրորդն ու երրորդը։ Եւ մինչ հոգեւորականները նոր որբերին Թուրքիայից Երուսաղեմ էին տանում, այնտեղից Թուրքիա էին վերադառնում նախկինում ուղարկվածները՝ արդեն որպէս «թուրքատյաց» հմուտ զինյալներ։

Երուսաղեմի հայկական վանական դպրոցի ուսուցչական կազմից մի հոգեւորական՝ Հայկո Էլդեմիրը (Hayko Eldemir), թուրքական անվտանգության ուժերի կողմից ձերբակալվելուց հետո իր խոստովանական վկայության մեջ հաստատում է, որ ինքը Վարուժան Հիրկացյանի վերակացու թվամբ 1968 թ. Երուսաղեմ տարվածներից մեկն է։ Նա ասում է.

«Մենք ճանապարհորդում էինք տասը հոգուց բաղկացած խմբերով։ Մեր խմբում կային երեխաներ, որ հայերեն չգիտեին եւ քրդերեն էին խոսում։ Դպրոցի մեր ուսուցիչներն անդամակցում էին Դաշնակցական կուսակցությանը, որն զբաղված էր թուրք դիվանագետների սպանությանմբ։ Վարժարանի տարածքում կազմակերպությունն ուներ իր առանձին շենքը։ Ուսումնառության ընթացքում մենք «հակաթուրքական» բնույթի դասընթացներ էինք ունենում։ Մեր ուղեղները լվանում էին։ Ուսման ավարտին մենք դարձանք հակաթուրք հայ ծայրահեղականներ։ Հետագայում ես Հայոց պատմություն էի դասավանդում այս դպրոցում։ Ես ասում էի իմ աշակերտներին, որ թուրքերը կոտորել են հայերին, եւ դրա վրեժը կարող են լուծել միայն մեզ պես հայորդիները, որ ատում են թուրքերին»։

Հայկո Էլդեմիրը վկայում էր նաեւ, որ ինքն Արփիար Դեմիրճյանի (Arpiyar Demirciyan) ընկերն է, մի ահաբեկչի, որ խափանարար գործողություններ է կատարել Եւրոպայում գտնվող թուրքական հաստատություններ դեմ։ Էլդեմիրը հավելում է.

«Երուսաղեմի Հայկական վարժարանի տեսուչ Շահե Աճեմյանն ինձ կարգադրեց լավ երեխաներ գտնել՝ դպրոցում ուսանելու համար։ Երեխաների հետ վերադառնալուս պարագային ես կդառնայի դպրոցի տեսչության անդամ։ Սակայն կալանավորվեցի մինչ այդ իրազործելը»։

Անվտանգության ուժերը պարզեցին նաեւ որոշ հոգեւորականների ներգրավվածությունը Թուրքիայի հայ քաղաքացիներից այդ երեխաների՝ ենթադրյալ «հոգեւոր կրթության» համար գումար հավաքելու հանգամանքը։ Հոգեւորական Միքայել Սագլամը (Mikail Saglam) եւ հայ

քաղաքացիները քննության ժամանակ հաստատեցին գումար հավաքելու մասին տեղեկությունները: Նվիրատվությանը մասնակցած քաղաքացիներն ասացին, թե կարծել են, որ գումարը կծախսվի երեխաների կրթության նպատակով, եւ որ իրենք տեղյակ չեն եղել Երուսաղեմի հայկական հոգեւոր դպրոցի հակաթուրքական եւ Դաշնակների կողմից կառավարվող հաստատություն լինելու մասին:

Անվտանգության ուժերի իրականացրած գործողությունների արդյունքում բացահայտվեց, որ հակաթուրք զինյալներ պատրաստելու նպատակով Երուսաղեմ տարված մի շարք հայեր վերադարձել են Թուրքիա, իսկ մնացյալներն անդամակցել են ահաբեկչական խմբավորումների: Պարզվեց նաեւ, որ Թուրքիա վերադարձած քահանաները եկեղեցում կրոնական արարողություններից հետո Դաշնակցական ահաբեկչական կազմակերպության գործունեությանն աղերսվող քայլերգեր են կատարել: Քահանա Միքայել Սազլամն իր խոստովանության մեջ ասում է.

«Ինձ տարան Երուսաղեմ, երբ ես տասը տարեկան էի: Այնտեղ ուսանել եմ հինգ տարի: Ուսման ընթացքում ես մոռացա իմ թուրքական ինքնության մասին: Մեզ մշտապես սերմանում էին թուրքերին ատելու գաղափարը:

Հայկո էլդեմիրին հանդիպել եմ 1977 թվականին: Այն ժամանակ նա Հայոց պատմություն էր դասավանդում: Հաճախ էր խոսում Հայոց ցեղասպանության մասին: Թուրքիա վերադարձել եմ 1980-ի հուլիսին: Պատարագի մասնակցելու համար գնացի Բույուկդերեի (Buyukdere) հայկական եկեղեցի: Պատարագը մատուցում էր Հայկո էլդեմիրը: Արարողությունից հետո մենք հրավիրված էինք ճաշի, որի ժամանակ էլդեմիրը խնդրեց հյուրերին, որ նրանց երեխաներն իրեն մոտենան: Նաեւ հետաքրքրվեց, թե արդյոք դժգոհություններ չունեն եւ արդյոք իրենց թուրքական կառավարության կողմից ճնշված չեն զգում: Իսկ հայ քաղաքացիները պատասխանեցին, որ ոչ միայն ճնշված չեն, այլեւ ընդհակառակը՝ բարվոք կյանք են վարում: Այնուհետեւ մենք դուրս եկանք, հեռացանք եկեղեցուց եւ մեքենա նստեցինք՝ ճանապարհին հնչեցնելով դաշնակցական քայլերգեր ու հայկական մեղեդիներ»:

Թուրքիայից Երուսաղեմի վարժարան տարված երեխաներն ուսանում են երկաստիճան կրթական համակարգով²⁸⁸: Հայերեն իմացողներն անմիջապես անցնում են միջին եւ ավագ դպրոցի մակարդակի կրթության: Իսկ հայերեն չիմացող երեխաներին, օրինակ՝ ասորիներին,

առաջինն ուսուցանում են հայերեն: Ավագ դպրոցն ավարտածներն անցնում են հոգեւոր խորացված կրթության բաժին՝ <Ընծայարան>: Ուսման այդ շրջափուլում տիրացուները, որ նաեւ մշտապես մասնակցում են Սրբոց Հակոբյանց տաճարում մատուցվող պատարագներին, Հայոց պատմության դասընթացների միջոցով վեր են ածվում «Թուրքիո թշնամիների»:

Կալանավորված հոգեւորական Հայկո էլդեմիրը, որ վարժարանի փոխտեսուչն է եղել, պատմում է, որ ինքն այնտեղ ուսանել է յոթ տարի, ավելի ուշ սկսել է դասավանդել դպրոցում: Նա ասաց.

«Մեզանից տասին Հայկական վարժարան էր տարել հոգեւոր հայր Վարուժան Հիրկաչյանը (Varujan Hirkaciyan) 1968 թվականին: Այն ժամանակ արդեն հայերեն էի խոսում, որովհետեւ Ստամբուլում հայկական դպրոց էի հաճախել: Հովհաննես Բագրատը, Հովհաննես Սավասը (Ohannes Pakrat, Ohannes Savas) ու ես նույն խմբում ընդգրկվեցինք. նրանք էլ ինձ պես կարողանում էին հայերեն գրել-կարդալ: Իսկ Եզնիկ, Արամ եւ Հովհաննես Բալյան (Yeznik, Aram, Ohannes Balyan) ասորի եղբայրները, որ հայերեն չէին խոսում, ուրիշ խումբ ուղարկվեցին»:

Դպրոցում մենք սաստիկ հսկողության տակ էինք: Կանոնները խախտող ուսանողները խստագույնս պատժվում էին: Մենք նախ մասնակցեցինք ժամանակակից հայոց լեզվի բանավոր դասընթացների: Իսկ թուրքերի հանդեպ ատելութունը սերմանվեց Հայոց պատմության ժամերին: Հայոց պատմությունը դասավանդվում է առաջին դասարանից մինչեւ ուսման ավարտը: Առաջին ուսումնական տարվա ընթացքում դասավանդվում է հայ ժողովրդի ծագումը, երկրորդում՝ զարգացումը: Երրորդ տարում անցնում են Հայաստանի գրավումը Հռոմի կողմից, եւ քննարկվում են հայերի հարաբերություններն արաբների ու թուրքերի հետ: Թուրքերի դեմ ատելութունն առանձնակի բժախնդրությամբ ներարկվում է վերջին տարում: Ուսանողներին պատմում են, որ 1915 թ. ապրիլի 24-ին Ստամբուլում հայ առաջնորդներ են սպանվել, եւ ցեղասպանությունն իրականացվել է գերմանացիների հետ սերտ գործակցությամբ: Աշակերտները սովորում են, թե այն հայորդիները, որ փրկվել են կոտորածներից, բռնագաղթվել են, արտաքսվել Սիրիա, Միացյալ Նահանգներ ու եւրոպական երկրներ:

Երբ սկսեցի դասավանդել, ես թուրքերի դեմ ատելության հուրը բորբոքում ու տարածում էի ուսանողների մեջ: Ես պատմում էի նրանց,

որ թուրքերը կոտորել են հայերին, որ Արեւելյան Անատոլիայի որոշ շրջաններ հայերին են պատկանում, եւ որ հայերը պարտավոր են վրեժ լուծել թուրքերից: Պաշտոնավարմանս ընթացքին ամեն լսարանում Մեծ Հայաստանի քարտեզն էր փակցված: Դասարանական աշխատանքն այս քարտեզների դիտարկմամբ էր ընթանում»:

Հայկո էլզեմիրն ասում է, որ Երուսաղեմի հայկական կազմակերպությունները Միացյալ Նահանգներից դրամական մեծ օգնություն են ստանում, գումարի մեծագույն մասը գալիս է «Հայկական օգնության միությունից»*, որ հիմնել է Նյու Յորքում բնակվող մեծահարուստ հայ Ալեք Մանուկյանը**: Վարժարանի տեսուչ Շահե Աճեմյանը մեզ հետ զրուցելիս պատմեց, որ հաստատության նոր շենքի՝ մեկ միլիոն դոլար արժեքող շինարարությունն ավարտվել է 1975-ին, եւ բոլոր ծախսերը հոգացել է Մանուկյանի «Հայ օգնության միությունը»: Նա հավելեց, որ այս կազմակերպությունը կշարունակի իր դրամական օժանդակությունը: Հայկո էլզեմիրը, որ այժմ կալանավորված է, եւ որի դատավարությունը շուտով կսկսվի, հայտնել է, որ այդ միությունը դրամական աջակցություն է ցուցաբերում աշխարհի բոլոր հայկական կազմակերպություններին ու եկեղեցիներին: Այս օգնության բնույթի եւ Թուրքիայում հայերի ծավալած գործունեության վերաբերյալ էլզեմիրն ասաց հետևյալը.

«Ձեմ կարծում, թե Դաշնակցական կամ Հնչակյան կուսակցությունները որեւէ մասնաճյուղ ունենան Թուրքիայում, քանի որ նրանք չեն սիրում թուրքերին: Նրանք իրենց ձեռնարկումներն ու գործունեությունը գերազանցապես արտասահմանում են ծավալում: Սակայն ԱՄՆ-ում Հայկական օգնության միությունը կապի մեջ է Թուրքիոյ Հայոց պատրիարք Շնորհք Գալուստյանի հետ: Որքան գիտեմ, ներկայիս աշխատանքները ներառում են՝ հայ որբերին արտասահմանյան կրթությամբ ապահովելն ու նրանց մասնագետ դարձնելը, Անատոլիայի տարբեր մասերում իրենց հայկական ինքնությունը կորցրած երեխաների հայտնաբերումն ու տեղափոխումը Ստամբուլ, ինչպես եւ նրանց հասարակական ու տնտեսական կացության բարելավումը: Այս ամենը կազմակերպում է պատրիարքարանը: Որքան գիտեմ, Պետրոս-Գրիգոր Թոքատլիյանը (Bedros Gregor Tokatliyan) պատրիարքության կողմից նշանակվել է այս աշխատանքները

* Բնագրում՝ «Armenian Relief Committee» դիտել ենք իբրեւ «Armenian Relief Society», որ հիմնվել է է. Ակնունու (Խ. Մալումյան) ջանքերով:

** Ալեք Մանուկյանը 1953–1989-ին եղել է «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն» (AGBU—Armenian General Benevolent Union) կենտրոնական վարչության նախագահ:

համակարգելու համար: Այս մարդն իրենց ազգային պատկանելիությունը մոռացած հայերի փնտրտուքով մշտապես մեկնում է Անատոլիա, իր հետ բերում է նրանց ողջ ընտանիքները, օգնում է տեղավորվել Ստամբուլում, իսկ հետո հոգում է նրանց փաստաթղթերի հարցը, որ կարողանան մեկնել հայաշատ երկրներ: Նա նաեւ այդպիսի ընտանիքների երեխաներին բերում է Ստամբուլ եւ տեղավորում դպրոցներում ու մանկատներում: Իսկ վստահանալու համար, որ այս ութից տասը տարեկան տղաները հայկական պատշաճ դաստիարակություն են ստանում, նրանց ուղարկում են Երուսաղեմի Հայկական վարժարան:

Բեյօղլուի Սուրբ Երրորդության եկեղեցու վանահայր Վարուժան Հիրակչյանը նույնպես ներգրավված է նման գործերում: Վարժարան ուղարկվող երեխաներին հետագայում Դաշնակցական եւ Հնչակյան կուսակցություններին անդամակցող ուսուցիչները սնում ու կրթում են թուրքերի հանդեպ ատելությունը: Ուսանողներից ոմանք վերադառնում են Թուրքիա, մյուսները նշանակում են ստանում Միացյալ Նահանգների, Եւրոպայի եկեղեցիներում կամ աշխարհասփյուռ հայ համայնքներում: Հազվագյուտ դեպքեր են լինում, որ ուսանողները չեն համակերպվում վարժարանի կյանքին ու վերադառնում են իրենց տները»:

Եւ մինչ Երուսաղեմի վարժարանում անմեղ մանուկներին «հոգեւոր կրթության» քողի տակ «հակաթուրքական ատելություն» են ներարկում, դպրոցի դիմաց խոյացող Սրբոց Հակոբյանց վանքում կրկնակի ջանքեր են գործադրվում՝ որպէս ահաբեկչական կազմակերպությունների վերապատրաստման կենտրոն:

Հայկական երկու ահաբեկչական կազմավորումները գտնվում են վանքի սրտում՝ համարվելով վանական դպրոցի մաս: Դրանք են՝ «Հայ երիտասարդաց միությունը» (Armenian Young men's association), որ Հնչակյան կուսակցության կառույց է, եւ «Հայ մարզական ընդհանուր միությունը» (Armenian general athletic association), որ Դաշնակցական կուսակցության կառույցներից է:

Հայ մարզական ընդհանուր միության շենքը վարժարանի բակում է՝ եկեղեցու ճիշտ ետեւում:

Աբրահամ Փափազյանը (Abraham Papazian) Սրբոց Հակոբյանց վանքի «Հայ մարզական ընդհանուր միության» մասնաճյուղի ղեկավարն է, որ նաեւ Համաշխարհային պատմություն ու Հայոց լեզու է ավանդում դպրոցում:

Թագվոր Հովհաննիսյանն ու Հակոբ Սանդրունին (Takvor Ohannesian, Hagop Sandruni) նույնպես անդամակցում են այս կառույցին: Երկուսն էլ վանքում իրենց կացարաններն ունեն: Սրան զուգահեռ՝ «Հայ օգնության միությունը», որ կառավարվում է «Հայ մարզական ընդհանուր միություն» հետ համագործակցող կանանց կողմից, դրամական օգնությամբ է ապահովում կարիքավոր հայ կանանց:

Հնչակյան կուսակցության «Հայ երիտասարդաց միությունը» վանքի ստորահարկում ակումբ ունի, որն իր մեջ ներառում է ընդունելության սենյակ եւ խորհրդակցության սրահ ու սրճարան: Այս հաստատությունը ղեկավարում է ժամացույցների առևտրով զբաղվող Վարուժան Դիրեդուրյանը (Varujan Diredurian), որ ծնունդով Լիբանանից է: Մյուս անդամներն են՝ Վարուժանի մտերիմ ընկեր Լիպարիտ Պետրոսյանը (Liberit Bedrosian)՝ հուշանվերների խանութի սեփականատեր, եւ ակնավաճառ Վարդան Տեր-Վարդանյանը (Vartan Der Vartanian), որ նաեւ դասավանդում է վանական դպրոցում: Կառույցի մնացյալ անդամներն են՝ վարժարանի՝ մարմնակրթության պարապմունքների երբեմնի պատասխանատու, հացագործ Հակոբ Մենեշյանը (Agop Meneshian), ոսկերիչ Հակոբ Կալայջյանը (Kalaydjian) ու լուսանկարիչ Ալեքս Կալայջյանը:

Սրբոց Հակոբյանց տաճարի արեւելյան թեկում է գտնվում «Հայ բարեսիրաց միությունը» (Armenian Well-Wishers' Association), որի անդամները հիմնականում Երուսաղեմում ծնված հայեր են: Արաբական առողջանությունամբ խոսող այս հայերը սերտորեն գործակցում են հայկական մնացյալ կազմակերպությունների հետ: Երուսաղեմի մահմեդական արաբներն ասում են, որ այն ավելի շատ զբաղված է տարեցներին եւ երիտասարդ հայերին օժանդակելով, քան ահաբեկչական գործունեությամբ: Այս կազմակերպությունը ղեկավարում է ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերում ծառայող Կարապետ Կարապետյանը:

Մահմեդական արաբներն ասում են, որ Սրբոց Հակոբյանց տաճարի հարեւանությամբ տեղակայված հայկական կազմակերպությունները վարժարանի եւ եկեղեցու անբաժան մասն են:

Հունիսին հայերը ուժահարեցին Փարիզի թուրքական զբոսաշրջության գրասենյակի երկու հարկերը ու պայթյունով վնասեցին շինության զգալի մասը՝ թուրքական կառավարությանը հասցնելով չորս միլիոն լիրայի վնաս:

Միեւնույն ժամանակ՝ տեղեկությունն այն մասին, որ հայերը պատրաստվում են օգոստոսին դաժանաբար սպանել Եւրոպայում գտնվող մի

շարք թուրք դիվանագետների, անհանգստացնում է արտասահմանում գտնվող մեր քաղաքացիներին:

Ժամանակն է վերջ տալ Թուրքիայի դեմ մոլեռանդ հայերի հարձակումներին ու նենգություններին: Եթե իշխանությունները չեն կարողանում վերջ տալ այս թշնամական հարձակումներին, մենք նրանց ենք մեղավոր եւ պատասխանատու համարելու հետեւանքների համար:

ՄԻԼԼԵԹ-ի էջերում ընթերցեցինք «Ֆրանսիայում Թուրքիայի դեմ գործող հայկական կազմակերպությունները» վերնագրով այս կարեւոր հոդվածը²⁸⁹:

Այսօր Փարիզում եւ ընդհանրապես Ֆրանսիայում հայկական հզոր շարժում կա: 1975 թ. տեղեկացանք, որ «Հայաստանի ազատագրման ճակատը» (Front de Libération Arménienne) նոր՝ ազդեցիկ անդամներ է ձեռք բերել: Այդ անդամները հիմնականում ճարտարագետ, իրավագետ, արվեստագետ եւ այլ մասնագիտության տեր մարդիկ են, որոնք բարոյապես եւ տնտեսապես վերստին զորացրել են կազմակերպությունը: Նրանցից ամենաաշխույժ գործիչը 34-ամյա միջուկային եռանդուժի ճարտարագետ Գրեգորյանն (Gregorian) է: Նրա ընտանիքը գաղթել է Կոստանտինոպոլիսից շրջանից: Գրեգորյանի կին էլիեն գլխավորում է քիմիայի հույժ կարեւոր մի հետազոտական աշխատանոց: Եւ ամուսինը, եւ կինը էական ու ազդեցիկ դեր ունեն վերոհիշյալ կազմակերպությունում: Մենք գրեցինք Փարիզում Թուրքիայի դեսպանության մամուլ քարտուղար Նեքլա Էրբաքիրին (Necla Erbakir), որ հայ ազգայնականներն իրենց հավաքներն անցկացնում են հիմնականում Փարիզի մզկիթում: Ինչպես հայտնի է, այս մզկիթը գլխավորում է Սի Համզա Աբուբաքրը (Si Hamza Aboubakr)՝ գաղութային ժամանակաշրջանում Ֆրանսիական ազգային ժողովի ալժիրցի երբեմնի պատգամավոր, իսկ այժմ մզկիթի մերձակա տարածքում տեղակայված «Institut d'Études Musulman» (Մահմեդական ուսումնասիրության հիմնարկության) աստվածաբանության եւ մահմեդական քաղաքակրթության դասախոս: Համզա Աբուբաքրը նաեւ քաջ հայտնի է իբրեւ թուրքերի մեծագույն թշնամի: Թեեւ նա խորապես ներգրավված չէ հայոց գործերում, սակայն զբաղվում է քրդական քարոզչությամբ եւ ճանաչված է իբրեւ քրդերի աջակից:

Հայ զինյալների շարքերում ֆրանսիական համալսարանների իրավունքի պատմության եւ հասարակագիտության գծով աստիճաններ ստացած Հուուրի Իփեկյան (Houry Ipekian) անունով մի կին կա: Նա նաեւ

Հայոց պատմության ասպարեզում է ծավալուն հետազոտություններ կատարել: Իփեկյանի ընտանիքը եւս Անատոլիայից <Արեւմտյան Հայաստանից> է: Մինչ հայկական վերջին պատերազմները նրա հայրը «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության տարիներին օսմանյան կառավարությունում կարեւոր պաշտոն է զբաղեցրել: Թուրքական կառավարության մեջ նա հայ համայնքն էր ներկայացնում: Հուռի Իփեկյանը Ֆրանսիայում եւ Եւրոպայում անցկացվող խորհրդաժողովների ժամանակ խոսում է հայկական քաղաքակրթության մասին՝ կենտրոնանալով հայոց ցեղասպանության վրա: Նա նաեւ հայկական հարցն է լուսաբանում ֆրանսիական դպրոցներում ու բարձրագույն ուսումնական հաստատություններում: Իփեկյանը պաշտոնապես Դաշնակցական կուսակցության մշակութային թեւի անդամ է: Վերջին տարիներին Ստամբուլի Եսայան վարժարանի (Esayan Lycée) տեսուչ տիկին Գալուստյանը (Kalustyan) նույնպես գործակցել է այդ կուսակցության մշակութային թեւին: Դոկտոր Մարի Լուի Շայմոնտը (Marie Louise Chaymont) այդ թեւի մեկ այլ անդամ է, որ գրել է «Recherches sur l'histoire d'Arménie, de l'Avènement des Sassanides à la Conversion du Royaume» աշխատությունը (Փարիզ, 1969): Եւ չնայած իր ազգանունը հնչողությամբ ֆրանսիական է, Շայմոնտն իրականում հայ է: Այս երեք կանայք էլ գործում են ի սեր Դաշնակցական կուսակցության, որ Փարիզի հայկական բոլոր կազմակերպություններից Թուրքիայի դեմ ամենաթշնամական դիրքորոշումն ունի: Այդ կանանց անուններն անհնար է գտնել Դաշնակցական կուսակցության անդամների ցուցակում, որ Փարիզի թուրքական դեսպանությունն ստացել է ֆրանսիական ոստիկանությունից: Պատճառն այն է, որ այդ կանայք, համալսարանական <այլեւայլ> ֆակուլտետներում ներգրավված լինելով, իրավունք չունեն որեւէ քաղաքական կառույցի անդամակցելու: Այս երեք կանայք դաշնակցական կուսակցության այլ անդամների հետ հանդիպում են հայկական մի գրադարանի շենքում, որ Փարիզի մեր դեսպանատնից ընդամենը 150 մետր հեռավորության վրա է: Այդ գրադարանը կոչվում է «Նուբարյան հիմնադրամ» (Fondation Nubar) եւ գտնվում է 11 Ալբոնի հրապարակ, Փարիզ 6-ում: Պասսի գետնուղյա կայարանից 50 մետրի վրա գտնվող գրադարանը շրջապատված է ծառախիտ այգով: Թուրքիայի դեսպան Իսմայիլ էրեզը (Ismail Erez) [1975-ին] նահատակվեց այդ գրադարանից ընդամենը 60 մետր հեռու: Գրադարանը ղեկավարում է Թուրքերենին վարժ տիրապետող Թուրքահայ Քարինդաշյանը

(Karindashian), որ պնդում է, թե ինքը եգիպտոսից է: Հենց այս գրադարանում են իրենց հակաթուրքական հաղորդագրություններն ու ծրագրերը կազմում Փարիզի եւ աշխարհի մյուս ծագերի հայերը: Ֆրանսիայում ապրող քուրդ առաջնորդները նույնպես հանդիպում եւ աշխատում են այս գրադարանում: Հայտնի է, որ Ալիշան Մակտուբին (Alishan Mak-tubi), որ առաջնորդում է Եւրոպայի քրդական շարժումը ու ժամանակի հիմնական մասն անցկացնում է Բրիտանիայում, քանիցս այցելել է այս գրադարանը: <Տեղեկություն կա նաեւ, որ> նրա օգնականներն այստեղ են աշխատում: Ժամանակակից արեւելյան լեզուների ղազախին դպրոցի (École Nationale des Langues Orientales Vivantes) քրդերենի դասախոսը նույնպես այս գրադարանի այցելուներից է: Հուռի Իփեկյանից տեղեկացանք, որ Թուրքիայում արգելված Թուրքական կոմունիստական կուսակցության [TCP] <ԹԿԿ> անդամները եւս այցելում են գրադարան, եւ բավականին սերտ համագործակցություն կա ԹԿԿ-ի եւ Փարիզի հայկական կազմակերպությունների միջեւ: Այս գրադարանում ջանք չեն խնայում Փարիզի թուրք ուսանողներին հավաքագրելու եւ իրբեւ գործակալ Թուրքիա ուղարկելու համար: Թիրախավորված ուսանողները հիմնականում Արեւելյան Անատոլիայից են լինում:

Խիստ սահմանափակ տպաքանակով 1976 թ. հուլիսին հրատարակված «Manifesto» վերտառությունը կրող գրքում Ֆրանսիայի եւ ողջ աշխարհի հակաթուրքական դեպքերը ներկայացվում են որպես հիմնական նպատակ: Այդ կապակցությամբ գիրքն առաջարկում էր լրատվական աշխույժ գործունեություն ծավալել, կազմակերպել հավաքներ եւ եկեղեցական արարողություններ, ինչպես եւ զբաղվել աշխարհի տարբեր ծագերում գործող թուրքական ներկայացուցչությունների աշխատակիցների հավաքագրմամբ: Ֆրանսիայում զգալի թվով հայեր են ապրում, եւ քանի որ նրանք ֆրանսիական անձնագրեր ունեն, կարող են ազատ կերպով մուտք գործել Թուրքիա: Ֆրանսիայում հայերն ուշի-ուշով հետեւում են տեղական քաղաքական զարգացումներին եւ կարող են հավաքել իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը: Դիտարկվող գրքում ասվում է, որ հարկավոր է համագործակցել ցանկացած մեկի հետ, որ դեմ է թուրքերին: Գրքի հրատարակիչը հիշված չէ, միայն նշվում է, որ տպագրել է «Նուբարյան հիմնադրամը»:

Հիմնականում Դաշնակցական կուսակցությունն է ղեկավարում Փարիզի հակաթուրքական գործողությունները, բայց դրանց միանում

են նաեւ Հնչակյան եւ Ռամկավար (Ազատական) կուսակցությունները: Հնչակյան կուսակցությունն ունի ընկերվարական գաղափարախոսություն, բայց կապված չէ խորհրդային կոմունիստների հետ: Իսկ Ռամկավար կուսակցությունն ուղղակիորեն կապված է խորհրդային Հայաստանի հետ եւ ղեկավարվում է այնտեղից: Երեք կուսակցությունները գրասենյակներ ունեն Փարիզում: Նրանցից առավել հակաթուրքականը Դաշնակցական կուսակցությունն է: Վերջերս Ռամկավար կուսակցությունը նույնպես զորացավ եւ հիմա բավականին ազդեցիկ դիրք է գրավում Ֆրանսիայի հայ համայնքում: Այս երեք կուսակցությունները եղանակների եւ նպատակների առումով մրցակցության մեջ են: Դաշնակցական կուսակցությունն առաջնորդում են Ֆրանսիայում երկար ժամանակ ապրած ունեւոր հայերը: Չնայած նրանց որդեգրած ընկերվարական գաղափարախոսությանը՝ Հնչակյան կուսակցության անդամների մոտքը խորհրդային միություն արգելված է:

Դաշնակցական կուսակցությանը հակազդելու նպատակով 1976 թ. Հնչակյան եւ Ռամկավար կուսակցությունները նոր՝ միացյալ կազմակերպություն հիմնեցին: Այդ նոր կազմակերպությունը կոչվեց «Front de Libération de l'Arménie Turque» (Թուրքահայաստանի ազատագրության ճակատ): Գլխամասային միավորը հաստատվել է «Նուբարյան հիմնարկությունում», որտեղից եւ իրականացվում է կառավարումը: 1962 թ. մարդահամարի տվյալներով՝ 200 000 հայ է բնակվում Ֆրանսիայում: Նրանցից շատերը կարելու դիրք են գրավում երկրում: Նրանք մեծամասամբ ճարտարագետներ են: Հայերը սովորաբար մեծ հետաքրքրություն են դրսևորում բարձր վարձատրվող մասնագիտությունների եւ եկամտաբեր աշխատանքների նկատմամբ: Ֆրանսիայի նախագահ Վալերի ժիսկար դ'էստենի հատուկ հանձնակատար Մ. Դենը (M. Daen) տաճկահայ ընտանիքից է: Սորբոնի համալսարանի Համեմատական գրականության բաժանմունքի վարիչ Մ. Մեդյանը (M. Median) նույնպես հայ է եւ մեծ գերդաստանից է սերում: Շառլ դը Դոլի պաշտոնավարման ընթացքում արտաքին գործերի նախարար Դադեյանը (Dedean) եւս հայ էր:

Բազմիցս Թուրքիա այցելած Եւա դե Վիտարի-Մայերավիչը (Eva de Vitary-Mayeravisch) (1967-ին Փարիզի մեր զբոսաշրջության գրասենյակը նրան հրավիրել էր պատաշրջվող դերվիշների (Whirling Dervishes) մասին դասախոսելու) եւ իր իրանաբնակ գրչընկեր Մուհամմադ Մարդին (Muhammad Madri) «Revue des Études Arméniennes»-ի 1973 թ. 1—2 համարներում


գրում են, թե Մելանան (Mevlana) [պատաշարջվող դերվիշների խորհրդավոր առաջնորդը] թուրք չէր, նա իրանյան ծագում ուներ եւ նույնիսկ կարող էր հայ լինել*:

Արթուր Բեյլերյանը (Arthur Beylerian) հետազոտական շատ կարեւոր աշխատանք է հրատարակել²⁹⁰: 50 էջանոց գրքուկում խոսվում է այն պատճառների մասին, թե ինչու էին հայերը մեծ տերությունների պաշտպանությանը ձգտում [Առաջին աշխարհամարտին նախորդող տարիներին]: Նաեւ խոսվում է Թուրքիայում հայերի հանդեպ բռնությունների եւ նրանց ճնշված վիճակի մասին:

Կարծում ենք, որ Ֆրանսիայում այս հակաթուրքական շարժմանը վերջ տալու նպատակով անհրաժեշտ է ի մոտո դիտարկել նմանօրինակ հրատարակությունները: Պետք է անհապաղ Փարիզի բոլոր գրադարաններ ուղարկվեն Թուրքիայի պատմության, գրականության ու մշակույթի վերաբերյալ բոլոր հնարավոր հրատարակությունները: Թուրք անվանի գիտնականները պետք է առնվազն երկու տարին մեկ դասախոսություններով հանդես գան Փարիզի մեր զբոսաշրջության գրասենյակում՝ ներկայացնելով թուրքական նոր հրատարակությունները՝ թուրքական պատմության, լեզվի, գրականության եւ մշակույթի մասին: Հատուկ ուշադրություն է պետք դարձնել արտասահմանյան բուհերի հետ գիտական փոխանակման ծրագրերին: Առաջին հերթին անհրաժեշտ է վստահ լինել, որ Ֆրանսիա ուղարկվող յուրաքանչյուր ոք իսկական գիտնական է: Թուրքական մշակույթի եւ քաղաքակրթության վերաբերյալ գրքերը խիստ սակավաթիվ են Ֆրանսիայում, եւ ֆրանսիական հաստատություններն անկասկած զգում են այդ պակասը: Ֆրանսիական հակաթուրք տրամադրվածության հիմնական պատճառն այն է, որ նրանք մեզ լավ չեն ճանաչում: Այս ամենը շտկելու համար մենք լուրջ քայլեր չենք ձեռնարկում, մինչդեռ թշնամիները դրանից առավելագույն օգուտ են քաղում: Մեր ազնիվ պարտքն ենք համարում նկատված դրվագների մասին պատկան մարմիններին հայտնելը:

Շառունակուփիւմը՝ հաջորդիւ

* Բանաստեղծ, աստվածաբան Զալալ ադ-Դին Մուհամմադ Ռումիին (1207–1273 թթ.) թուրքերը ձգտում են «սեփականացնել»՝ շահարկելով ներկայիս Թուրքիայի տարածքում թաղված լինելու հանգամանքը:



ՀՐԱՆՏ ՕՀԱՆԵԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, ՄՄ

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՍԱՐԱՆՈՒՄ ՀՈԳԵԼՈՐ ԲԱԺՆԻ ԲԱՅՈՒՄԸ

Մաշտոցեան Մատենադարանի՝ Լազարեանների արխիվի ուսումնասիրութեան ժամանակ ի յայտ եկան բազմաթիւ վաւերագրեր¹, որոնք լիարժէք պատկերացում են տալիս Լազարեան ճեմարանում հոգեւոր բաժին բացելու գործընթացի վերաբերեալ: Այս հարցին եղել են շատ հակիրճ անդրադարձներ², մինչդեռ Մատենադարանում պահուող վաւերագրերը թոյլ են տալիս վեր հանել գործընթացի ուշագրաւ մանրամասները:

Նշենք, որ Լազարեան ճեմարանում հոգեւոր բաժին բացելու անհրաժեշտութիւնն առաջացել էր 1836 թ. մարտի 11-ին «Պօլօթենիէ»-ի ընդունումից յետոյ, երբ Ռուսական իշխանութիւնը կանոնակարգեց Հայ Եկեղեցու իրաւունքներն ու պարտականութիւնները, հաստատեց թեմական բաժանման կարգը եւ այլն: Կանոնադրութեամբ սահմանուեց նաեւ, որ պէտք է բացուէին հայկական թեմական դպրոցներ, ինչպէս նաեւ՝ հոգեւորականների, Եկեղեցու սպասաւորների պատրաստման համար նախատեսուող դպրոց (ճեմարան): Այնինչ, տուեալ պահին, բազմաթիւ հանգամանքներով պայմանաւորուած՝ անհնար էր դա իրականացնել Ս. Էջմիածնում (Գէորգեան հոգեւոր ճեմարանը բացուել է միայն 1874 թ.), եւ որպէս այդ խնդրի լուծում՝ դիտարկուել է արդէն տասնամեակների կրթական փորձ ունեցող Լազարեան ճեմարանում հոգեւոր բաժին բացելը:

Ակնյայտ է, որ վերը նշուած խնդիրներն անտարբեր չեն թողել Լազարեան գերդաստանին: Այդ պահանջի շնորհիւ ստեղծուել էր մի

¹ Վաւերագրերը մեծ մասամբ ռուսերէն են, հետեւաբար մէջբերումները կատարել ենք թարգմանաբար:

² Վ. ԴԻԼՅԱՆ, Լազարեանների հասարակական-քաղաքական գործունէութեան պատմութիւնից (XVIII դարի երկրորդ կէս), Երեւան, 1966. Ա. ԻԳՆԱՏԵԱՆ, Լազարեան ճեմարան, Երեւան, 1969, էջ 40–41. Վ. ԲԱՐԽՈՒԳԱՐԵԱՆ, Մոսկուայի եւ Պետերբուրգի հայկական գաղութների պատմութիւն (XVIII դարի կէս – XX դարի սկիզբ), Երեւան, 2010, էջ 72–73. В. ТУНЯН, Католикос Всех армян Ованес VIII Карбеци: 1831–1842, Св. Эчмиадзин, 2014, էջ 184–186:

հնարաւորութիւն, որը Լազարեաններն օգտագործել են շատ աւելի համապարփակ լուծումներ առաջադրելով, փաստօրէն, մշակելով ռուսահայոց եկեղեցիների եւ ճեմարանի ընդհանուր վիճակի բարեփոխումների յաւակնոտ ու հիմնարար ծրագիր:

Հարցի ռուսումնասիրութիւնն սկսենք նախագծի քննութեամբ, որի առաջին իսկ կէտերից պարզ է դառնում, որ գործ ունենք հմտօրէն մշակուած, հոգեւոր-կրթական բնոյթի լրջագոյն բարեփոխման հետ. «Ռուսական երկու մայրաքաղաքներում կան թուով հինգ հայկական եկեղեցիներ», որոնց առանձին-առանձին գործունէութիւնն, ըստ նախագծի, արդիւնաւէտ չէր, հետեւաբար՝ «այդ եկեղեցիների յարատեւ եւ անխախտ գոյութեան համար անհրաժեշտ է դրանք միաւորել այնպիսի հիմքով, որպէսզի կազմեն մէկ ամբողջութիւն եւ սեփական միջոցներով նպաստեն եկեղեցիների բարեկեցութեանը»³: Ինչպէս տեսնում ենք, առաջ էր քաշուում ռուսական երկու մայրաքաղաքների եկեղեցիների միաւորման գաղափարը՝ այն հիմնաւորմամբ, որ դա հնարաւորութիւն կտար ապահովել եղած միջոցների հաւասարաշափ բաշխումը, ինչը եկեղեցիների բարեկեցութեան գրաւականը պէտք է հանդիսանար: Այս դրոյթը պայմանաւորուած էր նրանով, որ Լազարեանները, լինելով Հայ Եկեղեցու նուիրեալ բարերարներ, լաւագոյնս պատկերացնում էին, թէ ինչ նիւթական միջոցներ են անհրաժեշտ այդ նպատակի համար: Այդպիսով, միաւորումը լինելու էր նաեւ ֆինանսատնտեսական, եւ ինչպէս որ նախագծում է ձեւակերպուած՝ «որոշների պակասորդը լրացուելու էր միւսների աւելցուկով»⁴: Առաջ անցնելով նշենք, որ դրամական միջոցների վերաբաշխումն անհրաժեշտ էր, որ հնարաւորութիւն ստեղծուէր Լազարեան ճեմարանում բացելու հոգեւոր բաժին եւ ապահովելու վերջինիս գործունէութիւնը:

Նախագծում հիմնաւորուում էր Լազարեան ճեմարանն այդ միաւորման մէջ ներառելու անհրաժեշտութիւնը, ուստի առաջարկում էր՝ «ոչ պակաս օգտակար կլինի այդ միաւորման մէջ ընդգրկել նաեւ Մոսկուայում գտնուող Արեւելեան լեզուների հայկական ինստիտուտը, որն օգտակար եւ իր բնոյթով եզակի մի կառույց է հայ ժողովրդի համար: Այն ունի հարուստ փորձ եւ հասարակութեան համար օգտակար հոգեւոր ու քաղաքացիական անդամների է կրթում»⁵: Նախագծում ուշադրութիւնից

³ ՄՄ, Լազարեանների արխիւ, թղթ. 118, գ. 27, վաւ. 16, թ. 1:

⁴ Անդ:

⁵ Անդ, թ. 2:

դուրս չէր մնացել նաեւ միաւորումը կառավարելու կարելոր հարցը, եւ առաջարկուում էր այն յանձնել յատուկ հոգաբարձուի, որին վերապահուելու էր գլխաւոր ղեկավարի դերը. «Նրա անմիջական վերահսկողութեան ներքոյ պէտք է գտնուեն բոլոր եկամուտները եւ ծախսերը, ամբողջ տնտեսական մասը, ինչպէս նաեւ եկեղեցիների համար հոգեւորականների ընտրութեան առաջադրումը»⁶: Այս դրոյթը նպատակ ունէր ապահովել ինչպէս միաւորման կառավարման արդիւնաւէտութիւնը, այնպէս եւ համապատասխան արժանիքներ ունեցող ուսեալ եւ կրթուած հոգեւորականների նշանակումը մայրաքաղաքների եկեղեցիներում: Կարծում ենք՝ այն բնաւ չէր հակասում գործող կարգերին, քանի որ նախագծով հոգաբարձուն ենթակայ էր լինելու թեմական եպիսկոպոսներին (Նոր Նախիջեւան-Բեսարաբիայի եւ Աստրախանի)⁷:

Առաջին հայեացքից տպաւորութիւն կարող է ստեղծուել, որ յատուկ նշանակուած հոգաբարձուին լայն լիազօրութիւններ էին վերապահուած, մինչդեռ փաստաթղթի հետագայ ընթերցումը միանգամայն այլ բան է վկայում: Միաւորուած եկեղեցիների առաւել արդիւնաւէտ կառավարման համար առաջարկուում էր. «Ս. Պետերբուրգի եւ Մոսկուայի հայ համայնքների կողմից ընտրել երկու անձ (աւագներ.— Հ. Օ.), որոնք հոգաբարձուի ղեկավարութեամբ կզբաղուեն բոլոր ընթացիկ գործերով: Իւրաքանչիւր մայրաքաղաքում կլինի եկեղեցու մէկ աւագ»⁸: Աւագն ընտրուելու էր տեղի հասարակութիւնից՝ երեք տարի ժամկէտով եւ հոգաբարձուի հաստատմամբ, նա էր կառավարելու ընթացիկ բոլոր գործերը: Ուշագրաւ է, որ առանձին դէպքերի համար սահմանուում էր նաեւ, որ աւագները կարող էին պաշտօնավարել աւելի կարճ կամ երկար ժամանակով, սակայն բացառապէս՝ հոգաբարձուի համաձայնութեամբ: Կարելոր ձեւակերպում էր արուած այն մասին, որ վերջիններս չպէտք է ունենային որեւէ այլ պաշտօն կամ զբաղուածութիւն⁹: Այլ կերպ ասած՝ պէտք է լիովին նուիրուէին իրենց առաքելութեան լիարժէք կատարմանը:

Այդպիսով, միաւորման հարցը հիմնաւորելուց յետոյ, նախագիծն առաջ էր քաշում յաջորդ նշանակալի բարեփոխումը, որը վերաբերում էր ճեմարանի ապագային. «Հայերի եւ հոգեւորականութեան համար նոր եւ առանձին դպրոց բացելը բաւական դժուար եւ անգամ անհնար գործ է՝

⁶ Անդ:

⁷ Անդ, թ. 3:

⁸ Անդ:

⁹ Անդ, թ. 7:

բազմաթիւ առումներով ու խոչընդոտներով եւ մասնաւորապէս՝ միջոցների անբաւարարութեան եւ համապատասխան կրթութեամբ անձանց բացակայութեան պատճառով»,— նշուած է փաստաթղթում¹⁰։ Յաւելենք, որ նախագծում շեշտուում էին ուսումնական հաստատութեան համար անհրաժեշտ հետեւեալ գործօնները. «Փորձով հաստատուած է, որ ցանկացած կրթական հաստատութիւն բացելու եւ պահելու համար պահանջուում են նշանակալի միջոցներ, միեւնոյն ժամանակ՝ անհրաժեշտ է հոգատար կառավարում»¹¹։ Անշուշտ, այդ հարցում դժուար էր անտեսել Լազարեանների հարուստ փորձը։ Նախագծում առաջարկուում էր՝ «թեմական եպիսկոպոսների եւ կառավարութեան համաձայնութեամբ սահմանել, որ նոր՝ առանձին դպրոց կառուցելու փոխարէն Ս. Պետրբուրգի հայկական եկեղեցիների եկամուտների մի մասը, հոգաբարձուի հայեցողութեամբ, տարեկան հաշուարկով, տրամադրուի Մոսկուայի Լազարեանների Արեւելեան ինստիտուտում առանձին բաժին բացելու համար։ Յատկացուած գումարով նշուած ինստիտուտում կբացուի եւ կպահուի յատուկ բաժին, որտեղ կպատրաստուեն հայկական դաւանանքի հոգեւոր դասի երիտասարդներ, որոնք պէտք է դասաւանդեն թեմերում եւ հոգեւոր կոչումներ ստանան»¹²։

Նախագծում նշուում են նաեւ հոգեւորականների կրթութեան եւ ապագայ գործունէութեան հետ կապուած հարցերը։ Ըստ այդմ՝ ճեմարանն աւարտողներն ստանալու էին հոգեւոր կոչումներ, իսկ «սաներից ոմանք իրենց կրթութեան գնահատանքի համար, ինչպէս նաեւ՝ իրենց ինքնազարգացման նպատակով, պարտաւորուելու էին վեց տարի ծառայել ինստիտուտում՝ ուսուցչի կամ վերակացուի պաշտօններում, ինչպէս որ կորոշի եւ կնշանակի նրանց ինստիտուտի ղեկավարութիւնը»¹³։ Այսինքն՝ առաւել շնորհալի շրջանաւարտները պէտք է մնային ճեմարանում եւ ժամանակաւորապէս համալրէին ուսուցչական կազմը։ Ինչ վերաբերում էր միւս սաներին, ապա նրանք, «աւարտելով ուսումը, պէտք է ծառայութեան անցնէին թեմերում»¹⁴։ Այդպիսով, կարող ենք եզրակացնել, որ նոր ստեղծուելիք հոգեւոր բաժինն ինքնաբաւ սկզբունքով լրացնելու էր թէ՛ ուսուցչական կազմը եւ թէ՛ համալրելու էր թեմական դպրոցները որակեալ կրթութիւն ստացած ուսեալ հոգեւորականներով։

¹⁰ Անդ, թ. 3:

¹¹ Անդ, թ. 4:

¹² Անդ, թ. 4—5:

¹³ Անդ, թ. 5:

¹⁴ Անդ:

Նախագծում հոգաբարձուի պաշտօնը վերապահում էր Լազարեաններին՝ հետեւեալ արդարացի հիմնաւորմամբ. «Լազարեան ընտանիքը շուրջ յիսուն տասնամեակների ընթացքում ջանքեր չի խնայել հասարակական օգուտներ բերելու գործում՝ երկու մայրաքաղաքներում հովանաւորել են հայկական եկեղեցիները, պահպանել են նրանց կից հասարակական շինութիւնները եւ զգալի գումարներ են յատկացրել Աստրախանի, Նախիջեւանի եւ Գրիգորիոպոլի կարիքաւոր հայ հասարակութեանը, եւ վերջապէս, շուրջ կէս միլիոն ռուբլի են նուիրաբերել Մոսկուայում Արեւելեան լեզուների ինստիտուտի կառուցմանը»¹⁵:

Ուշագրաւ է, որ հոգաբարձուի պաշտօնը Լազարեաններին է վերապահուել ժառանգական իրաւունքով. «Այդ կոչումը պէտք է ժառանգաբար փոխանցուի սերնդից սերունդ, իսկ ժառանգներ չլինելու դէպքում՝ վերջին հոգաբարձուն պէտք է իրեն ժառանգորդ նշանակի իր ամենամերձաւոր ազգականին կամ այլ անձի, ում որ արժանի կհամարի»¹⁶: Այդքանով հանդերձ, ինչպէս տեսնում ենք, հնարաւորութիւն էր ստեղծուում նաեւ ժառանգորդ չնշանակուելու դէպքում ընտրութեան միջոցով հոգաբարձու ունենալու համար: «Հայ ժողովուրդը պէտք է ընտրի արժանի հոգաբարձու, ում պէտք է հաստատի թեմական առաջնորդը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի համաձայնութեամբ»,— ասում էր նախագծում¹⁷:

Ապագայ միաւորման հարցում շատ էական էր նաեւ այն դրոյթը, որ «Ս. Պետերբուրգի եւ Մոսկուայի եկեղեցիներն ու Արեւելեան լեզուների ինստիտուտն իրենց բոլոր կառույցներով պէտք է ազատուած լինեն բոլոր պետական եւ քաղաքային հարկերից»¹⁸: Այդ կարեւոր կէտը, մեր համոզմամբ, լիովին բխում էր Հայոց Եկեղեցու վերաբերեալ ընդունուած կանոնադրութիւնից եւ, անշուշտ, միտուած էր ամրապնդելու ստեղծուելիք միաւորման նիւթատնտեսական ներուժը:

Իշխանութիւնների հետ փոխարաբերութիւնների վերաբերեալ նախագծում նշում էր՝ «անհրաժեշտութեան դէպքում եկեղեցիների եւ ինստիտուտի գործերով կառավարական շրջանակների հետ պէտք է առընչուի հոգաբարձուն, որպէս գլխաւոր ղեկավար, կամ էլ ինստիտուտի խորհուրդը»¹⁹: Կարծում ենք, որ այս կէտը եւս ակնյայտ էր դարձնում

¹⁵ Անդ, թ. 5—6:

¹⁶ Անդ, թ. 6:

¹⁷ Անդ, թ. 6:

¹⁸ Անդ, թ. 7:

¹⁹ Անդ, թ. 7—8:

հոգաբարձուի դերը կազարեաններին վերապահելու կարեւորութիւնը, քանի որ, անկասկած, վերջիններս դա լաւագոյնս կիրաւործէին՝ ռուսական արքունիքում եւ կառավարող շրջանակներում իրենց ունեցած լայն կապերի շնորհիւ:

Վերը նշուած հիմնական կէտերով նախագիծը կազարեան ճեմարանի պետ Ալ. Բենկենդորֆը, որը, ըստ ամենայնի, ի պաշտօնէ գործուն մասնակցութիւն էր ունեցնել կազմման գործընթացին, իր հիմնաւորումներով հանդերձ, 1837 թ. յունիսի 17-ին ներկայացնում է ներքին գործերի նախարար Դ. Բլուդովի հաստատմանը: Հետաքրքիր է, որ նամակում վկայակոչւում էր, որ Ալ. Բենկենդորֆը եւս եղել է յանձնախմբի կազմում, որը մշակել է Հայ Եկեղեցուն վերաբերող կանոնադրութիւնը²⁰: Հետեւաբար նա քաջածանօթ էր արծարծուած հարցերին եւ հաւաստիացնում էր՝ «կազարեան ինստիտուտը հայ ժողովրդի գլխաւոր հիմնական կրթական հաստատութիւնն է եւ ինչպէս որ ուսուցիչներ է պատրաստում այլ կրթարանների համար, այնպէս եւ Հայկական Եկեղեցու համար կպատրաստի հոգեւորականներ»²¹:

Յաւելենք, որ Դ. Բլուդովին հասցէագրուած նամակում Ալ. Բենկենդորֆը հարցին առնչուող մի շարք պատմական տեղեկութիւններ էր հաղորդում. «Հայ թեմական առաջնորդների պաշտօնագրերից եւ կանոնակարգերից երեւում է, որ կազարեան ընտանիքի նշանակալի նուիրատուութիւններով եւ ջանքերով կառուցուել են հայկական եկեղեցիներ Մոսկուայում եւ Ս. Պետերբուրգում, որոնք ապահովուած են շինութիւններով եւ եկամուտներով: Հիմնադրումից ի վեր մինչ օրս մայրաքաղաքների եկեղեցիները՝ 50, իսկ կազարեանների Արեւելեան ինստիտուտը 22 տարում նրանց ջանքերի շնորհիւ բարեկեցիկ ընթացք են ունեցել: Այդ կանոնակարգերով հայկական թեմերի արքեպիսկոպոսները ներկայացնում են պատճառներ, փաստարկներ եւ հնարաւորութիւն՝ մայրաքաղաքների եկեղեցիները եւ դրանց ունեցուածքը համատեղ եւ աւելի արդիւնաւէտ կառավարելու համար: Կանոնակարգերում, իմիջալոց, սահմանուած է, որ հայկական եկեղեցիների յարատեւ գոյատեւման համար անհրաժեշտ է դրանք միաւորել այնպիսի հիմքով, որպէսզի կազմէն մէկ ամբողջութիւն՝ միասնական կառավարմամբ, եւ դա աւելի կնպաստի երկուստեք բարեկեցութեանը: Տնտեսական միջոցների աւելի արդիւնաւէտ կառավարման

²⁰ Անդ, վաւ. 15, թ. 1ա:

²¹ Անդ, թ. 2բ:

շնորհիւ հնարաւոր կլինի մէկի անբաւարարութիւնը լրացնել միւսի աւելցուկի հաշուին»²²։ Նամակում նաեւ մասնաւորեցուում էր, թէ ինչ իրավիճակների մասին է խօսքը. «Եթէ յանկարծ տեղի ունենան ինչ-որ փոփոխութիւններ կամ անբարենպաստ հանգամանքներ մէկ մայրաքաղաքում գտնուող եկեղեցիների համար, ապա միւսում գտնուող եկեղեցիները, յետագայ հետեւանքները հակադարձելու համար, ի վիճակի կլինեն աջակցել եւ վերականգնել նախկին բարեկեցութիւնը»²³։

Նախագծի հետագայ ընթացքի վերաբերեալ արդէն տեղեկանում ենք Վրաստանի, Կովկասի եւ Անդրկովկասի գլխաւոր կառավարչին ուղղուած ներքին գործերի նախարարի՝ օգոստոսի 31-ի նամակից, որում հաղորդուում է, որ նախագիծը համարուել է ընդունելի, ուստի պէտք է այն փոխանցուի Ս. Էջմիածին՝ Հայոց Կաթողիկոսի եւ Ս. Սինոդի քննարկմանը²⁴։

Դիտարկելով Մայր Աթոռի որոշումը, յանգում ենք հետեւեալին. Ս. Էջմիածնի Սինոդը Յովհաննէս Ը. Կարբեցի (1831–1842 թթ.) հայրապետի գլխաւորութեամբ դեռեւս 1837 թ. փետրուարի 22-ի նիստում քննարկել է մի շարք խնդիրներ, որոնց թւում նաեւ՝ հոգեւորականների կրթութեան համար պահանջուող դպրոց ունենալու հարցը. «Նախ՝ ի մասին լցուցանելոյ ընդունակ աստիճանաւորօք, որք գիտասցեն գրաւորապէս զլիզուս ոռւսաց եւ հայոց» եւ «ի մասին սահմանելոյ ի վիճակս Ռուսաստանի զհոգեւոր ճեմարանս, որոց հարկաւոր են ընդունակ ուսուցիչք հայոց լեզուի եւ առ այժմ չիք ինչ կարելութիւն ի ձեռս բերելոյ զայնպիսին»²⁵։ Ընդամին, առկայ պայմաններում հնարաւոր չի եղել նշուած խնդիրները լուծել՝ թէ՛ ժամանակի եւ թէ՛ միջոցների բացակայութեան պատճառով։

Այսպիսով, բնաւ չափազանցուած չի կարելի համարել պատասխանի մէջ ընդգծուող հետեւեալ միտքը. «Առանց նախընթացաբար պատրաստելոյ զընդունակ անձինս՝ ըստ ներկայ միջոցաց ժամանակիս դժուարին է յոյժ եւս եւ անհնարին իսկ, Լուսաւորչական Հայոց Սինոդոսն ո՛չ կարէ նախատես լինել այլում կարելութեան ի միք, որ յարմար իցէ եւ համեմատ միանգամայն օգտին Եկեղեցւոյ եւ նոյն ինքն տէրութեանն»²⁶։ Հասկանալի է, որ կրթուած, լեզունների իմացութեամբ հոգեւորականների պատրաստման առաքելութիւնն ուրիշ ո՛ր կառոյցը կարող էր ստանձնել, եթէ ոչ հայկական Լազարեան ճեմարանը. «Բաց ի միոյն, որ իսկապէս

²² Անդ, թ. 3ա-3բ։

²³ Անդ, թ. 3բ։

²⁴ Անդ, վաւ. 17, թ. 1։

²⁵ Անդ, վաւ. 20, թ. 1 (նոյնը նաեւ ոռւսերէն թարգմանութեամբ՝ անդ, վաւ. 19)։

²⁶ Անդ, թ. 1։

հաստատուն կարի համարել այս է կարգել ի ճեմարանին Մոսկովու Արեւելեան լեզուաց զառանձին բաժանումն դասատան յաղագս պատրաստելոյ զհամբակս հոգեւորականաց հայոց վասն մտանելոյ եւ ի ճեմարանս կոչմամբ ուսուցչաց եւ ի հոգեւորականութեան իսկ»²⁷։ Հետեւաբար, Ս. Սինոդի որոշման մէջ ձեւակերպուած է հետեւեալը. «Այսու եղանակաւ յիշեալ ճեմարանն ձեռնտու լինելով վարժապետօք ուսումնարանաց Հայոց, պատրաստիցէ միանգամայն եւ լուսաւորեալ սրբազնագործ եկեղեցական պաշտօնեայս Հայոց Լուսաւորչական դաւանութեան»²⁸։ Այդպիսով, այն ինչ պահանջում էր եկեղեցական կանոնադրութիւնը՝ բացել թեմական դպրոցներ, ունենալ հայերէն եւ ռուսերէն լեզուներին տիրապետող, կրթութիւն ստացած հոգեւորականներ եւ այլն, միանշանակ է՝ հարցը լուծուում էր հոգեւոր բաժնի ստեղծումով։

Ըստ վաւերագրի՝ նախագիծը Ս. Սինոդի կողմից հաստատուել է 1839 թ. յուլիսի 21-ին, դրանով իսկ հաւանութիւն է տրուել Լազարեան ճեմարանում յատուկ հոգեւոր բաժին բացելու առաջարկին²⁹։ Որոշմամբ հաստատուում էր նաեւ Ս. Պետրբուրգի եւ Մոսկուայի հայկական եկեղեցիները եւ Լազարեանների Հայկական ինստիտուտը մէկ ընդհանուր միաւորման մէջ ընդգրկելը³⁰։

Ս. Սինոդի հաստատած կանոններից առանձնացնենք նաեւ հոգեւոր բաժնի կրթական ծրագրի վերաբերեալ տեղեկութիւնը, ըստ որի՝ դասաւանդուելու էր աստուածաբանութիւն՝ «համաձայն կանոնաց Քրիստոնէական Հայաստանեայց Եկեղեցւոյ, մեկնութիւն եկեղեցական ընթերցութեան, բացատրութիւն սրբոյ Պատարագի եւ եկեղեցական պատմութեան, բաց յայսմանէ ունին բացատրեալ սրբազան պարտաւորութիւնք ճշմարիտ հոգեւոր հովուի առ կոչումն իւրոյ եւ աստիճանի, առ տէրութիւնն եւ առամենայն մարդիկ առհասարակ»³¹։ Աւելորդ չէ նշել, որ որոշման մէջ անվերապահ վստահութիւնն էր յայտնուում Լազարեանների կողմից հոգաբարձուի պաշտօնն զբաղեցնելուն, եւ ըստ արժանւոյն գնահատականներ էին տրուած նրանց հայանպաստ գործունէութեանը³²։

Ինչ վերաբերում է նախագծի հետագայ ընթացքին, ապա պարզորոշ էր, որ այդքանով քննարկումները չէին աւարտուելու։ Արխիւում

²⁷ Անդ, թ. 1։

²⁸ Անդ։

²⁹ Անդ, թ. 7։

³⁰ Անդ, վաւ. 19, թ. 2—3։

³¹ Անդ, վաւ. 20, թ. 5։

³² Անդ, վաւ. 19, թ. 9։

պահպանուած նամակները հնարաւորութիւն են տալիս դիտարկել եւ վերլուծել դէպքերի ընթացքը: Այսպէս, 1839 թ. դեկտեմբերի 28-ին ներքին գործերի նախարարը գրութիւն է ուղարկել ճեմարանի պետ Ալ. Բենկենդորֆին, որտեղ ասուում է Ս. Սինոդի քննարկմանը ներկայացուած նախագծի հետ կապուած որոշիչ կանոնների սահմանման անհրաժեշտութեան մասին, ինչպէս որ ձեւակերպուած է գրութեան մէջ. «Որոնք որ հնարաւոր կլինի, ըստ կարգի, ներառել Բարձրագոյն հաստատման մէջ»³³: Խօսքը, բնականաբար, կայսրի կողմից այն հաստատելու մասին է, իսկ մինչեւ այդ, թերեւս, լրացուցիչ յստակեցումների խնդիր էր առաջադրուում:

Նախագծի ընթացքի վերաբերեալ նշենք 1840 թ. յունուարի 13-ին ներքին գործերի նախարար Ալ. Ստրոգանովին ուղղուած պատասխան գրութիւնը, որտեղ Լազարեան ճեմարանի պետը կարեւորել եւ առաջարկել է վերոնշեալ կանոնների մէջ ներառել մասնաւորեցնող եւս երկու կէտ. առաջինը վերաբերում էր այն հարցին, որ եթէ Լազարեանները ժառանգորդ չունենային, եւ վերջին հոգաբարձուն էլ չհասցներ նշանակել ժառանգորդ, ապա ընտրուած անձը կարող էր որեւէ դասային աստիճան չունենալ, քանի դրա սահմանափակումը, ինչպէս արդարացիօրէն նկատել էր Ալ. Բենկենդորֆը, կարող է դժուարութիւններ յարուցել կրթութեան ոլորտի արժանի ջատագովի ընտրութեան հարցում³⁴: Երկրորդը վերաբերում էր ռուսերէն լեզուին, քանի որ ինստիտուտի բոլոր գործող կանոնները պէտք է հաւասարապէս տարածուէին նաեւ նորաստեղծ բաժնի վրայ: Ինչպէս հիմնաւորում էր ճեմարանի պետը, դա բխում էր ռուսական օրէնքներից, որոնցով սահմանուած էր, որ հոգեւոր քարոզչութիւն կատարելու համար անձը պէտք է ռուսերէն լեզուին տիրապետելու համապատասխան վկայական ունենայ: Հետեւաբար, եզրակացնում էր նա, այդ կանոնն օգտակար կլինի սահմանել որպէս պարտադիր ճեմարանի այն սաների համար, որոնք հոգեւոր կոչում պէտք է ստանան³⁵:

Ինչպէս երեւում է վաւերագրերից, նախագիծն ուղարկուել է նաեւ լուսաւորութեան նախարարութիւն: Մասնաւորապէս, ի պատասխան Ալ. Ստրոգանովի գրութեան, լուսաւորութեան նախարար Ս. Ուվարովը 1840 թ. մարտի 9-ի պատասխան նամակում գրել էր. «Քննարկելով Լազարեանների հայկական ինստիտուտում Հայ Առաքելական Եկեղեցու

³³ Անդ, վաւ. 18, թ. 1:

³⁴ Անդ, վաւ. 21, թ. 1:

³⁵ Անդ, թ. 2:

հոգեւոր դասի երիտասարդներ (նրանք պէտք է ծառայութեան անցնեն հայկական թեմերի դպրոցներում եւ հոգեւոր կոշումներ ստանան) պատրաստելու նպատակով յատուկ բաժին բացելու հարցը՝ որեւէ խոչընդոտ չեմ տեսնում այդ առաջարկութիւնը Բարձրագոյն հաստատմանը ներկայացնելու համար»³⁶։ Չենք կարող անտեսել այն փաստը, որ համաձայն լինելով հանդերձ նախագծի հիմնական դրոյթներին՝ Ս. Ուվարովը, յղում անելով քաղաքացիական ծառայութեան օրէնքներին, այդուհանդերձ, իր կողմից լրացում է արել առ այն, որ «հոգաբարձուն այդ պաշտօնի համար նախատեսուածից ոչ աւելի, քան 2 դասով ցածր չպէտք է լինի»³⁷։ Թերեւս նկատենք, որ իրականում հաշուի չեն առնուել Ալ. Բենկենդորֆի փաստարկները, այդուհանդերձ, առաջ անցնելով նշենք, որ այդ սահմանափակումը, ի վերջոյ, ներառում է նախագծի հաստատուած տարբերակում։

Դատելով Մատենադարանի Լազարեանների արխիւում առկայ նամակների բովանդակութիւնից՝ դրանով քննարկումները չեն աւարտուել։ Ուշագրաւ է 1840 թ. յունիսի 22-ի՝ ներքին գործերի նախարարի գրութիւնը, որով տեղեկացուել է Ալ. Բենկենդորֆին, որ պէտք է որոշ կէտերի վերաբերեալ յստակեցումներ արուեն³⁸։ Այդ դիտարկման հետ կապուած՝ առանձնացնենք հետեւեալ խմբագրումները. կէտերից մէկով սահմանուած էր, որ մայրաքաղաքներում ընտրուած աւագները իւրաքանչիւր տարուայ վերջում պէտք է հաշուետուութիւն ներկայացնէին հոգաբարձունին՝ մասնաւորապէս դրամական միջոցների վերաբերեալ, իսկ վերջինս այն պէտք է տրամադրէր հայկական թեմերի եպիսկոպոսներին։ Մէկ այլ դրոյթով բնաւ անտրամաբանական փոփոխութիւն է առաջադրուել, որի համաձայն՝ աւագների պաշտօնավարումը նրանց չէր ազատելու քաղաքային կամ որեւէ այլ հասարակական ծառայութիւնից։ Իսկ վերջում՝ թէեւ ընդունելի էր համարուում միաւորումը հարկերից եւ տուրքերից ազատելը, բայց եւ այնպէս դա չպէտք է ազատէր եկեղեցիները հասարակական պարտաւորութիւններից (կամուրջների հերթապահութիւն, մաքրութեան պահպանութիւն եւ այլն)³⁹։ Նկատենք, որ իւրաքանչիւր խմբագրումից յետոյ որոշակի շեղում է կատարուել նախնական նախագծից, եւ ոչ միշտ՝ յօգուտ ստեղծուելիք միաւորման։

³⁶ Անդ, վաւ. 22, թ. 1։

³⁷ Անդ, թ. 2։

³⁸ Անդ, վաւ. 24, թ. 1։

³⁹ Անդ, թ. 5—6։

Փաստենք նաեւ 1840 թ. հոկտեմբերի 11-ի պատասխան նամակում Ալ. Բենկենդորֆի՝ արդէն ուսումնական գործընթացին վերաբերող առարկայական եւ ուշագրաւ տեսակէտը: Մասնաւորապէս նա նշում է՝ «ինչ վերաբերում է այն կէտին, որտեղ միայն ասուած է, որ Լազարեանների ինստիտուտում բացուում է հոգեւոր բաժին, բայց չի նշուում, թէ քանի սան պէտք է ունենայ»⁴⁰, եւ առաջարկում՝ «սահմանել սաների քանակը եւ սկսել 15—20 երիտասարդների ուսուցումով»⁴¹: Կարելի է ենթադրել, որ առաջին հայեացքից ընդունելութեան համար առաջարկուող երիտասարդների թիւն այնքան մեծ չէր: Մինչդեռ համեմատաբար փոքր այդ թիւը, կարծում ենք, կապուած էր նաեւ նոր բաժնի կայացման խնդրի հետ:

Ինչ վերաբերում է մէկ այլ քննարկուող հարցի, ապա հիմնուելով նաեւ Ս. Էջմիածնի Սինոդի կայացրած որոշման վրայ՝ վերահաստատուում է, որ Լազարեանները պէտք է ժառանգական իրաւունքով տնօրինեն մայրաքաղաքների եկեղեցիների եւ Լազարեան ճեմարանի հոգաբարձուի պաշտօնը⁴²: Դժուար է թերագնահատել Ալ. Բենկենդորֆի կողմից քննարկումների այս փուլում եւս այդ համոզմունքի փաստարկուած պնդումները, քանի որ առանց Լազարեանների՝ այս նախագծի յաջողումը կասկածի տակ կլինէր:

Ի վերջոյ, վերոնշեալ բոլոր նկատառումները հաշուի առնելով, 1841 թ. յունուարի 31-ին կանոնադրութիւնը հաստատուում է կայսր Նիկողայի կողմից⁴³: Իսկ արդէն մարտի 4-ին կառավարող Սենատը հրապարակում է Լազարեան ճեմարանում հոգեւոր բաժին բացելու կայսեր հրամանը, որով էլ այն իրաւական ուժ է ստանում⁴⁴:

Խնդրի համապատկերում մեզ յաջողուեց Լազարեանների արխիւում գտնել եւս մէկ կարեւոր եւ լրացնող վաւերագիր, որը լոյս է սփռում հոգեւոր բաժնի դրամական ծախսերի վրայ: Յաւօք, թեպէտ վաւերագիրն անթուակիր է, բայց կարելո՞ւն այն է, որ վերաբերում է արդէն գործող հոգեւոր բաժնի աշխատանքներին (1841 թ. յետոյ): Մասնաւորապէս նշուած է, որ հոգեւոր բաժնի գործունէութեան համար հոգաբարձուի կողմից իւրաքանչիւր տարուայ կտրուածքով միաւորման ընդհանուր

⁴⁰ Անդ, վաւ. 25, թ. 2:

⁴¹ Անդ, թ. 3:

⁴² Անդ, թ. 4:

⁴³ Անդ, գ. 39, վաւ. 86:

⁴⁴ Անդ, գ. 27, վաւ. 12:

միջոցներից յատկացուել է 6000 ռուբլի: Հետագայում արդէն անհրաժեշտութիւն էր առաջացել այդ գումարը հասցնել 8000 ռուբլու⁴⁵: Գումարն աւելացնելու նպատակը պատճառաբանուած է փաստաթղթում. «Այն պայմանաւորուած է նոր ծագած անհրաժեշտութեամբ՝ դասական դման ծրագրերի բարեփոխումների հետ, ինչը բխում է գիմնազիական կանոնադրութեան փոփոխութիւններից»⁴⁶:

Այսպիսով, ինչպէս տեսանք, Մատենադարանի՝ Լազարեանների արխիւում պահուած վաւերագրերը ոչ միայն լիարժէք լոյս են սփռում ճեմարանում հոգեւոր դպրոց բացելու ողջ գործընթացի վրայ, այլեւ բնութագրում են ռուսական կառավարող շրջանակների աշխույժ միջամտութիւնն այս հարցում, ինչը հանգեցրել է նախնական նախագծի մի շարք կէտերի փոփոխութիւնների: Այդուհանդերձ, Լազարեանների նախաձեռնած եւ համապարփակ լուծումներ առաջադրած նախագիծն արժանացել է Ամենայն Հայոց Հայրապետի հաւանութեանը եւ գնահատանքին: Անկասկած է նաեւ, որ այն կեանքի է կոչուել՝ հայ հոգեւոր դասի համար հնարաւորութիւն ստեղծելով ստանալ ժամանակին համահունչ որակեալ կրթութիւն, մինչեւ որ հնարաւոր կդառնար Գէորգեան հոգեւոր ճեմարանի բացումը Ս. Էջմիածնում:

РЕЗЮМЕ

В статье на основе архивных документов Матенадарана рассмотрен процесс открытия нового духовного отдела в Лазаревском институте восточных языков Москве. Вопрос, который возник после 1836 года, когда был утвержден устав об Армянской Церкви, на основе которого должны были быть открыты армянские епархиальные школы и духовная школа (семинария).

Этот образовательный процесс был рассмотрен Лазаревыми как часть более всеобъемлющей программы реформ. Так, по проекту пять армянских церквей в двух российских столицах должны были быть объединены с Лазаревским институтом восточных языков, создав тем самым единый союз. Подобное объединение способствовало предоставлению средств для открытия нового подразделения и обеспечения безопасности его деятельности.

Изучен весь этап процесса — подходы и принятое решение Католикоса Всех Армян, позиции и переписка царских чиновников по этому вопросу, и, как следствие, публикация императорского указа по утверждению проекта.

SUMMARY

Based on the archival documents of Matenadaran, the article considers the process of opening a new spiritual department at the Lazarev Institute of Oriental Languages in Moscow. A problem arose after 1836 by the approval of the charter of the Armenian Church, on the basis of which Armenian diocesan schools and a theological seminary were to be opened.

This educational process was considered by the Lazarians as part of a more comprehensive reform program. Thus, according to the project, five Armenian churches in two Russian capitals were to be combined with the Lazarev Institute of Oriental Languages, thereby creating a single union. Such an association would contribute to the provision of funds for the opening of a new department and ensure the safety of its activities.

The whole process is examined — the approaches and decision of the Catholicos of All Armenians, the positions and correspondence of Russian officials on this issue, and as a result, the publication of the imperial decree on the approval of the project.



ԱՆԻ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ԱՈՒԱԶԻՆ ՀԱՍԱԺՈՂՈՎԸ

Վայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման, աշխարհասփյուռ հայերի միասնության հաստատման, սփյուռքահայությանը հայրենիքի շուրջը համախմբելու ուղղությամբ կարելու քայլ էր Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախաձեռնությամբ կազմակերպված հայրենիք-Սփյուռք առաջին համաժողովը:

Համաժողովն անցկացվում էր Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 60-ամյա հոբելյանի նախօրեին՝ 1980 թ. նոյեմբերի 24—27-ին, Հայաստանի գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում¹: Ժողովին մասնակցելու համար հրավիրվել էր ավելի քան 100 սփյուռքահայ ներկայացուցիչ Ամերիկայից, Կանադայից, Արգենտինայից, Բրազիլիայից, Անգլիայից, Ֆրանսիայից, Հունաստանից, Կիպրոսից, Բուլղարիայից, Ռումինիայից, Հունգարիայից, Շվեյցարիայից, Արևմտյան Գերմանիայից, Իրանից, Լիբանանից, Սիրիայից, Հորդանանից, Քուվեյթից, Եգիպտոսից, Ավստրալիայից եւ այլ երկրներից:

Համաժողովին ներկա էին ամենատարբեր մասնագիտությունների ու զբաղվածության տեր մարդիկ, որոնցից 20-ը սփյուռքահայ կուսակցական եւ հասարակական գործիչներ էին, 8-ը՝ գիտաշխատողներ, 7-ը՝ արվեստագետներ, 13-ը՝ թերթերի եւ ամսագրերի խմբագիրներ, 8-ը՝ բժիշկներ, 4-ը՝ դպրոցի տնօրեններ, 24-ը՝ գործարարներ, ինչպես նաեւ բարձրաստիճան հոգեւորականներ եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ներկայացուցիչներ²: Ժողովի աշխատանքներին մասնակցում էին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Կ. Լ. Դալլաքյանը, Խորհրդային Միության կրկնակի հերոս, մարշալ Հ. Ք. Բաղրամյանը, ՀԽՍՀ արտաքին գործերի նախարար Զ. Ս. Կիրակոսյանը, ՀԽՍՀ

¹ Տե՛ս Ռ. Կ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ, Խորհրդահայ մշակույթը 1956—1990-ական թթ., Երևան, 2009, էջ 320. Հ. ՈՒ. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ, Հայրենիք—սփյուռք առնչությունները եւ հայրենադարձությունը (1920—1980 թթ.), Երևան, 1985, էջ 436. Ա. ԵՂԱԶԱՐՅԱՆ, Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Մ. ԱՆԱՆՅԱՆ եւ ուրիշներ, Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1918 թվականից մինչեւ մեր օրերը, Երևան, 2017, էջ 115:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 9, գ. 40, թ. 1 -2:

բարձրագույն եւ միջնակարգ մասնագիտական կրթության նախարար Լ. Պ. Ղարիբջանյանը, ՀԽՍՀ լուսավորության նախարար Ս. Տ. Հախումյանը³: Խորհրդաժողովում ելույթներով հանդես եկավ 37 մասնակից, որոնցից 26-ը սփյուռքահայեր էին⁴:

Համագումարի աշխատանքների բացումը վստահվում է կազմկոմիտեի նախագահ, Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ, սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանին⁵, որն իր ելույթն սկսում է հետևյալ տողերով. «Այսօր մենք մասնակցում ենք մի կարեւոր եւ հուզումնալից իրադարձության: Հայաստանի մայրաքաղաքում բացվում է բախտի դաժան բերումով աշխարհով մեկ ցրված, հայ ժողովրդի անբաժան հատվածը կազմող սփյուռքահայ աշխարհի մեր տարագիր եղբայրների ներկայացուցիչների անդրանիկ ժողովը հայրենիքում՝ Հայաստանի հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ»⁶:

Իր ելույթի վերջում Համբարձումյանն ընթերցում է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահ Բ. Շ. Սարկիսովի ողջույնի խոսքը⁷:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանի ելույթի վերնագիրը՝ «Վերածնված հայրենիք եւ սփյուռք, պայքար հանուն խաղաղության եւ առաջադիմության», դառնում է ամբողջ համաժողովի խորագիրն ու նշանաբանը: Նա իր ելույթում նախ արձանագրում է, որ համաժողովը մեկ անգամ եւս փաստում է հայ ժողովրդի միասնությունը, ինչպես նաեւ օր օրի զարգացող ու ընդլայնվող հայրենիք-Սփյուռք կապերի ամրացումը: Այնուհետեւ շարունակելով իր ելույթը՝ Վ. Համազասպյանն անդրադառնում է Հայաստանում խորհրդային կարգերի հռչակմանը եւ ներկայացնում Խորհրդային Հայաստանի 60-ամյա ձեռքբերումները⁸:

Իր ելույթի հաջորդ մասերում Վ. Համազասպյանը ներկայացնում է հայրենիք-Սփյուռք հարաբերություններն ու նրանց զարգացման ընթացքը՝ 1922 թ. Հայաստանի Խորհուրդների առաջին համագումարի

³ Տե՛ս «Սովետական Հայաստան», 1980, դեկտեմբեր, թ. 12, էջ 7:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 9, գ. 40, թ. 2. համաժողովի մասնակիցների ելույթներն ավելի հանգամանորեն տե՛ս նաեւ ՀԱԱ, ֆ. 875, ց. 9, գ. 37, թ. 1–215. նաեւ ֆ. 875, ց. 9, գ. 38, թ. 1–98. նաեւ ֆ. 875, ց. 9, գ. 39, թ. 1–80:

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 9, գ. 40, թ. 2:

⁶ «Նոր օր», Լոս Անջելես, 1980, դեկտեմբեր 23, թ. 90, էջ 1:

⁷ Անդ, էջ 9, տե՛ս նաեւ Ռ. Կ. ՄԻՐՋԱԽԱՆՅԱՆ, նշվ. աշխ., էջ 320:

⁸ Տե՛ս «Զարթոնք», Բեյրութ, 1980, դեկտեմբերի 4, թ. 55, էջ 2:

կոչից մինչև 1980 թ. ընկած ժամանակահատվածը: Նա անդրադառնում է սփյուռքահայության ջանքերով հայրենիքում կառուցված բնակավայրերին (Նոր Արաբկիր, Նոր Սեբաստիա, Նոր Մալաթիա, Նոր Խարբերդ, Նոր Եղոկիա.— ընդգծումը՝ Ա. Խ.), Հայաստանի օգնության կոմիտեի⁹, ներգաղթի հանձնաժողովի, «առաջադիմական» թերթերի, տարատեսակ միությունների եւ ՀԲԸՄ-ի, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ստեղծմանն ու գործունեությանը: Ներկայացնում է Կոմիտեի ջանքերով կատարված աշխատանքները, կազմակերպված միջոցառումները, մտավորականների փոխադարձ այցելությունները, անցկացված դասախոսությունները, հոբելյանական երեկոները, կինոփառատոնները, նկարահանված հեռուստա- եւ ռադիոհաղորդումները, սփյուռքահայ տարբեր համայնքներում անցկացված Խորհրդային Հայաստանի եւ Հայաստանի արվեստի պատմության վերաբերյալ ցուցահանդեսները, Սփյուռքում եւ հայրենիքում տպագրվող մամուլը, գրքերը եւ այլն: Ելույթում անդրադարձ է կատարվում նաեւ այն հակասություններին, որոնք բնորոշ էին հայկական համայնքներին՝ պայմանավորված կուսակցական հայացքներով: Հաճախ իր գնահատականներում Վ. Համազասպանը հանդես է գալիս ծայրահեղական մոտեցումներով, օրինակ՝ արձանագրում է. «Զպետք է մոռանալ, որ սփյուռքում գործող հետադիմական ուժերը (այս ուժերի անվան տակ պետք է հասկանալ «Դաշնակցություն» կուսակցության եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության համատեղ գործունեությունը.— ընդգծումը՝ Ա. Խ.) տասնյակ տարիներ անդադրում պայքարել են հայրենիք-սփյուռք մերձեցման դեմ»¹⁰:

Խոսելով սփյուռքահայ կուսակցությունների վիճակի մասին՝ Վ. Համազասպանը նշում է. «Լուրջ փոփոխություններ է ապրել նաեւ սփյուռքի քաղաքական կուսակցությունների եւ առանձին մշակութային միությունների գործելակերպը, իսկ մի շարք երկրներում՝ նաեւ նրանց տակտիկան: Նկատելի են հանդուրժողականության, փոխադարձ զիջումների, միասնության որոշ ձգտումներ: Այս կուսակցությունները, որոնք հայրենիքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի հարցերում միմյանց նկատմամբ բացարձակ անհանդուրժողականություն էին ցուցաբերում, վերջին տասնամյակում երբեմն համաձայնության են գալիս գաղութի ներքին գործերի, սփյուռքի առջև ծառացած դժվարին հարցերի կապակցությամբ»¹¹:

⁹ Անդ:

¹⁰ Անդ:

¹¹ Անդ:

Վ. Համազասպյանի ուշադրությունից չեն վրիպում հայկական համայնքներում տեղի ունեցած տեղաշարժերը, նոր համայնքների առաջացումը, հների քանակական եւ որակական փոփոխությունները: Նա առանձնացնում է սփյուռքահայ պատանիների հայեցի դաստիարակության խնդիրը՝ նշելով, որ «օտար երկրներում՝ ազգությունների ձուլման մեծ հնոցում, սփյուռքի ապագայի, նրա գոյատևման ամենակենսական հարցը պատանեկության հայեցի դաստիարակությունն է՝ հայ դպրոցի, հայ ուսուցչի, հայկական կազմակերպությունների միջոցով»¹²:

Պետք է արձանագրենք, որ Վ. Համազասպյանի ելույթը, բացի փաստերի արձանագրումից, հատուկ միտված էր նաեւ խորհրդային հասարակարգի քարոզչությանը եւ խորհրդային հայրենիքը կատարյալ ներկայացնելուն, ինչը բնորոշ երեւույթ էր համարվում այդ տարիներին:

Ժողովում մեծ ուշադրության է արժանանում Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա. Պալճյանի ելույթը: Վեհափառ Հայրապետն իր ելույթն սկսում է Գեւորգ Ե. Զորեքչյան Կաթողիկոսի կոչից մեջբերում կատարելով: Հատկանշական է, որ Վազգեն Ա.-ն իր ելույթում անդրադառնում է 1918 թ. Սարգարապատի հերոսմարտին եւ այս կարեւոր իրադարձությունն է համարում հայոց կործանված պետականության ծնունդն ու վերելքը: Այսպիսով՝ Վեհափառ մատնանշում է նաեւ Հայաստանի առաջին Հանրապետության գոյությունը¹³: Շարունակելով իր ելույթը՝ Վեհափառը դրական է գնահատում Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 60 տարիների ձեռքբերումները՝ արձանագրելով. «Կիլիկյան մեր թագավորության անկումից վեց հարյուր տարիներ հետո, առաջին անգամն է, որ Հայոց մի Հայրապետ անսահման մխիթարությունը ունի նման ավետիս բերելու իր ժողովրդին՝ որ ի Հայաստան եւ որ ի սփյուռս աշխարհի: Այս ավետիսով Մենք ողջունում ենք ձեզ բոլորիդ, ի մասնավոր ձեզ, հարազատ զավակներ մեր ժողովրդի, որ եկել եք հեռու երկրներից, ձեր հայաստանցի քույրերի ու եղբայրների հետ միատեղ տոնախմբելու վաթսուն տարիներ հասակ նետած նոր Հայաստանը, հավիտենական Հայաստանը մեր ժամանակաշրջանի պայմաններում»¹⁴:

¹² Անդ:

¹³ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ս. Տ. Վազգեն Ա. Հայրապետի խոսքը՝ արտասանված սփյուռքահայության ներկայացուցիչների ժողովում (Երեւան, 24 նոյեմբերի 1980), «Էջմիածին», 1980, ԺԲ., էջ 6:

¹⁴ «Հայրենիքի ձայն», 1980, նոյեմբերի 29, թ. 49, էջ 5. նաեւ «Զարթոնք», Բեյրութ, 1980, դեկտեմբերի 3, թ. 54, էջ 2:

Վազգեն Ա.-ն միասնության կոչ է հնչեցնում Հայաստանի եւ Սփյուռքի մտավորականներին. «Համազգային ցնծության այս օրերին, երբ նոր հույսերի, նոր սպասումների հորիզոններ են բացվում մեր բոլորիս գիտակցությանց մեջ, Մեր իղձն ու հրավերն է, որ դուք, հայաստանցի մշակութային գործիչներ, եւ դուք, արտասահմանի հայ համայնքների ներկայացուցիչներ, նոր ուղիներ որոնեք՝ ավելի ու ավելի ամրապնդելու համար հոգեւոր-մշակութային կապերը եւ եղբայրական գործակցությունը հայ հայրենիքի եւ սփյուռքի միջեւ»¹⁵:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու մասնակցությունը համաժողովին մեծ կարեւորություն ունեւ: Դարեր շարունակ՝ հատկապես պետականության բացակայության ժամանակաշրջանում, Եկեղեցին է իրականացրել հայապահպանության կարեւոր գործառույթը, ինչը շարունակվել է նաեւ Սփյուռքի հայկական համայնքներում:

Լիբանանահայ հասարակական-քաղաքական նշանավոր գործիչ, պրոֆեսոր Բարունակ Թովմասյանն իր ելույթում հատուկ անդրադառնում է Սփյուռքում հայապահպանության կարեւորությանը եւ այդ գործառույթն իրականացնող մի շարք քաղաքական, մշակութային, մարզական եւ այլ կազմակերպությունների կողքին առանձնացնում Հայ Առաքելական Եկեղեցու դերը՝ ընդգծելով, որ «ինչպէս անցեալին, այնպէս ալ ներկայիս մեր եկեղեցին ունի շատ կարեւոր դեր: Ներկայիս կարօտն ունինք եւ անհրաժեշտութիւնը այդ դերին, եւ այդ դերին կարեւորութեան դրական փաստը ունինք»¹⁶:

Այնուհետեւ շարունակելով իր ելույթը՝ Բ. Թովմասյանն առանձնացնում է Վազգեն Ա. Վեհափառի գահակալության 25 տարիները, երբ շինարար կաթողիկոսը վերականգնեց «Մայր Աթոռին այն աւանդութիւնը, զոր ան ունէր՝ հայ հոգեւոր ժառանգութեանց պաշտպան Աթոռ: Աւելին. իր համակրելի անձով, իր յաճախակի այցելութիւններով, իր յարաբերութիւններով ու շփումներով՝ քրիստոնեայ միւս կենդրոններուն հետ, այսօր ամբողջ աշխարհի մէջ Սբ Էջմածինը կը վայելէ իբրեւ կրօնական արժէքներու ու կրօնական ոգիի պահպանման կարեւորագոյն կենդրոնի համբաւ»¹⁷:

¹⁵ Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի խոսքը՝ արտասանված սփյուռքահայության ներկայացուցիչների ժողովում (Երեւան, 24 նոյեմբերի 1980), «Էջմիածին», 1980, ժԲ., էջ 7:

¹⁶ ՀԱԱ ֆ. 875, ց. 9, գ. 37, թ. 50. նաեւ «Զարթոնք», Բեյրութ, 1980, դեկտեմբերի 10, թ. 60, էջ 2:

¹⁷ Անդ:

Համաժողովին մասնակից ամենատարբեր աշխարհայացքի ու համոզմունքի տեր մարդիկ իրենց ելույթներում միաձայն շեշտում են, որ հայ ժողովրդի միակ հանգրվանը Հայաստանն է¹⁸։ Այսպես՝ լիբանանահայ անվանի բանաստեղծ Գառնիկ Ադդարյանը նշում է. «Խորհրդային Հայաստանի հետ կապերու սերտացումը, ամբողջ սփյուռքահայության համախմբումը մայր հայրենիքի շուրջ, պայքարի լավագույն միջոցներեն մեկն է՝ ի գին խաղաղության, եւ բնականաբար կնպաստե մերձեցմանը տարբեր վարչաձեւեր ունեցող երկրներուն եւ միաժամանակ տարածելով, հաստատելով այն ճշմարտությունը, թե հայկական հանրապետությունը առաջապահ մեկ պատնեշ է խաղաղության ամրոցին՝ Խորհրդային մեծ միությունը»¹⁹։

Գ. Ադդարյանն իր ելույթում արդարացիորեն կարեւորում է նաեւ լիբանանահայ համայնքի դերը՝ այն համարելով Սփյուռքի ողնաշարը, միաժամանակ արժեւորելով Լիբանանի համար 1978 թ. դժվարին օրերին հայրենիքի ցուցաբերած օգնությունը հայ համայնքին։ Իր խոսքերով՝ 23 օդանավերը միայն նյութական օգնություն չէ, որ բերում էին. «...Մեզի բերին բարոյական անսահման ուժ, կորով, անգամ մը եւս հաստատելով անտեր չըլլալու մեր գիտակցությունը»²⁰։

Իր ելույթի մեկ այլ հատվածում Գ. Ադդարյանն անդրադառնում է նաեւ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեությանը՝ նշելով, որ իր գոյության մոտ քսան տարիների ընթացքում Կոմիտեն նպաստել է հայրենիք-Սփյուռք կամրջի եւ հայրենիքի հետ հարաբերությունների ամրապնդմանը²¹։ Շարունակելով իր խոսքը՝ Գ. Ադդարյանն անդրադառնում է Գիտությունների ակադեմիայում բացված նոր բաժնին, որը պետք է զբաղվեր Սփյուռքին առնչվող տարատեսակ հարցերի ուսումնասիրմամբ, ինչպես նաեւ Կոմիտեի սահմանած մրցանակների բաշխմամբ, որոնք պետք է հատկացվեին սփյուռքահայ ականավոր գործիչներին։ Գ. Ադդարյանը շեշտը դնում է հայրենիքի ու Սփյուռքի երիտասարդների միջեւ կապերի ամրացմանն ու առհասարակ նրանց հետ տարվող աշխատանքին, ցանկություն հայտնում, որ հայրենիք-Սփյուռք հարաբերությունները շարունակեն ընդգրկել բոլորին՝ ան-

¹⁸ Տե՛ս ՀԱՍ. ֆ. 875, ց. 9, գ. 40, թ. 2։

¹⁹ «Հայրենիքի ձայն», Երեւան, 1980, նոյեմբերի 29, թ. 49, էջ 5. նաեւ «Նոր օր», Լոս Անջելես, 1980, դեկտեմբերի 19, թ. 89, էջ 1։

²⁰ «Հայրենիքի ձայն», Երեւան, 1980, նոյեմբերի 29, թ. 49, էջ 5։

²¹ Տե՛ս «Սովետական Հայաստան», 1980, դեկտեմբեր, թ. 12, էջ 20։

կախ նրանց հայացքներից, ինչպես դա եղավ լիբանանահայ համայնքին բաժին հասած դժվարին օրերին²²:

Տպավորիչ ելույթներ են ունենում նաեւ հասարակական-քաղաքական եւ մշակութային այլ գործիչներ: Հետաքրքրական է սրտաբան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Զավեն Դոլաբաջյանի ելույթը, որում հայ ժողովրդի մեծագույն զենքը համարված են միտքը, մտածողությունը, հոգեկան հարստությունն ու նվիրվածությունը հայրենի հողին: Խոսելով Խորհրդային Հայաստանում գիտության, արվեստի, գրականության, մշակույթի բոլոր ոլորտների զարգացման ոսկեդարի մասին՝ բանախոսը ցանկություն է հայտնում նույնը տեսնել նաեւ Սփյուռքում²³: Նա Սփյուռքի մտավորականության մեծ համալրում է համարում այն ուսանողներին, որոնք կրթություն են ստանում հայրենիքում: Զ. Դոլաբաջյանն իր ելույթն ավարտում է հետեւյալ եզրահանգմամբ. «Եւ այսպես: Սփյուռք: Հայրենիք: Մի ժողովուրդ: Նրա միասնությունը: Սա է գլխավոր եւ ընդհանուր օրինաչափությունը: Հզոր է հայրենիքը: Պետք է զորանա եւ սփյուռքը»²⁴:

Համաժողովի մեկ այլ մասնակից՝ լիբանանահայ հասարակական գործիչ Ավետիս Դեմիրճյանը, իր ելույթում արժեւորում է Կոմիտեի գոյությունը եւ նշում, որ նրա շնորհիվ ամրացել են հայրենիք-Սփյուռք կապերը²⁵: Բացի այդ, նա կարեւոր ձեռքբերում է համարում նաեւ Սփյուռքում հասարակական կյանքի ակտիվացումը, հատկապես մարզական եւ մշակութային նոր միությունների հիմնումը. «Հայ երզը զորեղ կհնչի արտասահմանի հայատուններեն ներս, հայ մշակույթը, հայ արվեստը հիացմունք կպատճառեն ոչ թե լոկ հայուն, այլեւ օտարին»²⁶: Դեմիրճյանը նույնպես արժեւորում է հայրենիքի ցուցաբերած օգնությունը լիբանանահայության դժվարին օրերին :

Փարիզի «Աշխարհ» թերթի խմբագիր Ավետիս Ալիքսանյանն իր ելույթում հույս է հայտնում, որ համագումարը դառնալու էր հայրենիք-Սփյուռք հարաբերությունների նոր փուլի սկիզբը²⁷:

Համագումարում հետաքրքիր ելույթներ են ունենում ՀԽՍՀ բարձրագույն եւ միջնակարգ մասնագիտական կրթության նախարար Լյուդվիգ Ղարիբջանյանն ու ՀԽՍՀ լուսավորության նախարար Սեմյոն

²² «Նոր օր», Լոս Անջելես, 1980, դեկտեմբերի 19, թ. 89, էջ 8:

²³ Տե՛ս ՀԱԱ ֆ. 875, ց. 9, գ. 39, թ. 87. տես նաեւ ֆ. 875, ց. 9, գ. 37, թ. 77—82:

²⁴ Անդ, գ. 39, թ. 88:

²⁵ «Սովետական Հայաստան», Երևան, 1980, դեկտեմբեր, թ. 12, էջ 22:

²⁶ Անդ:

²⁷ Անդ, էջ 23:

Հախումյանը: Նրանք հիմնականում ներկայացնում են խորհրդային կրթության 60 տարիների ձեռքբերումները, սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստումը, աշակերտների՝ հայրենիք կատարած այցերը եւ այլն:

Լ. Ղարիբջանյանն անհրաժեշտություն է համարում Սփյուռքում հայկական դպրոցի պահպանումը. «Եթե հայրենիքին ու սփյուռքին հուզող ամենակարեւոր խնդիրները հայապահպանությունն է եւ դրա ամենակարեւոր գործոններից մեկը սփյուռքում հայկական դպրոցների պահպանումը, ուրեմն մեր գլխավոր մտահոգություններից մեկը պետք է լինի այդ դպրոցների համար որակյալ ուսուցիչների պատրաստումը»²⁸: Այս ուղղությամբ նա առաջարկում է ավելացնել ուսման նպատակով հայրենիք ուղարկվող երիտասարդների թիվը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով հայոց լեզվի, գրականության եւ հայոց պատմության դասավանդմանն ու ուսուցիչների կատարելագործմանը²⁹: Լ. Ղարիբջանյանի ելույթը հետաքրքրական է այն առումով, որ մի կողմից ներկայացվում էին թվական տվյալներ կրթության ոլորտում տիրող իրադրության վերաբերյալ, իսկ մյուս կողմից՝ մատնանշվում էր հայրենի կառավարության վերաբերմունքը սփյուռքահայության կրթության եւ հայեցի դաստիարակության նկատմամբ: Հիմնական շեշտը շարունակում էր դրվել հայրենիքում մասնագետների պատրաստման եւ Սփյուռքի դպրոցներն այդ մասնագետներով համալրելու վրա:

Համաժողովի դերը հայրենիք-Սփյուռք կապերի ամրացման գործում կարեւորում է նաեւ Ֆրանսահայ բանաստեղծ եւ մշակութային գործիչ Ռուբեն Մելիքը՝ մատնանշելով ճիգերը միացնելու եւ հայրենիքի հետ միասնաբար գործելու անհրաժեշտությունը: «Այս ժողովը կոչված է ամրապնդելու այդ միասնությունը եւ նոր, ավելի լայն ծրագրված գործելակերպ մը որդեգրելու»,— հավելում է նա³⁰:

Տպավորիչ ելույթով հանդես է գալիս լիբանանահայ հասարակական գործիչ Վահրամ Զերեճյանը, որն առաջարկում էր ամրացնել հայրենիք-Սփյուռք կապերը՝ օգտագործելով այն մեծ ներուժը, որ ունի հայկական Սփյուռքը³¹: Նա առաջարկում էր մեծացնել համագործակցության շրջանակն ու ոլորտները: Անդրադառնալով Կոմիտեի սահմանած մրցանակ-

²⁸ «Սովետական Հայաստան», Երեւան, 1980, դեկտեմբեր, թ. 12, էջ 23:

²⁹ Անդ:

³⁰ «Հայրենիքի ձայն», Երեւան, 1980, դեկտեմբերի 17, թ. 51, էջ 4:

³¹ Անդ, էջ 7:

ներին՝ Վ. Ճերեճյանը հանդես է գալիս առաջարկություններով՝ դրանք տալ նաեւ օտարազգի այն մտավորականներին, որոնք զբաղվում էին հայ ժողովրդի գրականության եւ պատմության հարցերի ուսումնասիրմամբ³²:

Հատկանշական էր Ամերիկայի հասարակական գործիչ, պրոֆեսոր Արա Ավագյանի ելույթը, որը, անդրադառնալով սփյուռքահայերին անհանգստացնող կարեւոր հարցերից մեկին՝ դասական եւ արեւելահայերեն նոր ուղղագրության մեջ եղած տարբերություններին, ցավով նշում է, որ Սփյուռքում գնալով պակասում է մայրենի լեզվին տիրապետողների քանակը: «Այսօր սփյուռքի մեջ շատերը, մանավանդ նոր հասակ առած սերունդը, հիմնավորապես չեն տիրապետեր մայրենի լեզվին. արեւմտահայերենը՝ դասական ուղղագրությամբ կերպով մը դեռեւս իրարու կկապեն ու կկարդան, սակայն կդժվարանան արեւելահայերեն նոր ուղղագրությամբ ընթերցել», — ասված է ելույթում³³: Ուստի այս կապակցությամբ նա ցանկություն էր հայտնում լեզվաբանների մասնակցությամբ քննարկում հրավիրել հայրենիքում եւ որոշակի լուծումներ մշակել այդ ուղղությամբ:

Ելույթով հանդես է գալիս նաեւ Ֆրանսիայի Իսի-լե-Մուլինոյի փոխքաղաքապետ Մարտիրոս Գարակյոզյանը, որը խոստովանում է. «...Երբ հայրենիք եկա, շարքային զինվոր մըն էի, բայց մայր հողի վրա զորավար դառնալու չափ ուժ ամբարեցի... ուրեմն հաճախ գանք, կանգնիք մայր հողի վրա՝ անկե ստանալու համար ուժ եւ կորով՝ սփյուռքի մեջ շարունակելու հայապահպանության գործը»³⁴:

Կարեւոր առաջարկություններով է հանդես գալիս Հայաստանի գրողների միության վարչության առաջին քարտուղար Վարդգես Պետրոսյանը, որի ելույթը նոր ուղենիշ է սահմանում գրականության բնագավառում տարվող աշխատանքների ուղղությամբ: Վ. Պետրոսյանն առաջնահերթ էր համարում Սփյուռքի երիտասարդության մեջ արթնացնել ազգային հպարտությունը՝ նրանց հասու դարձնելով հայ դասականների գործերին՝ անհրաժեշտության դեպքում նաեւ թարգմանված տարբերակներով, ինչպես նաեւ ավելացնել սփյուռքահայ գրողների երկերի հրատարակումները հայրենիքում: Միաժամանակ նա առաջարկում էր աշխուժացնել գրողների փոխայցելությունները, քանի որ «միայն այդ դեպքում, եւ ոչ թե պատահական հպանցիկ տպավորությունների հիման

³² Տե՛ս «Սովետական Հայաստան», Երեւան, 1980, դեկտեմբեր, թ. 12, էջ 27:

³³ «Հայրենիքի ձայն», Երեւան, 1980, դեկտեմբերի 17, թ. 51, էջ 8:

³⁴ Անդ, էջ 5:

վրա, սփյուռքահայ գրողը կկարողանա արժեքավոր գործ ստեղծել հայրենիքի մասին եւ սովետահայ գրողը՝ սփյուռքի»³⁵:

Մեկ այլ բանախոս՝ շվեյցարահայ հասարակական գործիչ Մկրտիչ Շելեֆյանը, կարելու է համարում կազմակերպել մշակութային արժեքների վերադարձը հայրենիք³⁶:

Համագումարին իր մասնակցությունն է բերում նաեւ «Голос Родины» շաբաթաթերթի եւ «Отчизна» հանդեսի գլխավոր խմբագիր Օլեգ Կուպրինը, որը մասնակիցներին ողջունում է «Родина» ընկերության անունից: Նա արժեւորում է հայ ժողովրդի անցած ճանապարհը, հիշատակում բաբելոնյան քարտեզում Հայաստանի պատկերված լինելը, անդրադառնում Մեծ եղեռնին, Երկրորդ համաշխարհային պատերազմին, կարելու է աշխարհում խաղաղության հաստատումն ու համատեղ պայքարը՝ հանուն այդ խաղաղության³⁷:

Ամերիկյան «The Armenian Observer» շաբաթաթերթի խմբագիր Օշին Քելիշյանն իր ելույթում նախ արձանագրում է Խորհրդային Հայաստանի ունեցած ձեռքբերումները, ապա նշում, որ հայրենիքի շնորհիվ ամրանում է ամերիկահայ համայնքը. «...Կրնամ անվարան ըսել, թե շնորհիվ մայր հայրենիքին՝ Ամերիկայի մեջ սկսանք հայերեն, հայաշունչ երգել»³⁸:

Ֆրանսահայ մշակութային միություն անդամ Շավարշ Մարտիրոսյանն իր ելույթում անդրադառնում է ֆրանսահայերին հուզող թեմաներին՝ դրանց մեջ կարելու է հայկական դպրոցների հիմնումն ու հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչներով դրանց համալրումը: Որպես գերակա ուղղություն՝ Շ. Մարտիրոսյանը մատնանշում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման անհրաժեշտությունը³⁹:

Լոս Անջելեսի «Նոր օր» թերթի խմբագիր Ասատուր Տյուլեթյանը կարելու է համարում հայրենիք-Սփյուռք փոխալսելությունների թվի ավելացումը, ինչպես նաեւ Ամերիկայի հայկական վարժարանների համար հատուկ դասագրքերի պատրաստումը՝ նախատեսված անգլիախոս երեխաների համար⁴⁰:

³⁵ «Սովետական Հայաստան», Երեւան, 1980, դեկտեմբեր, թ. 12, էջ 28:

³⁶ Տե՛ս «Հայրենիքի ձայն», Երեւան, 1980, դեկտեմբերի 17, թ. 51, էջ 4–5:

³⁷ Անդ:

³⁸ «Սովետական Հայաստան», Երեւան, 1980, դեկտեմբեր, թ. 12, էջ 30:

³⁹ «Հայրենիքի ձայն», Երեւան, 1980, դեկտեմբերի 17, թ. 51, էջ 6:

⁴⁰ Անդ, էջ 4:

Հալեպահայ հասարակական գործիչ, գրող, բժիշկ Թորոս Թորանյանը կարեւորում է հայրենիքի բարձրագույն ուսումնական հաստատություններում սփյուռքահայ երիտասարդների կրթությունն ստանալու հնարավորությունը, քանի որ հետագայում նրանք իրենց վրա պիտի վերցնեն հայրենիք-Սփյուռք կապերի ամրացման գործը⁴¹:

Սփյուռքում հայկական դպրոցի դերն ու նշանակությունը ընդգծում է Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատության տնօրեն Սոսի Պետիկյանը: Նա ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ «Սփյուռքի մեջ հայապահպանումի կարեւորագույն կռիվները դպրոցն է: Որքան ուժեղ ըլլա դպրոցներու մեջ հայեցի դաստիարակությունը, որքան ուժեղ զգացվի հոն հայրենիքի շունչը, այնքան արդյունավետ կըլլա հայապահպանումի մեր աշխատանքը»⁴²:

Լոս Անջելեսի «Լրաբեր» թերթի խմբագիր Լյուդվիգ Թապաքյանն իր ելույթում նույնպես մեծ նշանակություն է տալիս սփյուռքահայ երիտասարդների հայեցի դաստիարակությանը՝ այն հայապահպանության կարեւոր գրավական համարելով. «Սփյուռքի երիտասարդությունը պետք է խոսի հայերեն, պետք է մտածե հայերեն, պետք է կապվի մայր հայրենիքի հետ՝ անկե ստանալու համար ուժ եւ կորով»⁴³:

Ամերիկահայ գրող, պրոֆեսոր Մըրջըրի Հուսեփյանը նույնպես հանդես է գալիս հետաքրքիր առաջարկներով, որոնցից էր հայկական մշակույթն ու պատմությունը օտարախոս հայ երիտասարդության եւ ընդհանրապես աշխարհասփյուռ հայության շրջանում տարածելը: Նա առաջարկում է թարգմանել մի շարք հայերեն գրքեր, կարեւորում Ամերիկայի հեղինակավոր համալսարաններում (Հարվարդի, Կոլումբիայի, Ուենի, Լոս Անջելեսի եւ այլն) բացված հայագիտության ամբիոնները՝ դրանք համարելով հայկական մշակույթն ու պատմությունն այլ երկրներում տարածելու կարեւոր գործիք⁴⁴:

Ֆրանսահայ երիտասարդական կազմակերպության (ԺԱՖ) գլխավոր քարտուղարը՝ Էդմոն Յանըկյանը, իր ելույթում արձանագրում է ԺԱՖ-ի եւ Կոմիտեի միջեւ հաստատված գործունե կապերը եւ առաջարկում հայրենիքում կազմակերպել մշակույթի մեծ փառատոն⁴⁵:

⁴¹ Տե՛ս «Սովետական Հայաստան», Երեւան, 1980, դեկտեմբեր, թ. 12, էջ 37:

⁴² Անդ, էջ 36:

⁴³ «Հայրենիքի ձայն», Երեւան, 1980, դեկտեմբերի 17, թ. 51, էջ 6:

⁴⁴ Տե՛ս «Սովետական Հայաստան», Երեւան, 1980, դեկտեմբեր, թ. 12, էջ 40:

⁴⁵ Անդ, էջ 40:

Բուենոս Այրեսի «Շարժում» թերթի խմբագիր Սամվել Սարգիսյանը, ծանոթ լինելով արգենտինահայերին հուզող խնդիրներին, իր հերթին հանդես է գալիս որոշ առաջարկներով՝ մեծապես կարեւորելով սփյուռքահայ երիտասարդության հայրենասիրական դաստիարակության ապահովումն ու հայ ժողովրդի մշակութային ժառանգության հետ ծանոթացումը: Նա նաեւ առաջարկում է՝ սփյուռքահայ երիտասարդներին ներկայացնել միջազգային ճանաչում ունեցող հայ գիտնականների, մտավորականների եւ արվեստագետների աշխատանքները, ինչը հպարտություն կպարգեւեր նրանց: Ս. Սարգիսյանի երկրորդ կարեւոր առաջարկությունը տարբեր երկրներում հայերի վերածնունդն ու երախտագիտությունը խորհրդանշող հուշարձանների տեղադրումն էր⁴⁶:

Լոնդոնահայ մշակութային գործիչ Ասատուր Գյուզելյանն իր հերթին բարձրաձայնում է լոնդոնահայերին հուզող մի շարք խնդիրներ, այդ թվում՝ Լոնդոնում հայկական վարժարանի հիմնումը: Նա նաեւ առաջարկում է Սփյուռքում ստեղծել մի ընդհանուր կենտրոն, որի հիմնական նպատակն էր լինելու հայ մշակույթի եւ գրականության վերաբերյալ գրքերի կենտրոնացումն ու վաճառքը, ինչպես նաեւ հայկական համայնքների միջեւ համագործակցության ապահովումը⁴⁷:

Համաժողովի մասնակիցները մեծ ուրախությամբ են ընդունում Հայաստանի կառավարության որոշումը՝ «Բարեկամության Տան» կառուցման մասին, որը լինելու էր հայրենիք ժամանած հայերի առաջին հանգրվանն ու օթեւանը: Նոյեմբերի 25-ին տեղի է ունենում դրա հիմնադրման արարողությունը, որի ժամանակ սփյուռքահայ ներկայացուցիչներից շատերը շենքի շուտափույթ կառուցմանը նյութապես օժանդակելու պատրաստակամություն են հայտնում⁴⁸: Շենքը նախատեսվում էր կառուցել Երեւանի Մոսկվյան (ներկայիս՝ Ալեք Մանուկյան) եւ Կնունյանց (ներկայիս՝ Վարդանանց) փողոցների անկյունում՝ Վարդան Մամիկոնյանի արձանի մոտակայքում⁴⁹:

Համաժողովի կարեւորագույն իրադարձություններից էր նախօրեին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության սահմանած «Հանուն խաղաղության» եւ «Մայր հայրենիքի հետ կապերի ամրապնդման աշխույժ գործունեության համար» մրցանակների հաստատումը, որոնք տրվելու

⁴⁶ Տե՛ս «Հայրենիքի ձայն», Երեւան, 1980, դեկտեմբերի 17, թ. 51, էջ 7:

⁴⁷ Անդ, էջ 6:

⁴⁸ Տե՛ս ՀԱՍՖ. 875, ց. 9, գ. 40, թ. 3:

⁴⁹ Տե՛ս «Զարթոնք», Բելյուսթ, 1980, դեկտեմբերի 3, թ. 54, էջ 2:

էին սփյուռքահայ ականավոր գործիչներին: Այսպես՝ լուսավորության մինիստրությունը (նախարարությունը, — Ա. Խ.) սահմանում է Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակ՝ լուսավորության եւ մանկավարժության բնագավառի, մշակույթի մինիստրությունը՝ Պետրոս Ադամյանի անվան մրցանակ՝ կատարողական արվեստի բնագավառի, ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան՝ Ա. Շիրակացու անվան մրցանակ՝ գիտության բնագավառի, ՀԽՍՀ գրողների միությունը՝ Խ. Աբովյանի անվան մրցանակ՝ գեղարվեստական գրականության եւ լրագրության բնագավառի, իսկ կոմպոզիտորների միությունը՝ Կոմիտասի անվան մրցանակ՝ երաժշտական արվեստի բնագավառների համար⁵⁰:

Հայրենիքում եղած օրերին սփյուռքահայ ներկայացուցիչները մասնակցում են նաեւ Խորհրդային Հայաստանի 60-ամյակի հոբելյանական հանդիսություններին, հանդիպում հանրապետության ղեկավարների հետ, այցելում տեսարժան վայրեր:

1980 թ. նոյեմբերի 25-ին մասնակիցների համար ընդունելություն է կազմակերպվում Հայաստանի կառավարությունում: Հյուրերին ողջույնի խոսքով դիմում է ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահ Ֆ. Տ. Սարգսյանը: Իսկ նոյեմբերի 30-ին ժողովի մասնակիցներին ընդունում է Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիճյանը⁵¹:

Համաժողովի օրերին եւ հետո սփյուռքահայերից ստացվում են ողջույնի բազմաթիվ հեռագրեր ու նամակներ: Այսպես, օրինակ՝ ՀԲԸՄ նախագահ Ալեք Մանուկյանը Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեին հասցեագրված իր նամակում հիացմունք էր հայտնում, որ «երկար դարերու իր շինարարական տենդը ի գործ դնելով՝ հայությունը կարողացավ իր պատմական հողերու մեկ վերածնյալ բեկորին վրա կերտել շքեղ հայրենիք մը, որ ոչ միայն հպարտություն կպատճառե իր հայրենաբնակ որդիներուն, այլեւ կհանդիսանա ներշնչումի հորդ աղբյուր մը բովանդակ աշխարհի երեսին ցրված հայի բեկորներուն»⁵²:

Հատկանշական է, որ համաժողովի ավարտին սփյուռքահայությունը հանդես է գալիս միասնաբար՝ իր կոչն ուղղելով նաեւ Սփյուռքի հայկական համայնքներին: Համաժողովի մասնակիցները, կարեւորելով

⁵⁰ Տե՛ս ՀԱԱ ֆ. 875, ց. 9, գ. 40, թ. 4. նաեւ Վ. Ե. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ, Հայրենիքի պարգեւները սփյուռքահայ գործիչներին, Երեւան, 1984, էջ 19–20. նաեւ Հ. ՈՒՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ, նշվ. աշխ., էջ 441:

⁵¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 9, գ. 40, թ. 5:

⁵² Անդ, թ. 3:

հայրենիք-Սփյուռք ամուր կապերի պահպանումը, ուղերձն ավարտում են հետեւյալ տողերով. «...ամուր պահենք հայրենիքի եւ սփիւռքի միջեւ ստեղծուած կամուրջը, բոլոր միջոցներով նպաստենք հայրենիքի բարօրութեան ու խաղաղութեան, որովհետեւ անով է, որ պիտի գոյատեւէ սփիւռքահայութիւնը, եւ անով է որ պիտի իրականանան մեր ամենանուիրական երազները»⁵³:

Յավոք, հայրենիք-Սփյուռք համաժողովին իրենց մասնակցութիւնը չեն բերում սփյուռքահայութեան մեկ այլ հատվածի՝ ՀՅԴ-ին եւ Անթիլիասի Աթոռին ենթակա հասարակական-քաղաքական ու մշակութային կազմակերպութիւնների ներկայացուցիչները: Եւ սա բնական էր, քանի որ այդ ժամանակ խոր բաժանում կար Սփյուռքի հայկական համայնքների միջեւ: Գործում էին երկու հիմնական ազդեցութեան գոտիներ: Առաջին հատվածում կուսակցութիւններն ու նրանց ենթակա կազմակերպութիւններ էին, որոնք լավ հարաբերութիւններ ունեին Խորհրդային Հայաստանի հետ (այս թելը գլխավորում էին «Սոցիալ դեմոկրատ Հնչակեան» եւ «Ռամկավար ազատական» կուսակցութիւնները): Նրանք, որպէս հոգեւոր իշխանութեան, ընդունում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գերակայութիւնը: Երկրորդ հատվածն ուներ հակախորհրդային տրամադրվածութիւն. այս ուղղութեան ներկայացուցիչներն էին «Հայ յեղափոխական դաշնակցութիւն» կուսակցութեան ենթակա կազմակերպութիւններն ու միութիւնները, որոնք ընդունում էին Անթիլիասի Եկեղեցական Աթոռի գերակայութիւնը⁵⁴: Պետք է նշել, որ երկու թեւերն էլ մեծ աշխատանք էին տանում հայապահպանութեան գործը հավուր պատշաճի իրագործելու ուղղութեամբ, բայց, ցավոք, արհեստականորեն առաջացած խոր բաժանումը չէր թողնում, որ սփյուռքահայութիւնը հանդես գա միասնաբար եւ մշակի ընդհանուր գաղափարախոսութիւն:

Այսպէս, դեռեւս հայրենիք-Սփյուռք առաջին համաժողովի նախօրէին դաշնակցական «Յառաջ» թերթում լույս է տեսնում հոդված, որը քննադատական արձագանք էր համաժողովի կազմակերպչական աշխատանքներին, մասնակիցների ցանկին, համաժողովի «Սփյուռքահայութեան ներկայացուցիչների ժողով» խորագրին. վերջինը արհամարհանք էր դիտված Սփյուռքի հանդէպ, քանի որ «արտասահմանէն նշանակովի «կընտրւին» ծանօթ-անծանօթ «հասարակական գործիչներ»,

⁵³ «Նոր օր», Լոս Անջելես, 1980, դեկտեմբերի 23, թ. 90, էջ 4:

⁵⁴ Այս մասին տես Կ. Լ. ԴԱԼԼԱՔՅԱՆ, Հայ Սփյուռքի պատմութիւն (համառոտ ակնարկ), Երեւան, 2004:

որոնք, թերեւս, բան մը կը ներկայացնեն, բայց ամեն պարագայի մէջ՝ ոչ սփիւռքահայութիւնը»⁵⁵։ Արդեւ թերթի հաջորդ համարներից մեկում հոգւած է տպագրւում ժողովի հրավիրման նախապատրաստական աշխատանքների մասին, որից հետո կրկին քննադատական խոսքեր են հնչում, մասնավորապես՝ ժողովի անվան տակ Հայաստանի խորհրդայնացման 60-ամյակը նշելու քննադատութիւնը⁵⁶։

Թերթն իր հետագա համարներում լուսաբանում է համաժողովի աշխատանքների հրավիրումն ու անցկացումը, մասամբ կամ ամբողջութեամբ տպագրում է հասարակական-քաղաքական գործիչների ելույթները, իսկ ահա դեկտեմբերի 13–14-ի համարում տպագրւում է հոգւած՝ «Խորհրդածութիւններ ժողովի մը առթիւ» վերնագրով։ Այստեղ կրկին քննադատական անդրադարձ է կատարւում ժողովի ողջ ընթացքին, ինչպէս նաեւ այն «հատվածական քաղաքականութեանը», որ Խորհրդային Հայաստանն իրականացնում էր Սփյուռքի նկատմամբ։ Հատկապէս մեծ քննադատութեան է արժանանում համաժողովի մասնակիցների՝ Լ. Բրեժնեւին ուղղված երախտագիտութեան խոսքը, որը «ստրկամիտ» քայլ է որակւում է⁵⁷։

Այսպիսով՝ թեպետ սփյուռքահայութեան ոչ բոլոր շրջանակներն էին ընդգրկված համաժողովի աշխատանքներում, այնուամենայնիվ կարող ենք փաստել, որ նրա անցկացումը մի կարեւոր քայլ էր հայրենիք-Սփյուռք փոխգործակցության ամրապնդման ուղղութեամբ։ Համաժողովը հնարավորութիւն տվեց համախմբել աշխարհասփյուռ հայութեան մի հատվածին իրենց հայրենիքում եւ, որ ավելի կարեւոր է, նրանց միավորեց մեկ ընդհանուր գաղափարի շուրջ։

РЕЗЮМЕ

24-27 ноября 1980 года в Ереване, столице Армении, проводился первый всеармянский конгресс. Этот беспрецедентный съезд объединил более 100 представителей армянской диаспоры из более 30 стран мира. В конгрессе также участвовали Католикос Всех Армян Вазген I и другие представители духовенства. Участие Армянской Апостольской Церкви в конференции было

⁵⁵ «Յառաջ», Փարիզ, 1980, հոկտեմբերի 14, թ. 14.753, էջ 1։

⁵⁶ Անդ, նոյեմբերի 21, թ. 14.781, էջ 1։

⁵⁷ Անդ, դեկտեմբերի 13–14, թ. 14.798, էջ 1։


важным, так как на протяжении веков Церковь играла важную роль в сохранении армянской идентичности. После формирования армянской диаспоры, Армянская Апостольская Церковь успешно продолжала носить свою важнейшую функцию в армянских общинах в различных странах.

Проведение первого всеармянского конгресса стало важным шагом в укреплении взаимодействий и связей между Родиной и диаспорой, дала возможность собрать часть армян всего мира на своей родине, объединив их вокруг одной общей идеи. Съезд дал возможность поднять важные вопросы и проблемы диаспоры, нуждавшиеся в срочном разрешении. Успешность съезда подтвердили также слова благодарности, которые участники конференции писали в своих письмах.

SUMMARY

The first Pan-Armenian congress began its work in Yerevan on 24–27 November, 1980. This unprecedented event brought together more than 100 representatives of the Armenian Diaspora from more than 30 countries of the world. The Catholicos of All Armenians Vasken I and other Brotherhood members also participated in the congress. The participation of the Armenian Apostolic Church in the congress was important: for centuries, the Church had played an important role in preserving the Armenian identity. After the formation of the Armenian Diaspora, the Armenian Apostolic Church successfully continued her most important function in contributing to the Armenian communities in various countries.

The organization of the first Pan-Armenian congress with the Diaspora was an important step in strengthening the interaction and cooperation between the Homeland and the Diaspora, and managed to gather a part of the Armenians of the whole world in their Homeland, as well as to unite them around one common idea. The congress provided an opportunity to discuss important issues and problems that existed in the Diaspora and needed an urgent solution. The evidence of its success was those words of gratitude that the participants sent in their letters.



ԵԿԵՂԵՑԻ–ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՎԱՏՈՒԿ ԿՈՂՄԵՐԸ

Փ. Քհնյ. Առաքելեան, Եկեղեցի եւ ազգ. Եկեղեցի եւ պետութիւն: (Կրօն եւ
ազգ. Կրօնական կառոյց եւ պետութիւն) / Եր., «Աստղիկ» հրատ., 2019,
112 էջ:

Պետութիւն-կրօն-եկեղեցի հարաբերութիւնների բազմաբովանդակ եւ
բազմաբնույթ հարցերի, ինչպես նաեւ կրօն-ազգ հասկացութիւննե-
րի քննարկումը ենթադրում է հիմնահարցերի բավականին ընդարձակ
շրջանակ, որը Փ. քհն. Առաքելյանի սույն աշխատութեան մեջ, իր իսկ
խոստովանութեամբ, «Նիւթ է, որ... իր պարունակած հանգամանքնե-
րով կարեւոր լինելուց բացի նաեւ յոյժ տարողունակ է» (էջ 3): Հեղինա-
կը հիշյալ հիմնահարցերը դիտարկում է առաջին հերթին պատմական
զարգացման ետնախորքին՝ «Միայն մեր անցեալն ի մտի առնելուց յե-
տոյ, միայն մեր նախնիների պատկերացումներն ընկալելով ու համադ-
րելով...» (էջ 3), ինչը դիտարկելի է երկու տեսանկյունից՝ ներկայացվող
հիմնահարցերը քննարկվում են ժամանակների հոլովութիւնով, եւ ժամա-
նակակից հիմնախնդիրների համապատկերում առաջարկվում են արդեն
իսկ պատմականորեն ձեւավորված լուծումներ:

Անշուշտ, սույն աշխատութեան ծավալն առաջին հայացքից արդեն
ենթադրում է պետութիւն-կրօն-եկեղեցի հարաբերութիւնների բոլոր
կողմերի հպանցիկ եւ ոչ լիարժեք ուսումնասիրութիւն, քանի որ քննարկ-
վող հիմնահարցերը՝ իրենց ողջ բազմազանութեամբ, հասարակագիտա-
կան լայն շրջանակների համար խորքային, ամբողջական եւ երկարատեւ
հետազոտութիւնների կամ ուսումնասիրութիւնների առարկա են: Եւ
ընդհանրապես կրօն-պետութիւն բազմաբնույթ փոխհարաբերութիւն-
ների ուսումնասիրութիւնը, որպես կանոն, տարբեր գիտաճյուղերում
հիմնվում է փաստական հարուստ նյութի վրա, եւ հետազոտողի համար
խիստ կարեւոր է հասկանալ, թե հարկապես որ կրօնի, երկրի, պետական

համակարգի մասին է խոսքը, եւ հասարակական հարաբերությունների զարգացման որ շրջանին է վերաբերում: Առաջին հերթին պետք է կարեւորել նաեւ այն հանգամանքը, որ կրոնն ու պետությունը հասարակական երեւոյթներ են եւ որպէս կանոն ձեւավորվում եւ զարգանում են փոխադարձ ներգործությունների, փոխազդեցությունների պայմաններում: Հասարակական կյանքում կրոնական գիտակցության գերակայության պայմաններում էլ պատմականորեն ձեւավորվել են հասարակական, քաղաքական, բարոյական, մշակութային, ամուսնաընտանեկան եւ այլ արժեքներ ու չափանիշներ: Ներկայացվող աշխատությունն առաջին հերթին պետք է կարեւորենք հայ իրականությանը բնորոշ վերոհիշյալ տարատեսակ արժեքների վերհանման եւ դրանց գնահատման տեսանկյունից: Բնականաբար՝ այս առումով լիովին արդարացված են հեղինակի մոտեցումները՝ «... հայրենի եւ սեփական, հարազատ գիտելիքների ու գաղափարների, սովորութիւնների ու ավանդոյթների ուսումնասիրութիւնը» (էջ 3—4):

Պատմական Հայաստանում քաղաքական եւ հոգեւոր-կրոնական իշխանությունների զարգացման պատմության ուսումնասիրությունն ի հայտ է բերում որոշակի օրինաչափություններ, որոնք առաջացել եւ զարգացում են ապրել դեռեւս նախաքրիստոնեական Հայաստանում, իսկ այնուհետեւ ավելի համակարգված եւ ամբողջական տեսք ստացել քրիստոնեության ընդունումից հետո: Այս տեսանկյունից է Փ. քհն. Առաքելյանը դիտարկում կրոն — ազգ — կրոնական կառույց — պետություն «...յարաբերութիւնների սկզբնական վիճակը... անյիշելի ժամանակներում» (էջ 5): Իհարկե՝ անհիշելի կամ վաղանջական ժամանակների վերաբերյալ մոտեցումները պետք է ընկալենք որոշակի վերապահությամբ, որովհետեւ այդ շրջանում (իմա՝ նախադարյան հասարակությունում) «ազգ», «պետություն» եւ «կրոն» հասկացությունները կիրառել որպէս արդեն աներկբայորեն գոյություն ունեցող իրողություններ գիտականորեն հիմնավորված չէ: Սակայն, մյուս կողմից, հաշվի առնելով այն, որ Մովսէս Խորենացու Պատմության նմանությամբ հեղինակը «Կրօն եւ Ազգ», «Կրօնական կառույց եւ Պետութիւն» հարաբերությունների համար ելակետ է ընդունում հետջրհեղեղյան Հայաստանը (իհարկե՝ պայմանականորեն Հայաստան) եւ ամեն ինչ սկսում Նոյ նահապետի ժամանակներից, ապա հասկանալի է, որ անհիշելի ժամանակներ ասվածն այս դեպքում ունի որոշ կիրառություն եւ վերաբերում է Խորենացու հիշատակած նահապետական դարաշրջանին:

Ամենայն մանրամասնությամբ անդրադառնալով Նոյի քաղղեական, շումերական ու աքքադական տարբերակներին, դրանց վերաբերյալ տարբեր սկզբնաղբյուրների հիշատակություններին՝ հեղինակը ուշադրությունը սեւեռում է այն կարեւոր հանգամանքին, որ Նոյը հանդես է գալիս «իբրեւ հոգեւոր եւ աշխարհիկ առաջնորդ» միաժամանակ, որ «յետշրհեղեղեան շրջանում հոգեւոր եւ աշխարհիկ իշխանութիւնը եղել է միեւնոյն անձի՝ Նոյ Նահապետի ձեռքում» (էջ 8—9): Արդյունքում արդեն իսկ տրվում է նահապետական ժամանակաշրջանի համար այն կարեւոր եզրահանգումը, որ միեւնոյն անձը հանդիսանում էր տվյալ հասարակության հոգեւոր եւ աշխարհիկ առաջնորդը միաժամանակ: Ակնհայտ է, որ հեղինակը հանրահայտ եւ գիտականորեն ընդունելի այն տեսակետով է առաջնորդվում, որ հնագույն ժամանակներում հասարակական կյանքում կրոնականն ու աշխարհիկը դեռեւս տարանջատված չեն, հասարակական գիտակցությունը միաժամանակ է՛լ կրոնական է, է՛լ աշխարհիկ, ուստի հոգեւոր եւ քաղաքական առաջնորդի դերում իրոք հանդես էր գալիս միեւնոյն մարդը՝ տարբեր ժամանակաշրջաններին բնորոշ իր դրսեւորումներով՝ տոհմի առաջնորդ, կախարդ, քուրմ, շաման, նահապետ, մարգարե եւ այլն: Ըստ այդմ էլ հոգեւոր եւ աշխարհիկ առաջնորդներ են ընկալվում նաեւ Խորենացու թված նահապետները, որոնց կրոնական պատկերացումների մասին յուրատեսակ հարցադրումներով («...նահապետները միակ Աստծուն էին հաւատում, թէ՛ հեթանոս էին» (էջ 11) հեղինակը քննարկում է հայոց նախնիների կրոնական պատկանելությունը եւ կասկածի տակ դնում դասագրքային ճշմարտությունները հին հայերի բազմաստվածության վերաբերյալ: Այստեղ հարկ է նշել, որ այս եւ հետագա նմանատիպ հարցադրումներում զգացվում է հեղինակի երբեմն ակնհայտ, երբեմն էլ թաքուն ձգտումը հին հայոց միջավայրում հնարավորինս շոշափելի դարձնելու քրիստոնեական արժեհամակարգին հարիր իրողությունների գոյությունը եւ մերժելու հին հայերի հեթանոսական (քրիստոնեությանը խորթ) վարքի՝ բազմաստվածությանը բնորոշ բացասական երեւույթները: Անշուշտ, այս դեպքում հեղինակային այս մղումները հայրենասիրական զգացմունքներին եւ քրիստոնեական արժեքներին հարազատ մնալու միտվածություն ունեն, սակայն ակնհայտ է նաեւ այն, որ կիրառվում են կրոնագիտության մեջ արդեն ԺԸ.—ԺԹ. դարերում գիտական շրջանառության մեջ դրված՝ կրոնի ծագման պրամոնոթեիստական տեսությանը բնորոշ գաղափարներ, որոնցից է օրինակ

այն, որ գոյություն ունեցող հնագույն հավատալիքների բազմազանությունն ետեւում միակ Արարիչ Աստծու մասին հավատն է, որը նախորդել կրոնի բոլոր ձեւերին, եւ որին հետագայում միախառնվել են մտացածին եւ աղավաղված տարրեր:

Փ. քհն. Առաքելյանը մարդկության պատմության վաղնջական շրջանին բնորոշ առասպելավիպական աշխարհընկալման առանձնահատկություններից բխող ընդհանուր օրինաչափությունների շրջանակում տալիս է նահապետ-հերոսների վերաբերյալ տարբեր ժողովուրդների կրոնադիցաբանական պատկերացումներին առանձնատուկ առասպելների, ավանդությունների, վիպերգերի ընդհանուր պատկերը՝ անդրադառնալով տարբեր սկզբնաղբյուրների եւ ուսումնասիրությունների: Երբեմն հպանցիկ, երբեմն էլ ամբողջական անդրադարձ է կատարվում Սատուրնի մասին վիրգիլիոսյան հիշատակությանը, այնուհետեւ «Պտույտների գրքի» վկայություններին, ինչպես նաեւ անգլիական հետազոտող Ռոբերտ Հլլիսի էտրուսկների, լիդիացիների եւ հայերի ընդհանրություններին վերաբերող ուսումնասիրություններին, որոնցում ակնհայտ են հնագույն ժողովուրդների աշխարհընկալումներում մարդկանց գիտելիքներ, դպրություն եւ քաղաքակրթություն շնորհող հերոսի մասին ընդհանրական պատկերացումները, որոնք թույլ են տալիս հեղինակին դրանց նախատիպերին կամ որոշակի հերոսներին համարել նույնական կամ ուղղակի նույնը: Այդպիսի ընդհանրությունների համապատկերում են դիտարկվում փյունիկեցի Կադմոսը եւ Հայկի թոռ Կադմոսը, Հարմոնիան (Արմենիա անունով եւս հանդես եկող), Հերմեսը եւ այլք:

Այնուհետեւ Նոյ նահապետի մասին Հնգամատյանի, «Յոբելենից» գրքի հիշատակությունների քննական վերլուծությամբ փաստվում է, որ մարդկության բնօրրան Հայքն է տարատեսակ գիտելիքների, այդ թվում նաեւ աստվածային գիտելիքների տարածման կենտրոնը: Նոյից փոխանցված այդ գիտելիքներն են հետագայում դարձել քաղաքակրթությունների հիմքը, ինչպես նաեւ, պրամոնոթեիզմի գաղափարներին համահունչ, Նոյից իր սերունդներին, այդ թվում նաեւ Հայկին է փոխանցվել միակ Աստծու մասին ուսմունքը: Արդյունքում հեղինակը առաջ է քաշում եւս մեկ համարձակ գաղափար (իհարկե ոչ առաջինը, ինքը՝ հեղինակն է նշում, որ այդ մոտեցումներն ունեն Միսիթարյան հայրերը), որ Հայկը եւ իր սերունդները ոչ թե հեթանոս են եղել, այլ պահպանել էին «Նախապապի պաշտամունքը», ավելին՝ նաեւ լեզուն (էջ 20): Ակնհայտ է, որ

հեղինակի համար ելակետ են դարձել Հայկ նահապետի վերաբերյալ հետևյալ սկզբունքային մոտեցումները. Հայկը պատմական անձ է, Հայոց աշխարհի նահապետը եւ անվանադիր նախնին, նրա մասին ավանդույթյունը պատմական հիմքեր ունի: Ընդհանրապես ավելորդ չէ նշել, որ Հայկի մասին մեր պատմիչների ավանդած զրույցները եւ դրանց հեղինակային վերլուծությունները դարեր շարունակ կրթել եւ դաստիարակել են սերունդներ՝ Հայկին դարձնելով ամենասիրելի հերոսներից մեկը: Հայ մատենագրական ժառանգության եւ վերլուծական գրականության համադրմամբ Փ. քհն. Առաքելյանը վեր է հանում Հայկի ավանդազրույցի քրիստոնեական աշխարհընկալման առանձնահատկությունները եւ շեշտում դրանց կրթադաստիարակչական նշանակությունը: Սակայն պետք է փաստենք, որ ժամանակակից գիտության մեջ, այնուամենայնիվ, գերակայող է այն, որ Հայկի ավանդազրույցն առասպել է, եւ դրանում արտացոլված են հայ-ասորական հակամարտության ժամանակաշրջանի կրոնադիցաբանական պատկերացումները, եւ Հայկը, լինելով հայոց գերագույն աստվածը, մարտնչում է ասորական Բել աստծու դեմ եւ հաղթանակ տանում: Այս մասին ակնարկում է նաեւ հեղինակը՝ իր անհամաձայնությունը հայտնելով այս «դասագրքային» ճշմարտությանը, սակայն պետք է փաստենք, որ Հայկի կերպարն ամբողջությամբ տեղավորվում է դիցաբանական խորհրդանշաններով եւ որոշակի գործառույթներով օժտված աստվածության, ինչպես նաեւ մշակութային հերոսի բնութագրական սահմանումների մեջ: Հեղինակն իրավացի է, երբ անդրադառնում է դեռեւս հնագույն ժամանակներից հայտնի եւհեմերական եղանակով դիցաբանական կերպարների մեկնաբանությանը եւ ցույց տալիս, որ հնագույն ժամանակների հայտնի գործիչների աստվածացումը հին աշխարհին բնորոշ օրինաչափ երեւույթ է, սակայն թերեւս ավելորդ չէ նշել, որ այս մոտեցումը վերջնական չէ, եւ դիցաբանական ընդհանրական օրինաչափությունները միայն դրանով պայմանավորելը այնքան էլ ընդունելի չէ: Այստեղ հաշվի չեն առնվում առասպելաբանության, դիցաբանական երեւակայության, դիցաբանական մտածողության, դիցաբանական գիտակցության, դիցաբանական այլ օրինաչափությունների ձեւավորման առանձնահատկությունները, եւ դիցաբանությունը չի դիտարկվում իբրեւ աշխարհայացք, աշխարհընկալման եւ հոգեւոր մշակույթի յուրատեսակ ձեւ: Անշուշտ հնագույն դիցաբանական մտածողությանը բնութագրական է նախնիների զարգացած պաշտամունքը, եւ

հայոց հեթանոսական աստվածությունները կարող են դիտարկվել իբրեւ նաեւ աստվածացված նախնիներ (Փ. քհն. Առաքելյանը, տարբեր հեղինակների վկայակոչելով, այդպիսիք է համարում Հայկին, Վահագնին, Բարշամին, Անահիտին), սակայն դիցաբանական աստծու գործառույթներն ու հատկանիշներն ընդգրկում են կրոնադիցաբանական տարբեր երեւույթների ավելի լայն շրջանակ՝ ամփոփելով տիեզերածնական, գոյաբանական, իմացաբանական, աշխարհայացքային պատկերացումներ եւ տարրեր: Հեղինակն ինքն էլ է նշում, որ ի դեմս Վահագնի՝ «միանշանակ գործ ունենք դիցարանի ներկայացուցիչներից մէկի հետ» (էջ 25), սակայն միաժամանակ իրավացի է, երբ Խորենացու դիցաբանական Վահագնին տարբերակում է պատմական անձ Վահագնից՝ «Պատմահօր այս հատուածը» ընդունելով «իբրեւ իր իսկ բառով՝ ճշմարտագոյն» (էջ 26): «Հարցի համապարփակ քննութիւնը երկար եւ յոյժ ծաւալուն նկատելով հանդերձ»՝ հեղինակը եւս մեկ անգամ հայերի հեթանոս եւ բազմաստվածային լինելու գաղափարը դիտարկում է հայոց հեթանոսական աստվածներին նվիրված տաճարային պաշտամունքի, զոհ մատուցելու ետնախորքին՝ հատկապէս շեշտելով այն կարեւոր հանգամանքը, որ բազիններ կանգնեցվում էին նաեւ շարքային մահկանացու հերոսների պատվին (Մաժանի), ինչն ուղղակի հնադարյան նախնիների պաշտամունքի ցայտուն դրսեւորումներից է, եւ որի մասին բազմաթիվ հիշատակություններ են պահպանվել հայ իրականության մեջ: Եւ նախնիների «աստուածացեալ լինելու հանգամանքը», հեղինակի կարծիքով, թերեւս, ոչ թէ պէտք է հասկանանք «Աստուած դառնալու», այլ Հայկազեան բառարանի՝ «աստուածալան է՝ առ Աստուած նմանութիւն» ձեւակերպմամբ:

Հայոց հեթանոսական հավատալիքների եւ սովորությունների մնացուկների, վերապրուկների եւ քրիստոնեություն ներթափանցման մասին որոշակի անդրադարձից հետո Փ. քհն. Առաքելյանն ի վերջո նորից կանգ է առնում իր համար ելակետային այն հիմնադրույթի վրա, որ Նոյից իր սերունդներին փոխանցած «աստուածգիտութիւնը», պաշտամունքը եւ ծեսերը հասել են հայոց քրմերին, որոնք այն պահել-պահպանել են «մեծագոյն խնամքով եւ երկիւղածութեամբ» (էջ 35): Փաստացի եզրահանգումը մեկն է՝ «Նոյն իր զաւակներին ուսուցանեց սրբազան աստուածգիտութիւնը, ծանօթացրեց նաեւ հոգեւոր պաշտամունքի եւ սուրբ ողջակէզի արարողութեանը, եւ հայերն այս ամենը պահեցին... մենք պահել ենք հայրենի լեզուն, մեր նահապետների պաշտամունքը եւ անգամ

պետականութիւնը կորցնելով՝ կառչած ենք մնացել մեր հողին, իսկ հայրենի հողը, պատմական հաւատքն ու մայրենի լեզուն մեզ պահել են իբրեւ ազգ» (էջ 36): Եւ ազգային պետականութեան կորստյան պայմաններում մնաց միայն Եկեղեցին, «որ իր հոգեւոր օրէնքներով ու կանոններով, դպրոցներով ու կրթութեամբ հային հայ պահեց եւ Հայքը Հայաստան» (էջ 37):

Հայոց վաղնջական ժամանակների ահա այսպիսի անդրադարձից հետո Փ. քհն. Առաքելյանն անցում է կատարում «Ազգային կրօն — Ազգային Եկեղեցի, Հայ ազգ, Հայ Եկեղեցի» հասկացութիւնների քննարկմանը: Ինչպես եւ նախորդ գլխում, այստեղ եւս հեղինակը հիմնականում առաջնորդվում է ազգայինն ու եկեղեցականը շեշտադրելու եւ կարեւորելու դիրքերից՝ առաջնայնութիւնը տալով հայ իրականութեան մեջ քրիստոնեական արժեքների տարածման եւ ամրապնդման մասին տարբեր մոտեցումների եւ պատկերացումների վերլուծութեանը: Իբրեւ ազգային դաստիարակութեան բնորոշ օրինակ՝ ներկայացվում են Գրիգոր Տաթեւացու խոսքերը. չորս Ավետարանների նմանութեամբ եպիսկոպոսական համաշխարհային աթոռների հիմնադրման, իսկ հետագայում, Հայոց լուսավորիչ եւ մեծ նահատակ Սուրբ Գրիգոր սիրույն էջմիածնի Աթոռի հաստատումը՝ այն դասելով Եկեղեցու յոթ սյուների շարքը: Եւ դիպուկ են օգտագործվում Տաթեւացու այն խոսքերը, որ եթե հայերը նույնիսկ ուշ են հավատացել, ապա «...սա նախատինք չէ մեր հասցէին, որովհետեւ հեթանոսները յետոյ հաւատացին, բայց եւ լաւագոյն են, քան հրէաները, ինչպէս եւ վերջին մշակներն առաջինների հետ առան վարձքը, իսկ ուրքեր նախանձեցին՝ կործանուեցին» (էջ 39): Իսկ հայերն իրականում, ի դեմս Աբգար արքայի, առաջիններից մեկն են հավատացել Քրիստոսին եւ առաջիններից մեկն էլ արժանացել Նրա աշակերտների առաքելական գործունեութեանը՝ արդյունքում արժանանալով Սուրբ Գեղարդն ու Օծման Յուզն ունենալու շնորհին: Հեղինակն իրավացի է, երբ հայի էութեան անբաժան մասն է համարում կրոնը, եւ ինչպես որ անկարելի է համարում Հայոց պատմութիւնը Հայոց Եկեղեցու պատմութիւնից տարանջատելը, այնպես եւ անքակտելի է համարում «Հայրենիքն ու Հայ Եկեղեցին» (էջ 41)՝ վեր հանելով հավերժ արդիական այն պնդումը, որ հայի էութիւնը քրիստոնեական էութիւն է:

Այդ ամենի տրամաբանական շարունակութիւնն են աշխատութեան հետագա շարադրանքում Ազգ եւ Եկեղեցի միասնութիւնը ելակետ

ընդունելը եւ Հայոց պատմութիւնն ու Հայոց Եկեղեցու պատմութիւնը մեկ ամբողջութիւն դիտարկելը: Եւ իրավամբ՝ Հայոց Եկեղեցին շատ ավելին է հայ ժողովրդի կյանքում, քան լոկ կրոնական կառույցը, այն «...երբեք չի սահմանափակուել զուտ կրօնական շրջանակներում եւ մշտապէս եղել է ազգային նկարագիրն ամբողջացնող բոլոր բաղադրիչների պաշտպանը՝ լինի լեզու, լինի մշակոյթ կամ աւանդոյթ» (էջ 43): Եւ միանգամայն տեղին է հեղինակի դիտարկումը, որ Հայոց Եկեղեցին հոգեւոր ասպարեզում այն ամբողջութիւնն էր, որ «...հայութեանը զերծ պահեց ձուլումից՝ լեզուով, մշակոյթով, կրօնով տարրալուծուելու վտանգից» (էջ 43):

Քննարկելով Հայոց Եկեղեցու առնչութեամբ հնչող «Ազգային Եկեղեցի» բնորոշումը եւ Ազգ—Եկեղեցի—Ազգ—Կրոն հարաբերակցութիւնը՝ հեղինակը շեշտում է դարերի հոլովոյթում ձեւավորված «հայադավան» եզրը, որն իրոք հային եւ դավանանքը նույնականացնող, Հայոց Եկեղեցու հետեւորդին բնորոշող եւ հայի էթնոկրոնական բնութագիրը ներկայացնող կարեւոր հասկացութիւններից մեկն է: Այս առումով բավականին արժեքավոր են «ո՛վ է հայը», «ո՛ւմ կարելի է հայ անուանել», այլ դավանանքի կրողը «կարող է եւ պէտք է հայ համարուի, թէ՛ ո՛չ» հարցադրումների վերաբերյալ հեղինակային դատողութիւններն ու եզրահանգումները: Անհնար է չհամաձայնել այն դիտարկմանը, որ յուրաքանչյուր ազգ օժտված է առավել կարեւոր եւ բնորոշ գծերով, որոնք դառնում են տվյալ ազգութեան ընդհանուր չափանիշը, եւ որից շեղումն էլ կարող է ընկալվել որպէս ոչ օրինաչափ երեւոյթ, ինչպէս օրինակ՝ հեղինակի ներկայացրած «քրիստոնյա արաբ» կամ «մահմեդական վրացի» հասկացութիւններն են:

Հայ ժողովրդին ողջ պատմութեան ընթացքում ուղեկցած կրոնափոխութեան կամ դավանաբանութեան խնդիրը եւս քննարկվում է ազգ—կրոն հարաբերութիւնների համապատկերում: Որպէս օրինակ անդրադառնալով դեռեւս անցած դարասկզբին իսլամադավան եւ քրիստոնյա վրացիների ինքնութեան վերաբերյալ վրացական եւ թուրքական շրջանակներում ծավալված բանավեճին՝ Փ. քհն. Առաքելյանը համաձայնում է հայ հոգւածագրի այն կարծիքին, որ յուրաքանչյուրն ինքն է որոշում իր ազգային պատկանելութիւնը: Եւ, իրոք, արդիական այս խնդրի ժամանակակից լուծումներն էլ առաջարկում են մարդու ազգային եւ կրոնական ինքնութեան որոշումը թողնել իրեն՝ հատկապէս հաշվի առնելով համաշխարհայնացման արդի միտումներն ու խառնամուսնութիւնների

դրսեւորումները: Սակայն ոչ հեռավոր պատմական անցյալում հայի վտանգված ազգային ինքնության պայմաններում, երբ Օսմանյան կայսրությունում հայերի կրոնափոխությունը դարձել էր պատուհաս եւ չարիք, ժամանակակից մոտեցումներն ու պատկերացումները բնականաբար չկային, եւ Հայոց Եկեղեցուց հեռացած հայերը ոչ միայն հայերի, այլեւ օտարների տեսանկյունից արդեն կորցրել էին «... ազգային դիմաստուները, ազգութիւնը, որովհետեւ որեւէ ազգութիւն մատնանշելիս այն առանձնանում է մնացեալներից իր բնորոշ յատկանիշներով, ուր բաղադրիչներից որեւէ մէկի կորուստը վաղ թէ ուշ յանգեցնում է ձուլման» (էջ 50): Ուստի եւս մեկ անգամ հիշելով ազգային ինքնության խնդրին Գրիգոր Տաթեւացու անդրադարձը՝ հեղինակն իր անհամաձայնությունն է հայտնում ժամանակակից հետազոտողների այն մտքին, թե Տաթեւացու եւ հայ հոգեւորականների դատողությունները հայերի էթնոկրոնական ինքնության եւ Հայոց Եկեղեցու դավանանքից ու ավանդությունից հեռացմամբ հայ ինքնության կորստյան մասին ծայրահեղական են: Իրականում դարեր շարունակ հենց կրոնական պատկանելությունն է դարձել նաեւ ազգային ինքնության հիմք, եւ այս հարցում հեղինակային դիտարկումները լիովին ընդունելի են, քանի որ, ինչպես պատմությունն է ցույց տվել, օտար միջավայրում հայերի ուժացումը լիակատար էր դառնում, երբ հայը հեռանում էր իր Եկեղեցուց ու դավանանքից: Այս մոտեցմամբ էլ հեղինակը կարեւորում է «ազգի» այն սահմանումը, որը «հիմնուած է լեզուի—կրօնի—մշակոյթի պատմական միասնութեան վրայ, ուր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերն անուրանալի է բոլոր երեք բաղադրիչների պարագային» (էջ 53):

Հաջորդիվ Փ. քհն. Առաքելյանը քննարկում է կրոնական կառույց—պետություն փոխհարաբերությունները եւ առաջին հերթին անդրադառնում հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների բաժանման պատմությանը: Սկսելով մարդկության պատմության վաղ շրջանից՝ գալիս հասնում է հոգեւորի եւ աշխարհիկ բաժանման փիլիսոփայական եւ աշխարհայացքային հայեցակարգերի մշակման շրջանին՝ հիշատակելով դրա ջատագով մի շարք փիլիսոփաների ու գործիչների: Անշուշտ, «Եկեղեցին անջատ է պետությունից» հայեցակարգի ձեւավորումը երկարատեւ զարգացում ապրած պատմական իրողություն է, որը հիմնականում քրիստոնեական հասարակություններին է բնորոշ, սակայն հեղինակը նախ երեւույթը չի անվանում առավել տարածված «աշխարհիկացում» (սեկուլյարիզացիա)

եզրով, եւ երկրորդ՝ վեր չի հանում ընկերային, հոգեբանական, տնտեսական, հոգեւոր-մշակութային, գիտական եւ այլ նախադրյալներ, որոնք պատճառ դարձան արեւմտյան քաղաքակրթության՝ կրոնի եւ կրոնականի նկատմամբ ձեւավորվող վերաբերմունքի առաջացման: Եւ այսօր էլ մասնագիտական շրջանակներում բանավեճի առարկա են սեկուլյարիզացիա եւ սակրալիզացիա հասկացությունների պատմական ընթացքը եւ առանձնահատուկ դրսեւորումները տարբեր հասարակություններում: Հեղինակը տվյալ դեպքում հոգեւորի եւ աշխարհիկի հարաբերությունները քննելիս առաջին հերթին հպանցիկ անդրադառնում է «Եկեղեցի—Պետութիւն» գործակցության հայկական փորձին՝ որպէս օրինակ նշելով Գրիգոր Լուսավորչի եւ Տրդատ Մեծի «համախորհուրդ եւ միասնական լինել»-ը: Սա, անշուշտ, լավագույն օրինակներից մեկն է պատմական Հայաստանում Պետություն—Եկեղեցի փոխհարաբերությունների բավականին զարգացած եւ համակարգված բնույթը ներկայացնելու համար, երբ հստակ էր իշխանական թեւերի եւ գործառույթների բաժանումը, եւ Եկեղեցին՝ իբրեւ պետական կառույց, ուներ արտոնություններ, հարկահավաք գործառույթ, նրա ձեռքում էր նաեւ դատաիրավական համակարգի կառավարումը: Այս պայմաններում հայոց պետականությունը հիմնականում շահեկան դիրքում էր հայտնվում, երբ հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների հարաբերությունները գտնվում էին փոխադարձ բարիդրացիական եւ համագործակցության մակարդակում, եւ հակառակը, եթե խախտվում էր վերոհիշյալ համագործակցությունը, ապա տուժում էին պետական բոլոր կառույցները, ասել է թե՛ ողջ պետությունը:

Այնուհետեւ հեղինակն անդրադառնում է Եկեղեցի—Պետություն հարաբերությունների միջազգային փորձին եւ քննարկում Կաթոլիկ Եկեղեցու օրինակը, երբ Վատիկանը փաստացի անկախացավ, սակայն չի մանրամասնում Կաթոլիկ Եկեղեցու առանձնահատկությունները, օրինակ՝ այն, որ Վատիկանն այսօր միակ թեոկրատական պետությունն է քրիստոնյա աշխարհում, եւ մյուս պետություններում Կաթոլիկ Եկեղեցին հանդես է գալիս առանձնահատուկ կառույցի տեսքով: Շարունակելով խնդրո առարկա հարցերի քննարկումը՝ հեղինակն անդրադարձ է կատարում պետություն—կրոն փոխհարաբերությունների իրավական կարգավորումներին եւ տարբեր երկրների (օրինակ՝ ՌԴ) օրենսդրություններին: Ներկայացվում են կրոնի ոլորտին առնչվող հիմնական սկզբունքներն ու իրավունքի նորմերը (խղճի ազատություն, դավանանքի

ազատություն, իրավահավասարություն, այլընտրանքային զինծառայություն եւ այլն): Ներկայացվում են նաեւ քննարկվող հիմնահարցին առնչվող օտար հեղինակների եւ գործիչների տարատեսակ հակասական եւ մերժելի տեսակետներ, իսկ որպես ամփոփում եւ վերջնական եզրահանգում՝ հեղինակը «յոժ կարելոր է» համարում Եկեղեցի—Պետություն համաժողովը եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը, ըստ որի՝ Հայոց Եկեղեցին, պետականության բացակայության պայմաններում առաջնորդելով ժողովրդին, արթուն է պահել պետականության վերականգնման գիտակցությունը եւ պայքարել դրա համար: Եւ «Եկեղեցու հոգեփրկչական առաքելութեան առանցքում հագեւոր-բարոյական արժէհամակարգով անձի կերտումն է՝ ազգի հաւատաւոր, հայրենասէր, օրինապահ զաւակի կրթութիւնն ու դաստիարակարումը, ինչը նաեւ պետութեան առաջնահերթութիւնն է քաղաքացու ձեւաւորման պատասխանատու գործում»:

Այս առումով մեծապէս կարելոր է Պետութեան եւ Եկեղեցու համագործակցութիւնը՝ թելադրուած ազգային մեր շահերով ու գերակայութիւններով, մեր ազգային ինքնութիւնը, ոգին, նկարագիրը պահպանելու հրամայականով: Եւ «Աշխարհիկ պետութիւն հասկացութիւնը չի կրում հակակեղեցական կամ ապակրօնական տարր եւ չի բացառում Պետութեան եւ Եկեղեցու գործակցութիւնը ու չի խոչընդոտում դրա իրականացմանը կեանքի զանազան ոլորտներում» (էջ 62—63):

Քննարկվող սույն աշխատության հիմնական հատվածը կարելի է համարել «Եկեղեցի եւ Ազգ» խորագրով բաժինը: Այստեղ հեղինակն առավել հետեւողականորեն է ներկայացնում իր համար ելակետային համարվող եկեղեցի—ազգ միասնության գաղափարը, ազգ—քրիստոնեություն համագործակցությունը եւ ազգային եկեղեցի — ազգ սերտ կապի դրսեւորումները հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտներում: Ընդունելով քրիստոնեական եկեղեցու տիեզերական բնույթը՝ միաժամանակ շեշտվում է այն կարելոր հանգամանքը, որ Եկեղեցին էթնիկական որոշակի միջավայրում նաեւ ձեռք է բերում ազգային դիմագիծ: Եկեղեցին դառնում է ազգային հարուստ մշակույթի ստեղծող եւ կրող, ազգային արժեքների կրող եւ քարոզող, ներկա է հասարակական կյանքում իր «կանոններով, ծէսերով, տօներով, խորհուրդներով եւ ճակատագրական պահերին իր աշխոյժ գործունեութեամբ» (էջ 65) եւ ամբողջությամբ դառնում է ազգային կառույց:

Փ. քհն. Առաքելյանը Եկեղեցու ազգային բնույթի եւ հայ ժողովրդի հետ սերտ կապի լավագույն ապացույցներից է համարում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության եւ օծման կանոնը՝ իրավացիորեն շեշտելով կաթողիկոսի ընտրության ժողովրդական բնույթը, համահայկական նշանակությունը եւ ազգընտիր լինելը: Եւ տեղին է նաեւ Մաղաքիա արք. Օրմանյանի՝ Եկեղեցի—ազգ փոխհարաբերությունների վերաբերյալ մոտեցումներին անդրադարձը, ուր հատկապես շեշտված են Եկեղեցու ազգապահպան, միավորիչ գործառույթները եւ պայքարը զրադաշտականության, իսլամի եւ ավելի ուշ նաեւ կաթոլիկության պարտադրանքի դեմ: Օրմանյանի գնահատականները Եկեղեցու մասին ամբողջանում են նաեւ այլ հեղինակների արտահայտած նմանատիպ կարծիքներով, որոնցում եւս հատկապես շեշտադրվում են Եկեղեցու ազգապահպան, միավորիչ եւ հոգեւոր-մշակութային գործառույթները:

Եկեղեցի—ազգ—ժողովուրդ սերտ կապի հետագա ապացույցները հեղինակը ներկայացնում է «Կանոնագիրք Հայոց»-ում պահպանված կանոնների քննական վերլուծությամբ, կանոններ, որոնք ընդգրկում են հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտներ եւ վերաբերում են հայ ժողովրդին ուղեկցող բազմազան եւ բազմաբնույթ խնդիրների: Եւ հասարակական կյանքի կրոնական կանոնականացումն էլ դարեր շարունակ իր ցույց է դնում Եկեղեցու՝ իրավամբ կարեւորագույն առաքելությունը հայ ժողովրդի կյանքում: Կանոնների մի մասը որոշակի արգելքների տեսքով վերաբերում է Եկեղեցի—մարդ կապի կարգավորմանը, հեթանոսական հավատալիքներից, հեթանոսներից եւ այլակրոն ու այլադավան հավատացյալներից հեռու մնալուն, որոնք, ըստ հեղինակի, ուսուցողական են նաեւ մեր ժամանակների համար: Այդպիսի արգելքների թվին են դասվում հերձվածողի հետ հաղորդվելը, հրեաների ժողովարանում աղոթելը, այլազգի հոգեւորականից օրհնություն ստանալը, այլազգիների հետ աղոթելը, խնամիական կապերի հաստատումը եւ այլն: Եւ առաջին հայացքից երբեմն ծայրահեղ թվացող այս կանոնները մեկ նպատակ են հետապնդել՝ թույլ չտալ հայ ազգային-կրոնական ինքնության կորուստ եւ ուծացում:

Հայոց Եկեղեցու գործունեության ընթացքում ձեւավորված կանոններից հեղինակն առանձնացնում է նաեւ այնպիսիք, որոնք վերաբերում են հավատացյալ—հոգեւորական հարաբերություններին, հոգեւորականների նկատմամբ վերաբերմունքին, Եկեղեցու դերակատարությանը եւ


հասարակական կյանքում տարբեր գործառույթների իրականացմանը (միայն Եկեղեցում ժողովների գումարումը եւ խորհուրդների կատարումը, Եկեղեցու խնամակալ, պահապան, հոգեւոր-կրթական գործունեությունը, հոգեւոր բժշկությունը, հոգեւոր պահանջմունքների բավարարումը, մխիթարություն տալը, դատաիրավական եւ հասարակական կյանքի այլ ոլորտների կարգավորումը): Անշուշտ, Եկեղեցու այս բազմաբնույթ գործունեությունը կարգավորող կանոններին անդրադառնալն ինքնանպատակ չէ, եւ դրանց մեծ մասը ուսանելի եւ կիրառելի է նաեւ ժամանակակից հասարակական կյանքում, եւ ակնհայտ է, որ հեղինակը դրանք մանրամասնորեն ներկայացնում է՝ եւս մեկ անգամ շեշտելու Եկեղեցու կարեւորությունը եւ դերակատարությունը հայ ժողովրդի ազգային կյանքում:

Փ. քհն. Առաքելյանն աշխատությունը ամփոփում է Եկեղեցի—Պետություն հարաբերությունների քննական վերլուծությամբ՝ հիմնականում նպատակ ունենալով քննարկել «Եկեղեցին անջատ է պետությունից» հայեցակարգը մի քանի տեսանկյուններից: Հեղինակը եւս մեկ անգամ իր անհամաձայնությունն է հայտնում այս պնդմանը՝ ցույց տալով Եկեղեցու ընդգրկվածությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ու բնագավառներում, եւ կարծիք հայտնում, որ Եկեղեցի—Պետություն փոխհարաբերությունները պետք է կառուցել այլ հողի վրա: Այս մոտեցումը հիմնավորելու համար հեղինակն անդրադառնում է Եկեղեցու առաքելությանը, նպատակներին, քարոզչական գործունեությանը, քրիստոնեական արժեքներով եւ աստվածային ճշմարտություններով առաջնորդվելուն՝ այնուամենայնիվ համարելով, որ «Եկեղեցին ընդունում է պետութեան օրինականութիւնը, սակայն աւելի վեր են Աստծու Խօսքը եւ պատուիրանները, որոնք Եկեղեցին պէտք է քարոզի բոլոր իրավիճակներում» (էջ 107): Սակայն ակնհայտ է, որ ժամանակակից ժողովրդավարական պետություններում Եկեղեցի—Պետություն փոխհարաբերությունները կարգավորվում են հիմնականում իրավական հարթությունում, եւ հեղինակի՝ զուտ քրիստոնեական արժեհամակարգով առաջնորդվելու երբեմն զգացմունքային մոտեցումները իրական կարգավորումներում տեղ չունեն: Հեղինակի համար Եկեղեցի—Պետություն կապն իդեալական է, եթե ինքը՝ պետությունն է ամբողջովին ուղղափառ, եւ քաղաքացին միաժամանակ հոտի լիարժեք անդամ է, սակայն ակնհայտ է, որ խղճի եւ դավանանքի սահմանադրական ազատություն հռչակած պետության

մեջ նմանատիպ կապի գոյությունն այսօր անիրատեսական է: Եւ ճիշտ է՝ դարեր շարունակ Հայոց Եկեղեցին «իր վերաբերմունքն է ցոյց տուել պետութեան եւ պետականութեան նկատմամբ», որի վառ ապացույցն են «Կանոնագիրք Հայոց»-ում զետեղված տարբեր կանոնները Եկեղեցի—Պետություն կապի վերաբերյալ, սակայն ժամանակակից սեկուլյար աշխարհը, այնուամենայնիվ, այսօր սկսել է առաջնորդվել այլ սկզբունքներով եւ արժեքներով, որոնք երբեմն բավականին հեռու են եկեղեցական կանոններում ամփոփված եւ քրիստոնեական արժեհամակարգին բնորոշ աշխարհընկալումից: Արդյունքում, համամիտ լինելով Փ. քհն. Առաքելյանի այն կարեւոր եզրահանգմանը, որ «Մաղթանք Հայրապետութեան Հայոց» կարգն ամփոփում է Եկեղեցու սրբազան պարտականությունը պետության հանդեպ եւ «ցոյց է տալիս Եկեղեցի—Պետութիւն անբաժանելի կապը», այնուամենայնիվ պետք է արձանագրենք, որ հայ հասարակական լայն շրջանակներում դեռեւս լրջագույն աշխատանք կա այս գաղափարները հասանելի դարձնելու առումով:

Այսպիսով, որպէս ամփոփում, կարող ենք փաստել, որ սույն կարեւոր աշխատության հրատարակությունը եւս մեկ քայլ է հայ ժողովրդի կյանքում Եկեղեցի—Պետություն—Ազգ—Ժողովուրդ հասկացությունները եւ փոխհարաբերությունները վերագնահատելու, արժեւորելու եւ հայ էթնոկրոնական ինքնությունը վերաիմաստավորելու տեսանկյունից:

ՊԱՐԳԵՒ ԲԱՐՍԵՂՅԱՆ
Փիլիսոփայական գիտ. թեկնածու, ԵՊՀ-ի դոցենտ



СОДЕРЖАНИЕ

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И ГРАМОТЫ БЛАГОСЛОВЕНИЯ

Послание ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , по случаю праздника Святого Рождества и Богоявления Господа нашего Иисуса Христа	5
Кондак ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , по случаю утверждения армянской епархии стран Балтии ААЦ	9
Послание ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , в честь Дня Армии РА	11
Слово ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , на мероприятии, организованном ко Дню Армии РА	12
Кондак ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , о присвоении Его Преосвященству епископу Сааку Машаляну титула архиепископа	15
Кондак ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , о присвоении Его Преосвященству епископу Сиону Адамяну титула архиепископа	17
Кондак ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , о присвоении Его Преосвященству епископу Микаелу Аджапагяну титула архиепископа	19
Кондак ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , о присвоении Его Преосвященству епископу Мовсесу Мовсисяну титула архиепископа	21

ПРОПОВЕДИ

Проповедь ЕПИСКОПА МУШЕГА БАБАЯНА , произнесенная в монастыре Святой Гаяне во время Рождественской Литургии Сочельника	23
Проповедь ЕПИСКОПА АРШАКА ХАЧАТРЯНА , произнесенная в церкви Пресвятой Богородицы Эчмиадзина во время Рождественской Литургии Сочельника	27

РЕЛИГИОВЕДЕНИЕ

ПРОТОИЕРЕЙ ИОАНН МЕЙЕНДОРФ — Брак в православии	30
--	----

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

АРСЕН АРУТЮНЯН, АМИРАН БАДИШЯН — Архимандрит Закария Вагаршапатский и его новообнаруженная усыпальница в Первопрестольном Святом Эчмиадзине	44
АВЕТИС АРУТЮНЯН — Подготовка Геноцида армян и объявление джихада в провинции Ван (июль-ноябрь 1914 г.)	58
АМО СУКИАСЯН — Попытки Первопрестольного Святого Эчмиадзина возобновить издание журнала «Арагат» 1920-х годах	75
Рассекреченный документ: армянский конверт	89

СООБЩЕНИЯ

ГРАНТ ОГАНЯН — Открытие духовного отдела в Лазаревской семинарии	109
АНИ ХАЧАТРЯН — Первый конгресс Родина—диаспора	122

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

ПАРГЕВ БАРСЕГЯН — Особенности взаимоотношений Церкви и государства	138
---	-----



CONTENTS

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , on the occasion of the Feast of Nativity and Theophany of our Lord Jesus Christ	5
Encyclical of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , on the occasion of the establishment of the Armenian Diocese of Baltic countries.	9
Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , on the occasion of the RA Army Day	11
Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , at an event organized in Vardenis on the occasion of the RA Army Day.	12
Encyclical of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , on granting an honor of Archbishop to H.G. Bishop Sahak Mashalyan	15
Encyclical of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , on granting an honor of Archbishop to H.G. Bishop Sion Adamyan	17
Encyclical of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , on granting an honor of Archbishop to H.G. Bishop Michael Ajapahyan	19
Encyclical of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , on granting an honor of Archbishop to H.G. Bishop Movses Movsisyan	21

SERMONS

Sermon delivered by H.G. BISHOP MOUSHEGH BABAYAN during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery on the Christmas Eve	23
Sermon delivered by H.G. BISHOP ARSHAK KHACHATRYAN during the Divine Liturgy celebrated at Holy Virgin Mary Church of Etchmiadzin on the Christmas Eve . .	27

RELIGIOUS STUDIES

ARCHPRIEST JOHN MEYENDORFF — Marriage: An Orthodox Perspective	30
---	----

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

- ARSEN HARUTYUNYAN, AMIRAN BADISHYAN** — Archimandrite Zakaria
of Vagharshapat and his newly-found tomb in the Mother See of Holy Etchmiadzin . . . 44
- AVETIS HARUTYUNYAN** — Preparation of Armenian massacres and execution of
Jihad in the province of Van (July-November 1914) 58
- HAMO SUKIASYAN** — Attempts of the Mother See of Holy Etchmiadzin in resuming
the publication of “Ararat” monthly in the 1920s 75
- A declassified document. Armenian portfolio. 89

ESSAYS

- HRANT OHANYAN** — Opening of a spiritual department at Lazarev Seminary 109
- ANI KHACHATRYAN** — The first Pan-Armenian congress between the Homeland
and the Diaspora 122

LITERARY REVIEW

- PARGEV BARSEGHYAN** — Particular aspects of church-state relations 138



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** պատգամը
մեր Տէր Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնի
առիթով 5
- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** սրբատառ
կոնդակը՝ Բայթեան երկրների հայոց թեմի հաստատման առիթով 9
- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** ուղերձը
ՀՀ բանակի օրուայ առիթով 11
- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** խօսքը
Վարդենիսում ՀՀ բանակի օրուայ առիթով կազմակերպուած միջոցառմանը 12
- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** սրբատառ
կոնդակը՝ Գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալեանին արքութեան
պատիւ շնորհելու մասին 15
- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** սրբատառ
կոնդակը՝ Գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Աղամեանին արքութեան
պատիւ շնորհելու մասին 17
- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** սրբատառ
կոնդակը՝ Գերաշնորհ Տ. Միքայէլ եպիսկոպոս Աջապահեանին արքութեան
պատիւ շնորհելու մասին 19
- Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** սրբատառ
կոնդակը՝ Գերաշնորհ Տ. Մովսէս եպիսկոպոս Մովսիսեանին արքութեան
պատիւ շնորհելու մասին 21

ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ

- Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԵԱՆԻ** քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում
Սուրբ Ծննդեան Ճրագալոյցի պատարագին 23
- Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱԶԱՏՐԵԱՆԻ** քարոզը՝ խօսուած Էջմիածնի Ս. Մարիամ
Աստուածածին եկեղեցում՝ Սուրբ Ծննդեան Ճրագալոյցի պատարագին 27

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

- ԻՌՀԱՆ ԱԲԱԳԵՐԷՅ ՄԷՅԵՆԴՈՐՖ** – Ամուսնութիւնն ուղղափառութեան մէջ 30

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

- ԱՐՄԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, ԱՄԻՐԱՆ ԲԱԴԻՇԵԱՆ** — Չաքարիա վարդապետ
Վաղարշապատցին եւ նրա նորայայտ դամբարանը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում . . . 44
- ԱԲԵՏԻՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ** — Հայկական կոտորածների նախապատրաստումը
եւ ջիհադի գործադրումը Վանի նահանգում (1914 թ. յուլիս—նոյեմբեր) 58
- ՀԱՄՕ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ** — «Արարատ» ամսագրի հրատարակումը վերսկսելու
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի +ջանքերը 1920-ական թուականներին. 75
- Գաղտնագերծուած մի փաստաթուղթ. հայկական թղթածրար 89

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

- ՀՐԱՆՏ ՕՀԱՆԵԱՆ** — Լազարեան ճեմարանում հոգևոր բաժնի բացումը 109
- ԱՆԻ ԽԱՉԱՏՐԵԱՆ** — Հայրենիք—սփիւռք առաջին համաժողովը. 122

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

- ՊԱՐԳԵՒ ԲԱՐՍԵՂԵԱՆ** — Եկեղեցի—պետություն յարաբերությունների
առանձնայատուկ կողմերը 138



- ԱԲՀ** - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (Մ. Ալգերեան, Գր. Ճելալեան), Վենետիկ, 1846 եւ 1865
- ԱԺ** - Արեւելագիտական ժողովածու, Երեւան
- ԱԻ** - Արեւելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԱՀ** - Ազգագրական հանդէս (խմբ.՝ Ե. Լալայեան), հ. 1-26, Շուշի/Թիֆլիս, 1896-1916
- ԱՖՏ** - Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Երեւան
- ԲԵՀ** - Բանքեր Երեւանի համալսարանի, Երեւան
- ԲՀ** - Բանքեր հայագիտության, Երեւան
- ԲՀԱ** - Բանքեր Հայաստանի արխիվների, Երեւան
- ԲՄ** - Բանքեր Մատենադարանի, Երեւան
- ԳԱԹ** - Գրականության եւ արվեստի թանգարան, Երեւան
- ԳԻ** - Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԳՀՀ** - Գեորգեան հոգեւոր ճեմարան (աստուածաբանական համալսարան), Ս. Էջմիածին
- ԴԱՆ** - Դաշտային ազգագրական նյութեր
- ԴՀՊ** - Դիւան հայոց պատմութեան (խմբ.՝ Գ. Աղանեանց), հ. 1-13, Թիֆլիս, 1893-1917
- ԴՀՎ** - Դիվան հայ վիմագրության, Երեւան
- Ե(Լ)Ժ** - Երկերի (լիակատար) ժողովածու
- ԵՊԿ** - Երեւանի պետական կոնսերվատորիա
- ԵՊՀ** - Երեւանի պետական համալսարան
- ԷԱԺ** - Էմինյան ազգագրական ժողովածու (խմբ.՝ Գ. Խալաթյանց, Կ. Կոստանյան), հ. 1-9, Մոսկվա, 1901-1913
- ԷՊԱԹ** - Էջմիածնի պատմաազգագրական թանգարան
- ԼԻ** - Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԼՀԳ** - Լրաբեր հասարակական գիտությունների, Երեւան
- ՀԱ** - Հանդէս Ամսօրեայ, Վիեննա
- ՀԱԱ** - Հայաստանի ազգային արխիվ, Երեւան
- ՀԱԲ** - Հայերեն արմատական բառարան (Հ. Աճառյան), հ. 1-4, Երեւան, 1971-1979
- ՀԱԲԵ** - Հայ ազգագրություն եւ բանահյուսություն, Երեւան
- ՀԱԲՈ** - Հայոց անձնանունների բառարան (Հ. Աճառյան), հ. 1-5, Երեւան, 1942-1962
- ՀԱԹ** - Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, Սարգարապատ
- ՀԱԻ** - Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ՀԱՊ** - Հայաստանի ազգային պատկերասրահ, Երեւան
- ՀԲԲ** - Հայերեն բացատրական բառարան (Ստ. Մալխասյանց), հ. 1-4, Երեւան, 1944-1945
- ՀԺՀ** - Հայ ժողովրդական հեքիաթներ, Երեւան
- ՀՀ** - Հայագիտական հանդէս, Երեւան
- ՀՀ ԳԱԱ** - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, Երեւան
- ՀՀՀ** - «Հասկ» հայագիտական հանդէս, Անթիլիաս
- ՀՀՀԾ** - Հայաստանի հնագիտական հուշարձանները, Երեւան
- ՀՀՀՍ** - Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ
- ՀՀՄ** - Հայաստանի հնագույն մշակույթը, Երեւան
- ՀՀՄԾ** - Հին Հայաստանի մշակույթը, Երեւան
- ՀՀՑ** - Հայագիտության հարցեր, Երեւան
- ՀՀՇՏԲ** - Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան (Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան), հ. 1-5, Երեւան, 1986-2001
- ՀՊԹ** - Հայաստանի Պատմության թանգարան, Երեւան
- ՀՊՀ** - Հնագիտական պեղումները Հայաստանում, Երեւան
- ՀՊՀՑ** - Հայոց պատմության հարցեր, Երեւան
- ՀՊՄՀ** - Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Երեւան
- ՀՍՀ** - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1-13, Երեւան, 1974-1987
- ՀՏ** - «Հուշարձան» տարեգիրք, Երեւան
- ՄԱ** - Մերձավոր Արեւելք, Երեւան
- ՄԱԵԺ** - Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, Երեւան
- ՄՀ** - Մատենագիրք Հայոց, Անթիլիաս

- ՄՄ** - Մաշտոցի անվան Մատենադարան, Երեւան
- ՄՊՎ** - Մատենադարանի պարսկերէն վավերագրերը, Երեւան
- ՄՅՀԶ** - Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երեւան
- ՆՀԲ** - Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Գ. Աւետիքեան, Խ. Սիրմէլեան, Մ. Աւգերեան), հ. 1-2, Վենետիկ, 1836-1837
- ՆՀԺՊ** - Նյութեր հայ ժողովրդի պատմության, Երեւան
- ՇՀՀԿ** - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատանքներ, Գյումրի
- ՊԲՀ** - Պատմաբանասիրական հանդես, Երեւան
- ՊԻ** - Պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ՊՄ** - «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երեւան
- ՎՀԵՊ** - Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Երեւան
- ՎՀՀ** - «Վէմ» համահայկական հանդես, Երեւան
- ՏՀԳ** - Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երեւան
- ՑԶՄՄ** - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երեւան
- ՔՀ** - Քրիստոնյա Հայաստան, Ս. Էջմիածին
- ՔՀՀ** - «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002
- ՕԱՀՀՄ** - Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, Երեւան
- АГВ** - Армянский гуманитарный вестник, Ереван
- АО** - Археологические открытия, Москва
- АПА** - Археологические памятники Армении, Ереван
- АРА** - Археологические раскопки в Армении, Ереван
- ВВ** - Византийский временник, Ленинград-Москва
- ВДИ** - Вестник древней истории, Москва
- ВЕУ** - Вестник Ереванского университета, Ереван
- ВОН** - Вестник общественных наук, Ереван
- ДВ** - Древний Восток, Ереван
- ДКА** - Древнейшая культура Армении, Ереван
- ИАЭ** - Институт археологии и этнографии, НАН РА, Ереван
- ИАН** - Известия Академии наук Армянской ССР, Общественные науки, Ереван
- ИФЖ** - Историко-филологический журнал, Ереван
- КБС** - Кавказско-ближневосточный сборник, Тбилиси
- КВ** - Кавказ и Византия, Ереван
- КДА** - Культура древней Армении, Ереван
- КСИА** - Краткие сообщения института археологии, Москва
- КСИМК** - Краткие сообщения института истории материальной культуры, Москва
- МАК** - Материалы по археологии Кавказа, Москва
- МИАН** - Материалы по истории армянского народа, Ереван
- МНМ** - Мифы народов мира, Москва (ред. С. А. Токарев), 1991-1992
- НАА** - Национальный архив Армении, Ереван
- СА** - Советская археология, Москва
- СМОМПК** - Сборник материалов для описания местностей и племён Кавказа, т. 1-46, Тифлис, 1881-1915
- СЭ** - Советская этнография, Москва
- ХВ** - Христианский Восток, Санкт-Петербург
- AJNES** - Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan
- AS** - Anatolian Studies, Cambridge
- AW** - Antike Welt, Mainz am Rhein
- BAR** - British Archaeological Reports, International Series, Oxford
- CAH** - Cambridge Ancient History, Cambridge
- IC** - Iran and the Caucasus, Leiden
- JANER** - Journal of Ancient Near Eastern Religions, Leiden
- JAOS** - Journal of American Oriental Society, Michigan
- JAS** - Journal of Armenian Studies, Belmont
- JSAS** - Journal of the Society for Armenian Studies, Fresno
- MDOG** - Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft, Berlin
- OrCh** - Oriens Christianus, Leipzig
- PO** - Patrologia Orientalis, Paris-Brepols
- REArm** - Revue des études arméniennes, Paris
- SMEA** - Studi Micenei ed Egeo-Anatolici, Roma

ISSN 1829-4243

Հրատարակում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխատրույթեամբ եւ որոշմամբ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՀ ազգային եւ ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարանները ձեռնամուխ են եղել «Հայկական գիտատեղեկատուական հանգոյցի» ձեւաւորման աշխատանքներին:

Այս հանգոյցում ի մի են բերում հայագէտների եւ գիտութեան տարբեր բնագաւառների ներկայացուցիչների հրատարակած յօդուածների, գրքերի ընտրանիները: Այս աշխատանքներին իրենց աջակցութիւնն են բերում հայաստանեան եւ Սփիւռքի հայագիտական կենտրոնները, հրատարակչութիւնները, գրադարանները:

Հանգոյցը հասանելի է համացանցային հասցէով:

Բոլոր նիւթերը հասանելի են ազատ դիտման ու ներբեռնման համար:

Ունեցէ՛ք Ձեր ներդրումը համահայկական այս եզակի նախագծում՝ օգտուելով հանգոյցից, տարածելով տեղեկատւութիւն դրա մասին, տրամադրելով թուայնացուած նիւթեր:

ՀՀ Ազգային գրադարան
ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարան

Խմբագրութեան հասցէն՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ»

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal "Etchmiadzin"

Էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com

Ամսագրի արխիւն ամբողջական կերպով՝ www.tert.nla.am կամ <http://www.flib.sci.am/arm/node/2>

Հեռ. (+374-10) 517-196/174

Ստորագրուած է տպագրութեան՝ 15.02.2020 թ.



ՄԵՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ
ԷՋՄԻԱԾԻՆԻ ՏՊԵՐԱՆ